

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՌԱԶՄԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2005

ՀՏԴ 31-355/359
ՊՄԴ 60.5+68
Ռ 153

Տպագրության է երաշխավորվել
Երևանի պետական համալսարանի
Սոցիոլոգիայի ֆակուլտետի
կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կողմից

Գլխավոր խմբագիր՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լյուդմիլա Դարությունյան

Գրախոսներ՝

ակադեմիկոս Գ. Ա. Բրուսյան
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Է. Ա. Դարությունյան

Հեղինակային կոլեկտիվ՝

Աթանեսյան Ա. – գլուխ 3՝ 3.3, 3.5, 3.6, 3.7, 3.8

Ստավաճատուրով Ս. – գլուխ 1

Բաբայան Ա. – գլուխ 2

Գիշյան Բ. – գլուխ 4՝ 4.2, 4.3

Ջաքարյան Ս. – գլուխ 3՝ 3.9

Թորոսյան Ա. – գլուխ 3՝ 3.1, 3.2, 3.4, գլուխ 5՝ 5.1, 5.5

Սեյրոնյան Ն. – գլուխ 5՝ 5.1

Միքայելյան Վ. – գլուխ 5՝ 5.2

Շահվերդյան Գ. – գլուխ 5՝ 5.3, 5.4

Սաղաթեյան Ս. – գլուխ 4՝ 4.1

Խմբագիր՝

քաղաքական գիտությունների թեկնածու Արթուր Աթանեսյան

Ռ 153

Ռազմական սոցիոլոգիա. ուսումնական նյութերի ժողովածու /պրոֆ. Լ. Դ. Դարությունյանի
խմբագրությամբ: Երևան. Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005թ. – 232 էջ:

Ներկայացվող ժողովածուն պատրաստվել է Երևանի պետական համալսարանի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կողմից: Ժողովածուում քննարկվում են սոցիոլոգիական միջին մակարդակի տեսություններից մեկի՝ ռազմական սոցիոլոգիայի մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերաբերում են հասարակության և բանակի փոխգործողությանը, բանակի սոցիալական գործառնությանն ու սոցիալական դերին, պատերազմին և խաղաղությանը որպես սոցիալական երևույթների, վերջիններիս հասարակական և մարդկային չափումներին, ինչպես նաև հետադարձ ազդեցությանը հասարակության վրա: Գրքում ներկայացված է հայկական ռազմական մշակույթը, որի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել հայկական բանակի սոցիալ-մշակութային նկարագիրը, ուղղագծել հայ ռազմիկի կերպարը: Վերլուծության են ենթարկվում զինվորական կոլեկտիվի գործառնության առանձնահատկությունները, բանակին և ռազմական միջավայրին հարմարման սոցիալական, հոգեբանական, բժշկական տեսանկյունները, դրա հետ կապված ղեկարարություններն ու հնարավոր շեղումները, ինչպես նաև քաղաքացիական կյանքին զինվորների կրկնակի հարմարման առանձնահատկությունները:

0302010000
Ռ 704(02)05 – 2005թ.

ISBN 5-8084-0849-8

© Հեղինակային կոլեկտիվ, 2005թ.

**Նվիրվում է ազգային-ազատագրական պայքարում
զոհված ազատամարտիկների հիշատակին. . .**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
ԳԼՈՒԽ 1. Ուղղորդված սոցիոլոգիական հետազոտություններ	
1.1 Ուղղորդված սոցիոլոգիայի կայացումը.....	9
1.2 Ուղղորդված սոցիոլոգիայի հետազոտման օբյեկտը և առարկան	13
1.3 Ուղղորդված սոցիոլոգիան միջին մակարդակի տեսությունների համակարգում.....	16
1.4 Ուղղորդված սոցիոլոգիայի հասկացության համակարգը	19
1.5 Ուղղորդված սոցիոլոգիայի գործառնությունները և խնդիրները.....	20
ԳԼՈՒԽ 2. Ուղղորդված սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություններ	
2.1 Ուղղորդված սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական հիմքը.....	24
2.2 Ուղղորդված սոցիոլոգիական հետազոտությունների տիպերը	26
2.3 Ուղղորդված սոցիոլոգիական հետազոտությունների փուլերը	32
ԳԼՈՒԽ 3. Բանակը որպես սոցիալական ինստիտուտ	
3.1 Բանակի էությունը, հիմնական հատկանիշները և գործառնությունները	48
3.2 Բանակի առաջացումն ու զարգացումը, դրա պատմական տարատեսակները	53
3.3 Բանակը և հասարակությունը	59
3.4 Ժամանակակից բանակների սոցիալական հենքը	63
3.5 Բանակը և քաղաքականությունը	81
3.6 Բանակը և եկեղեցին. միջինստիտուցիոնալ տեսանկյուն	89
3.7 Նախկին զինծառայողների հարմարումը քաղաքացիական կյանքին	95
3.8 Բանակի և զինծառայության հեղինակության դինամիկան	110
3.9 Հայոց բանակում սոցիալականացման գաղափարական և աշխարհայացքային հիմքերը	119
ԳԼՈՒԽ 4. Պատերազմի սոցիոլոգիական ընթացումներ	
4.1 Պատերազմը որպես սոցիալական երևույթ	145
4.2 Պատերազմական նորմերը և պատերազմական հանցագործությունները.....	159
4.3 Ինքնագոհությունը սանկցիավորող մշակութային մոդելը Հայաստանում	167
ԳԼՈՒԽ 5. Բանակը որպես սոցիալական խումբ	
5.1 Զինվորական կոլեկտիվ. խմբային դինամիկայի առանձնահատկությունները	180
5.2 Զինծառայողների սոցիալական հարմարման խնդիրները	193
5.3 Հարմարման բժշկահոգեբանական տեսանկյուն. դեպքերի վերլուծություն	199
5.4 Բանակում զինվորականների վարքը պայմանավորող գործոններ	205
5.5 Շեղվող վարքը և սոցիալական վերահսկողությունը բանակում	215
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	223

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

XXI դարում արագ զարգացում խոստացող գիտությունների շարքում իր ուրույն տեղն ունի սոցիոլոգիան, որը հարաճուն տեսական և կիրառական հետազոտությունների նորամոր ասպարեզներ է նվաճում՝ իր հեռանկարը արդարացիորեն կապակցելով հասարակական կյանքի բազմազանության, սոցիալական նոր երևույթների ի հայտ գալու և հասարակական կյանքը բացատրելի, կանխատեսելի դարձնելու անհրաժեշտության հետ:

Ժամանակակից սոցիոլոգիան ներառում է բազում միջին մակարդակի տեսություններ, որոնք թույլ են տալիս բացահայտել հասարակության զարգացման կոնկրետ օրինաչափությունները, ներթափանցել երևույթների և գործընթացների խորքը, քննել ներխմբային և միջխմբային հարաբերությունների ամբողջ բազմազանությունը: Միջին մակարդակի տեսություններից են, օրինակ, քաղաքականության սոցիոլոգիան, տնտեսական սոցիոլոգիան, առողջապահության սոցիոլոգիան, կրթության, արվեստի, կազմակերպությունների, քաղաքի և գյուղի սոցիոլոգիան, աղքատության սոցիոլոգիան և այլն: Միջին մակարդակի տեսությունների շարքում իր ուրույն տեղն ունի ռազմական սոցիոլոգիան, որը կյանքի է կոչվել մի կողմից՝ հասարակության մեջ այդ գիտելիքի անհրաժեշտության պայմաններում, մյուս կողմից՝ սոցիոլոգիական գիտության ներսում կուտակված գաղափարների, հայեցակարգերի, փաստերի կուտակման և գիտական վերլուծության անհրաժեշտ մակարդակ ապահովող մեթոդների մշակման շնորհիվ:

Ռազմական սոցիոլոգիայի՝ որպես միջին մակարդակի սոցիո-

լոգիական տեսության ուսումնասիրման առարկա են՝ սոցիոլոգիական և ռազմական ոլորտների հատման տիրույթում՝ բանակը որպես սոցիալական ինստիտուտ, պատերազմը որպես սոցիալական երևույթ, զինծառայողները որպես սոցիալական խումբ, նրանց կենսակերպի ու ենթամշակույթի առանձնահատկությունները, տվյալ հասարակության մեջ ձևավորված ռազմական ավանդույթներն ու հասարակության վերաբերմունքը բանակին ու զինծառայողներին և այլն:

Ռազմական սոցիոլոգիայի հետազոտման կենտրոնում են ռազմական ինստիտուտը, դրա կապը և փոխհարաբերությունները հասարակության այլ ինստիտուտների հետ, ռազմական ինստիտուտի գործառնության արդյունավետության վրա ազդող գործոնները:

Ռազմական սոցիոլոգիայի համակարգում հատուկ ուշադրության են արժանի զինծառայողի սոցիալական հիմնախնդիրների ու դրանց լուծման հետազոտումը, ռազմական կոլեկտիվների և դրանց անդամների միջև ներխմբային փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Ուշադրության կենտրոնում են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են նորակոչիկների հարմարվելը զինծառայությանը, նախկին զինծառայողների հարմարվելը քաղաքացիական կյանքին և դրա դժվարությունների հաղթահարումը, բանակի, զինծառայության և զինծառայողների նկատմամբ դրսևորվող հասարակական վերաբերմունքի ու վստահության հետ կապված հարցերը:

Ռազմական սոցիոլոգիայի համակարգում հետազոտությունների կարևորագույն օբյեկտ է պատերազմը՝ որպես սոցիալական երևույթ: Այսօր պատերազմները ոչ միայն չեն դադարում, այլև կատարելագործվում են ռազմական գործողությունների վարման նոր մեթոդների և ժամանակակից միջոցների առկայությամբ, պատերազմի ծավալման վտանգն ավելի իրական է, քան նախկինում. այդ իսկ պատճառով պատերազմելը և խաղաղության մեջ ապրե-

լը հանդես են գալիս որպես կենսաձևեր, որոնց ուսումնասիրման գործում ռազմական սոցիոլոգիան իր ուրույն տեղն ունի:

Ժողովածուի բովանդակությունը և տրամաբանությունը լքիում է ռազմական սոցիոլոգիայի որպես միջին մակարդակի տեսության ուսումնասիրման օբյեկտի և առարկայի առանձնահատկություններից: Ժողովածուում ամփոփված նյութը բաժանված է երեք հիմնական հատվածի: Դրանք են՝ ռազմական սոցիոլոգիան որպես միջին մակարդակի տեսություն, ռազմական մակրոսոցիոլոգիան, ռազմական միկրոսոցիոլոգիան, որոնց շրջանակներում քննարկվում են վերջիններիս առնչվող տեսական հարցեր:

Ժողովածուի առաջին հատվածում հեղինակները շոշափում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ռազմական սոցիոլոգիայի՝ որպես միջին մակարդակի տեսության կայացման, առարկայի, ինչպես նաև գործառույթների, հասկացությանի մասնաբաժանի, հետազոտման մեթոդաբանության և միջին մակարդակի տեսությունների համակարգում ռազմական սոցիոլոգիայի զբաղեցրած դիրքին առնչվող տեսական հարցեր, որոնք հետազոտողին հնարավորություն են տալիս հասկանալ ռազմական սոցիոլոգիայի ընդհանուր տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ժողովածուի երկրորդ հատվածում ներկայացված են բանակը որպես սոցիալական ինստիտուտ, ռազմական մշակույթի սոցիալական հիմնախնդիրները, ինչպես նաև պատերազմը որպես սոցիալական երևույթ:

«Ռազմական սոցիոլոգիա» ժողովածուում ամփոփվում է ռազմական միկրոսոցիոլոգիայի մաս կազմող այնպիսի տեսական և կիրառական հարցերի քննարկմամբ, ինչպիսիք են՝ բանակը որպես սոցիալական խումբ, զինվորական կոլեկտիվի խնդիրները:

Ժողովածու և կյանքի է կոչվել մեզանում ռազմասոցիոլոգիական հիմնախնդիրների հրատապությամբ և դրանց հետազոտման և լուծման անհրաժեշտությամբ: Ուսումնական նյութերի ժողովածուի ստեղծման նախաձեռնողը Երևանի պետական համալսարանի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնն է: Այն հեղինակային աշխատանք-

քի արդյունք է՝ նախատեսված հումանիտար, հասարակագիտական և ռազմական բնագավառների մասնագետների համար:

Մեր երախտագիտությունն ենք ուղղում բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են բերել Ժողովածուի ստեղծման գործում: Ժողովածուի ստեղծման աշխատանքներին աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

ԳԼՈՒԽ I

ՈՒՃՄԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ՄԻՋԻՆ , ՄԱԿԱՐԴԱԿԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1.1 Ոազմական սոցիոլոգիայի կայացումը

Ոազմական սոցիոլոգիան իբրև սոցիոլոգիական գիտելիքի ճյուղ սկսել է ձևավորվել XIX–XX դարերի սահմանագծում՝ զուգորդվելով ինչպես սոցիոլոգիայի, հոգեբանության, այնպես էլ ռազմական գիտության զարգացման հետ:

Ոազմական գիտությունը ձևավորվել է ավելի վաղ՝ ընդգրկելով հիմնականում պատերազմի, ռազմական գործողությունների մարտավարության և ռազմավարության, բանակի հիմնախնդիրների ուսումնասիրություններ: Պատերազմի և զինված ուժերի ուսումնասիրման գործում իր տեղն է ունեցել նաև հոգեբանությունը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական գլխավոր շտաբին կից գործում էր ռազմական հոգեբանների հատուկ խումբ, որը, մասնավորապես, ուսումնասիրում էր անձնակազմի ընտրության և հավաքագրման, դեկավարման, «հոգեբանական պատերազմի» վարման, զինվորների և սպաների փոխհարաբերությունների, դասալքության, ինքնասպանությունների պատճառները: Վերլուծվում էր նաև զինվորների վարքը մարտի պայմաններում¹:

¹ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ԱՄՆ-ում ստեղծվեց ռազմական գործում հոգեբանության կիրառման խորհուրդ, որը զբաղվում էր նորակոչիկների հոգեբանության հետազոտման հարցերով, նրանց ընտրությամբ, սպայական անձնակազմի վերապատրաստմամբ և պաշտոններին հավակնող թեկնածուների պիտանիության որոշմամբ, զինվորականների շրջանում կարգապահական նորմերի ամրապնդմամբ: ԱՄՆ-ի զինված ուժերում գործում էին հատուկ լաբորատորիաներ, որոնք անց էին կացնում տարբեր ռազմական ստորաբաժանումների անձնակազմի հոգեբանական հետազոտումներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի պաշտպանական հետազոտությունների ազգային խորհրդին կից ստեղծվեց կիրառական հոգեբանության բաժանմունք, որը մշակում էր թեստեր նորակոչիկների հոգեբանական հետազոտման համար, նախագծվող տեխնիկայի և զենքի նմուշները հարմարեցնում էր մարդու հոգեբանական պահանջներին, ձևավորում զինվորների արագացված նախապատրաստման համակարգեր: Հատկանշական է, որ բաժանմունքի անմիջական ենթակայության տակ է գտնվել ավելի քան հազար հոգեբան, որոնց ուժերով իրականացվել է չուրջ հինգ հարյուր ռազմահոգեբանական հետազոտություն:

Ռազմական հոգեբանության զարգացումը հիմք նախապատրաստեց ռազմական սոցիոլոգիայի ձևավորման համար այն առումով, որ հոգեբանական հետազոտությունների ծավալման ընթացքում պարզ դարձավ, որ պատերազմի և բանակի որպես բարդ սոցիալական երևույթների ամբողջական և խորը հետազոտումը հատուկ սոցիոլոգիական մեթոդների կիրառություն է պահանջում: Ի պատասխան այս պահանջի՝ XX դարի սկզբին արևմտյան երկրներում իրականացվեցին բանակի մեծածավալ սոցիոլոգիական հետազոտություններ: Այդ հետազոտությունների շնորհիվ ռազմական սոցիոլոգիան սկսեց քայլել հոգեբանությամբ զուգահեռ և սերտորեն փոխկապակցված:

Հիշատակման են արժանի ռուսական բանակի հետազոտությունները, որոնք իրականացվեցին 1906–1914թթ. և հիմնականում նվիրված էին եղել ռուս–ճապոնական պատերազմի փորձի ամփոփմանը, ռազմա–ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի որակի բարելավմանը, բանակի և նավատորմի բարեփոխման ծրագրերի մշակմանը: Զուգահեռաբար, հետազոտվել է զինծառայողների և խաղաղ բնակչության վերաբերմունքը պատերազմին:

Շարունակվեց ռազմական սոցիոլոգիայի զարգացումը հետհեղափոխական ժամանակահատվածում: Անցկացվեցին զորքերի լայնածավալ սոցիալ–վիճակագրական ուսումնասիրություններ, որոնց նպատակը ռազմասոցիալական խնդիրների ու բանակի սոցիալ–դասակարգային կառուցվածքի ուսումնասիրությունն էր²: Հայտնի է 1924–1925թթ. Մոսկվայի ռազմական օկրուգի զորքերում փորձարարական հոգեբանության պետական ինստիտուտի հոգետելխնիկայի բաժնի կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտությունը՝ «Կարմիր բանակայինի լեզու» անվանմամբ: Այդ խումբը Ի.Ն. Շախլրեյնի ղեկավարությամբ 1924թ. հանձնարա-

² Сергеев В.П., Эмпирические социологические исследования в РККА и РК МФ в 20-ые годы: состояние, проблемы, опыт // В.И. Ленин и актуальные проблемы военного строительства, М., 1990, с. 134–154.

րություն էր ստացել հետազոտել կարմիրբանակայինի և բանակում քաղաքական աշխատողի գրավոր և բանավոր բառապաշարը: Հետազոտության արդյունքում ակնկալվում էր ստանալ. «Կարմիրբանակային» թերթի բառապաշարը, քաղաքական ղեկավարի բառապաշարը (աղբյուրը՝ արձանագրությունները), կարմիրբանակայինի բառապաշարը (աղբյուրը՝ զինծառայողների նամակները): Հետազոտությունը նպատակ ուներ պարզել նաև 400 ընտրված բառերի իմաստի ըմբռնման աստիճանը զինվորների տարբեր խմբերի կողմից:

Փաստաթղթերի վերլուծության ձևայնացված մեթոդի և անկետավորման օգնությամբ գիտնականների կողմից հետազոտվել էր 1241 կարմիրբանակայինի բառապաշար: Ըստ հետազոտության արդյունքների՝ կարմիրբանակայինի բառապաշարը պարունակել էր 11223 բառ, քաղղեկավարինը՝ 12806 բառ, «Կարմիրբանակային» թերթին հասցեագրված 141 զինվորական նամակները՝ 20456 բառ, «Կարմիրբանակային» թերթը՝ 54338 բառ³: Այս հետազոտության հաշվետվությունը հարուստ վիճակագրական և պատկերավոր նյութ էր պարունակում (լուսանկարներ, աղյուսակներ, գիստոգրամմաներ և այլն):

Այդ տարիներին հիշատակված սոցիոլոգիական հետազոտությունները լայն տարածում էին գտել: Սակայն սոցիոլոգիայի և այդ թվում ռազմական սոցիոլոգիայի հնարավորությունները խիստ սահմանափակվեցին 1920–ական թվականների վերջին, իսկ 1930–ական թթ. սոցիոլոգիան «կեղծ գիտություն» պիտակավորմամբ պաշտոնապես արգելվեց: Խորհրդային Միությունում ռազմական սոցիոլոգիայի ինստիտուցիոնալ արգելքը տևեց մինչև 1960–ական թթ. սկիզբը: 1960–ականներին արգելքի վերացումից հետո Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում ստեղծվեցին սոցիոլոգիական հետազոտություններով զբաղվող կենտրոններ, սկսեցին լույս տեսնել այդ հարցերին նվիրված հոդվածներ և գրքեր: Ծավալվեցին

³ Նույն տեղում

նաև ռազմասոցիոլոգիական հետազոտություններ և արևմտյան ռազմասոցիոլոգիայի նվաճումների ուսումնասիրմանն ուղղված աշխատանքներ:

Այսօր աշխարհում և ԱՊՀ մի շարք երկրներում ռազմական սոցիոլոգիան մեծ առաջընթաց է ապրում կապված պահանջարկի առկայության և գիտական ներուժի, տեսական և էմպիրիկ նյութի կուտակման հետ:

Վերջին տարիներին Ռուսաստանում զգալիորեն ավելացել է ռազմական սոցիոլոգիայի թեմատիկային վերաբերող գիտական հրապարակումների թիվը: 1993թ. առաջին անգամ լույս է տեսել «Սոցիոլոգիական հետազոտություններ» ամսագրի հատուկ համար՝ ամբողջությամբ նվիրված ռազմական սոցիոլոգիային: 1994 թվականից ի վեր «Սոցիոլոգիական հետազոտություններ» ամսագրում մշտապես գործում է «Ռազմական սոցիոլոգիա» մատենաշարը, որում միայն 1994-1997թթ. ընթացքում շուրջ 30 հոդված է տպագրվել: 1996թ. «Վոին» («Ռազմապատմական ժառանգություն») հիմնադրամը «Ռուս սպայի գրադարան» մատենաշարով լույս է ընծայել Ս.Ս. Սոլովյովի «Գործնական ռազմական սոցիոլոգիայի հիմունքներ» գիրքը: Մեծ ուշադրություն է դարձվում հետհեղափոխական շրջանի ռուս ռազմական սոցիոլոգների աշխատությունների հրապարակումներին: Այսպես՝ 1995թ., արդեն հիշատակված «Ռուս սպայի գրադարան» մատենաշարում լույս է տեսել «Պատերազմի փիլիսոփայություն» ժողովածուն, որում տեղ են գտել Ա. Կերսնովսկու, Ա. Մարիյուշկինի, Ն. Գոլովինի, Պ. Ջալեսկու և Ա. Բախովի աշխատությունները: 1997թ. «Ռուսական ռազմական ժողովածու» մատենաշարով (13-րդ թողարկում) լույս է ընծայվել «Բանակի ոգին. Ռուս ռազմական էմիգրացիան ռուսական զինված ուժերի բարոյահոգեբանական հիմքերի մասին» ժողովածուն, որը պատրաստվել է «Հայրենիք և ռազմիկ» ռազմագիտական կենտրոնի կողմից: Վերջապես, 1996 և 1997թթ. լույս է տեսել երկու մենագրություն՝ Վ. Սերբերյանինիկովի և Յու. Դերյուզինի «Բանակի սոցիոլոգիան», և Վ. Սերբերյանինիկովի «Պատերազմի սոցիոլոգիան»: Դրանք ռազմական սոցիոլոգիայի ոլորտում յուրահատուկ ամփոփումներ են, որտեղ հետազոտական հիմնախնդիրները մեթոդաբանական և գործնական լուծումներ են ստանում:

1.2 Ռազմական սոցիոլոգիայի հետազոտման օբյեկտը և առարկան

Ռազմասոցիոլոգիական գրականության մեջ գոյություն ունեն ռազմական սոցիոլոգիայի առարկայի և օբյեկտի մի շարք սահմանումներ, որոնք պայմանականորեն կարելի է խմբավորել ըստ մոտեցման: Ռազմական սոցիոլոգիայի օբյեկտի և առարկայի «մեղացված» ձևով սահմանելու օրինակ է հետևյալ սահմանումը. «Ռազմական սոցիոլոգիան հատուկ սոցիոլոգիական տեսություն է, որի հետազոտության օբյեկտ են զինված ուժերն ամբողջությամբ, դրանց տարբեր կառուցվածքային օղակները, զինվորական կոլեկտիվները, զինվորական գործունեությունն ինչպես խաղաղ, այնպես էլ՝ պատերազմական պայմաններում: Ռազմական սոցիոլոգիայի հետազոտության հիմնական առարկա են ռազմասոցիալական հարաբերություններն ու գործընթացները, որոնք տեղի են ունենում բանակում, որպես հարաբերականորեն մեկ ամբողջական մարմին և, միաժամանակ՝ հասարակության անքակտելի մաս»⁴:

Բերենք ռազմական սոցիոլոգիայի առարկայի և օբյեկտի «լայնեցված» սահմանման օրինակ. «Ռազմական սոցիոլոգիայի հետազոտության առարկա է ... հասարակության ռազմական կազմակերպությունը՝ որպես սոցիալական ինստիտուտ, որը սերտ փոխհարաբերության մեջ է հասարակության՝ որպես ամբողջության հետ»⁵: Այս երկու սահմանումների տարբերությունը «սոցիալականի» և ռազմական սոցիոլոգիայի առարկայի ընդհանրացման աստիճանի մեջ է: Առաջին դեպքում «սոցիալականի» տակ հասկացվում է «հասարակությունը՝ որպես ամբողջական համակարգ», երկրորդ դեպքում «սոցիալականն» ընկալվում է նեղ իմաստով՝ որպես «սոցիալական հանրություն», «սոցիալական գործընթաց», «սոցիալական հարաբերություն»: Նշենք նաև, որ

⁴ Воробьев В.А., Социология военная/Социологический словарь, Минск, Университетское, 1991.

⁵ Ведерников В.Н., Регентов Г.П., К вопросу о развитии русской военной социологии – социологические исследования, 1985, N4, с. 98-101.

ներկայացված մոտեցումները, արտացոլելով տվյալ հարցում մեթոդաբանական առկա բազմակարծությունը, ոչ թե մերժում, այլ լրացնում են միմյանց:

Ռազմական սոցիոլոգիայի ուսումնասիրման տիրույթում են բանակը՝ որպես սոցիալական ինստիտուտ և փոքր սոցիալական խումբ, պատերազմը՝ որպես մարդկային գործունեության յուրահատուկ ձև՝ սոցիալական ուրույն հարաբերություններով հանդերձ, պատերազմի և բանակի հետ առնչվող այլ սոցիալական հանրույթների վարքը, ռազմական կյանքի օրինաչափությունները, ինչպես նաև ռազմական ոլորտի զարգացումը՝ որպես սոցիալական գործընթաց, որը շարժման մեջ է դրվում դրանում գործող սուբյեկտների ակտիվությամբ և շահերով:

Ռազմական սոցիոլոգիայի օբյեկտը հասարակական կյանքի երկու ոլորտների՝ ռազմականի և սոցիալականի հատման դաշտում ծավալվող գործընթացներն են, գործող սուբյեկտների փոխհարաբերությունները, շահերը և արժեքները: Օբյեկտը ներառում է ոչ միայն ռազմական և սոցիալական ոլորտներում առկա սոցիալական փոխհարաբերությունները, այլ՝ ավելի բարդ գործառույթներ և մեխանիզմներ, որոնք ծնունդ են կառավարում են այդ փոխհարաբերությունները:

Հասարակության ռազմական ոլորտը հարաբերականորեն ինքնուրույն, ամբողջական ենթահամակարգ է, որը ապահովում է պետության անվտանգությունը, սահմանների և տարածքային ամբողջականության պաշտպանությունը, ինչպես նաև մի շարք այլ գործառույթների իրականացումը: Սոցիալական ոլորտն արտացոլում է հասարակական կյանքի կարևորագույն տարրերի գործառնումը և հարաբերությունները, որոնք կապված են սոցիալական խմբերի շահերի, անհավասարության, դերերի, նորմերի և արժեքների հետ: Սոցիալական ոլորտն ուղղակիորեն ազդում է ռազմական ոլորտի գործառնության և զարգացման վրա՝ միաժամանակ ներազդվելով ռազմական ոլորտից: Այսպիսով՝ ռազմական սոցիոլոգիայի կողմից ուսումնասիրվող օբյեկտը երևույթների մի ընդարձակ ամբողջություն

է, որը գտնվում է ռազմական ոլորտի և հասարակության «հատման» դաշտում: Այդ դաշտում առկա երևույթների և գործընթացների հետազոտությունները ուղղված են ռազմականի և սոցիալականի միջև կապերի, ռազմական ոլորտի հետ առնչվող սոցիալական գործոնների և մեխանիզմների հայտնաբերմանը, նկարագրմանն ու հետազոտմանը: Սոցիալական մեխանիզմ ասելով՝ նկատի ունենք յուրահատուկ սոցիալական համակարգեր, որոնց գործառնությունը բերում է սոցիալական փոփոխությունների՝ հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և այլ ոլորտներում:

Ռազմական ոլորտում գործառնող սոցիալական մեխանիզմների շարքին է դասվում ռազմասոցիալական գործընթացները կարգավորող, որոշ գործընթացներ արագացնող, մյուսները սահմանափակող կամ հաղթահարող սոցիալական միջոցների կամ գործիքների ամբողջությունը: Սոցիալական մեխանիզմներն ընդհանրապես, և ռազմական ոլորտում գործառնող սոցիալական մեխանիզմները՝ մասնավորապես, հիմնված են այնպիսի սոցիալական նորմերի և մշակութային նմուշների վրա, որոնք պայմանավորում են սոցիալական վարքի կայուն ձևերը: Այդ առումով յուրաքանչյուր սոցիալական մեխանիզմ սոցիալական խմբերի վարքը կարգավորող բարդ կառույց է, որը պետք է բավականին զգայուն լինի հասարակության կարիքների, արժեքների, կարծրատիպերի նկատմամբ:

Սոցիալական մեխանիզմների մեջ տարբեր բնույթի լծակներ են մտնում՝ նյութական և հոգևոր, հասարակական կեցությանն ու հասարակական գիտակցությանը վերաբերող: Հասարակական գիտակցության մեջ կուտակված պատմական փորձը, այդ թվում՝ պատերազմական գործողությունները ու իրադարձությունները, կոլեկտիվ հիշողությունը, էապես ուժեղացնում են սոցիալական մեխանիզմների ազդեցությունը: Սոցիալական մեխանիզմները պարունակում են ինչպես կառավարվող, այնպես էլ՝ թույլ կամ անկառավարելի տարրեր, որոնք բազմամյա կամ դարավոր ավանդույթների արդյունք են:

Կոնկրետ ռազմասոցիոլոգիական հետազոտությունների իրականացման ժամանակ սոցիալական մեխանիզմների նշված առանձնահատկությունները ձեռք են բերում կարևոր նշանակություն և հաճախ պայմանավորում են հետազոտության ռազմավարությունը: Սոցիալական մեխանիզմների բնութագրից է բխում նաև սոցիոլոգիական նյութի վերլուծության մեթոդական ընթացակարգը: Այլ կերպ ասած, եթե սոցիոլոգիական մեթոդներով ուսումնասիրվում է որոշակի ռազմասոցիալական գործընթացը կարգավորող այս կամ այն սոցիալական մեխանիզմը, ապա տվյալների հավաքագրման, նկարագրման և բացատրման համար օգտագործվող մեթոդները պետք է արտացոլեն ուսումնասիրվող մեխանիզմի առանձնահատկությունները և համապատասխանեն դրան:

1.3 Ռազմական սոցիոլոգիան միջին մակարդակի տեսությունների համակարգում

Ռազմական սոցիոլոգիան միջին մակարդակի սոցիոլոգիական տեսություններից մեկն է: Ըստ Ռ. Մերտոնի՝ միջին մակարդակի տեսությունների շարքին են դասվում «այն տեսությունները, որոնք գտնվում են մի կողմից մասնավոր, բայց նույնպես անհրաժեշտ, առօրյա հետազոտությունների ընթացքում առաջացող աշխատանքային վարկածների և մյուս կողմից՝ միասնական տեսություն ստեղծելու մշտական փորձերի միջև, որը գալիս է բացատրելու ցանկացած դիտարկվող սոցիալական վարքի, սոցիալական կազմակերպությունների և սոցիալական փոփոխությունների տիպերը»^{*}: Միջին մակարդակի տեսությունները կոչված են ամփոփելու և կառուցվածքայնացնելու սոցիոլոգիական գիտելիքի որոշակի ոլորտներին վերաբերող էմպիրիկ տվյալները: Միջին մակարդակի տեսություններում, ուր, ընդհանուր առմամբ, կիրառվում են հիմնարար սոցիոլոգիական տեսություններից փոխառնված գաղափարներն ու տերմին-

^{*} Merton R. Social Theory and Social Structure. Glencoe, 1968, p. 39.

նաբանությունը, մշակված է կամ մշակվում է նաև առանձնահատուկ հասկացությունների և սահմանումների համակարգ, որը կիրառվում է միայն տվյալ ոլորտի սոցիոլոգիական հետազոտություններում: Այդ առումով ռազմական սոցիոլոգիան կապված է ոչ միայն ընդհանուր սոցիոլոգիայի, այլ նաև մասնավոր սոցիոլոգիական տեսությունների հետ:

Ռազմական սոցիոլոգիան գտնվում է սոցիոլոգիական և ռազմական գիտությունների հատման դաշտում որպես միջին մակարդակի սոցիոլոգիական տեսություն: Ընդհանուր սոցիոլոգիայի հետ ռազմական սոցիոլոգիայի կապն արտահայտվում է նրանում, որ այն ռազմական սոցիոլոգիային ապահովում է ռազմական ոլորտի, սոցիալական մեխանիզմների ուսումնասիրության համար անհրաժեշտ մեթոդաբանությամբ՝ օգտագործելով կառուցվածքագործառնական, համակարգային, ինտերակցիոնիստական և կոնֆլիկտաբանական մոտեցումները:

Հատուկ պետք է նշել ռազմական սոցիոլոգիայի կապը սոցիոլոգիայի այն մասնավոր ուղղությունների հետ, որոնք զբաղվում են սոցիալական ինստիտուտների ուսումնասիրությամբ: Դրանցից են քաղաքական սոցիոլոգիան, կառավարման սոցիոլոգիան, տնտեսական սոցիոլոգիան, իրավունքի սոցիոլոգիան և այլն: Այդ տեսությունների հետ ռազմական սոցիոլոգիայի սերտ կապը բացատրվում է նրանով, որ վերջինների կողմից են հետազոտվում այն սոցիալական մեխանիզմները, որոնք կարգավորում են սոցիալական գործընթացները և, վերջին հաշվով՝ նաև ռազմական ոլորտի գործառնության և զարգացման գործընթացը:

Սերտ է կապը նաև ռազմական սոցիոլոգիայի և կառավարման սոցիոլոգիայի միջև: Այն պայմանավորված է նրանով, որ ռազմական ոլորտի և դրա մարդկային գործոնի կառավարումը կարելի է դիտել որպես ռազմական ոլորտի գործառնության և զարգացման սոցիալական մեխանիզմի դրսևորումներից մեկը: Մյուս կողմից՝ կառավարման սոցիոլոգիան ավանդաբար ուսումնասիրում է կառավարման ոլորտի կադրերը՝ նրանց շարժունակությունը (հատ-

կապես՝ աշխատանքային առաջընթացը կարիերան), միջխմբային փոխգործողությունները (ֆորմալ և ոչ ֆորմալ): Կառավարման սոցիոլոգիայի սահմաններում ուսումնասիրվում են ղեկավարների վարքի տարբեր ձևերը, առաջնորդության խնդիրը և այլն: Այսօր այդ կապն էլ ավելի է սերտանում, քանի որ կառավարման սոցիոլոգիայի համակարգում ձևավորվել է մի նոր ճյուղ՝ հանրային կառավարման տեսությունը, որտեղ կառավարման օբյեկտների դերում սոցիալական համակարգերն են⁷: Կառավարման սոցիոլոգիայի կողմից մշակվող հարցերից ռազմական սոցիոլոգիայի համար առավել կարևոր են ռազմական ոլորտի կառավարման գործընթացում քաղաքական և սոցիալական տարրերի, վարչարարական և ժողովրդավարական սկզբունքների հարաբերակցությունը, ռազմական գործընթացներում սոցիալական վերահսկողության դերը, ռազմական կոլեկտիվներում կադրերի ընտրության, տեղավորման և դաստիարակման գործընթացների կառավարման հայեցակետերը:

Սերտ են կապերը ռազմական սոցիոլոգիայի և ռազմական հոգեբանության, ռազմական պատմության, ռազմական բժշկության, ռազմաինժեներական գիտության, ռազմական վիճակագրության հետ: Այնպիսի բարդ սոցիալական երևույթների վերլուծությունը, ինչպիսիք են պատերազմը և բանակը, հետազոտական հատուկ մեթոդների կիրառում է պահանջում, իսկ այդ մեթոդներից շատերը պատկանում են ռազմական վիճակագրության ոլորտին:

Այսպիսով՝ *ռազմական սոցիոլոգիան միջին մակարդակի սոցիոլոգիական տեսություն է, որի առարկայական տիրույթը գտնվում է սոցիոլոգիայի, ռազմագիտության, հոգեբանության, քաղաքագիտության, վիճակագրության և մի շարք այլ գիտությունների հատման կետում:*

⁷ Марков Марко, Теория социального управления, М., Прогресс, 1978, с. 12-13.

1.4 Ռազմական սոցիոլոգիայի հասկացութային համակարգը

Հասկացութային համակարգը գիտական ճանաչողության կարևորագույն միջոցներից է, որը կիրառվում է հետազոտվող օբյեկտների նկարագրության և բացատրության համար: Հիմնական հասկացությունների ապարատն ու սոցիալական համակարգերի վերլուծության սկզբունքներն էապես որոշում են այն, թե հաջողվում է արդյոք գիտությանը ներթափանցել հետազոտվող օբյեկտների խորքը, արտացոլել այն պահանջվող խորությամբ և ծավալով:

Ռազմական սոցիոլոգիայի հասկացությունների կազմում առկա են ընդհանուր–գիտական, ընդհանուր–սոցիալական և առանձնահատուկ հասկացությունները: Ընդհանուր–գիտական հասկացությունները (կառուցվածք, գործառույթ, գործընթաց, մեխանիզմ, տարր, կապ, կայունություն, փոփոխականություն, զարգացում և այլն) փոխառված են ընդհանուր գիտական մեթոդաբանության լեզվից: Ռազմական սոցիոլոգիայում դրանք օգտագործվում են որպես միջոցներ՝ ռազմասոցիալական ոլորտներում երևույթների, համակարգերի և գործընթացների բացահայտման և վերլուծության համար: Ընդհանուր–սոցիալական հասկացությունները ռազմական սոցիոլոգիան փոխառել է այլ հումանիտար գիտություններից: Ռազմական սոցիոլոգիայի զարգացման համար առավել կարևոր են սոցիալական փիլիսոփայության կողմից ներմուծված այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ՝ սոցիալական կառուցվածք, սոցիալական զարգացում, հասարակության քաղաքական ոլորտ, քաղաքական համակարգ, պետություն, անձ, դասակարգ, ազգ և այլն: Ձգտելով սեփական առարկայի մշակմանը՝ ռազմական սոցիոլոգիան համապատասխանեցնում և օգտագործում է նշված հասկացությունները, որոնց սկզբունքային բովանդակությունը, սակայն, անփոփոխ է մնում: Ռազմական սոցիոլոգիան օգտագործում է նաև հասկացություններ, որոնք վերցված են սոցիալական հոգեբանությունից (կոլեկտիվ, վարք, դրդապատճառներ, նույնականացում, հարմարում,

հարմարվողականություն, կոնֆլիկտայնություն, փոխգործողություն և այլն), տնտեսագիտությունից (սեփականություն, տնտեսական հարաբերություններ), ռազմական գիտությունից (ռազմական գործողություններ, պատերազմ, բանակ, պետության պաշտպանություն, ռազմական գործողությունների վարման ռազմավարություն և մարտավարություն): Փոխառնված են նաև սոցիոլոգիական հասկացություններ (սոցիալական խմբեր, սոցիալական կառուցվածք, սոցիալական կազմակերպություն, սոցիալական շարժունակություն, սոցիալական շերտավորում, սոցիալական կարգավիճակ, սոցիալական դեր, սոցիալական վարք և այլ հասկացություններ):

Ռազմական սոցիոլոգիայի առանձնահատուկ հասկացությունները ծագել են այդ տեսության ներսում և արտացոլում են միայն վերջինիս բնորոշ տեսանկյունը և մոտեցումները: Այդ հիմնական հասկացություններն են ռազմասոցիալական ոլորտի գործառնություն, ռազմասոցիալական ոլորտի կարգավորման սոցիալական մեխանիզմ, ռազմական գիտակցություն, ռազմական մշակույթ, ռազմական մտածողություն, ռազմական շահ, ռազմասոցիալական կարծրատիպ, ռազմական վարք և այլն:

Ռազմական սոցիոլոգիայի հիմնական հասկացությունների ամբողջացումը թույլ է տալիս ձևավորել ռազմական սոցիոլոգիայի գիտական հիմքը, որի շնորհիվ հնարավոր է հետազոտել, նկարագրել և բացատրել այդ ոլորտի երևույթները:

1.5 Ռազմական սոցիոլոգիայի գործառույթները և խնդիրները

Ռազմական սոցիոլոգիան կոչված է իրականացնելու ռազմասոցիալական ոլորտի երևույթների ուսումնասիրումը և ճանաչումը, միտումների կանխատեսումը, սոցիալական նախագծումը, կառավարումը:

Ռազմական սոցիոլոգիայի *ճանաչողական գործառույթն* ուղղ-

ված է ռազմական և սոցիալական ոլորտների միջև կապերի ուսումնասիրմամբ: Ռազմական սոցիոլոգիան իր ճանաչողական գործառույթն իրականացնում է ռազմական կյանքը դիտելով որևէ առանձնահատուկ սոցիալական գործընթաց, որպես միջխմբային սոցիալական փոխգործողությունների տիրույթ:

Կանխատեսման գործառույթի համաձայն ստացվող գիտելիքների հիման վրա ռազմական սոցիոլոգիան ի վիճակի է իրականության փոփոխությունների վերաբերյալ կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ իրականացնել: Ռազմական սոցիոլոգիայի օգտակարությունը և կիրառական նշանակությունը կանխատեսման գործառույթում արտահայտում է հասարակության պահանջումընքն առ այն, որ գիտականորեն հիմնավորվեն ռազմական ոլորտի և հասարակության փոխհարաբերությունների զարգացման հնարավորությունները և համապատասխան պայմաններ ստեղծվեն այդ զարգացման համար: Ռազմական սոցիոլոգիայի *սոցիալական նախագծման գործառույթը* դրսևորվում է կոնկրետ երևույթի և համակարգի մոդելների մշակման մեջ, որպեսզի ինքը՝ ռազմասոցիալական համակարգը, ինչպես նաև դրա յուրաքանչյուր տարրը դրսևորվեն և գործառնեն առավել լիակատար ձևով և հասնեն նշանակալի արդյունքների:

Ռազմական սոցիոլոգիան օգտակար գիտելիք է տալիս նաև *տեխնոլոգիական և կազմակերպական գործառույթների* իրականացման համար: Կազմակերպական-տեխնոլոգիական գործառույթը սոցիալական նախագծման գործառույթի շարունակությունն է, քանի որ առանց ենթադրվող սոցիալական արդյունքի նախագծման հնարավոր չէ ստեղծել սոցիալական տեխնոլոգիա, որպես գործողությունների համակարգ և քայլերի հերթականություն՝ նպատակին հասնելու համար, հնարավոր չէ անհրաժեշտ կազմակերպական միջոցառումներ ձեռնարկել:

Կառավարման գործառույթում ռազմական սոցիոլոգիան անմիջականորեն կապվում է վարչարարական գործունեության հետ: Ռազմական սոցիոլոգիայի գիտական արդյունքները՝ առաջարկու-

թյունները, մեթոդիկաները, սուբյեկտի տարբեր բնութագրիչների գնահատականները ռազմական ոլորտում ելակետային են վարչական որոշումների մշակման և ընդունման համար:

Կիրառական այս լայն ասպարեզը և պահանջարկը բավարարելու համար ռազմական սոցիոլոգիան կարիք ունի իր առարկայի և օբյեկտի մասին համակարգված գիտելիքի ձևավորման, ռազմասոցիալական իրականության ուսումնասիրման և վերլուծության իր մոտեցումների ու մեթոդների մշակման, սոցիոլոգիական տեղեկատվության հայթայթման, վերլուծության և ամփոփման համար անհրաժեշտ մեթոդների ու գործիքների կատարելագործման:

Ռազմական սոցիոլոգիայի տեսության օգնությամբ լուծվող հիմնախնդիրների ամբողջության մեջ կարելի է առանձնացնել տեսամեթոդաբանական և կիրառական նշանակություն ունեցող խնդիրներ: *Տեսամեթոդաբանական* խնդիրների շարքին են դասվում ռազմասոցիոլոգիական հետազոտությունների տեսական, մեթոդաբանական և մեթոդական հիմնախնդիրները, այդ թվում

✓ բանակի և հասարակության, ռազմական և սոցիալական ոլորտների միջև եղած կապերի նկարագրության և մեկնաբանման մեթոդաբանական խնդիրները,

✓ ռազմասոցիալական ոլորտը կարգավորող հիմնական սոցիալական մեխանիզմների նկարագրության խնդիրը,

✓ ռազմական մշակույթի ուսումնասիրման խնդիրը,

✓ առանձին ռազմասոցիալական գործընթացները կարգավորող սոցիալական մեխանիզմների սոցիալական, քաղաքական և տնտեսական տարրերի և բաղադրիչների առանձնացման խնդիրները:

Ռազմական սոցիոլոգիայի օգնությամբ կամ սահմաններում լուծվող *կիրառական խնդիրների* օրինակ կարող են հանդիսանալ հետևյալները՝

✓ հասարակության ռազմական ոլորտի գործառնության և զարգացման վրա ազդող առկա սոցիալական մեխանիզմների արդյունավետության գնահատումը,

✓ ռազմական ուժորտի սոցիալական մեխանիզմների փոփոխման հիմնական միտումների կանխատեսումը հաշվի առնելով քաղաքական և սոցիալական տեղաշարժերը, հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունները,

✓ ռազմական ուժորտի զարգացման սոցիալական մեխանիզմների բարեփոխման (կատարելագործման) ուղիների մշակումն ու հիմնավորումը՝ նպատակ ունենալով ապահովել պետության անվտանգությունն ու սոցիալական առաջընթացը:

ԳԼՈՒԽ II

ՈԱՉՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ռազմասոցիալոգիական հետազոտությունների մեթոդաբանական հիմքը

Ռազմասոցիալական երևույթների և գործընթացների սոցիոլոգիական հետազոտման անհրաժեշտությունն առանձնապես հիմնավորման կարիք չունի: Ռազմասոցիալական հետազոտությունների շարքում ավանդաբար ընդգծվում են հետևյալ հիմնական ուղղությունները՝ հասարակական զարգացման տարբեր գործոնների (տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն) ենթատեքստում զինված ուժերի սոցիալական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրությունը, ռազմական տարբեր ստորաբաժանումների հետ գաղափարախոսական և դաստիարակչական աշխատանքի վարման միջոցների, ձևերի և մեթոդների արդյունավետության, ռազմական կոլեկտիվների, ռազմիկի անձի և վարքի ձևավորման, բանակի նկատմամբ հասարակական վստահության մակարդակի ուսումնասիրությունները:

Բերված հետազոտական ուղղություններն արդիական են նաև այսօր: Ավելին՝ հայ հասարակության տնտեսական, քաղաքական, մշակութային բարեփոխումների և նոր զինված ուժերի ձևավորման փաստն անհրաժեշտ է դարձնում ռազմասոցիալական երևույթների և գործընթացների հետազոտման ոլորտի ընդլայնումն ու խորացումը: Արդիականանում են այնպիսի հետազոտական ուղղություններ, ինչպիսիք են բանակային ենթամշակույթի ձևավորման պատճառների և պայմանների ուսումնասիրությունը, ռազմական կոլեկտիվներում շեղվող վարքի (ոչ կանոնակարգային հարաբերություններ, թմրամոլություն, հանցագործություն, և այլն) ուսումնասիրությունը, ղարաբաղյան պատերազմին զինծառայողների մասնակցության սոցիալ-հոգեբանական հետևանքների վերլուծությունը, բանակի ինստիտուտի և հասարակության այլ սոցիալական և քաղաքացիական

ինստիտուտների միջև փոխհարաբերությունների հետազոտումը և այլն: Այս բոլոր խնդիրների իրականացումը կապված է կոնկրետ ռազմասոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպման և անցկացման հետ: Փորձենք ընդհանուր պատկերացում տալ ռազմասոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանության, հիմնական հասկացությունների և գործընթացների մասին:

Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական հիմքն ու, մասնավորապես, մեթոդիկան և տեխնիկան գրեթե չեն տարբերվում ցանկացած այլ տիպի սոցիոլոգիական հետազոտություններից:

Ընդհանուր առմամբ «մեթոդաբանություն» հասկացությունը բնորոշում է որոշակի գործողությունների համակարգ, որի միջոցով ճանաչվում է սոցիալական իրականությունը: Այսպիսով՝ ռազմասոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանությունն ասելով՝ պետք է հասկանալ գիտական, ռազմասոցիոլոգիական ճանաչողության ընթացակարգերի, տեխնիկաների և մեթոդների ամբողջություն, որի շնորհիվ հնարավոր է դառնում ռազմասոցիալական երևույթների և գործընթացների առանձնահատկությունների բացահայտումը:

Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանության բովանդակությունը պարզաբանելու համար օգտագործվում են մի շարք հիմնական հասկացություններ, որոնցից են.

- մեթոդը՝ որպես տեղեկությունների հավաքման, մշակման և վերլուծության հիմնական միջոց,
- տեխնիկան՝ որպես այն հիմնական հնարների ամբողջություն, որն ապահովում է այս կամ այն մեթոդի արդյունավետ օգտագործումը,
- մեթոդիկան՝ որպես տվյալ մեթոդի հետ կապված տեխնիկական հնարների ամբողջություն, որն ընդգրկում է մասնավոր գործողություններ և այդ գործողությունների հերթականությունն ու փոխադարձ կապը,
- ընթացակարգը՝ որպես քայլերի հերթականություն, գործողությունների և հետազոտության կազմակերպման հնարների ընդհանուր համակարգ:

Դիտարկենք այս հասկացությունների իմաստը կոնկրետ օրինակի վրա: Ենթադրենք՝ հետազոտողը ցանկանում է պարզել զինծառայողների վերաբերմունքը ժամկետային զինծառայության նկատմամբ: Իբրև տեղեկատվության հավաքագրման մեթոդ կարելի է ընտրել հարցաթերթիկային հարցումը: Այդպիսի հարցման դեպքում ռեսպոնդենտներին (այսինքն՝ զինծառայողներին) ուղղված հարցերը կարող են տրվել ինչպես փակ (առաջարկվում են պատասխանների մի քանի տարբերակներ), այնպես էլ՝ բաց (պատասխանների տարբերակները բացակայում են) ձևով: Հարցերի շարադրման այս ձևերը վերաբերում են հարցաթերթիկային հարցման տեխնիկային, ինքը՝ հարցաթերթը, ինչպես նաև հարցումն անցկացնելու վերաբերյալ հարցազրուցավարին ուղղված ուղեցույցները հետազոտության մեթոդիկայի տարրեր են: Տվյալ դեպքում ընթացակարգը կներառի հերթականությամբ իրականացվող այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ հարցման մեթոդի ընտրությունը, տեղեկությունների հավաքման կազմակերպումը, ինչպես նաև՝ հետազայում այդ տեղեկությունների մշակման և ընդհանրացման համար նախատեսված գործողությունները:

Այսպիսով՝ ռազմասոցիոլոգիական հետազոտությունը մեթոդաբանական, մեթոդական և կազմակերպատեխնիկական հնարների տրամաբանական շղթա է, որն ուղղված է հետազոտվող ռազմասոցիալական երևույթի կամ գործընթացի մասին հավաստի սոցիոլոգիական տեղեկատվության ստացմանը:

2.2 Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների տիպերը

Ինչպես վկայում է պրակտիկան, ռազմասոցիոլոգիական հետազոտությունների տեսակները բավականին բազմազան են: Դրանց առանձնահատկությունների ըմբռնման համար նպատակահարմար է անդրադառնալ էմպիրիկ սոցիոլոգիայի կողմից կատարված դասակարգմանը: Վերջինս, ըստ հետազոտության ռազմավարության, սոցիալական իրականության ճանաչման մակարդակի և ձևի՝ ռազմասոցիոլոգիական հետազոտությունների ամբողջ բազմազանու-

թյան մեջ առաձնացնում է քանակական և որակական հետազոտությունները: Առաջինների թվին դասվում են այն հետազոտությունները, որոնք ուղղված են այս կամ այն գործընթացի զարգացման օրինաչափությունների և միտումների հայտնաբերմանը: Ընդհանուր առմամբ սոցիալական իրականության ուսումնասիրման քանակական մեթոդները աչքի են ընկնում արհեստականությամբ, որը դրսևորվում է նրանում, որ հետազոտողը կողմնորոշվում է օբյեկտի նախապես ընդգծված բնութագրիչներով և նախապատրաստած վարկածներով, հենվում է վերլուծության մշակված սխեմաների, փոփոխականների և դրանց միջև որոշակի կապերի վրա: Ավելին, օբյեկտի հետ հետազոտողի ուղղակի իրական շփումն այստեղ փոխարինվում է «վիճակագրական տեսանկյունով»:

Այն հետազոտությունները, որոնք վերաբերում են անձերի և հանրությունների փորձին, վարքին, արժեքներին, դիրքորոշումներին, պատկանում են որակական հետազոտությունների շարքին: Որակական հետազոտությունները թույլ են տալիս երևույթներն ուսումնասիրել բնական պայմաններում, ինչը կոնկրետ անհատների (ինֆորմանտների) բնական, «կենդանի» խոսքի լայն օգտագործում է ենթադրում: Այդ «բնականությունը» հնարավորություն է ընձեռնում ուսումնասիրել վարքի ոչ տիպիկ, նոր ձևերը, ինչը խիստ անհրաժեշտ է նոր երևույթի հնարավոր երանգների բացահայտման պարագայում: Օրինակ՝ զինվորական կոլեկտիվներում շեղվող վարքի առկա տեսակները որակական մոտեցմամբ ուսումնասիրելիս հետազոտողը երկարատև շփման մեջ է մտնում հետազոտվողի հետ՝ ստանալով հետազոտվողի էության մեջ ներթափանցելու և մյուսների հետ նրա փոխհարաբերությունների բազմազանությունն ընկալելու հնարավորություն:

Ի տարբերություն քանակականի՝ որակական հետազոտությունը հակված է ավելի մեղ ընդհանրացումների:

Չնայած այս և բազմաթիվ այլ տարբերություններին՝ որակական և քանակական հետազոտությունները կարող են համատեղ կիրառվել, ինչը թույլ է տալիս ուսումնասիրել միևնույն երևույթի տարբեր կողմերը, ինչպես նաև ստուգել տեղեկատվության հավաստիություն-

նը և վստահելիությունը երկու մեթոդների միջոցով հաշվի առնելով որակական և քանակական հետազոտությունների տարբերությունները և առանձնահատկությունները (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Որակական և քանակական հետազոտությունների տարբերությունները

Քանակական հետազոտություն	Որակական հետազոտություն
Վերլուծության միավորներ՝ փաստեր, իրադարձություններ	Վերլուծության միավորներ՝ սուբյեկտիվ արժեքներ, զգացմունքներ
Վարկածները ձևակերպվում են տվյալների հավաքումից առաջ	Վարկածները ձևակերպվում են վերլուծության եզրափակիչ փուլում
Զափման գործիքները ձևայնացված են և մշակվում են տվյալների հավաքումից առաջ	Զափման գործիքները ձևավորվում են դաշտային հետազոտության արդյունքում և անհատական մոտեցման արդյունք են
Տվյալները ներկայացվում են վիճակագրական տեսքով, սանդղակային ցուցանիշներով	Տվյալներն արտահայտությունների, դատողությունների, դիտարկումների տեսք են ստանում
Տեսությունները կազուալ (պատճառական) են և դեդուկտիվ (գիտական ընդհանրացումներ ընդհանուրից դեպի մասնավորը)	Տեսությունները կարող են և մեկնաբանական լինել, սակայն հիմնականում ինդուկտիվ են (գիտական ընդհանրացումներ մասնավորից դեպի ընդհանուրը)
Հետազոտական ընթացակարգերը ձևայնացված են, գործողությունների հերթականությունը՝ ամրագրված	Հետազոտական ընթացակարգերը ճկուն են
Տվյալների վերլուծությունը կատարվում է վիճակագրական մեթոդների օգնությամբ	Վերլուծությունը հիմնված է հավաքված տեքստային հաղորդագրության, զաղափարների ամփոփման կամ առանձնացման վրա

Այսպիսով՝ ռազմասոցիոլոգիական հետազոտությունների շարքում առանձնացվում են հետախուզական, նկարագրական և վերլուծական տարատեսակները:

Հետախուզական հետազոտությունը, որը կազմակերպման և իրագործման տեսակետից ամենադյուրինն է, հիմնականում ուղղված է ռազմասոցիալական հիմնախնդրի հայտնաբերմանը, դրա հրատապության հիմնավորմանն ու ապագա հետազոտության ուղղությունների որոշմանը: Հետախուզական հետազոտության անհրաժեշտությունը ծագում է քիչ ուսումնասիրված հիմնախնդիրների, հետազոտության ոչ ճշգրիտ գծագրվածության, այն դեպքերում, երբ անհրաժեշտ է «հետախուզություն»՝ ճշգրիտ պատկերացնելու համար, թե ինչը և ինչպես պետք է ուսումնասիրել: Այս իմաստով հետախուզական հետազոտությունը կարող է արդյունավետ միջոց դառնալ՝ հետազոտության առարկայական տիրույթի մասին լրացուցիչ տեղեկատվության ստացման, վարկածների և խնդիրների, գործիքների, հետազոտվող համակցության սահմանների ճշգրտման համար, ինչպես նաև ծառայել որպես նախնական փուլ՝ ավելի խորը և ծավալուն հետազոտությունների համար:

Նկարագրական հետազոտությունը ռազմասոցիոլոգիական հետազոտությունների ավելի բարդ տեսակ է, որն ուղղված է ռազմասոցիալական օբյեկտների սոցիալգործառնական կապերի նկարագրմանը, ուսումնասիրվող երևույթների և գործընթացների որակական-քանակական բնութագրիչների հետազոտմանը: Սովորաբար նկարագրական հետազոտությունը կիրառվում է այն ժամանակ, երբ վերլուծության օբյեկտը մարդկանց հարաբերականորեն մեծ հանրությունն է: Հետազոտության այդպիսի օբյեկտ կարող է դառնալ, օրինակ՝ զորակոչային տարիքի երիտասարդությունը, որն օժտված է սոցիալ-ժողովրդագրական լայն բազմազանությամբ: Նման պայմաններում օբյեկտի կառուցվածքում հարաբերականորեն միատեսակ խմբերի առանձնացումը կարող է ապահովել հետազոտողին հետաքրքրող բնութագրիչների ճիշտ գնահատումը, համեմատությունն ու համադրումը, ինչպես նաև դրանց միջև առկա կապերի բացահայտումը:

Վերլուծական հետազոտությունը ռազմասոցիոլոգիական հետա-

գոտությունների առավել բարդ տեսակ է՝ ուղղված ոչ միայն ուսումնասիրվող երևույթների կառուցվածքային տարրերի նկարագրությանը, այլև՝ ռազմասոցիալական օբյեկտի գործառնության պատճառահետևանքային կապերի բացահայտմանը: Այլ կերպ ասած՝ եթե նկարագրական հետազոտությունը պատասխանում է «ինչպե՞ս» հարցին, ապա վերլուծականը՝ «ինչո՞ւ» հարցին: Օրինակ՝ եթե նկարագրական հետազոտության ժամանակ ուսումնասիրվում է երիտասարդության նյութական ապահովվածության և զինծառայությունից խուսափելու նրանց հակվածության միջև եղած կապը, ապա վերլուծականի դեպքում փնտրվում է այն հարցի պատասխանը, թե ինչպիսին է նյութական ապահովվածության և զինծառայությունից երիտասարդների խուսափելու միջև եղած կապը: Այսպիսով՝ վերլուծական հետազոտությունը թույլ է տալիս հայտնաբերել գործոնների մի ամբողջ համակարգ՝ առանձնացնելով հիմնական և երկրորդական, ժամանակավոր և մշտական, վերահսկելի և անվերահսկելի և այլ տիպի գործոններ:

Նշենք նաև, որ ի տարբերություն նախորդների՝ վերլուծական հետազոտության կազմակերպման և անցկացման համար ավելի երկար ժամանակ է պահանջվում:

Ըստ այն սկզբունքի, թե ինչպես է ուսումնասիրվում հետազոտության օբյեկտը՝ կայուն, անփոփոխ վիճակում (ստատիկ), թե փոփոխության, զարգացման մեջ (դինամիկ), առանձնացվում են ռազմասոցիոլոգիական հետազոտությունների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են **կետայինը** և **կրկնվողը**: Կետային կամ միանգամյա ռազմասոցիոլոգիական հետազոտությունն ուղղված է որևէ ռազմասոցիալական երևույթի կամ գործընթացի ուսումնասիրմանը տվյալ պահին: Այդպիսի հետազոտության արդյունքում ստացված տեղեկատվությունն անվանում են «ստատիկ», «մոմենտային», քանի որ այն օբյեկտի որակական և քանակական բնութագրիչների որոշակի, միանգամյա «կտրվածք» է և չի պատասխանում ժամանակի ընթացքում վերջինիս փոփոխության միտումների մասին հարցին: Այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստանալ տեղեկություններ ռազմասոցիալական երևույթների և գործընթացների զարգացման միտումների մասին, հետազոտողը կրկնակի հետազոտություն է անցկացնում: Հետազոտության այս տե-

սակի անվանումը հուշում է, որ օբյեկտի փոփոխությունների մասին տվյալները կարող են ստացվել միասնական ծրագրով և նույն գործիքներով իրականացված մի քանի հետազոտությունների արդյունքում, որոնք կատարվում են հերթականությամբ՝ ընդհատվելով համապատասխան ժամանակահատվածների ընթացքում:

Կախված նպատակներից՝ կրկնակի հետազոտության մեջ տեղեկատվության հավաքումը կարող է տեղի ունենալ երկու, երեք և ավելի փուլերով, իսկ դրանց միջև ժամանակային դադարները կարող են տարբեր տևողություն ունենալ: Շատ հաճախ հենց հետազոտվող գործիքների բնույթն ու օբյեկտի հատկություններն են կանխորոշում կրկնակի հետազոտությունների ժամանակային ընդհատումների թիվը և տևողությունը: Օրինակ՝ բուհերի շրջանավարտների սոցիալական նախընտրությունների ուսումնասիրման դեպքում եթե հետազոտությունն անց է կացվել բուհն ավարտելուց կամ բանակ զորակոչվելուց անմիջապես հետո, հաջորդ հարցումը պետք է տեղի ունենա ոչ շուտ, քան կես տարի անց, քանի որ կես տարին այն նվազագույն ժամանակահատվածն է, որի ընթացքում հնարավոր է ակնկալել անձի որևէ փոփոխություն ռազմական ծառայության ազդեցության ներքո:

Կրկնակի հետազոտության տարատեսակներն են **պանելային** և **կոհորտային** հետազոտությունները: Հետազոտության առաջին տեսակը կիրառվում է միևնույն սոցիալական օբյեկտի հետազոտման շրջանակում, եթե ժամանակի ընթացքում օբյեկտը բազմաթիվ փոփոխություններ է կրում: Պանելային հետազոտության մեջ հետազոտվող համակցության անդամները մնում են հետազոտության կենտրոնում՝ դրա անցկացման ամբողջ ընթացքում: Կոհորտային հետազոտությունները կիրառվում են հատուկ սոցիալական հատկանիշներ ունեցող ռազմասոցիալական խմբերի (պատերազմի մասնակիցներ, վետերաններ և այլն) ուսումնասիրության դեպքում: Սակայն, այստեղ ուսումնասիրման յուրաքանչյուր հաջորդ փուլում պետք չէ պահպանել հարցման միևնույն օբյեկտը:

Այսպիսին են ռազմասոցիոլոգիական հետազոտությունների տիպերն ու առանձնահատկությունները: Մնում է ավելացնել, որ ռազմասոցիալական ցանկացած երևույթ կամ գործընթաց կարող է

ուսումնասիրվել ինչպես որակական, այնպես էլ քանակական մոտեցման միջոցով, հետախուզական, նկարագրական կամ վերլուծական, կետային կամ կրկնակի հետազոտությամբ: Սակայն, ռազմասոցիոլոգիական հետազոտության տեսակի ընտրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ երկու հանգամանքի վրա՝ ինչպիսին են հետազոտության նպատակները, և ինչպիսին են հետազոտվող երևույթի կամ գործընթացի էությունն ու առանձնահատկությունները:

2.3 Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների փուլերը

Ռազմասոցիոլոգիական հետազոտությունն անցնում է իրար հաջորդող, կազմակերպչական տեսանկյունից ինքնուրույն, իսկ բովանդակային առումով՝ փոխկապակցված փուլերով: Դրանք են՝

- հետազոտության նախապատրաստում,
- առաջնային տեղեկության հավաքում,
- տեղեկության մշակում,
- մշակված տեղեկության վերլուծություն,
- եզրակացությունների և առաջարկների ձևակերպում:

Ռազմասոցիոլոգիական հետազոտության նախապատրաստական փուլի կարևոր ընթացակարգային խնդիրը հետազոտության ծրագրի կազմումն է: Ծրագիրը ռազմասոցիոլոգիական հետազոտության հիմնական հայեցակարգն է, որը պարունակում է որոշակի երևույթի կամ գործընթացի հետազոտման մեթոդաբանական մոտեցումների և մեթոդական հնարների տեսական հիմնավորում: Բոլոր մանրամասնություններով, մանրակրկիտ մշակված ծրագիրը ռազմասոցիոլոգիական հետազոտության հաջողության գրավականն է:

Որպես կանոն ռազմասոցիոլոգիական հետազոտության ծրագիրը բաղկացած է երկու մասից: Առաջին՝ մեթոդաբանական մասը, ներառում է հետազոտության նախապատրաստական փուլի ընթացակարգերը՝ հետևյալ հաջորդականությամբ՝

- հիմնախնդրի ձևակերպում,

- հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում,
- հետազոտության նպատակի և խնդիրների ձևակերպում,
- հիմնական հասկացությունների տրամաբանական վերլուծություն,
- հետազոտության վարկածների ձևակերպում:

Ծրագրի հաջորդ մեթոդական մասը ընդգրկում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են՝

- հետազոտության աշխատանքային պլանը,
- ընտրանքային համախմբության սահմանումը (ընտրանքի սկզբունքի հիմնավորում),
- առաջնային սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման, մշակման և վերլուծության մեթոդների հիմնավորումը:

Հետազոտության հիմնախնդիրը: Ցանկացած հետազոտություն սկսվում է հիմնախնդրի սահմանումից: Տարբերակում են խնդրի սահմանման երկու կողմերը՝ իմացաբանական և առարկայական, որոնք սերտորեն փոխկապակցված են: Իմացաբանական, այսինքն՝ ճանաչողական տեսակետից հիմնախնդիր կամ պրոբլեմային իրավիճակ է այն անհամապատասխանությունը կամ հակասությունը, որը ծագում է մարդկանց պահանջումների և դրանց բավարարման ուղիների, միջոցների և մեթոդների չիմացության միջև: Առարկայական տեսակետից՝ սոցիոլոգիական հետազոտության հիմնախնդիր է սոցիալական օրգանիզմի, դրա ենթահամակարգերի կամ առանձին բաղկացուցիչ տարրերի միջև ծագած հակասությունները: Այդ իմաստով հիմնախնդիրն այն իրական հակասական իրավիճակն է, որը կարող է զանգվածային բնույթ ունենալ և, հետևաբար՝ շոշափել այս կամ այն սոցիալական ինստիտուտի, խմբի, հանրության շահերը:

Այսպիսով՝ խնդիրն անհամապատասխանությունն է գիտելիքի կամ տեղեկատվության կարիքի և դրա առկայության միջև: Ուսումնասիրական հիմնախնդիր կարող է հանդիսանալ, օրինակ՝ հասարակության մեջ բանակի կամ ռազմական մասնագիտությունների հեղինակության անկումը, զորամասերում զինվորների սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի անարդյունավետությունը և այլն:

Հետազոտողը պետք է պրոբլեմային իրավիճակի հետազոտումը սկսի հիմնահարցի ձևակերպումից, որը ենթադրում է հետևյալ գործառնությունները.

1. Հիմնահարցի առկայության հաստատում՝ պատասխանելով այն հարցին, թե կա՞ արդյոք հիմնախնդրի որևէ հայտանիշ՝ որակական կամ քանակական ցուցիչ, տարվո՞ւմ է արդյոք այդ ցուցիչների հաշվարկում, հավաստի՞ է արդյոք գոյություն ունեցող տեղեկատվությունը:
2. Հիմնահարցի առավել էական տարրերի կամ գործոնների առանձնացում, որոնք վերաբերում են ռազմական սոցիոլոգիային: Օրինակ՝ դրված է խնդիր՝ պարզել զորամասերում ոչ կանոնադրական հարաբերությունների տարածման պատճառները: Սոցիոլոգ-հետազոտողին այդ դեպքում անհրաժեշտ է որոշել, թե որ սոցիալական խմբերն ու անձերն են կապված այդ հարաբերությունների գոյության հետ, ինչպիսի սոցիալական պայմաններ են նպաստում այդ հարաբերությունների վերարտադրությանը և այլն:
3. Պրոբլեմային իրավիճակում գլխավոր և երկրորդական բաղադրատարրերի տարանջատում՝ հետազոտության հիմնական ուղղությունները որոշելու համար:
4. Նմանատիպ խնդիրների իրական և հնարավոր լուծումների վերլուծություն:

Այս գործառնություններն իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ հարցի վերաբերյալ առկա գրականությունը, նպատակահարմար են նաև զրույցներ իրավասու անձանց, փորձագետների հետ:

Հետազոտության օբյեկտը: Հիմնահարցի ձևակերպումը սկզբնավորում է հետազոտության օբյեկտի ընտրությունը: Որպես այդպիսին՝ կարող են ծառայել այս կամ այն ռազմասոցիալական գործընթացները և փոխհարաբերությունները, սոցիալական իրականության որևէ ոլորտը, որը պրոբլեմային իրավիճակ է պարունակում: Հետևաբար՝ լայն իմաստով ռազմասոցիոլոգիական հետազոտության օբյեկտ է

դառնում պորբլեմի կրողը և, համապատասխանաբար, հետազոտության օբյեկտի ընտրությունը նշանակում է ուսումնասիրման ենթակա պորբլեմային իրավիճակի սահմանների որոշում:

Հետազոտության առարկան: Հետազոտության օբյեկտից բացի ընդունված է առանձնացնել նաև հետազոտության առարկան: Վերջինս արտահայտում է փոխադարձ կապը հետազոտության հիմնահարցի և օբյեկտի միջև: Հետազոտության առարկա է դառնում հիմնախնդրի կենտրոնական հարցը, այն է՝ օբյեկտի կարևորագույն հատկանիշները և կողմերը, որոնք ենթակա են անմիջական հետազոտության: Պետք է նշել, որ հետազոտվող պորբլեմից կախված միևնույն էմպիրիկ օբյեկտի մեջ կարող են առանձնացվել դրա տարբեր կողմերը, որոնք և կդառնան հետազոտության առարկա: Օրինակ եթե դրվում է բանակում ոչ կանոնադրական հարաբերությունների սոցիոլոգիական ուսումնասիրության խնդիրը, ապա հետազոտության օբյեկտի դերում կլինի ռազմական կոլեկտիվը, քանի որ նշված հարաբերությունները դրսևորվում են զինծառայողների խմբերում և առանձին անհատների վարքում: Վերջիններս, ըստ էության, խնդրի կրողներն են: Տվյալ դեպքում հետազոտության առարկա են դառնալու այն պատճառները, պայմանները և գործոնները, որոնք դրդում են զինծառայողներին ոչ կանոնադրական հարաբերությունների: Ջորամասերի ենթանշակույթի սոցիոլոգիական հետազոտության դեպքում տրամաբանական է ռազմական կոլեկտիվների մասին դատել առանձին ներկայացուցիչների ուսումնասիրման հիման վրա: Սակայն այդ դեպքում փոփոխվում է հետազոտության առարկան՝ հետազոտողի ուշադրությունը բևեռելով, մասնավորապես, արժեքների, նորմերի համակարգի, հաղորդակցման ձևերի վրա (վերբալ լեզու, ժեստերի լեզու):

Հետազոտության նպատակը: Հիմնախնդրի ձևակերպմամբ ամբողջանում է այն հարցը, թե որ հիմնահարցի լուծմանը և ինչպիսի արդյունքի ստացմանն է ուղղված տվյալ հետազոտությունը, այսինքն ինչպես է լուծվում նպատակադրած հարցը: Օրինակ եթե դիտարկենք բանակում նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման հարցը, ապա հետազոտության նպատակն է լինելու զին-

վորների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների ուսումնասիրումն ու խմբին նրանց հարմարման աստիճանի բարձրացման ուղիների նկարագրությունը:

Հետազոտության խնդիրը ոչ այլ ինչ է, քան հետազոտության առջև դրված նպատակի իրականացման միջոցների ուրվագծում: Այսպես՝ վերը նշված օրինակում հետազոտության նպատակը պետք է հետազոտողին կողմնորոշի ընտրել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հարմարման փուլերի առանձնացումը, այն գործոնների բացահայտումը, որոնք նպաստում կամ խանգարում են նորակոչիկին հարմարվել նոր կենսակերպին և պայմաններին, հարմարման ժամանակահատվածին բնորոշ սթրեսածին և կոնֆլիկտային իրավիճակների ախտորոշումը և այլն:

Հետազոտության հիմնական հասկացությունների տրամաբանական վերլուծությունը: Հետազոտության մեթոդաբանության մշակման հաջորդ՝ անհրաժեշտ փուլը հիմնական հասկացությունների տրամաբանական վերլուծության փուլն է: Այն թույլ է տալիս.

- առանձնացնել մի շարք տեսական հասկացություններ, որոնք օգտագործվում են տվյալ հետազոտության մեջ,
- կիրառական հիմնախնդիրները վերլուծել տեսական մակարդակի վրա՝ ապահովելով հետազոտության արդյունքների, եզրակացությունների և հետագա քայլերի գիտական հիմնավորվածությունը,
- որոշել այն որակական և քանակական ցուցանիշները, որոնց միջոցով չափվելու են հետազոտվող երևույթները:

Հիմնական հասկացությունների տրամաբանական վերլուծությունն ընդգրկում է երկու ընթացակարգեր՝ հիմնական հասկացությունների մեկնաբանությունն ու օպերացիոնալիզացիան: Հետազոտության առարկայի էությունը բացահայտվում է առարկայի հետ կապված հասկացությունների մեկնաբանման միջոցով: Հասկացությունների ընդունված գիտական սահմանումներ տալու գործընթացում էական նշանակություն ունեն հետազոտողի գիտելիքներն ու պրակտիկ փորձը, ինչպես նաև բառարանների, հանրագիտարան-

ների, դասագրքերի օգտագործումը:

Հնարավոր է, որ հիմնական հասկացությունները ներառեն ենթահասկացություններ: Այդ դեպքում հետազոտության առարկայի սահմանման մեջ ամրագրված հիմնական հասկացությունների համակարգման, դրանց բաղկացուցիչ հասկացությունների առանձնացման ընթացակարգի անհրաժեշտություն կծագի: Այդ ընթացակարգը կոչվում է **օպերացիոնալիզացիա**: Օպերացիոնալիզացիայի արդյունքում առանձնացվում և համակարգվում են բոլոր այն հասկացությունները, որոնք օգտագործվում են հետազոտվող երևույթի կամ գործընթացի սահմանման ժամանակ:

Վարկածների ձևակերպում: Ծրագրի մեթոդաբանական մասնավարտվում է վարկածների ձևակերպմամբ: Հետազոտության վարկածը որոշակի փաստերի, երևույթների և գործընթացների բացատրության համար գիտականորեն հիմնավորված առաջարկ է, որը պետք է հաստատվի կամ հերքվի հետազոտության արդյունքում: Այդ իմաստով վարկածները (ավելի ճիշտ՝ դրանց առաջադրումը) կարող են կանխորոշել հետազոտության ընդհանուր ուղղվածությունը և ներքին տրամաբանությունը: Վարկածները սովորաբար ունեն պայմանական-կատեգորիկ դատողության ձև («եթե..., ապա....»): Առաջին դրույթը խոսում է պայմանի, երկրորդը՝ հետևանքի մասին: Գոյություն ունեն որոշակի կանոններ, որոնց պետք է հետևել վարկածների առաջադրման ժամանակ.

- Վարկածը չպետք է այնպիսի հասկացություններ պարունակի, որոնք չեն մեկնաբանվել, հակառակ դեպքում վարկածն անստուգելի է դառնում:
- Այն չպետք է հակասի մինչ այդ հաստատված գիտական փաստերին:
- Այն պետք է առավելագույնս պարզ լինի, կապված չլինի բազմաթիվ ենթադրությունների և սահմանափակումների հետ:
- Վարկածը պետք է ստուգելի լինի տեսական գիտելիքի և հետազոտության մեթոդաբանության առկա մակարդակում:

Սոցիոլոգիական հետազոտության ընտրանքը: Ծրագրի կարևորագույն մասերից է մեթոդական մասը, որի հիմնական կետերից մեկն ընտրանքի հիմնավորումն է: Հետազոտության օբյեկտը կարող է լինել ոչ մեծ (օրինակ՝ բանակի գումարտակը), այդ դեպքում հետազոտության օբյեկտը հնարավոր է ենթարկել համապարփակ ուսումնասիրման: Սակայն առավել հաճախ հետազոտողը գործ ունի բարդ և ծավալուն սոցիալական կազմավորումների հետ (օրինակ՝ զորամասը): Նման դեպքերում համապարփակ հետազոտության իրականացումը բարդ է, և միակ ճիշտ ուղին ընտրանքային մեթոդի կիրառումն է: Հետազոտվող սոցիալական օբյեկտը, որի վրա տարածվում են հետազոտության եզրակացությունները, կոչվում է *զլխավոր համակցություն*: Իսկ դրա տարրերի որոշակի քանակը, որն ընտրվում է տրված խիստ կարգով, կոչվում է *ընտրանքային համակցություն*: Ընտրանքային համակցությունն ընտրվում է ընտրանքային մեթոդներով, որոնց կիրառումը ռազմասոցիոլոգիական հետազոտություններում անհրաժեշտաբար ենթադրում է ստացված արդյունքների ներկայացուցչականության հարցի լուծում: Ընտրանքի ներկայացուցչականության պահանջի էությունն այն է, որ ընտրանքային համակցության համար ընտրվող տարրերը պետք է արտահայտեն սոցիալական օբյեկտների որակական հատկանիշների փոխադանադրվածությունը: Այլ կերպ ասած՝ ընտրանքային համակցությունը պետք է զլխավոր համակցության միկրոմոդելը լինի, քանի որ միայն այդ դեպքում է արդարացված ամբողջի մասին եզրակացությունների կազմումը՝ նրա մասերի ուսումնասիրման հիման վրա:

Ներկայացուցչականության պահանջի բավարարման համար պետք է հնտորեն իրականացնել հետազոտության օբյեկտի տիպային ընտրանքը: Օրինակ՝ եթե ուսումնասիրվում է զինծառայողների վերաբերմունքը զինվորական ծառայության նկատմամբ, ապա ընտրանքային համակցության մեջ պետք է համամասնորեն ներկայացված լինեն զինված ուժերի բոլոր տեսակները՝ հաշվի առնելով դրանց տեղաբաշխումը: Ջորքերի կենսապայմանները և կենցաղը կապված զորամասերի տարածքային տեղաբաշխման (սահմանամերձ գոտի, վարչական կենտրոն և այլն) հետ, կարող են տարբերվել,

Սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդները:

Ծրագրի մեթոդական մասի կարևոր բաժիններից է տեղեկատվության հավաքման մեթոդի հիմնավորումը: Սոցիոլոգիական հետազոտությունների պրակտիկայում տարբերում են տեղեկատվության հավաքման հետևյալ մեթոդները՝ հարցում, դիտարկում և փաստաթղթերի վերլուծություն:

Հարցում: Հարցումը ռազմասոցիոլոգիական հետազոտություններում տեղեկատվության հավաքման առավել տարածված մեթոդն է, որի ժամանակ տեղեկատվության աղբյուրը հետազոտվող հիմնախնդրի անմիջական կրողն է: Այս մեթոդը կիրառվում է այն դեպքերում, երբ 1) հետազոտվող խնդրի մասին գոյություն չունեն տեղեկատվության պատշաճ փաստաթղթային աղբյուրներ, 2) հետազոտության առարկան քիչ հասանելի է կամ ընդհանրապես հասանելի չէ դիտարկման համար, 3) հետազոտության առարկա են հասարակական կամ անհատական գիտակցության տարրերը, պահանջմունքները, շահերը, նպատակները և դրդապատճառները:

Հարցումը հիմնված է տեղեկատվության հավաքման երկու հիմնական տեխնիկաների վրա՝ հարցաթերթիկի լրացման և հարցազրույցի: Հարցաթերթիկային հարցման դեպքում հարցվողը գրավոր պատասխանում է հարցերին՝ հարցազրուցավարի ներկայության կամ բացակայության պայմաններում: Հարցերի բովանդակության և կառուցվածքի տեսակետից առանձնացվում են բաց հարցեր, որոնցում ռեսպոնդենտներն իրենք են ձևակերպում տրված հարցի պատասխանը, փակ հարցեր, որոնցում պատասխանների տարբերակները նախապես տրված են, և կիսափակ հարցեր, որոնցում պատասխանների նախորդ երկու տեսակները համակցվում են: Ըստ հարցման ձևի՝ հարցաթերթիկային հարցումը լինում է անհատական և խմբային (վերջին դեպքում կարճ ժամանակահատվածում կարելի է հարցնել մարդկանց զգալի քանակություն), անմիջական և հեռակա (օրինակ՝ հարցաթերթերի տարածումը փոստի միջոցով):

Ռազմասոցիոլոգիական հետազոտություններում լայնորեն օգ-

տագործվում է տեղեկատվության հավաքման հարցազրույցի մեթոդը: Ի տարբերություն անկետավորման, որտեղ փոխհարաբերությունները հետազոտողի և հիմնախնդրի կրողի միջև միջնորդավորված են հարցաթերթով՝ հարցազրույցի դեպքում այդ փոխհարաբերություններն անմիջական են: Հարցազրույցը հարցնողի և հարցվողի միջև միջանձնային կապի և ուղղակի շփման գործընթաց է: Հայտնի են հարցազրույցի մի շարք տեսակներ: Ըստ հարցազրույցի բովանդակության՝ տարբերում են փաստաթղթային հարցազրույցներ (օրինակ անցած ռազմական միջոցառումների ուսումնասիրություն) և հարցազրույցներ կարծիքների վերաբերյալ (զնահատականներ, տեսակետներ, դատողություններ): Ըստ տեղեկատվության աղբյուրի (կրողի)՝ հարցազրույցները կարող են լինել զանգվածային (դրանք նաև անվանվում են հարցումներ, քանի որ իբրև տեղեկատվության հավաքման տեխնիկա կարող է կիրառվել ոչ միայն հարցազրույցը, այլ նաև հարցաթերթիկային և մասնագիտացված (փորձագիտական) հարցումը): Առաջին դեպքում տեղեկության աղբյուր են հանդիսանում տարբեր սոցիալական խմբերը, մինչդեռ երկրորդ դեպքում հարցվողի դերում այն իրազեկ անձինք են, որոնց գիտելիքները, մասնագիտությունը և փորձը կապված է հետազոտության առարկայի հետ: Ըստ իրականացման տեխնիկայի՝ պետք է առանձնացնել նաև ազատ և ձևայնացված (ստանդարտացված) հարցազրույցները: Առաջին տիպին են պատկանում այն հարցազրույցները, որոնք վարվում են ընդհանուր ծրագրով՝ առանց հարցերի մասնավորեցման, մինչդեռ ստանդարտացված հարցազրույցները ենթադրում են ինչպես հարցազրույցի ծրագիր, այնպես էլ հարցերի հնարավոր պատասխանների տարբերակների մշակում և առաջադրում:

Հարցման մեթոդը ենթադրում է տեղեկատվության հավաքում սոցիալ-հոգեբանական հաղորդակցման պայմաններում, ինչը, բնականաբար, չի կարող չանդրադառնալ ստացված տվյալների բովանդակության և որակի վրա: Այս կապակցությամբ էմպիրիկ սոցիոլոգիական հետազոտությունների պրակտիկայում առաջադրվում են բազմաթիվ մեթոդական պահանջներ և կիրառվում ընթացակարգեր,

որոնք նվազեցնում են տվյալների սուբյեկտիվությունը, բարձրացնում հարցման որպես տեղեկատվության հավաքման մեթոդի վստահելիության մակարդակը:

Դիտարկում: Ռազմասոցիոլոգիական հետազոտություններում կիրառվող հաջորդ մեթոդը ռազմասոցիալական երևույթի կամ գործընթացի նպատակաուղղված և համակարգված դիտարկումն է: Տվյալ մեթոդի գլխավոր առավելությունն այն է, որ թույլ է տալիս իրադարձությունները և մարդկային վարքի տարրերն ուսումնասիրել իրական պայմանների և ժամանակի պարագայում, մինչդեռ մյուս մեթոդներն ապավինում են հարցվողների դատողություններին: Բացի առաջնային տեղեկատվության հավաքման դեպքերից, դիտարկումը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ պետք է ստանալ վիճակագրական տվյալներ, լեզվական վարքի նմուշներ, «կենդանի» օրինակներ, նախնական տեղեկություն և պատկերավոր նյութեր՝ պլանավորվող հետազոտության ուղղությունը ճշտելու համար: Դիտարկման մեթոդն ունի որոշ սահմանափակություններ: Այն ենթադրում է դիտարկողի ու դիտարկման օբյեկտի միջև անմիջական կապ, և որքան երկարատև է այդ կապը, այնքան ավելի սուբյեկտիվ կարող է լինել դիտարկվող երևույթների և գործընթացների վերաբերյալ դիտարկողի կողմից հավաքած տեղեկատվությունը: Տվյալ մեթոդի մյուս սահմանափակումը գալիս է սոցիալական գործընթացների անդառնալիությունից, որի պատճառով անհնարին է դառնում կրկնակի դիտարկման անցկացումը:

Գոյություն ունեն ռազմասոցիոլոգիական դիտարկման տարբեր տեսակներ: Ըստ ձևայնացվածության աստիճանի՝ առանձնացնում են դիտարկման հետևյալ տեսակները

- կառուցվածքայնացված (հետազոտողն ունի դիտարկման արդյունքների ամրագրման համար գործողությունների և խորհուրդների մանրակրկիտ ծրագիր),
- ոչ կառուցվածքայնացված (դիտարկողի գործողությունների մանրակրկիտ պլանը բացակայում է, առկա է դիտարկման ուրվագիծը):

Ըստ հետազոտվող իրավիճակին դիտարկողի մասնակցության առանձնացվում են

- ընդգրկված դիտարկում (հետազոտողն ընդգրկվում է ուսումնասիրվող սոցիալական գործընթացի մեջ, համագործակցում է դիտարկվողների հետ առանց դիտարկման մասին նրանց տեղեկացնելու),
- չընդգրկված դիտարկում (հետազոտողը տեղեկացնում է դիտարկվողներին հետազոտության նպատակների և խնդիրների մասին):

Ըստ իրականացման վայրի դիտարկումը լինում է.

- դաշտային (հետազոտությունն անց է կացվում դիտարկվողների համար բնական պայմաններում),
- լաբորատոր (դիտարկվող գործընթացների նկարագրության համար ստեղծվում են փորձագիտական պայմաններ):

Ըստ դիտարկման հաճախականության՝ առանձնացվում են

- սիստեմատիկ (երկարատև, շարունակական) դիտարկում ցիկլային սահմանափակ ժամկետում իրականացվող,
- պատահական դիտարկում (հետազոտողը գործ ունի նախապես չժողովրդաված երևույթի, անսպասելի իրավիճակի հետ):

Փաստաթղթերի վերլուծություն: Փաստաթղթերի վերլուծությունը տեղեկատվության հավաքման ևս մեկ, լայնորեն օգտագործվող մեթոդ է: Բնութագրելով սոցիալական իրականության փաստացի կողմը՝ փաստաթղթերը միևնույն ժամանակ արտացոլում են հասարակության կյանքի հոգևոր և նյութական կողմերը: Դրանք տեղեկություններ են պարունակում առանձին անհատների, սոցիալական խմբերի, հասարակության գործընթացների և գործունեության արդյունքների մասին: Այդ իմաստով փաստաթղթային տեղեկատվությունը ռազմասոցիոլոգիական ճանաչողության համար կարող է խիստ կարևոր լինել: Լինելով շատ տարբեր և բազմատեսակ փաստաթղթային աղբյուրները սոցիոլոգիական գրականության մեջ դասակարգվում են տարբեր հիմքերով: Ըստ տեղեկատվության ամրագրման սկզբունքի՝ առանձնացվում են

գրավոր փաստաթղթեր, վիճակագրական տվյալներ, կինո-, ֆոտո- և հեռուստատեսային նյութեր, աուդիոձայնագրություններ: Թվարկվածներից առավել մեծ տեղ են գրավում գրավոր փաստաթղթերը, որոնք ընդգրկում են տեղեկատվության այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են պետական արխիվները, անձնական փաստաթղթերը և այլն: Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների համար հատուկ հետաքրքրություն կարող են ներկայացնել անձնական փաստաթղթերը: Դրանց թվին են պատկանում նամակները, ինքնակենսագրությունները, օրագրերը, հիշողությունները և այլն: Հետազոտողի համար անձնական փաստաթղթերի արժեքն այն է, որ դրանցում հաճախ են հանդիպում ազատ, ոչնչով չսահմանափակված դատողություններ ազատ ընտրված թեմաների շուրջ: Այդ դատողությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրել հասարակական գիտակցության անհատական դրսևորումները:

Դասակարգումն ըստ փաստաթղթերի աղբյուրի՝ հնարավորություն է տալիս առանձնացնել պաշտոնական (օրինակ՝ կառավարության հրամանագրեր, դիմումներ, օրենքներ, նիստերի արձանագրություններ) և ոչ պաշտոնական (օրինակ՝ անձնական) փաստաթղթերը: Ըստ տեղեկատվության աղբյուրի՝ առանձնացվում են առաջնային և երկրորդային փաստաթղթերը: Առաջնային փաստաթղթերը ստեղծվում են տեղի ունեցող իրադարձություններն անմիջապես ամրագրելու և վերլուծելու համար, մինչդեռ երկրորդային փաստաթղթերը ներկայացնում են առաջնային աղբյուրներից քաղված տվյալների ամփոփման ու մեկնաբանման արդյունքները:

Փաստաթղթերն առանձնացվում են նաև ըստ դրանց նպատակի: Նպատակային են համարվում այն փաստաթղթերը, որոնք ստեղծվում են կոնկրետ հետազոտական նպատակներով: Ակնհայտ է, որ շատ դեպքերում հետազոտողը ստիպված է գործ ունենալ այնպիսի փաստաթղթերի հետ, որոնք կազմվել են այլ նպատակներով: Սովորաբար հենց այդ տիպի նյութերն են ռազմասոցիոլոգիական հետազոտության համար փաստաթղթային տեղեկատվության աղբյուր դառնում:

Փաստաթղթերի վերլուծությունը հնարավորություն է տալիս ստա-

նալ օբյեկտիվ փաստագրական տվյալներ առանձին անհատների, սոցիալական խմբերի, անցյալի այս կամ այլ իրադարձության մասին: Քանի որ հետազոտողն առավել հաճախ գործ ունի ոչ նպատակային փաստաթղթերի հետ, ապա պարունակվող տեղեկատվությունը պետք է վերանշակվի և վերաիմաստավորվի: Բացի այդ, պաշտոնական փաստաթղթերի մեծ մասը չի պարունակում տեղեկատվություն աղբյուրի մասին, ինչը բարդացնում է անձի վարքաբանական, հոգեբանական և մտավոր բնութագրերի վերլուծությունը:

Գոյություն ունի փաստաթղթերի վերլուծության երկու մոտեցում՝ ավանդական կամ դասական և ձևայնացված քանակական (կոնտենտ-վերլուծություն): Ավանդական վերլուծության մեթոդը պարունակում է գործառույթների բազմազանություն ուղղված փաստաթղթերում առկա տեղեկատվության մեկնաբանմանն ու ներկայացմանը: Ավանդական վերլուծությունն ինտենսիվ վերլուծություն է, որը պահանջում է «խորասուզում փաստաթղթի խորքը»՝ դրա բովանդակությունը վերծանելու համար: Բնականաբար, այդ դեպքում մեծ դեր պետք է խաղա հետազոտողի փորձը, առարկայի մասին գիտելիքների խորությունն ու ինտուիցիան: Տվյալ մեթոդի հիմնական թերությունը սուբյեկտիվությունն է. որքան էլ հետազոտողը ձգտի նյութը օբյեկտիվորեն դիտարկել, այնուամենայնիվ, մեկնաբանումը միշտ այս կամ այն չափով սուբյեկտիվ կլինի: Սուբյեկտիվիզմից խուսափելու հնարավորություն է ընձեռում փաստաթղթերի ձևայնացված կամ քանակական վերլուծությունը: Այդ մեթոդի էությունն այն է, որ առանձնացվում են փաստաթղթի հեշտ հաշվարկելի հատկանիշներն ու բնութագրիչները: Բնութագրիչի օրինակ կարող է ծառայել փաստաթղթի էական կողմերն արտահայտող որոշ տերմինների օգտագործման հաճախականությունը: Այդ բնութագրիչի օգտագործման դեպքում փաստաթղթի բովանդակությունը չափելի և հասանելի է դառնում: Հետևաբար՝ վերլուծության արդյունքները նույնպես օբյեկտիվ բնույթ են ձեռք բերում: Սակայն այս մեթոդի կիրառումը նույնպես սահմանափակ է, քանի որ տեքստային հաղորդագրության ամբողջ բազմազանությունը հնարավոր չէ չափել և բացատրել ձևական ցուցանիշներով:

Հետազոտության աշխատանքային պլանը: Հետազոտության ծրագրի կարևոր մաս է հետազոտության աշխատանքային պլանը: Հետազոտությունը ոչ միայն գիտական–տեսական, մեթոդական, այլև կազմակերպչական գործընթաց է: Հետևաբար որակյալ սոցիոլոգիական հետազոտության համար անհրաժեշտ է կարգավորել բոլոր հետազոտական միջոցառումներն ու ընթացակարգերը: Այդ իմաստով հետազոտության աշխատանքային պլանն իրենից ներկայացնում է տեղեկատվություն հետազոտության այնպիսի կողմերի մասին, ինչպիսիք են հետազոտական խմբի իրավունքներն ու պարտականությունները, ֆինանսական ծախսերի հաշվարկը, հետազոտական միջոցառումների իրականացման ժամանակային սահմանները, այդ թվում՝ հետազոտական ծրագրի և գործիքների մշակումը, հարցազրուցավարների պատրաստումը, դաշտային աշխատանքների անցկացումը, տվյալների մշակումն ու ամփոփումը, ամփոփիչ հաշվետվության պատրաստումը և այլն: Աշխատանքային պլանն ապահովում է հետազոտության կենտրոնացված ղեկավարումը, թույլ է տալիս խուսափել մեթոդական և կազմակերպչական բնույթի տարբեր բարդություններից:

Այդպիսին են հետազոտության առաջին նախապատրաստական փուլի մեթոդաբանական և մեթոդական ընթացակարգերը: Տվյալ փուլն ավարտվում է գործիքների ստուգումով, որն իրականացվում է փորձնական (պիլոտաժային) հետազոտության ընթացքում: Փորձնական ստուգումը պատասխանում է այն հարցին, թե համապատասխանո՞ւմ է արդյոք տեղեկատվության հավաքման գործիքն օբյեկտի այն հիմնական բնութագրիչներին, որոնք պայմանավորում են ստացվող տեղեկատվության որակը: Այլ կերպ ասած՝ մանրակրկիտ կատարված փորձնական հետազոտությունը ապահովում է հետազոտողին հետազոտության ընթացքում ցածրորակ նյութի հավաքումից:

Հետազոտության օբյեկտների մասին տեղեկատվության հավաքումը հետազոտության հաջորդ փուլն է: Տվյալների հավաքման այս կամ այն մեթոդի ընտրության ժամանակ պետք է նկատի առնել այն,

որ չկա հետազոտման մեկ համընդհանուր, կատարյալ մեթոդ. կան մեթոդներ, որոնք համապատասխանում կամ չեն համապատասխանում դրված հետազոտական նպատակներին և խնդիրներին:

Սոցիոլոգիական հետազոտության տվյալների մշակում և ամփոփում: Հետազոտության հաջորդ փուլը հավաքված տեղեկությունների մշակման փուլն է: Այս փուլում հավաքված տեղեկատվությունը նախ և առաջ ստուգվում է ըստ ճշգրտության, ամբողջության և որակի: Ստուգման արդյունքում հավանական է, որ կարող է ծագել լրացուցիչ ընտրանքի կամ, ընդհակառակը, էմպիրիկ նյութի որոշակի ծավալի խտանման անհրաժեշտություն: Արդեն ստուգված նյութը ենթարկվում է մշակման այնպիսի միջոցներով, ինչպիսիք են կոդավորումն ու տվյալների համակարգչային վերլուծությունը:

Հետազոտությունն ավարտվում է ստացված տվյալների ամփոփմամբ, որը բերում է հետազոտվող երևույթի կամ գործընթացի մասին նոր գիտելիքի ձևավորմանը և կարող է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունենալ: Հետազոտության արդյունքները, եզրահանգումներն ու խորհուրդները սովորաբար ներկայացվում են ռազմասոցիոլոգիական հետազոտության անցկացման մասին գիտական հաշվետվության ձևով: Ավանդաբար հաշվետվության կառուցվածքն իր մեջ ներառում է հետևյալ բաժինները՝ ներածություն, հետազոտության մեթոդաբանություն, տվյալների վերլուծություն, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ ու հավելվածներ (հետազոտության գործիք, աղյուսակներ և այլն):

Ընդհանուր առմամբ այսպիսին են ռազմասոցիոլոգիական հետազոտությունների տրամաբանությունը և փուլերը, տեսական–մեթոդաբանական և կազմակերպա–տեխնիկական պահանջները, որոնց պահպանմամբ և կիրառմամբ միայն կարելի է երաշխավորել հետազոտության հաջողվածությունը և բարձր որակը:

ՉՈՒՆ III

ԲԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

3.1 Բանակի էությունը, հիմնական հատկանիշները և գործառույթները

«Բանակ» (լատիներեն «armare» «զինել» բառից) հասկացությունն ունի մի քանի նշանակություն. ա) պետության զինված ուժերի ամբողջություն, բ) զինված ուժերի առանձին տեսակ (օրինակ՝ ցամաքային բանակ), գ) պատերազմի ընթացքում ռազմական գործողություններին մասնակցող զորքեր (օրինակ՝ գործող բանակ) և դ) օպերատիվ միավորում՝ մասնավոր կարծաժամկետ խնդիրների լուծմանն ուղղված: Բանակը որպես սոցիալական ինստիտուտ ուսումնասիրելիս առաջնային է բանակի՝ որպես «պետության զինված ուժերի ամբողջության» նշանակությունը:

Բանակը միշտ էլ նկատելի դեր է խաղացել պետության և ներքին, և՛ արտաքին խնդիրների լուծման գործում, և այժմ էլ պետության անվտանգության համակարգի կարևոր տարրն է: Բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի նշանակությունը պայմանավորված է նրա գործառույթներով: Այդ գործառույթները երկուսն են՝ արտաքինը և ներքինը:

Բանակի արտաքին գործառույթը նախ և առաջ պետության արտաքին անվտանգության, սահմանների պաշտպանության, տարածքի անձեռնմխելիության ապահովման մեջ է: Դրանք կարող են արտահայտվել զավթիչներից երկրի պաշտպանության, դաշնակից պետություններին կամ ժողովուրդներին ռազմական օգնություն ցուցաբերելու, աշխարհում խաղաղության ապահովման գործընթացում մասնակցության և այլ գործողությունների մեջ:

Բանակի ներքին գործառույթը պետության ներքին կայունության և ներքին անվտանգության ապահովման մեջ է: Գոյություն ունեն

ներքին գործառույթների իրականացման երեք հիմնական ձևեր՝ հասարակական անվտանգության պաշտպանությունը, մարտական և զսպողական գործողությունների կազմակերպումն ու իրականացումը: Հասարակական անվտանգության պաշտպանության գործում բանակը մասնակցում է այն ժամանակ, երբ երկրի ներսում սրված է պայքարն իշխանության ղեկին գտնվող ուժերի և նրանց ընդդիմադիր ուժերի միջև, սակայն այդ պայքարը դեռևս չի վերաճել անմիջական զինված բախման: Այդ ժամանակ հասարակական կարգուկանոնի և պետության անվտանգության ապահովումն իրականացնում են ներքին գործերի և ոստիկանության մարմինները, իսկ բանակն օգնություն է ցուցաբերում նրանց:

Բանակը երկրի ներսում անմիջական մարտական գործողություններ կարող է վարել միայն այն դեպքում, երբ իշխանական և ընդդիմադիր ուժերի միջև պայքարը հասնում է մեծ չափերի, ձեռք է բերում տևական, կայուն և սուր բնույթ (ապստամբություններ, խռովություններ, տեռոր, բանդիտիզմ, քաղաքացիական կռիվներ): Քաղաքացիական պատերազմը ներքին պայքարի այն ամենասուր ձևն է, որին կարող է մասնակցել բանակը:

Բանակի ներքին զսպողական գործառույթն այն է, որ պետության ձեռքում բանակի առկայության փաստն ինքնին իր ներգործությունն է թողնում ընդդիմադիր ուժերի վրա և զսպում է նրանց անմիջական զինված պայքար կազմակերպելուց: Սա նշանակում է, որ բանակը պետության ներքին կայունության ապահովման միջոցներից է: Երկրի ներսում բանակը կարող է զբաղված լինել նաև տնտեսական—տեխնիկական և մշակութային—դաստիարակչական խնդիրների լուծմամբ:

Բանակի վերոհիշյալ գործառույթները ձևավորում են բանակի որպես սոցիալական ինստիտուտի հասարակական արժեքը, այն, թե մասնակցելով հասարակական հարաբերությունների կարգավորմանը՝ որքանով է բանակը միավորում և հաշտեցնում հասարակության անդամներին, պահպանում խմբային, ազգային և համամարդկային արժեքների միջև գոյություն ունեցող հավասարակշռու-

թյունը: Բանակի հասարակական արժեքը պայմանավորված է նաև նրանով, թե որքանով է այն ապահովում երկրի խաղաղ զարգացումը, հանդես գալիս սահմանադրական կարգի երաշխավորի դերում, իսկ անհրաժեշտության դեպքում կայունացնում երկրի իրավիճակը:

Բանակի վերը նշված գործառույթների իրագործման արդյունավետությունը անմիջապես կապված է կոնկրետ իրադրության ճիշտ գնահատման հետ, ինչը կարևոր չափանիշ է զինված ուժերի գործունեության ձևերի ընտրության մեջ: Այդ գնահատականը ելնում է որոշակի նորմերից, որոնց մեջ արտացոլվում են բանակի հանդեպ պահանջները և ամրագրվում ուժային միջոցների օգտագործման թույլատրելի սահմանները⁸: Այդ է պատճառը, որ սոցիալական նորմերը հասարակության կողմից բանակի նկատմամբ վերահսկողության միջոցներ են և ապահովում են բանակի որպես պետության սոցիալական ինստիտուտի դերակատարումը:

Սոցիալական նորմերը կանոններ են, որոնք կարգավորում են մարդկանց վարքագիծը և կազմակերպությունների գործունեությունը, դրանց փոխհարաբերությունները: Ջինված ուժերում գործում են միասնական, հասարակության բոլոր անդամների համար ընդհանուր իրավական, բարոյական նորմեր և վարքի կանոններ: Դրանից բացի, զինված ուժերի գործունեությունը պայմանավորվում է այնպիսի սոցիալական նորմերով, որոնք արտացոլում են զինվորական կազմակերպության առանձնահատկությունները: Քննարկենք, թե որոնք են զինվորական կազմակերպության պայմաններում գործող սոցիալական նորմերի առանձնահատկությունները:

Իրավական նորմեր: Ընդհանուր իրավական նորմերը կարգավորում են զինված ուժերում ծավալվող ոչ բոլոր հասարակական հարաբերությունները: Կան հատուկ իրավական նորմեր, որոնք կարգավորում են բանակում որպես զինված պայքարի համար նախատեսված կազմակերպությունում տեղի ունեցող հարաբերությունները: Այդպիսի նորմերը կոչվում են ռազմաիրավական կամ զինվորա-

⁸ Армия и общество. М., 1990., стр. 216.

կան օրենսդրության նորմեր: Ուազմաիրավական նորմերն արտացոլում են զինված ուժերի կազմակերպման և գործառնության նկատմամբ պետության պահանջները, կարգավորում են բանակի մարտական կենցաղը, ուսուցումը, կյանքը: Մասնավորապես՝ ռազմաիրավական նորմերով կարգավորվում են այն հասարակական հարաբերությունները, որոնք կապված են զինված ուժերի կառավարման, նրանց համալրման, զինվորական ծառայության անցկացման, բանակի նյութատեխնիկական մատակարարման կազմակերպման հետ: Ուազմաիրավական նորմերը սահմանվում և պահպանվում են պետության կողմից, ունեն համապարտադիր բնույթ: Նրանք բնութագրվում են բարձր հստակությամբ, մանրամասնությամբ, ինչպես նաև խախտումների համար նախատեսված խիստ պատասխանատվությամբ:

Բարոյական նորմեր: Զինված ուժերում բարոյական նորմերն արտացոլում են այն արժեքները, որոնք զինծառայողները ճանաչում են և պաշտպանում: Բարոյական նորմերում ամրակայված են հայրենիքի պաշտպանների նկատմամբ բարոյական պահանջները, որոնք հասարակության մեջ ձևավորում և ամրագրում են պատկերացումները զինվորական պարտականության, սպայի պատվի, խիզախության, հերոսության, արիության, զինվորական ընկերության մասին: Բարոյական նորմերը բովանդակում են բարձր պահանջ զինծառայողների այն բարոյական հատկությունների նկատմամբ, որոնք անհրաժեշտ են պատերազմում, զինված պայքարում: Զինված ուժերում գործող բարոյական նորմերից շատերն ամրակայված են ռազմաիրավական ակտերում (զինվորական երգումներում, կանոնադրություններում, հրահանգներում): Այդ պատճառով նրանք միաժամանակ նաև իրավաբանական նորմեր են: Այդպիսի բարոյական նորմերի պահպանումն ապահովվում է ոչ միայն ներքին համոզմամբ, հասարակական կարծիքի ուժով, այլև, անհրաժեշտության դեպքում պետական հարկադրանքի միջոցով:

Սովորութային նորմեր: Սոցիալական նորմերի այս տեսակը գործում է զինված ուժերի ամենօրյա կյանքում: Ձինծառայողները սովորույթի ուժով պահպանում են վարքի այն կանոնները, որոնք իրենց համար դարձել են սովորական դեռևս քաղաքացիական կյանքի պայմաններում: Դրա հետ մեկտեղ՝ բանակում և նավատորմում գործում են զինվորական սովորութային նորմեր, որոնք արտացոլում են զինվորական կազմակերպության առանձնահատկությունները: Դրանք մտնում են զինծառայողի սովորության մեջ ոչ անմիջապես, այլ աստիճանաբար, զինվորական ծառայությունն անցնելու ընթացքում: Սովորութային նորմերի թվին են դասվում հստակությունը, ճշտապահությունը, տոկունությունը և այլն:

Ավանդութային նորմեր: Ավանդութային են կոչվում այն նորմերը, որոնցում կարգավորվում են զորքերի ուսուցման, մարտական գործունեության գործընթացները, զինվորական կարգավիճակային վարքը: Ձինված ուժերում գործող ավանդութային նորմերը զորքի մարտական վարպետության կատարելագործման, նրանց մարտունակության բարձրացման կարևոր միջոց են: Դրանք մեծ դեր են խաղում զինվորների հայրենասիրական սոցիալականացման, բարոյական և մարտական բարձր հատկությունների ձևավորման գործում:

Արարողակարգային նորմեր: Ձինված ուժերում լայն տարածում ունեն զինվորական արարողությունները, որոնք կարգավորվում են արարողակարգային նորմերով: Արարողակարգային են այն նորմերը, որոնք սահմանում են զինծառայողների վարքի կանոնները զինվորական արարողությունների, հանդիսությունների և այլ արարողությունների կատարման ժամանակ: Ձինվորական արարողակարգային նորմերը, որպես կանոն, ամրակայված են զինվորական կանոնադրություններում և այլ օրենսդրական ակտերում:

Այսպիսով՝ հասարակական հարաբերությունները զինված ուժերում կարգավորվում են ընդհանուր և հատուկ սոցիալական նորմերով, որոնք արտացոլում են զինվորական կազմակերպության հա-

տուկ պահանջները և կարգավորում զինծառայողների վարքը և գործունեությունը:

3.2 Բանակի առաջացումն ու զարգացումը. դրա պատմական տարատեսակները

Բանակի առաջացումն ու զարգացումը ուղղակիորեն կապված է հասարակական հարաբերությունների զարգացման հետ: Այն, լինելով հասարակության հիմնական ինստիտուտներից մեկը, ենթարկվում է սոցիալական զարգացման ընդհանուր օրինաչափություններին: Սակայն, դրա հետ մեկտեղ այն ունի զարգացման ուրույն օրինաչափություններ: Ջարգացման կարևորագույն օրինաչափությունը բանակի հզորության և մարտունակության կախվածությունն է տնտեսությունից. տնտեսությունը զինված ուժերի տեխնիկական և նյութական ապահովման հիմքն է:

Բանակի զարգացման մյուս օրինաչափությունը դրա մարտական հզորության կախվածությունն է զենքի, զինամթերքի և ռազմական տեխնիկայի քանակից, որակից և արդյունավետությունից: Վերջին տասնամյակներում գերժամանակակից զենքերի և ռազմական տեխնիկայի, մասնավորապես՝ հրթիռամիջուկային զենքի ստեղծումն արմատական փոփոխություններ մտցրեց բանակի զարգացման օրինաչափությունների մեջ:

Մյուս օրինաչափությունը բանակի վիճակի, արդյունավետության և զարգացման կախվածությունն է հոգևոր և գաղափարական գործոններից: Քանի որ հիմքը և գլխավոր ներուժը ունի մարդկային բնույթ, ապա բոլոր ռազմատեխնիկական վերափոխումները պետք է դիտարկել մարդկային գործոնի փոփոխման և զարգացման տեսանկյունից: Բանակի ռազմատեխնիկական հենքը, որը պատերազմում հաղթելու որոշակի պայմաններ է ստեղծում, կարող է դառնալ արդյունավետ միայն այն դեպքում, եթե այն կառավարվում է այդ տեխնիկային կատարելապես տիրապետող և բարձր հոգևոր ու մար-

տական կարողություններով օժտված մարդկանց կողմից: Բանակի զարգացման և գործառնության մեջ կարևոր դեր են խաղում նաև ռազմական ավանդույթները, այլ բանակների և նախորդ սերունդների կողմից թողած մարտական փորձի, ռազմական տեսության ու պրակտիկայի օգտագործումը: Սրանք են բանակի զարգացման հիմնական օրինաչափությունները: Սակայն չպետք է մոռանալ, որ բանակի գործառնության սոցիալ-քաղաքական բովանդակության կազմավորման, հզորացման համար անհրաժեշտ գիտության և տեխնիկայի ձեռքբերումների ներդրման գործում որոշիչ դերը պատկանում է պետությանը:

Պետության և բանակի պատմությունը սերտորեն կապված է մարդկային հասարակության առաջացման և զարգացման հետ: Յուրաքանչյուր հասարակական-քաղաքական ֆորմացիային, բացի նախնադարյանից, բնորոշ են իրենց յուրահատուկ բանակները: Ժամանակագրական առումով բանակի առաջացումը կապված է առաջին ստրկատիրական պետությունների (Շումեր, Աքքադ, Եգիպտոս, Ուրարտու, Ասորեստան և այլն) ստեղծման հետ: Ստրկատիրական հասարակարգի ժամանակաշրջանում երևան եկան բանակի համարյա թե բոլոր տեսակները (մշտական, վարձու, աշխարհագորային և այլն): Առավել մեծ տեղեկություններ կան այդ ժամանակվա Եգիպտական բանակի մասին: Այն հիմնականում կազմված էր աշխարհագորայիններից, որոնց զինվորական ծառայությունը՝ ցմահ էր: Նրանք կազմում էին զինվորականների հատուկ կաստա: Եգիպտական բանակի հիմնական զորատեսակը հետևակն էր: Հունական և հռոմեական բանակները սկզբնապես համալրվում էին միայն այն ազատ քաղաքացիների հաշվին, որոնք ի վիճակի էին զենք զնել զինվորական ծառայության համար: Հետագայում անցում կատարվեց վարձկան զինվորների հավաքագրմանը, և բանակը վերածեց պրոֆեսիոնալ զինվորներից կազմված մշտական պետական կազ-

* Սոցիոլոգիական տեսանկյունից զինվորական ծառայությունը պետական մարմիններում և կազմակերպություններում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների կողմից պետության հանձնարարությամբ հասարակայնորեն օգտավետ աշխատանքի կատարում է:

մակերպության: XV–XVI դդ. միապետության ուժեղացումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը բերեցին բանակի կազմակերպման և զարգացման ձևերի որակական նոր փոփոխությունների: Գյուղացիների ազատագրումը ճորտությունից անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց համընդհանուր զինվորական ծառայության հիմքի վրա զանգվածային մշտական բանակների կազմավորման համար:

Արտադրողական ուժերի հետագա զարգացումը, գիտատեխնիկական խոշոր հայտնագործությունները և կուտակված հսկայական նյութական միջոցները նորագույն սպառազինության ձևերի, զանգվածային բանակների ստեղծման հնարավորություն ընձեռեցին:

XX դարի սկզբին բանակների մեծ մասը (բացի անգլիական և ամերիկյան բանակները) համալրվում էր ընդհանուր զինապարտության սկզբունքով: Առաջին համաշխարհային պատերազմը (1914–1918թթ.) հսկայական փոփոխություններ մտցրեց բանակների կազմակերպման և հետագա զարգացման մեջ: Սովորական երևույթ դարձավ համընդհանուր զորակոչը, որի արդյունքում մի քանի անգամ ավելացավ զինծառայողների թվաքանակը (պատերազմող երկրների բանակների թիվը հասավ մոտ 70մլն–ի): Ստեղծվեցին նոր զինատեսակներ, կատարելագործվեցին հները:

Փոխակերպվեցին նաև հասարակական հարաբերությունները և պետական կառավարման ձևերը: Ռուսաստանում 1917թ. Զոկտեմբերյան հեղափոխությունից հետո հաստատվեցին բանակի միանձնյա ղեկավարման և զինապարտության սկզբունքները: 1925թ. ընդունվեց «Պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքը», իսկ 1939թ. «Օրենքն ընդհանուր զինապարտության մասին»: Խորհրդային բանակը մինչև իր գոյության ավարտը շարունակում էր համալրվել այդ սկզբունքով:

Իտալիայում, Գերմանիայում և այլ երկրներում ֆաշիստական կարգերի հաստատումը բերեց զինված ուժերի կազմակերպական կառուցվածքի փոփոխմանը: Դա արտահայտվեց, օրինակ, բանակի թվաքանակի զգալի մեծացման, հատուկ կազմավորումների ստեղծ-

ման, բարոյական նոր նորմերի հաստատման մեջ:

Բանակի հետագա զարգացման մեջ շրջադարձային փոփոխություններ մտցրեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմը (1939–1945թթ.): Պատերազմին մասնակցող երկրների զինված ուժերի թվաքանակը հասավ 110 մլն–ի: Կատարելագործվեցին նրանց կազմակերպական սկզբունքները, կտրուկ մեծացավ սպառազինումը նորագույն զենքերի տեսակներով, ստեղծվեցին նոր զորատեսակներ, մշակվեցին մարտավարության նոր ծևեր:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ «սառը պատերազմի» տարիներին, ծավալվեց սպառազինությունների աննախադեպ մրցավազք, բանակների կատարելագործում և հզորացում:

Ամերիկյան բանակը դեռ XVIII դարի վերջերից համալրվում էր կամավոր սկզբունքով: Պարտադիր զինվորական ծառայությունն այնտեղ մտցվել է միայն Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին: Երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված աշխարհաքաղաքական նոր մթնոլորտն ամերիկյան կառավարությանը ստիպեց 1948թ. ընդունել օրենք զինվորական ծառայության մասին, ըստ որի՝ կանոնավոր զորքերում նախատեսվում էր երկու, իսկ պահեստայինում՝ հինգ տարվա պարտադիր զինվորական ծառայություն: 1973թ. ընդունվեց նոր օրենք, որով ամերիկյան բանակը կրկին սկսեց համալրվել կամավոր սկզբունքով¹⁰:

Ինչ վերաբերում է խորհրդային բանակին, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շարունակվում էր նրա կատարելագործումն ու ամրապնդումը՝ ստեղծված միջազգային դրությանը և խորհրդային ղեկավարության կողմից իրականացվող քաղաքականությանը համապատասխան: 1950–ական թթ. կեսերին սկսվեց խորհրդային բանակի արմատական վերափոխման, հրթիռատուձային զենքով և այլ նորագույն զինատեսակներով ու ռազմական տեխնիկայով դրա վերազինման գործընթացը:

«Սառը պատերազմի» պայմաններում հակամարտող պետությունների պաշտոնական քաղաքականության հիմքում ընկած էր եղած

¹⁰ Война и армия, М., 1977, стр. 315.

զինատեսակների կատարելագործման և նոր, զանգվածային ոչնչացման զենքերի ստեղծման խնդիրը: Դա առաջ քաշեց բանակների կազմակերպման էական փոփոխությունների ներմուծման խնդիրը: Մեծ ուշադրություն դարձվեց նախագինվորական պատրաստությանը, զինվորականների կողմից նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերմանը, նրանց բարոյական ոգու ամրապնդմանը: Հակամարտող կողմերը մեծ ուշադրություն էին դարձնում նաև իրենց դաշնակիցների բանակների զինմանն ու կատարելագործմանը:

Այսպիսով XX դարում միջազգային հանրությունն ուժեղ ռազմականացման ենթարկվեց: Դրա մասին է վկայում բանակների հզորացումը, անձնակազմի ընդհանուր թվաքանակի ավելացումն ու կործանիչ ուժի մեծացումը:

Աղյուսակ 2

Բանակների քանակների, նրանց մարտական հզորության, զինծառայողների ընդհանուր թվաքանակի աճը XX դարում "

Ժամանակագրական սահմանները	XX դարի սկիզբ	Երկրորդ համ. պատերազմի նախօրյակ	XX դարի վերջ
Բանակների քանակները	մոտ 30	մոտ 50	մոտ 200
Բանակների անձնակազմի ընդհանուր թվաքանակը	7-8 մլն	15-17 մլն	25-26 մլն
Կործանիչ հզորության աճը	3-4 անգամ XIX դարի վերջի համեմատ	10-15 անգամ XX դարի սկզբի համեմատ	20-25 անգամ Երկրորդ համ. պատերազմի համեմատ

Ինչպես արդեն ասվեց, Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի տարիներին պատերազմող պետությունների բանակների թվաքանակն անցավ 70 և 110 մլն-ից, մշտապես ծառայության մեջ էին գտնվում համապատասխանաբար 30-40 և 50-60 մլն մարդ: XX դա-

" Серебряников В.В., Социология войны, М.,1996, стр 296.

րի վերջում խաղաղ պայմաններում բանակների թվաքանակը հասնում էր 25–26 մլն, իսկ պահեստազորինը՝ 600–700 մլն. մարդու։ Ռազմա–արդյունաբերական համակարգում այդ ժամանակ աշխատում էր մոտ 55 մլն. մարդ։

Ժամանակակից զինված ուժերը բնորոշվում են իրենց արհեստավարժությամբ, զինված պայքարի գերարդյունավետ միջոցներով, այդ թվում՝ միջուկային զենքով, բարձր մարտական պատրաստականությամբ և մարտական մեծ հնարավորություններով։ Մի շարք երկրների զինված ուժերը խաղաղ պայմաններում պահվում են կրճատված կազմով՝ ծավալվելով պատերազմի ժամանակ ի հաշիվ զորակոչային տարիքի քաղաքացիների զորահավաքի։

Հայաստանի Հանրապետության ազգային բանակը բաղկացած է մոտոհրաձգային, տանկային, հրթիռահրետանային, հակաօդային պաշտպանության, ռազմաօդային ուժերից, հետախուզական, կապի, ինժեներական զորամիավորումներից և զորամասերից, ինչպես նաև ռազմական գործողություններ ապահովող այլ զորամասերից։ ՀՀ բանակի կազմավորումը սկսվել է 1991–1992թթ. Հայաստանի սահմաններին պաշտպանական մարտեր վարելու հետ զուգահեռ։ Բանակի պաշտոնական ստեղծման օրը 1992թ. հունվարի 28–ն է։ Իր առաջին մարտական մկրտությունը հայկական բանակը ստացավ 1992թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին՝ Լաչինի միջանցքում։

Բանակի առաջացման և զարգացման այս պատմական ակնարկը կրկին անգամ ապացուցում է, որ դրա առաջացումն ու զարգացումը կապված է հասարակության զարգացման հետ։ Բանակների պատմական առանձին տարատեսակներին բնորոշ յուրահատուկ հատկանիշները համահունչ են մարդկային հասարակության զարգացման օրենքներին։ Վերջինիս սոցիալական, տեխնիկական զարգացման և փոփոխման հետ մեկտեղ փոխվում է նաև բանակն իր գործառույթներով՝ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ ձևով։

3.3 Բանակը և հասարակությունը

Ցանկացած հասարակական ինստիտուտ, լինի կրթության, առողջապահության, տնտեսական, քաղաքական, տեղեկատվական կամ այլ համակարգ, ստեղծվում է և կոչված է կատարելու որոշակի սոցիալական գործառույթներ: Կարևորագույն գործառույթ է կատարում նաև բանակի ինստիտուտը, որը երկրի անվտանգության երաշխիքն է: Բանակի ստեղծումն ու զարգացումը գլխավորապես պայմանավորված է հասարակության անվտանգությունն ու քաղաքացիների կյանքի և ազատության իրավունքը պաշտպանելու, ապահովելու անհրաժեշտությամբ:

Բանակի և հասարակության միջև կառուցվածքային և գործառնական կապի բացահայտման համար շատ կարևոր է հայտնի բրիտանական սոցիոլոգ Ջերբերտ Սպենսերի կողմից մշակված հասարակությունների տիպերի դասակարգումը: Ըստ Սպենսերի՝ հասարակություններն իրենց էվոլյուցիայի ընթացքում ապրում են որոշակի փոփոխություններ, որոնք հիմնականում կապված են այդ հասարակությունների ներքին կառուցվածքի, աշխատանքի բաժանման, ինչպես նաև արտաքին միջավայրի ազդեցության հետ:

Կառավարման սկզբունքից ելնելով՝ Սպենսերը դասակարգում է հասարակություններն ըստ «ռազմական» և «արդյունաբերական» տիպերի: Ինչպես գրում է Սպենսերը, «Ռազմական հասարակություններին հատուկ է բռնությունը: Ռազմականացված կառույցին հատուկ է դրա առանձին ստորաբաժանումների բռնի միացումը՝ համատեղ գործողությունների իրականացման նպատակով: Այնպես, ինչպես զինվորի կամքն է ճնշվում այնքանով, որպեսզի նա դառնա սպայի կամքի կատարողը, այնպես էլ քաղաքացու կամքը ցանկացած հարցերում անձնական և հասարակական, կառավարվում է վերևից: Համագործակցությունը ռազմական հասարակությունում ամբողջությամբ բռնի է»¹²:

Սպենսերի կարծիքով, ի տարբերություն ռազմական հասարա-

¹² Spencer H. First principles. N.Y., 1896, pp. 58-59.

կոթյունների արդյունաբերական տիպի հասարակություններում անդամների միջև հարաբերությունները հիմնված են ոչ թե կենտրոնացված ծնշման, այլ փոխհամագործակցության վրա: Արդյունաբերական հասարակության անդամներին ոչ ոք չի ստիպում համատեղ գործել. նման վարքը փոխափափելի է, քանի որ այն ավելի մեծ արդյունքներ է բերում, քան անհատական վարքը:

Ինչպես նշում է Սպենսերը, հասարակության զարգացվածությունն ու բարդությունն ամենևին էլ չեն նշանակում անցում ռազմական տիպից դեպի արդյունաբերականը: Ինչպես գիտենք, ժամանակակից զարգացած արդյունաբերական հասարակությունները նույնպես կարևորում են զինված ուժերի անհրաժեշտությունը. զարգացնում են բանակը, մասնակցում են տարբեր ռազմական գործողությունների, ուժային միջոցներ են կիրառում: Ըստ Սպենսերի՝ պարզ հասարակությունները կարող են լինել արդյունաբերական (իհարկե, ոչ այսօրվա իմաստով), իսկ ժամանակակից, բարդ կառուցվածք ունեցող հասարակությունները՝ ռազմական:

Համաձայն Սպենսերի՝ հասարակությունը բնորոշվում է որպես ռազմական կամ արդյունաբերական ոչ թե իր կառուցվածքի պարզությամբ կամ բարդությամբ, այլ շրջապատող պետությունների հետ հարաբերությունների կոնֆլիկտայնության աստիճանով¹³: Սպենսերը նշում է, որ եթե հասարակության անվտանգությանը արտաքին միջավայրից որևէ վտանգ է սպառնում, ապա շատ հավանական է, որ այդ հասարակությունը դառնա ռազմական, այսինքն՝ արդյունաբերությունը սկսի աշխատել ռազմական պատվերով, հասարակության անդամները զորակոչվեն զինծառայության, ամբողջ հասարակությունը կառավարվի վերևից, քաղաքացիներին պարտադրեն պետության կամքը: Այսպես է եղել ամբողջ պատմության ընթացքում:

Բանակը հասարակական ինստիտուտ է: Այն անմիջականորեն կապված է հասարակության ձևավորման, կառուցվածքի, հասարակության տարբեր խավերի, դասերի և շերտերի, ինստիտուտների, խմբերի, միավորումների ձևավորման, փոխլրացման և փոխհամա-

¹³ Spencer H. The principles of ethics. N.Y., 1904. Vol. I.

գործակցության հետ: Այսպես, հայտնի է, որ հատկապես Հին Արևելքում հասարակության սոցիալական կառուցվածքում հստակորեն առանձնացվում էր այն խումբը կամ շերտը (կաստան), որի ներկայացուցիչները սերնդեսերունդ հպարտանում էին նրանով, որ պետք է հոգային ժողովրդի անվտանգության հարցերը և պաշտպանեին պետության սահմանները՝ համալրելով բանակի շարքերը: Օրինակ՝ ճապոնիայում դա սամուրայների կաստան էր, Հին Հնդկաստանում՝ քշատրիների վարնան: Հայոց սպարապետների ընտրությունն ու կարևորագույն պատմական դերը տոհմական բնույթ էր կրում:

Այդպիսի կաստաների կամ տոհմերի ներկայացուցիչները պատվավոր տեղ էին զբաղեցնում հասարակության մեջ և սկզբունքորեն պատրաստ էին ինքնագոհաբերության՝ հանուն իրենց վրա դրված պարտականությունների ճշգրիտ կատարման: Այդ սոցիալական խմբերը, հասարակության հարգանքը վայելելու հետ մեկտեղ, օգտվում էին բազմաթիվ մեծաշնորհներից:

Բանակը նաև պետական ինստիտուտ է, որի ձևավորումն ու զարգացումը կապված է պետության և պետականության հետ: Պետության համակարգում բանակի՝ որպես ինստիտուտի գործառույթները սահմանված, կազմակերպված և կանոնակարգված բնույթ են ստանում: Բանակն այն ուժն է, որը սկզբունքորեն չպետք է ենթարկվի առանձին սոցիալական խմբերի, չպետք է դառնա գործիք՝ այդ խմբերի իշխանությունը հաստատելու և հասարակական այլ խմբերին շահագործելու համար: Իբրև հասարակական-պետական ինստիտուտ՝ բանակը պետք է ծառայի հասարակությանը: Դրանում է բանակի բարձր կարգավիճակի և հեղինակության կարևորագույն նախապայմանը:

Ինչպես նշվեց, հասարակական-պետական կառուցվածքը ենթադրում է տարբեր հասարակական ինստիտուտների փոխադարձ կապ ու փոխլրացում: Բանակը գործառնական առումով նույնպես կապված է հասարակության կառուցվածքային այլ բաղադրատարրերի հետ և, միաժամանակ, դրանց անվտանգ և ապահով գործառության երաշխիքն է: Գործառնական կապերը բանակի և հասարա-

կական–պետական այլ ինստիտուտների և համակարգերի հետ բազմազան են և ունեն իրենց առանձնահատկությունները: Վերջինները հիմնականում պայմանավորված են նրանով, որ բանակը, իր հիմնական գործառույթների հետ մեկտեղ, իրականացնում է մի շարք ընդհանուր նպատակներ հետապնդող գործառույթներ: Այսպես, բանակը կատարում է կարևոր կրթադաստիարակչական գործառույթ՝ սերմանելով պետության համար կարևոր արժեքներ, պատրաստելով ռազմական մասնագետներ, այդ թվում՝ ռազմա–տեխնիկական, մանկավարժական, քաղաքական–քաղաքացիական, իրավագիտական, բժշկական, շինարարական, մարզական և այլ մասնագիտությունների գծով:

Զորակոչը մի անորոշ զանգված է բերում բանակ, որ բաղկացած է զինծառայության նկատմամբ տարբեր վերաբերմունք, տարբեր հոգեհուզական համակարգ ունեցող առանձին մարդկանցից: Իսկ իդեալական զինվորը պետք է լինի կամավոր հոգով, զգա իր առաքելությունը, գիտակցի իր մասնագիտության կարևորությունը և դերը»¹⁴: Բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի դերն էլ ավելի է կարևորվում բանակում զինծառայողների դաստիարակման, նրանց արժեքային համակարգի հստակեցման գործառույթների կատարմամբ:

Բանակը տարբեր մասնագիտություններին տիրապետող մարդկանց կարիքն ունի, որոնք ծառայում են բանակի այս կամ այն ստորաբաժանումներում: Բանակի ինստիտուտը հասարակության ընդհանուր (պետական և ոչ պետական) կրթական համակարգում պատրաստվող մասնագետների հիմնական սպառողներից է: Մյուս կողմից՝ բանակում պատրաստվող սեփական մասնագետներն աշխատում են քաղաքացիական կյանքի տարբեր ոլորտներում:

Կարելի է առանձնացնել ևս մի շարք ուղղություններ և գործառույթներ, որոնց կատարումը ժամանակ առ ժամանակ իր վրա է վերցնում բանակը: Այդ գործառույթների կատարումը հատկապես

¹⁴ Watson B. A. "When Soldiers Quit. Studies in Military Disintegration" Westport, Connecticut, USA, 1997, p. 18.

բնութագրիչ է դառնում ժամանակակից բանակի համար, երբ բանակը ձեռք է բերում որոշակի համընդհանուր հատկանիշներ և լայնացնում է իր ծառայությունների կիրառության դաշտը: Տվյալ դեպքում ի նկատի ունենք ժամանակակից բանակի այնպիսի նոր գործառույթներ, ինչպիսիք են, օրինակ, օպերատիվ արձագանքումն ու մասնագիտական օգնությունն արտակարգ իրավիճակներում, բնական աղետների պայմաններում օպերատիվ և կազմակերպված օգնության իրականացումը, աղետների հետևանքների վերացումը, ինչպես նաև հատուկ ուշադրության արժանի ժամանակակից բանակի խաղաղապահ առաքելությունը, ծառայությունը հակամարտության գոտիներում, այդ թվում միջազգային խաղաղապահ ուժերի կազմում, հակամարտող կողմերի միջև բաժանիչ բուժքերային գոտիների ստեղծում, հումանիտար օգնության իրականացում և այլն:

3.4 Ժամանակակից բանակների սոցիալական հենքը

Զինված ուժերի կառուցման գործում կարևոր դեր է խաղում բանակի համալրման սկզբունքի ճիշտ ընտրությունը: Բանակի համալրումը տվյալ պետության կողմից ընդունված խաղաղ և պատերազմական շրջանում զինված ուժերի կարիքների ապահովումն է անձնակազմով: Ավելի լայն առումով՝ այն կարող է ընդգրկել նաև զինված ուժերի ապահովումը զենքով, զինամթերքով և այլ նյութական միջոցներով: Խաղաղ պայմաններում բանակի համալրումն իր մեջ ընդգրկում է տարբեր զինվորական հաստատությունների անձնակազմով ապահովման և անհրաժեշտ պահեստային զորքերի ձևավորման խնդիրների լուծումը: Պատերազմական շրջանում զինված ուժերի համալրման գործը կորուստների կանոնավոր լրացման և ռազմական նոր կազմավորումները մարդկային համակազմով ապահովելու մեջ է:

Անձնակազմի համալրման սկզբունքների ընտրությունը զինված ուժերի շինարարության կարևոր խնդիրներից է: Ժամանակակից բանակային շինարարության մեջ, կախված տվյալ պետության զար-

գացման մակարդակից, նրա արտաքին քաղաքական վիճակից, աշխարհագրական դիրքից, ԱՀԱ-ից, բնակչության, զինված ուժերի թվաքանակից, քաղաքական, տնտեսական, բարոյահոգեբանական և այլ գործոններից, տարբեր երկրներում կիրառվում են զինված ուժերի համալրման տարբեր ձևեր և մեթոդներ: Հետաքրքրական է նաև այն, որ բաց զինված հակամարտության շատ արագ վերաճելու վտանգ պարունակող փաստացի ռազմական դիմակայության վիճակում գտնվող պետությունները (Հունաստան–Թուրքիա, Իսրայել–Սիրիա, Եգիպտոս, Իրաք, Հյուսիսային Կորեա–Հարավային Կորեա, Հնդկաստան–Պակիստան) սովորաբար կիրառում են համալրման միևնույն սկզբունքը:

Արդի փուլում կիրառվում են բանակների համալրման հետևյալ ձևերը՝

- ա) պրոֆեսիոնալ (կամավոր) բանակներ,
- բ) ոստիկանական բանակներ,
- գ) կադրային–ոստիկանական բանակներ,
- դ) կադրային–գորակոչային բանակներ,
- ե) ընդհանուր զինապարտության սկզբունքով համալրվող (գորակոչային) բանակներ,
- զ) համալրման տարածքային և ոչ տարածքային սկզբունքներ:

Աղյուսակ 3

Զինված ուժերի համալրման տարբեր սկզբունքներ կիրառող պետությունների հարաբերակցությունն ըստ մայրցամաքների (%–ներով)

Համալրման սկզբունքը	Եվրոպա	Ասիա՝ ներառյալ Ավստրալիան, Նոր Զելանդիան և Օվկիանիան	Աֆրիկա	Հյուսիսային և Հարավային Ամերիկա
գորակոչ	61	46	52,5	59
խառը	22	3	2,5	0
կամավոր	17	51	45	

Զինված ուժերի համալրման տարբեր սկզբունքներ կիրառող 140 պետությունների դիտարկումն ըստ մայրցամաքների հարաբերակցության ցույց է տալիս, որ դրանց 39 %-ն իր զինված ուժերի համալրումը կատարում է կամավոր սկզբունքով, 54 %-ը՝ զորակոչով և 7 %-ը՝ խառն (ոստիկանական, կադրային-ոստիկանական, կադրային-զորակոչային) սկզբունքով: Աղյուսակում տվյալները բերված են ըստ մայր ցամաքների¹⁶:

Բերված տվյալներից երևում է, որ Եվրոպայի, Ամերիկայի և Աֆրիկայի պետություններում համալրման գերակայող սկզբունքը զորակոչով համալրումն է, իսկ ասիական պետություններում՝ կամավոր սկզբունքով: Համալրման խառն սկզբունքը կիրառում են Եվրոպայի 8 պետություններ, ինչպես նաև մեկական պետություն Ասիայում (Քուվեյթ) և Աֆրիկայում (Ալժիր):

Ուշադրության են արժանի նաև բանակների համալրման տարածքային և ոչ տարածքային (տերիտորիալ և էքստերիտորիալ) սկզբունքները:

Պրոֆեսիոնալ (կամավոր) բանակներ: Ներկայումս պրոֆեսիոնալ բանակներ ունեն աշխարհի հիսունից ավելի պետություններ՝ ներառյալ այնպիսի խոշոր երկրներն, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Կանադան, Իսպանիան, Ավստրալիան, Ֆիլիպինները և այլն: Առավել մեծ և հզոր բանակ ունի ԱՄՆ-ը: Զինված ուժերի կամավոր սկզբունքով համալրումն ամերիկյան հին ավանդույթ է, որը սկիզբ է առել դեռ 18-րդ դարի վերջից: 1973 թ. հուլիսի 1-ին ընդունված օրենքի համաձայն ամերիկյան զինված ուժերը համալրվում են կամավորներով, որոնք ծառայություն են տանում պայմանագրային հիմքերով¹⁷: Ըստ ԱՄՆ-ի գործող օրենքի՝ կամավոր իսկական զինվորական ծառայության են ընդունվում առողջապես և մտավոր զարգացվածության առումով պիտանի 17-35 (կանանց համար՝ 18-35) տարեկան քաղաքացիները: Զինվորական ծա-

¹⁶ Հայկական բանակ, ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես, Երևան, 2001 3(29), էջ 23:

¹⁷ Армия и общество, стр. 322

ռայության անցնել ցանկացող 18 տարեկանից ցածր անձինք պետք է ունենան ծնողների կամ խնամակալների կողմից տրված գրավոր թույլտվություն: Թեկնածուների ընտրությունը կատարվում է ամբողջ տարվա ընթացքում բոլոր նահանգներում տեղակայված հավաքագրման կետերում՝ հատուկ պատրաստված հավաքագրող-սերժանտների կողմից: Թեկնածուների հանրակրթական մակարդակը, ընդունակությունները և հակումները, նրանց մասնագիտական գիտելիքները բանակին ի սպաս դնելու հնարավորությունը պարզելու համար կատարվում է թեստավորում: Վերջինիս արդյունքների համաձայն թեկնածուները բաշխվում են ըստ համապատասխան զինվորական մասնագիտությունների: Ընտրված թեկնածուները ստորագրում են պայմանագիր և ընդունում զինվորական երդում: Պայմանագրի ժամկետը 3 – 6 (կանանց համար՝ 2 – 6) տարի է, որի ավարտից հետո այն կարող է երկարացվել: Որպես կանոն կամավորները կարող են ընտրել ապագա ծառայության վայրը:

Զինվորական երդումն ընդունելուց հետո նորակոչիկներն ուղարկվում են զինված ուժերի ուսումնական կենտրոններ՝ սկզբնական և մասնագիտական պատրաստություն անցնելու համար: Այն, կախված, թե որ զորատեսակում է ծառայելու նորակոչիկը, տևում է 6–10 շաբաթ: Դասընթացների ավարտից հետո նորակոչիկներն ուղարկվում են հետագա ծառայության վայրեր:

Ամերիկյան բանակի պահեստային ուժերը կանոնավոր զորքերի նման համալրվում են կամավոր սկզբունքով: Պահեստային զորքերի շարքային և սերժանտական անձնակազմը համալրվում է կանոնավոր բանակի այն զինծառայողներով, որոնք իսկական զինվորական ծառայությունից վաղաժամկետ ազատված են, սակայն պայմանագրով ծառայությունը պահեստում շարունակելու պարտավորություն են կրում, ինչպես նաև պահեստում ծառայելու ցանկություն հայտնած նախկին զինծառայողներով և, վերջապես, այն անձանցով, որոնք նախկինում զինվորական ծառայության հետ առնչություն չեն ունեցել, այլ նոր են պայմանագիր կնքել: Վերջիններս նախնական զինվորական պատրաստություն ստանալու համար ուղարկվում են

հավաքների: Ըստ պաշտպանական գերատեսչության հետ կնքած պայմանագրի՝ բոլոր պահեստայինները ստանում են աշխատավարձ:

Պահեստի սպայական կազմը համալրվում է նախկին կադրային սպաներով, քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատություններում սպաների համագործակցության պատրաստության դասընթացներն անցած անձանցով և պահեստի սերժանտների ու շարքայիների համար նախատեսված սպայական դպրոցների շրջանավարտներով: Պահեստային զորքերը համալրվում են մինչև 59 (եթե մինչ այդ զինված ուժերում ծառայել են) և 35 (մինչ այդ չծառայածները) տարեկան անձինք: Պահեստային ծառայության մասին պայմանագրի նախնական ժամկետը 6 տարի է, այն կարող է երկարացվել:

Թվապես փոքր և տարիքային առումով երիտասարդ պրոֆեսիոնալ բանակի օրինակ է տալիս ճապոնիան: Այնտեղ ծառայության են ընդունվում 18–25 տարեկան քաղաքացիները: Ծառայության ժամկետը 2–3 տարի է, որի ավարտից հետո պայմանագիրը կարող է երկարացվել: Ճապոնական պահեստազորը համալրվում է միայն այն անձանցով, ովքեր նախկինում իսկական զինվորական ծառայություն են անցել:

Պետք է նշել, որ տարբեր երկրների պրոֆեսիոնալ բանակները միմյանցից կարող են տարբերվել համալրման նրբություններով (տարածքային և ոչ տարածքային), անձնակազմի տարիքային սահմաններով, զինծառայողների պատրաստման մակարդակով և աստիճանով, կանոնավոր և պահեստային ուժերի միջև գոյություն ունեցող համամասնություններով և այլն: Սակայն, միավորող սկզբունքն այն է, որ դրանք համալրվում են կամավոր սկզբունքով և ծառայության ժամկետը որոշվում է ծառայողի և պետության միջև կնքվող պայմանագրով:

Ոստիկանական բանակներ: Պրոֆեսիոնալ բանակներից էապես տարբերվում է ոստիկանական բանակների կառուցվածքը: Նրանք բնորոշ է կադրային զինվորական կազմավորումների բացակայու-

թյունը և հրամանատարական պաշտոնների անցումն այն սպաներին, որոնց համար զինվորական ծառայությունը հիմնական մասնագիտություն չէ:

Խաղաղ պայմաններում ոստիկանական բանակի զորամասերը բաղկացած են լինում հաշվառման մեջ գտնվող զինծառայողներից և փոքրաքանակ հրամանատարական կազմից: Ամբողջ զինվորական անձնակազմը և հրամանատարական կազմի մեծ մասը գրանցված են բնակման վայրերում գտնվող զորամասերում: Ռազմական ուսուցումը կատարվում է արտաբանակային պատրաստության մեթոդով, կարծատն զինվորական հավաքների ժամանակ: Պատերազմի վտանգի դեպքում հաշվառման մեջ գտնվող զինապարտների ամբողջ կազմը կանչվում է զորամասեր՝ ծառայություն տանելու համար:

Ոստիկանական բանակի վառ օրինակ են շվեյցարական զինված ուժերը: Այդ երկրում զինապարտ է համարվում ֆիզիկապես պիտանի 20–ից մինչև 50 տարեկան արական սեռի ամբողջ բնակչությունը¹⁷: Շվեյցարիայում բացակայում է բանակի համալրման այլընտրանքային սկզբունքը: Սակայն, դա չի նշանակում, որ այդ երկրում չկան ծառայությունից հրաժարվողներ: Գործող օրենքի համաձայն՝ նրանք մինչև 50 տարեկանը պարտավոր են պետությանը ամեն տարի վճարել իրենց եկամուտների երեք տոկոսը: Բացի այդ, զինվորական ծառայությունից հրաժարվելը պատժվում է 3 օրից մինչև 3 տարի ժամկետով ազատազրկմամբ:

Շվեյցարական բանակի կադրային կազմը բաղկացած է միայն ուսումնական կենտրոնների հրահանգչական խմբից: Ինչ վերաբերում է շվեյցարական բանակի զորամասերին և զորամիավորումներին, ապա այնտեղ կադրային զինծառայողներ են միայն դիվիզիաների հրամանատարներն ու նրանցից բարձր պաշտոնյաները:

Շվեյցարիայում կատարվում է նախազորակոչային պատրաստություն, որն ընթանում է դպրոցներում: Նորակոչիկների հիմնական զինվորական պատրաստությունն իրականացվում է 119 օրում՝ հա-

¹⁷ Նույն տեղում, էջ 329

տուկ զինվորական ուսումնական հաստատություններում կամ կրկնակի զինվորական հավաքների միջոցով, որոնց ավարտից հետո զինծառայողները համալրում են առաջին կարգի պահեստագործի շարքերը: Վերջինիս կազմում ծառայում են 20–ից մինչև 32 տարեկանները: Այդ ժամանակամիջոցում զինծառայողներն անցնում են զինվորական պատրաստության 8 հավաք ուսումնական նպատակներով ստեղծված զորամասերում և ստորաբաժանումներում: Յուրաքանչյուր հավաքը տևում է 20 օր:

43–50 տարեկան զինապարտները համալրում են երրորդ կարգի պահեստագործի շարքերը: Այդ ընթացքում ռազմական պատրաստությունն իրականացվում է տարեկան երկու հավաքի միջոցով՝ 13 օր տևողությամբ:

Բացի կանոնավոր ուսումնական հավաքներից, յուրաքանչյուր զինապարտ շվեյցարացին մինչև 42 տարեկան հասնելը պարտավոր է անցնել ոչ շաբաթյան կրակային պատրաստություն: Այսպիսով՝ շաբաթյան անձնակազմի ծառայությունն ընդհանուր առմամբ տևում է 330, ենթասպաներինը՝ 511, սպաներինը՝ 906 օր:

Չնայած նրան, որ ոստիկանական բանակի դասական օրինակ է միայն շվեյցարականը՝ այնուամենայնիվ, բանակի համալրման ոստիկանական սկզբունքն իր կիրառումն է գտել նաև այլ երկրների կադրային–ոստիկանական բանակների և զինված ուժերի համալրման մեջ: Այսպես, համալրման ոստիկանական սկզբունքն ընկած է ամերիկյան պահեստային զորքերի բաղկացուցիչ մաս կազմող ԱՄՆ Ազգային գվարդիայի համալրման հիմքում:

Ազգային գվարդիան առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ԱՄՆ զինված ուժերի համակարգում: Մի կողմից՝ դա առանձին նահանգների զինված կազմավորումներն են, որոնք ենթարկվում են նահանգապետերին և կոչված են պահպանել հասարակական կարգուկանոնը, վերացնել տարերային աղետների հետևանքները և այլն: Մյուս կողմից՝ Ազգային գվարդիան ԱՄՆ զինված ուժերի մարտական պահեստագործ է, որն իր մեջ միավորում է ամերիկյան ռազմաօդային և ցամաքային ուժերի զգալի մասը:

Այդ գվարդիային բնորոշ են ոստիկանական կառույցի բոլոր առանձնահատկությունները: Ազգային գվարդիականները մարտական պատրաստությամբ են զբաղվում միայն աշխատանքից ազատ ժամանակ, նրանք ծառայություն են տանում իրենց բնակության վայրերին մոտ գտնվող ռազմական հաստատություններում, իսկ սպառազինությունները պահվում են անձնակազմի ուսուցման և բնակության վայրերում:

Կադրային-ոստիկանական բանակներ: Կադրային-ոստիկանական բանակների գլխավոր առանձնահատկությունը խաղաղ ժամանակաշրջանում կարծատև պարտադիր զինվորական ծառայության սկզբունքով համալրվող փոքրաթիվ կադրային զինված ուժերի առկայության մեջ է, որոնք զուգակցվում են բարձր պատրաստվածություն ունեցող մեծաթիվ պահեստային զորքերով: Բացի այդ, կադրային-ոստիկանական բանակներ ունեցող երկրներում զոյություն ունեն նաև զուտ ոստիկանական կազմավորումներ՝ որպես զինված ուժերի ինքնուրույն միավորումներ, որոնք, որպես կանոն, համալրվում են կամավոր սկզբունքով:

Կադրային-ոստիկանական բանակների դասական օրինակ են Դանիայի զինված ուժերը¹⁸: Այնտեղ զորակոչային տարիքը 19 տարեկանն է: Ջորակոչվածների ծառայության ժամկետը 9–ից 12 ամիս է՝ կախված զորատեսակից, իսկ կամավորները կարող են հավաքագրվել 17 տարեկանից: Կանոնավոր բանակում ծառայությանը պատրաստվող կամավորների հետ կնքվող պայմանագրի ժամկետը 2 տարի է, որը հետագայում կարող է երկարացվել:

Կանոնավոր բանակի զինվորական անձնակազմի ուսուցումը կատարվում է ուսումնական գնդերում: Կրտսեր հրամկազմի ուսուցումն ընթանում է տարբեր զորամասերում տեղակայված դպրոցներում և ուսումնական հաստատություններում: Սպայական անձնակազմի ուսուցմամբ զբաղվում են Կոպենհագենի սպայական դպրոցը, սպայական հեռակա և պահեստի սպայական դպրոցները:

¹⁸ Նույն տեղում, էջ 331

Դանիական կանոնավոր զորքերի հիմնական խնդիրներից մեկը պահեստազորի ուսուցումն ու պատրաստումն է, հնարավոր հավաքագրման համար բարենպաստ տեխնիկական պայմանների ստեղծումը: Նրանց միայն կեսն է գտնվում մշտական մարտական պատրաստության վիճակում:

Դանիայի զինված ուժերում մեծ տեղ է հատկացված պահեստային զորքերին, որոնք աչքի են ընկնում պատրաստվածության բարձր մակարդակով: Պատերազմի դեպքում հավաքագրվողների թիվը, խաղաղ ժամանակաշրջանի հետ համեմատ, ավելանում է մոտ չորս անգամ: Պահեստային զորքերի զինծառայողների վերապատրաստումը կատարվում է զորահավաքային զնդերում:

Դանիական զինված ուժերում իսկական ոստիկանական կառույցը տարածքային սկզբունքով կամավոր հիմունքներով ստեղծված զանգվածային զինված կազմավորում է: Դրա թվաքանակը հասնում է 75 հազարի, ինչը մոտ երկու անգամ գերազանցում է կանոնավոր բանակի մեծությունը: Այն համալրվում է 16–ից մինչև 50 տարեկան կամավորներով, որոնք հիմնականում նախկին պահեստազորի զինծառայողներ են կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվածներ: Հրամանատարական կազմը բաղկացած է դանիական բանակի պաշտոնաթող սպաներից և հրամանատարական դպրոցի շրջանավարտներից: Այդ կառույցի անձնակազմի ուսուցումը կատարվում է մեկ տարվա ընթացքում, աշխատանքից ազատ ժամանակ, և տևում է 24–ից 100 ժամ:

Պատերազմի դեպքում այդ կառույցի խնդիրը ռազմական օբյեկտների և քաղաքացիական կարևորագույն հիմնարկների պաշտպանությունն է, հակառակորդի դիվերսիոն–հետախուզական խմբավորումների հետ պայքարը: Անձնական զենքն ու զինամթերքը մարտիկները պահում են տանը, իսկ ընդհանուր զենքը պահվում է զինանոցներում: Դա թույլ է տալիս տազմապի դեպքում մի քանի ժամում հավաքագրել բոլոր ստորաբաժանումները: Դանիական բանակի այսպիսի կառուցվածքը թույլ է տալիս կարճ ժամանակամիջոցում մոբիլիզացնել բավականին մեծաթիվ լավ զինված և պատրաստված զինված ուժեր:

Բանակի համալրման կադրային-ոստիկանական սկզբունքն ընկած է նաև Նորվեգիայի, Շվեդիայի, Ավստրիայի և մի շարք այլ երկրների զինված ուժերի կառույցի հիմքում:

Կադրային-զորակոչային բանակներ: Կադրային-զորակոչային բանակները միջանկյալ դիրք են զբաղեցնում պրոֆեսիոնալ և կադրային-ոստիկանական բանակների շարքում: Նրանց բոլորի ընդհանուր հատկանիշը համեմատաբար երկար ժամկետով (մեկ տարուց ավելի) պարտադիր զինվորական ծառայության առկայությունն է: Սակայն, ի տարբերություն պրոֆեսիոնալ բանակների՝ կադրային-զորակոչային բանակներն ունեն ավելի մեծ պահեստազոր և, երկրի բնակչության թվի համեմատ, ավելի մեծ բանակ: Ի տարբերություն կադրային ոստիկանական բանակի՝ կադրային-զորակոչային բանակ ունեցող պետությունները խաղաղ ժամանակաշրջանում պահում են թվապես ավելի մեծ կանոնավոր զինված ուժեր, բայց ունեն ավելի փոքր պահեստազոր: Կադրային-զորակոչային բանակների մյուս առանձնահատկությունը համալրման տարածքային սկզբունքի առաջնայնությունն է:

Կադրային-զորակոչային բանակներ ունեն աշխարհի մի շարք երկրներ, ինչպիսիք են Գերմանիան, Իտալիան, Թուրքիան, Հարավային Կորեան, Չինաստանը, Բրազիլիան, Սիրիան և այլն: Նշենք, որ այդ երկրների բանակները միմյանցից տարբերվում են մի շարք առանձնահատկություններով, ինչպիսիք են, օրինակ, զինվորական ծառայության ժամկետները (1-ից մինչև 4 տարի), ծառայության այդ սկզբունքի կիրառման մեթոդների ու ձևերի տարբերությունները:

Կադրային-զորակոչային բանակի տիպիկ օրինակ են գերմանական զինված ուժերը (բունդեսվեր)¹⁰: Ըստ գործող օրենքի՝ Գերմանիայում խաղաղ ժամանակաշրջանում զինապարտ է համարվում 18-ից 45, իսկ պատերազմի դեպքում՝ 18-ից 60 տարեկան արական սեռի ամբողջ բնակչությունը:

Գերմանիայի Ղաշնային Հանրապետության արական սեռի 18-ից 28 տարեկան բոլոր տղամարդիկ պետք է անցնեն ժամկետային զին-

¹⁰ Նույն տեղում, էջ 335.

վորական ծառայություն, որի տևողությունը 15 ամիս է: Ձինվորական ծառայությունից հրաժարվողները կանչվում են այլընտրանքային ծառայության, որի տևողությունը 20 ամիս է: Գերմանական կանոնավոր բանակի կեսից ավելին (55%-ը) համալրվում է կամավոր սկզբունքով: Կամավորները բաժանվում են երկու խմբի՝ պայմանագրային և կադրային զինծառածողների: Պայմանագրի ժամկետը երկուսից տասնհինգ տարի է, որի ավարտից հետո զորացրվող զինծառայողները ստանում են նպաստ: Պայմանագրային զինծառայողներ կարող են լինել և՛ շարքայինները, և՛ ենթասպաները, և սպաները: Պայմանագիր կարող են կնքել ինչպես դեռ չզորակոչված անձինք, այնպես էլ՝ ժամկետային ծառայություն անցնողները:

Իսկական զինվորական ծառայությունն անցած անձինք ուղարկվում են պահեստազոր: Պահեստազորայինները բաժանվում են մի քանի խմբերի՝ ըստ մարտական պատրաստվածության մակարդակի: Ժամկետային և պայմանագրային ծառայությունն ավարտած անձինք անցնում են մշտական պատրաստության պահեստազոր՝ 12 ամիս ժամկետով: Նշված ժամկետի ավարտից հետո նրանց որոշ մասը տեղափոխվում է առաջին կարգի պահեստազոր, իսկ մյուսը՝ երկրորդ կարգի և, այսպես կոչված, ընդհանուր պահեստազոր: Պահեստազորի ուսուցումը կատարվում է ուսումնական հավաքների, զորահավաքային զինավարժությունների և տազնապով կանչվող հավաքների ընթացքում 3 օրից մինչև 4 շաբաթ տևողությամբ:

Համալրման կադրային-զորակոչային սկզբունքով են կառուցվում նաև Չինաստանի զինված ուժերը: Այնտեղ ընտրովի սկզբունքով բավականին երկարաժամկետ զինվորական ծառայությունը կադրային բանակում զուգորդվում է բազմաթիվ պահեստային ուստիկանական կազմավորումների առկայության հետ: Չինական կանոնավոր բանակի միայն 44%-ն է համալրվում զորակոչվածների հաշվին: Անձնակազմի մնացած մասը բաղկացած է կամավոր զինծառայողներից, որոնց ծառայության ժամկետը 8-ից 12 տարի է:

Ինչպես տեսնում ենք, կադրային-զորակոչային, ուստիկանական և կադրային-ուստիկանական բանակներն ունեն համալրման ընդ-

հանրություններ, այն է՝ զինծառայության պարտադիր բնույթը և համալրման տարածքային սկզբունքի կիրառումը:

Ընդհանուր զինապարտության սկզբունքով համալրվող (զորակոչային) բանակներ: Պատմության մեջ առաջին անգամ ընդհանուր զինապարտության սկզբունքն իր կիրառումը գտավ Ֆրանսիայում 1793թ. օգոստոսին, երբ Կոնվենտի ընդունած նոր օրենքով բանակ զորակոչվեցին 18–40 տարեկան բոլոր տղամարդիկ²⁰: XIX – XX դ. սկզբին ընդհանուր զինապարտության սկզբունքը սկսեց կիրառվել աշխարհի բազմաթիվ երկրներում: Այն դրվեց նաև նախկին ԽՍՀՄ զինված ուժերի կառուցման հիմքում²¹:

Ներկայումս աշխարհի պետությունների կեսն իր զինված ուժերի համալրումը կատարում է ընդհանուր զինապարտության սկզբունքով: Այդ պետությունների թվին են պատկանում ՍՊՀ բոլոր երկրները, այդ թվում Չայաստանը: Ընդհանուր զինապարտությունը քաղաքացու օրենքով սահմանված պարտականությունն է. զինվորական ծառայություն տանել զինված ուժերում, անցնել արտաբանակային ծառայության տարբեր ծներ և կատարել երկրի պաշտպանության հետ կապված այլ պարտականություններ:

Հայկական բանակի կազմակերպման կարևորագույն սկզբունքներից են կադրային և ընդհանուր զինապարտության վրա հիմնված բանակի ստեղծումը, կառավարման կենտրոնացումը, միանձնյա ղեկավարումը և այլն:

ՀՀ բանակի համալրման զորակոչային սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում: Վերջինիս մեջ սահմանված են զինվորական ծառայության անցկացման հետ կապված հարցեր:

²⁰ Советская военная энциклопедия, М., 1976, Том 1, стр. 303.

²¹ 1918–1967 թթ. ընդհանուր զինապարտության մասին օրենքի համաձայն ԽՍՀՄ-ում սահմանված էր ընդհանուր զինապարտության զինվորական ծառայությունը, որը բաղկացած էր իսկական զինվորական ծառայությունից, պահեստային ծառայությունից և քնակչության արտաբանակային պատրաստությունից: Զինվորական ծառայության ամենաակտիվ ծն էր համարվում իսկական զինվորական ծառայությունը, որտեղ զորակոչվում էին 18 տարեկան հասած բոլոր պատանիները:

Ըստ «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանում զինվորական ծառայությունը բաղկացած է ժամկետային և պահեստային զինվորական ծառայություններից: Ժամկետային զինվորական ծառայությունն իր հերթին բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված շարքային և սպայական կազմերի, ռազմա-ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների և դրանք ավարտած սպաների զինվորական ծառայությունը: Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը շարքային կազմի համար սահմանված է 24 ամիս:

Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում կամավոր հիմունքներով զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի և կանանց զինվորական ծառայությունը: Պայմանագրային զինվորական ծառայության ժամկետը սպաների և ենթասպաների համար սահմանված է 3–5 տարի, իսկ շարքային և սերժանտական կազմի համար՝ 3 տարի²²:

«Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 16–ից 18 տարեկան արական սեռի քաղաքացիները համարվում են նախագորակոչիկներ, իսկ 18–ից 27 տարեկանները՝ զորակոչիկներ²³: Նախագորակոչիկներին զինվորական ծառայությանը նախապատրաստելու, նրանց տարրական ռազմական գիտելիքներ հաղորդելու համար դպրոցական ուսումնական ծրագրերում նախատեսված է նախնական զինվորական պատրաստության դասընթացը:

ՀՀ բանակում սերժանտների ուսուցումը կատարվում է հատուկ ուսումնական զորամասերում:

Ձինված ուժերի կատարելագործման, մարտունակության բարձրացման և անձակազմի ուսուցմանն է ծառայում հրամանատարական և ինժեներատեխնիկական կադրերի պատրաստումը, որն ըն-

²² ՀՀ օրենքը «Ձինապարտության մասին». Օրենքը պարբերաբար վերանայվում է և լրացվում ՀՀ Ազգային ժողովի կողմից:

²³ Նույն տեղում:

թանում է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հետևյալ հաստատություններում՝ ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետ, Ռազմաավիացիոն թռիչքատեխնիկական ինստիտուտ, տասնյակից ավելի արտասահմանյան ռազմաուսումնական հաստատություններ: Հրամանատարական և ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման են ծառայում նաև 1993թ. ստեղծված սպայական հրամանատարական դասընթացները:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած սպաների համար պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 20 տարի՝ ուսման տարիները ներառյալ²⁴:

Ժամկետային զինվորական ծառայություն անցած և պահեստ արձակված քաղաքացիներն ընդգրկվում են պահեստազորի կազմում: Այնտեղ հաշվառված քաղաքացիները համալրում են պահեստազորի շարքային, ենթասպայական և սպայական կազմերը: Պահեստազորի շարքային կազմում առանձնացվում է երկու կարգ: Առաջին կարգի պահեստազորի թվին են պատկանում այն պահեստազորայինները, ովքեր ժամկետային զինվորական ծառայության մեջ են եղել մեկ տարուց ոչ պակաս: Երկրորդ կարգի պահեստազորի մեջ են մտնում այն անձինք, ովքեր ժամկետային զինվորական ծառայության մեջ են եղել մեկ տարուց պակաս և այն անձինք, ովքեր տարբեր պատճառներով չեն զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության: Այս կարգի պահեստազորայինները վարժական հավաքներ անցնելուց հետո փոխադրվում են առաջին կարգի պահեստազոր:

Առաջին և երկրորդ կարգի պահեստազորի շարքերում քաղաքացիները վարժական հավաքների են մասնակցում 4–6 անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ 3 ամիս ժամկետով: Վարժական հավաքներ է անցնում նաև պահեստազորի սպայական կազմը՝ 1–3 ամիս ժամկետով:

²⁴ Նույն տեղում:

Պահեստագործում շարքային կազմի մեջ հաշվառման ժամկետը սահմանված է մինչև 50, ենթասպայական կազմի մեջ մինչև 55, սպայական կազմի մեջ՝ մինչև 70 տարեկան անձինք²⁶:

Ինչպես արդեն ասվել է, ՀՀ-ում ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունից: Սակայն պայմանագրային հիմունքներով հիմնականում համալրվում է հայկական բանակի ենթասպայական և սպայական կազմը: Ձինված ուժերի շարքային կազմը, որը հայկական բանակի անձնակազմի հիմնական մասն է, համալրվում է զորակոչային սկզբունքով: Այդ է պատճառը, որ ՀՀ բանակի համալրման սկզբունքը դասվում է համալրման զորակոչայինի շարքին:

Ընդհանուր զինապարտության սկզբունքն ընկած է նաև Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի համալրման հիմքում: Քաղաքացիները զինվորական ծառայություն են անցնում զորակոչով, ինչպես նաև կամավոր սկզբունքով (պայմանագրով): ՌԴ-ում զինապարտ է համարվում 18–27 տարեկան արական սեռի ամբողջ բնակչությունը: Ձինվորական ծառայության ժամկետը պարտադիր զինվորական ծառայություն անցնողների համար սահմանված է 24 ամիս: Պարտադիր զինվորական ծառայություն անցնող բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար ծառայության ժամկետը 12 ամիս է: Պայմանագրային զինվորական ծառայության ժամկետը սպայական կազմի համար սահմանված է 5 տարի, իսկ շարքային և սերժանտական կազմի համար՝ 3 տարի²⁶:

1990–ական թվականներին աշխարհում, կապված «սառը պատերազմի» ավարտի և միջազգային լարվածության թուլացման հետ, ի հայտ եկան բանակների կրճատմանն ուղղված հասարակական տրամադրություններ: Մեծացավ զինվորական ծառայությունից հրաժարվողների թիվը: Այսպես՝ XX դարի 90–ականներին Իսպանիայում նրանց թիվը ավելացավ ավելի քան տասնհինգ անգամ²⁷:

²⁶ Նույն տեղում:

²⁶ Закон РФ "О военной обязанности", статья 2.

²⁷ Социологические исследования. Москва, N8, 1999г., стр. 43.

Նմանատիպ երևույթներ էին նկատվում նաև ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում և արևմտյան այլ երկրներում: Այդ ժամանակ ամերիկյան բանակի ամենացավոտ խնդիրներից էր կամավորներին զինվորական ծառայության ընդգրկելու խնդիրը: Ամենուրեք ի հայտ էին գալիս ծառայությունից հրաժարվողների կազմակերպված շարժումներ: 1999 թ. տվյալներով՝ ԳԴՀ բնակչության 55%—ը հանդես էր գալիս ընդհանուր զինապարտության սկզբուրի վերացման օգտին²⁹: Նմանատիպ պատկեր էր ստեղծվել նաև Ռուսաստանում. 1989—ից մինչև 1998թթ. պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվողների թիվը մեծացավ մոտ 20 անգամ և կազմեց զորակոչիկների ընդհանուր թվի 10%—ը³⁰:

Հաշվի առնելով հետխորհրդային Ռուսաստանի առաջին տարիների տնտեսական դժվարությունները՝ սկզբնապես ընտրվեց զինված ուժերի համալրման խառը համակարգը (50% զորակոչիկներ, 50% պայմանագրային զինծառայողներ): 1993թ. նոյեմբերին ՌԴ Նախագահի կողմից ստորագրած հրամանագրի համաձայն՝ մինչև 1995թ. նախատեսվում էր անցնել համալրման խառը, իսկ 1999թ. կամավոր սկզբունքին: Սակայն 1996թ. մայիսի հրամանագրի համաձայն՝ արդեն 2000թ. զորմանից նախատեսվում էր ընդհանրապես վերացնել զորակոչը՝ լրիվ անցում կատարելով զինվորական ծառայության պայմանագրային սկզբունքին³⁰:

Համալրման տարածքային և ոչ տարածքային սկզբունքները: Բանակի համալրման տարածքային (տերիտորիալ) սկզբունքը զինված ուժերի համալրումն է զորամասերի և ռազմական այլ օբյեկտների տեղակայման տարածքին մոտ բնակվող անձնակազմով:

Բանակի համալրման տարածքային սկզբունքն ընկած է շատ երկրների զինված ուժերի կառուցման հիմքում: Տարածքային սկզբունքով են համալրվում ԱՄՆ—ի, Մեծ Բրիտանիայի, ԳԴՀ—ի, Շվեյցա-

²⁹ Նույն տեղում, էջ 44:

³⁰ Նույն տեղում:

³⁰ Комментарий Фед. Закона " О воинской обязанности и военной службе", стр. 28.

րիայի, Դանիայի և այլ երկրների բանակները: Շվեյցարական ոստիկանական բանակը համալրվում է բացառապես տարածքային սկզբունքով: Բոլոր զինապարտները զինվորական ծառայությունն անցկացնում են իրենց կանտոններում: Բացի այդ, զորամասերի և ստորաբաժանումների համալրման ժամանակ հաշվի է առնվում նաև զինծառայողի լեզվական պատկանելությունը, իսկ ծառայության ընթացքում ամբողջ ռազմական ուսուցումը կատարվում է զինծառայողի մայրենի լեզվով:

Բանակի համալրման տարածքային սկզբունքը գերիշխում է նաև դանիական զինված ուժերի համակարգում: Բացի «հեծվերն»-ից, որը տարածքային կադրային-ոստիկանական կառույց է, դանիական բանակի բաղկացուցիչ մաս են կազմում նաև կանոնավոր ցամաքային զորքերի մեջ մտնող տեղական պաշտպանության զորքերը, որոնք համալրվում են բացառապես տարածքային սկզբունքով:

Կադրային-զորակոչային բանակի համալրման տարածքային սկզբունքի կիրառման վառ օրինակ են Գերմանիայի զինված ուժերը: Այստեղ, բացի նրանից, որ զինծառայողները տեղակայված են իրենց բնակության վայրերին մոտ գտնվող զորամասերում, գոյություն ունեն նաև ցամաքային ուժերի ինքնուրույն մաս կազմող տարածքային զորքեր: Նրանց կազմակերպական կառուցվածքը լիովին համապատասխանում է երկրի տարածքային բաժանմանը: Պատերազմի դեպքում տարածքային զորքերը պետք է ապահովեն կանոնավոր զորքերի նյութատեխնիկական սպասարկումը, պետական, ռազմական և արդյունաբերական օբյեկտների պաշտպանությունը և այլն: Նախատեսվում է նրանց մասնակցությունը նաև անմիջական ռազմական գործողություններին:

Իրենց կառուցվածքով և նշանակությամբ նմանատիպ տարածքային զորքեր ունեն նաև Բելգիայի, Հոլանդիայի և այլ երկրների զինված ուժերը:

Բանակի համալրման տարածքային սկզբունքը կիրառվում է նաև պրոֆեսիոնալ կանոնավոր և պահեստային զորքերում: Այսպես՝ բրիտանական բանակում տարածված է համալրման, այսպես կոչված,

տարածքային–գնդային սկզբունքը, որի համաձայն կանոնավոր զորքերի զնդերը համալրվում են տարածքային սկզբունքով երկրի տարածքային բաժանմանը համապատասխան: Այստեղից էլ պարզ է դառնում անգլիական զնդերի անվանումների (յորքշիրյան, լանքաշիրյան և այլն) պատճառը:

1981 թվականից համալրման տարածքային սկզբունքն ընկած է նաև ամերիկյան զինված ուժերի կառուցման հիմքում: Երկրի նույն տարածաշրջանում բնակվող զինծառայողներն իրենց ծառայությունն անց են կացնում համապատասխան զնդի մեջ մտնող միևնույն զինվորական ստորաբաժանումներում: Համալրման տարածքային սկզբունքով են կառուցված նաև ամերիկյան պահեստային զորքերը:

Բանակի համալրման ոչ տարածքային (էքստերիտորիալ) սկզբունքը ենթադրում է զինված ուժերի համալրում զորամասերի և այլ ռազմական օբյեկտների տեղակայման տարածքից դուրս բնակվող անձնակազմով:

Արևմտյան Եվրոպայում 19–րդ դարի կեսերից մեծ մարդկային ներուժ պահանջող զանգվածային կանոնավոր բանակների ստեղծման հետևանքով սկսեց լայնորեն կիրառվել նաև համալրման ոչ տարածքային սկզբունքը: Այն հնարավորություն տվեց զորամասերը համալրել երկրի տարբեր շրջաններից հավաքագրված անձնակազմով և ապահովել անհրաժեշտ զինվորական մասնագետների ներհոսքը բանակ:

Բանակի համալրման ոչ տարածքային սկզբունքը դրված էր ԽՍՀՄ բանակի կազմավորման հիմքում: Խորհրդային Միությունում բազմաթիվ ազգերի գոյությունը խորհրդային ղեկավարությանը ստիպում էր անշեղորեն հետևել այդ սկզբունքին, քանի որ հակառակ դեպքում՝ համալրման տարածքային սկզբունքը կարող էր ազգային բանակների ստեղծման և ազգային ինքնագիտակցության բարձրացման նախապայմաններ ստեղծել: Համալրման ոչ տարածքային սկզբունքը ժառանգվել է Ռուսաստանի, Հայաստանի և ԱՊՀ այլ երկրների կողմից:

Համալրման տարածքային և ոչ տարածքային սկզբունքներն ունեն իրենց և արժանիքները, և թերությունները: Այսպես՝ համալրման տարածքային սկզբունքի պայմաններում հեշտամուն է զորակոչվածներին

գործառնաժողովը, փոքրամասնական ընկերությունները, հետևաբար, կապված ծախսերը, հետևաբար, կապված է զինվորականության ուսումնական հավաքների ներդրումով գործը պահանջարկի արտադրական գործընթացից և աշխատանքից կտրելու, իսկ անհրաժեշտության դեպքում գործառնաժողովը կատարվում է առավել կարճ ժամկետով: Սակայն դրա հետ մեկտեղ գործառնաժողովի տեղակայման վայրերում, զինակոչիկների անբավարար քանակի դեպքում, դժվարանում է ստորաբաժանումների համալրումը համապատասխան մասնագետներով: Համալրման տարածքային սկզբունքը, ի հակադրություն զինված ուժերի առավել նպատակահարմար կազմավորումների ստեղծման նախագծերի, ինքն է կանխորոշում գործառնաժողովի հնարավոր տեղակայման խնդիրը՝ հաշվի առնելով զինվորական համակազմի քանակը և բնակության վայրը:

Ինչ վերաբերում է բանակի համալրման ոչ տարածքային սկզբունքին, ապա դրա գլխավոր թերությունն այն է, որ այն կրկնակի խոչընդոտներ է ստեղծում բանակի համալրման գործում, դանդաղեցնում է անհրաժեշտության դեպքում գործառնաժողովի ընթացքը, դժվարացնում է պահեստագործայիններին ուսումնական հավաքներին ներգրավելու խնդիրը: Այս բոլոր թերություններով հանդերձ՝ համալրման տարածքային և ոչ տարածքային սկզբունքները կիրառվում են քաղաքական, տնտեսական և բարոյահոգեբանական զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող, աշխարհագրական տարբեր դիրքեր զբաղեցնող պետություններում:

3.5 Բանակը և քաղաքականությունը

Բանակի ինստիտուտի առանձնահատկությունների հետ է կապված այն կարևոր հանգամանքը, որ բանակը ծառայեցվել է որոշ քաղաքական ուժերին, կատարել այնպիսի գործառնություններ, որոնք, ըստ էության, բնորոշ չեն բանակի ինստիտուտին և զինծառայողի առաքելությանը: Տվյալ հարցն անմիջականորեն կապված է բանակի և հասարակության քաղաքական համակարգի, քաղաքական իշխա-

նության ինստիտուտների միջև փոխհարաբերությունների հետ, ինչն առանձին քննարկման կարիք ունի:

Բանակի և քաղաքականության միջև հարաբերությունները պետք է վերլուծել գործառնական և միաժամանակ կառուցվածքային տեսանկյուններից: Քաղաքականության և բանակի միջև հարաբերություններն արտահայտվում են հետևյալ գործառնական և կառուցվածքային ձևերով.

ա) Քաղաքական ոլորտը հասարակական-պետական կյանքի այն կարևորագույն բնագավառն է, որտեղ տեղի են ունենում հասարակական-պետական կառավարմանն ուղղված կարևոր որոշումների ընդունման և իրականացման գործընթացները: Այդ համատեքստում բանակի քաղաքական կարևոր նշանակությունը և դերը կարելի է սահմանել դիտարկելով բանակը որպես քաղաքական նշանակություն ունեցող որոշումների ընդունման և իրագործման առանձնահատուկ համակարգ: Քաղաքականության ռազմական ոլորտն իր վրա է վերցնում այն բոլոր կարևորագույն պետական խնդիրների լուծումը, որոնք կապված են պետության ռազմավարական, ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական, անվտանգության և առնչվող այլ ուղղությունների մշակման, անհրաժեշտ միջոցների և հնարների հայթայթման, ուժերի կազմակերպման և նպատակաուղղված կիրառության հետ:

Քաղաքական որոշումների կայացման գործընթացները ռազմական ոլորտում և, մասնավորապես՝ բանակի համակարգում, ունեն իրենց առանձնահատկությունները: Օրինակ՝ նկատվել է, որ կոնֆլիկտի պայմաններում քաղաքական և ռազմական փորձագետների կողմից քաղաքական որոշումների համատեղ ընդունման ժամանակ քաղաքական և ռազմական գործիչները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում: Այսպես՝ ռազմական փորձագետները հակված են գործել ավելի արագ և ընտրում են այնպիսի գործելակերպ, որի արդյունքները կլինեն ակներև և շոշափելի: Ի տարբերություն նրանց՝ քաղաքական գործիչների համար անմիջական արդյունավետությունն ու կայացվող որոշման արդյունքի շոշափելիությունն առաջնային չափանիշներ չեն, որոշում կայացնող քաղաքացիական անձինք հաճախ

պատրաստ են գործել դանդաղ, զգուշորեն՝ քայլ առ քայլ մոտենալով սպասվող արդյունքին: Եվս մեկ տարբերություն. եթե որոշում կայացնող քաղաքական գործիչները, ելնելով դիվանագիտական սկզբունքներից, քաղաքական ավանդույթներից, մորմներից և սեփական փորձից, առաջին հերթին հակված են դեպի խնդրի լուծման բանակցային տարբերակները, ջանում են հակառակորդի հետ համատեղ կառուցել կառուցողական երկխոսություն, լուծել խնդիրը համատեղ քննարկման, հնարավոր ուղիների բազմաշերտ արժևորման միջոցով, ապա ռազմական ոլորտի գործիչները հակված են լուծելու խնդիրն ուժային միջոցներով, որոնց գերազանցաբար տիրապետում են և որոնք ամենաարդյունավետն են համարում, փորձում են հակառակորդին ցուցադրել իրենց ռազմական ուժը և բանակի հզորությունը, իսկ եթե մասնակցում են բանակցություններին, ապա հաճախակի հանդես են գալիս ուժի դիրքերից և բերում են «ուժի փաստարկներ»:

բ) Քաղաքականությունը կարելի է սահմանել որպես այնպիսի մասնագիտություն, հմտություն, գիտություն և արվեստ, որն, ըստ էության, կոչված է կատարելու հասարակական–պետական կարևորագույն շահերի, արժեքների և նպատակների ձևակերպումը, պաշտպանությունն ու իրականացումը: Այդ իմաստով բանակը որպես ինստիտուտ ունի գործառնական առանձնահատկություններ: Մի կողմից բանակի ինստիտուտի առկայությունը թույլ է տալիս մշակել պետության համապատասխան ռազմավարությունն անվտանգության և արմատական շահերի պաշտպանության ոլորտներում: Մյուս կողմից բանակը կառուցվածքագործառնական առումով իրականացնում է նյութական և մարդկային ռեսուրսների վերաբաշխումն ու կազմակերպումը, դրանց նպատակաուղղված կիրառումն անվտանգության ապահովման նպատակով, հատկապես՝ պատերազմական իրավիճակներում: Բանակի կարիքները հոգալու համար ռազմական ոլորտը պետական մարմինների միջոցով հավաքագրում է այն սոցիալական ուժերին, որոնց անհրաժեշտությունն է զգում հայրենիքի պաշտպանության և բանակի առջև դրված խնդիրների կատարման համար: Այդ իմաստով շատ կարևոր է պահպանել անհրաժեշտ հավասարակշռու-

թյունը բանակի և հասարակական-պետական այլ ինստիտուտների միջև, թույլ չտալ, որպեսզի հասարակությունը ռազմականացվի, իսկ հասարակական հարաբերությունները ենթարկվեն պատերազմի օրենքներին նաև պատերազմի ավարտից հետո կամ էլ պատերազմի վտանգի սպառնալիքի միջոցով: Այդ սահմանագծի խախտման օրինակները բազմաթիվ են: Բավական է հիշել պրուլետարիատի դիկտատուրան, որի հեղինակներն ու կատարողները կապիտալիզմի «չար ուժերի», իմպերիալիզմի և հնարավոր դասակարգային պատերազմի սպառնալիքի ներքո հասարակությանը «ղեկավարում էին» մշտական վտանգվածության, զանգվածային անօրինական պատմի, բռնության և մշտական սթրեսի միջոցով:

զ) Քաղաքականությունը սահմանվում է նաև որպես պայքար հանուն իշխանության և միաժամանակ՝ որպես իշխանության հասնելու, այն պահելու, վերաբաշխելու և կիրառելու համար պայքարի ոլորտ: Այդ ենթատեքստում բանակն իշխանության շուրջ տարվող պայքարի համար հզոր միջոց է դառնում: Որպես իշխանությանը հասնելու և այն պահպանելու միջոց՝ բանակը կարող է ինչպես դրական, այնպես էլ՝ խիստ բացասական դեր խաղալ: Եթե քաղաքական իշխանությունը պատկանում է ժողովրդին, ծառայում է հասարակության շահերին, ինչը ենթադրվում է ժողովրդավարության դեպքում, ապա բանակն այդ իշխանության կայացման, ամրապնդման և պաշտպանության հզոր միջոց է:

Հակառակ պատկերն է ստեղծվում տոտալիտար (ամբողջատիրական) քաղաքական վարչակարգերի առկայության դեպքում, երբ ամբողջ քաղաքական իշխանությունը կենտրոնացված է մեկ իշխող խմբի ձեռքերում: Բանակը ծառայեցվում է այդ խմբի իշխանական հավակնությունների բավարարմանը, դառնում է հիմնական միջոց՝ ընդդիմության, այլ հասարակական խմբերի, ժողովրդի հետ պայքարելու և ցանկացած դժգոհություն ճնշելու համար: Իշխող խումբը բանակի ուժերով փորձում է ֆիզիկապես վերացնել և բարոյապես ճնշման տակ պահել բոլոր նրանց, ովքեր կարող են վտանգել այդ խմբի կողմից իշխելու, կառավարելու յուրացրած մենաշնորհը:

Ինչպես տոտալիտար, այնպես էլ ավտորիտար (ինքնակալական) վարչակարգերի պայմաններում, երբ բարձրագույն իշխանությունը կենտրոնացված է հիմնականում անհատ գործչի ձեռքերում, բանակը կարող է միջոց դառնալ՝ այդ անհատ գործչի սեփական քաղաքական հավակնությունների իրագործման, նրա քաղաքական իմիջի բարձրացման, ընդդիմադիր ուժերին զսպելու համար: Եվ տոտալիտար, և՛ ավտորիտար քաղաքական վարչակարգերի դեպքում ռազմական կառավարման հավանականությունն ու վտանգը շատ բարձր է. երկու դեպքում էլ քաղաքացիների իրավունքները զանգվածաբար կամ ընտրովի խախտվում են, այդ թվում՝ նաև ուժային միջոցներով:

Ռազմական գործիչները քաղաքական ուղորտում: Պետության, ժողովրդի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը միաժամանակ և՛ քաղաքական, և՛ ռազմական կարևորագույն խնդիր է: Այդ խնդրի արդյունավետ կատարումը ենթադրում է կայուն և սերտ համագործակցություն պետության քաղաքական և ռազմական վերնախավերի միջև: Այդ համագործակցության արդյունավետությունն ակներև է այն ժամանակ, երբ ռազմական միջոցների կիրառման և խնդրի ռազմական լուծման մասին որոշումն ընդունվում է քաղաքական գործիչների կողմից՝ ռազմական փորձագետների մասնակցությամբ, իսկ իրագործվում է ռազմական մասնագետների կողմից: Հատկապես պատերազմական իրավիճակի ծագման կամ վտանգի, հակամարտության առկայության պայմաններում կարևորագույն որոշումների կայացումը պետք է քաղաքական և ռազմական վերնախավերի համատեղ աշխատանքի արդյունքը լինի: Միայն այդ դեպքում հնարավոր է առավել նպատակահարմար և արդյունավետ որոշում ընդունել:

Ռազմական վերնախավը կամ գեներալիտետը պետության համար ամփոխարինելի ներուժ է: Այդ իսկ պատճառով որոշակի պատմաքաղաքական իրավիճակներում գեներալիտետի հեղինակությունը և գործելու համեմատական ազատությունը պատճառ են, որպեսզի գեներալիտետը որոշ քաղաքական ուժերի կողմից ընկալվի որպես վտանգ: Վերջիններս այդ վտանգը տեսնում են իրենց և զինվորական-

ների միջև իշխանության շուրջ տարվող պայքարում, կամ էլ, որն ավելի հազվադեպ է, իրավացիորեն փորձում են կանխել և թույլ չտալ քաղաքական իշխանության ռազմականացման և տոտալիտարիզմի, ռազմական վարչակարգի ձևավորման հնարավոր միտումները:

Նման վտանգն իրենց հետ են բերում ռազմական ուղորտից զանգվածաբար քաղաքականություն եկող զինվորականները: ԱՊՀ բոլոր պետություններում նշված երկու հիմնական վտանգների համար անհրաժեշտ հիմքերն առկա են: Ժամանակակից աշխարհի խիստ կոնֆլիկտային և ռազմականացված բնույթը, բազմաթիվ էթնոքաղաքական և միջազգային հակամարտությունների առկայությունը, մարդկանց զանգվածային տեղաշարժերն ու վերաբնակեցումները, փախստականների հոսքերը ստեղծում են ռազմական միջոցների օգտագործման բարձր հավանականություն և դրանով իսկ՝ ռազմական գործիչների հեղինակության բարձրացում:

Երբ քաղաքական շատ խնդիրներ ընդունված է լուծել ռազմական ուժի միջոցով, քաղաքական վերնախավը ռազմականացվում է: Ավելին՝ ստեղծված նոր իրավիճակներում քաղաքական գործիչները ժամանակ առ ժամանակ կորցնում են ժողովրդի վստահությունն ու համակրանքն այն պատճառով, որ հասարակական կարծիքի համաձայն չեն կարողանում «կամք դրսևորել և համարժեք միջոցներով արձագանքել քայքայիչ ուժերին, հանցագործությանը, ահաբեկչությանը, մաֆիային, աղքատությանն ու անօրինականություններին»: Այդ պայմաններում «ուժեղ բռնկումների» կարիք է զգացվում, որի հնարավորությունը հասարակական գիտակցության մեջ կապակցվում է զինվորականների քաղաքական մասնակցության, ռազմական բարձրագույն սպաների քաղաքական դերի հետ:

Այուս կողմից՝ հայտնի է, որ պատերազմից կամ ռազմական իրավիճակների ավարտից հետո բազմաթիվ ռազմական մասնագետներ մատնվում են գործազրկության, ստիպված են վերամասնագիտանալ՝ յուրացնելով քաղաքացիական որևէ մասնագիտություն: Այդ պայմաններում նրանցից շատերը դժվարությամբ են իրենց տեղը գտնում քա-

ղաքացիական կյանքում: Տվյալ վտանգից խուսափելու համար բարձրաստիճան սպաներից ոմանք դեռևս զինծառայության ժամանակ աշխատում են ապահովել անհրաժեշտ հիմքեր պատշաճ ապագա ունենալու համար, հաճախ քաղաքականությանը մասնակցելով և նույնիսկ սեփական քաղաքական ուժ, կուսակցություն, կազմակերպություն կամ միություն ստեղծելով: Նման օրինակները բազմաթիվ են այն բոլոր պետություններում, որտեղ անցում է կատարվել պատերազմական գործողություններից դեպի խաղաղ, կառուցողական կյանք:

Եվս մեկ հանգամանք. ժամանակակից պայմաններում խիստ տարածված է բարձրաստիճան սպաների, զեներալների թվի չհիմնավորված աճը: Պետությունում զեներալների թվի նպատակահարմար, հիմնավորված աճն անմիջականորեն կապված է բանակի աճի և հզորացման, պատերազմին հերոսաբար մասնակցելու և ռազմական գործողությունները արդյունավետորեն կառավարելու, ռազմական ուժերը վարպետորեն կազմակերպելու և այլնի հետ: Հակառակ պարագաներում զեներալների թվի կտրուկ աճը պետք է չհիմնավորված և իմաստազուրկ համարել: Այսպես մասնագետների դիտարկումների համաձայն Ռուսաստանում վերջին տասը տարիների ընթացքում բանակի, զինծառայողների թվի կտրուկ նվազման պայմաններում կտրուկ աճել է զեներալների թիվը (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

**Հետխորհրդային Ռուսաստանում զեներալների թվի աճի
դինամիկան /1991–2000թթ./**

Տարեթիվը	Բանակի թվակազմը	Բանակում զեներալների թվաքանակը
1991թ.	5 մլն	4880 հոգի
1992թ.	2,5 մլն	2000 հոգի
1994թ.	1,5 մլն	4000 հոգի
2000թ.	1,2 մլն	4000 հոգի

Մասնագետները նշում են, որ հատկապես աճել է այն գեներալների թիվը, որոնք զբաղված են զինդատախազությունում, բյուջետային, ֆինանսական, սպասարկող ծառայություններում և անվանվում են «բյուրոկրատական»³¹:

Սոցիալական անապահով վիճակն ու կենցաղային անբարենպաստ պայմանները, ինչպես նաև տարածված գործազրկությունն էապես հեռացնում են միմյանցից զինվորներին և սպաներին, ցածրաստիճան և բարձրաստիճան սպաներին, բարձրաստիճան սպաներին և ռազմաքաղաքական վերնախավի ներկայացուցիչներին³²:

Ռազմական վերնախավի քաղաքական հավակնությունների հետ պայքարելու ևս մեկ միջոց է գեներալների խիստ ստորադասումն ու իշխանության «ուղղահայացի» ամրապնդումը: Այդ միջոցն առավել արդյունավետ է այն պետություններում, որտեղ բարձրագույն հրամանատարությունն ավանդաբար և պատմականորեն ենթարկվել է մեկ անձի՝ քաղաքական բարձրագույն ղեկավարին: Նման գործընթացների և միջոցների կիրառման օրինակներից է այն, որ ժամանակակից պրեզիդենտական ինստիտուտի առկայության պայմաններում երկրի նախագահը զինված ուժերի գլխավոր հրամանարարն է: Հետաքրքիր է, որ 2000թ. մարտի 15-ին Ռուսաստանի նորընտիր նախագահ Վ. Պուտինը, ընդունելով կառավարության հրաժարականը, պատմության մեջ առաջին անգամ պահանջեց, որպեսզի միևնույն ժամանակ հրաժարական տա նաև պետության ամբողջ ռազմական ղեկավարությունը՝ շուրջ 64 գեներալ և ծովակալ: Այդ քայլի նպատակն էր զգացնել տալ երկրի ռազմական վերնախավին, թե ում են պարտական իրենց պաշտոններով³³: Նման միտումներից է նաև այն, որ այսօր տարբեր երկրների պաշտպանության նախարարի պաշտոնում հաճախ նշանակվում են քաղաքացիական անձինք (ինչպես, օրինակ, այժմ Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Հայաստանի Հանրապետության և մի շարք այլ պետությունների պաշտպանության նախարարները):

³¹ Ств. Серебрянников В. В., "Генералы и политики", СОЦИС 10, 2001г., с. 73.

³² Նույն տեղում, էջ 73:

³³ Նույն տեղում, էջ 74:

Գոյություն ունի նաև հակառակը: Այսպես՝ ԱՄՆ ռազմական կառույցներում կատարված սոցիոլոգիական մի շարք հետազոտությունների նպատակն էր պարզել բանակի ավագ և կրտսեր սպայական անձնակազմի ներկայացուցիչների վերաբերմունքը քաղաքականությանը և դրանում իրենց հնարավոր մասնակցությունը: Մասնակիցների ճնշող մեծամասնությունը քաղաքականությունը հակադրել է ռազմական պրոֆեսիոնալիզմին: Մասնավորապես, կրտսեր սպայական անձնակազմի ներկայացուցիչները «քաղաքականություն» հասկացությունը կասկածելի են համարում, այդ երևույթին չեն վստահում: «Ռազմական» և «քաղաքական» ոլորտները դիտվում են որպես միմյանցից առանձնացված բնագավառներ: Չնայած պետք է նշել, որ ավագ սպայական անձնակազմի մոտ այդ վերաբերմունքը մեծամասնական կարծիքի չի արժանացել³⁴:

3.6 Բանակը և եկեղեցին. միջինստիտուցիոնալ տեսանկյուն

Հասարակության պատմական զարգացման ընթացքում տարբեր ինստիտուտների և հասարակական համակարգերի ծագումը, ձևավորումն ու զարգացումը անհամաչափ գործընթաց է: Տարբեր են նաև այդ ինստիտուտների միջև պատմականորեն ձեռք բերված գործառնական կապերը, որոնք կարելի է հետազոտել՝ դրանք ենթարկելով որոշակի պարբերականացման, ուսումնասիրելով այդ կապերի ինտենսիվացումն ու սերտացումը, ինչպես նաև հարաբերական թուլացումն ու կապերի ժամանակավոր կամ երկարատև խզումը տարբեր միջինստիտուցիոնալ գործակցության և կոնֆլիկտների հետևանքով՝ որպես միմյանց հաջորդող փուլեր: Այդ պարբերականացման արդյունքում հնարավոր է ստանալ հասարակական

³⁴ Soldiers, Society, and National Security (Ed. By Sam C. Sarkesian, John A. Williams, Fred B. Bryant), London, Lynne Rienner Publishers, 1995, p. 127.

տարբեր ինստիտուտների միջև ստեղծված կառուցվածքա-գործառնական կապերի դինամիկ, զարգացող պատկերը:

Նման պարբերականացման են ենթարկվում նաև բանակի և եկեղեցու միջև պատմականորեն ձևավորված և զարգացող հարաբերությունները, որոնցում պարբերաբար միմյանց են հաջորդել սերտ և արդյունավետ գործակցումը, կապերի ուժեղացումը, ապա՝ թուլացումն ու խզումը և այլն:

Բանակի՝ որպես հասարակության անվտանգությունն ապահովող ինստիտուտի և եկեղեցու՝ կրոնի, հավատքի ու ազգի էթնոմշակութային ինքնությունն ավանդաբար ապահովող ինստիտուտի միջև հարաբերությունները պատմական անցյալում անչափ սերտ են եղել:

Ազգի ինքնության ապահովման արտաքին երաշխիքն է նրա անվտանգությունը, պաշտպանվածությունն արտաքին թշնամիներից և ազատությունը, որի երաշխիքն է բանակի ինստիտուտը, իսկ ներքին նախապայմանը՝ ազգի էթնոմշակութային միասնությունը, որոշակի գաղափարական ուղղվածությունն ու ներկայացվածությունը: Վերջինիս բազմադարյան երաշխիքն ու կրողն է եղել եկեղեցու ինստիտուտը: Այսպիսով և՛ բանակը, և՛ եկեղեցին կոչված են եղել ապահովելու ազգային ինքնության ազատ արտահայտումն ու ինքնատիպ դրսևորումը:

Եկեղեցու կապը բանակի հետ նախկինում դրսևորվել է հիմնականում նրանում, որ հոգևորական և ռազմական խավերը շերտավորված հասարակության կառավարող օղակներն են եղել: Ավելին՝ հոգևորականների խավի ներկայացուցիչները պետության համար ճգնաժամային իրավիճակներում, անմիջական վտանգի պայմաններում հաճախ համալրել են բանակի, զինված ուժերի շարքերը՝ քաջարի կռվելով թշնամու դեմ և կազմակերպելով բնակչությանը՝ թշնամուն արժանի հակահարված հասցնելու համար: Իր հերոսական անցյալով հարուստ հայոց պատմության մեջ նման օրինակները բազմաթիվ են: Լինելով հայ մշակույթի, դպրության, հավատքի և ազգի պահպանման մշտական երաշխիքը՝ հայոց եկեղեցին եղել է նաև

հայկական բանակին խորհրդով և ուժով մշտապես աջակցող ինստիտուտ:

Խորհրդային իշխանության տարիներին բանակի և եկեղեցու հարաբերությունները գաղափարականացվեցին և բարդացան, եկեղեցին հռչակվեց իբրև բանակի արդյունավետությանը վնասող գործոն: Տարածված էր այն կարծիքը, թե բանակը չի կարող արդյունավետ և համախմբված գործել, եթե դրա շարքերում կան հավատացյալներ³⁶: Սկզբնական շրջանում նախատեսում էին ուղղակի զինծառայությունից ազատման հնարավորությունը. զինակոչիկի կրոնական համոզմունքների և համապատասխան ապրելակերպի դեպքում սահմանվում էր այլընտրանքային ծառայության անցնելու կարգը: Մասնավորապես՝ 1918թ. հունվարի 23-ին ընդունված «Պետությունից և դպրոցից եկեղեցու անջատման մասին» դեկրետի 6-րդ կետում նշվում էր. «Ոչ ոք չի կարող, հենվելով սեփական կրոնական համոզմունքների վրա, խուսափել իր քաղաքացիական պարտականությունների կատարումից: Բացառությունները, մեկ քաղաքացիական մասնագիտությունը մեկ այլ մասնագիտությամբ փոխարինելու պայմանով, թույլատրվում են յուրաքանչյուր դեպքի համար ժողդատարանի որոշմամբ»³⁶: 1919թ. հունվարի 4-ին Լենինի կողմից ստորագրված դեկրետում զինծառայությունից ազատման կարգի վերաբերյալ նշվում էր. «Այն անձինք, որոնք իրենց կրոնական համոզմունքների պատճառով չեն կարող մասնակցել զինվորական ծառայությանը, ժողդատարանի որոշմամբ կարող են որոշակի ժամկետով այն փոխարինել սանիտարական ծառայությամբ, հիմնականում վարակային հոսպիտալներում կամ այլ համապատասխան, հասարակայնորեն օգտակար աշխատանքով՝ զինակոչիկի ընտրությամբ»³⁷: Տվյալ դեկրետում զինծառայողի կամ զինակոչիկի կրոնական համոզմունքների առկայության հնարավորությունը և իրավունքը ձևական բնույթ ունեն: Սակայն այդ ձևական հնարավոր-

³⁶ Пчелинцев А., Армия и религия: от конфронтации к диалогу, В сб.: Качанов В. Е. (ред.), Армия и общество, М., Прогресс, 1990г., сс. 202-203.

³⁶ Նույն տեղում, էջ 196:

³⁷ Նույն տեղում, էջ 196:

րությունը նույնպես վերացվեց 1927թ., երբ ընդունվեց «Դրույթ զին-
ծառայողական հանցագործությունների մասին»: Վերջինս նախա-
տեսում էր քրեական պատասխանատվություն «կրոնական համոզ-
մունքների պատրվակով զինծառայությունից խուսափելու հա-
մար»³⁰: Ինչպես երևում է, կրոնական համոզմունքների առկայությու-
նը օրենքի խախտման և քաղաքացիական պարտավորությունների
չկատարման համար լոկ պատրվակ էր համարվում:

Անկախացման գործընթացների սկիզբը խորհրդային բոլոր հան-
րապետություններում և սովետական գաղափարախոսությունից,
ինչպես նաև առհասարակ գաղափարախոսությունից վայրկյանա-
կան հրաժարումը սուր անհրաժեշտություն ստեղծեց փոխհատու-
ցող որևէ գաղափարական համակարգի ձևավորման մեջ, որը կկա-
րողանար կատարել հասարակության մոբիլիզացման անհրաժեշտ
գործառույթը: Քաղաքական գաղափարախոսության նկատմամբ
հետխորհրդային մերժողականությունը հատկապես արժևորեց կրո-
նական հավատքի վերականգնման անհրաժեշտությունը՝ որպես
ազգին ավանդաբար համախմբող ուժի:

Մյուս կողմից՝ նորանկախ երկրներում, համաձայն որդեգրած ժո-
ղովրդավարական բարեփոխումների ընդհանուր գծի՝ հռչակվեցին
մարդու այնպիսի համընդհանուր իրավունքների պաշտպանության,
ինչպիսիք են մտքի, խղճի և դավանանքի իրավունքներն ու ազա-
տությունները: Նշված հանգամանքները հիմք ծառայեցին հետ-
խորհրդային հանրապետություններում կրոնի դերի պաշտոնական
վերականգնման համար:

Այսօր եկեղեցին կարևոր տեղ է գրավում նորաստեղծ հասարա-
կությունների սոցիալական ինստիտուտների շարքում՝ վերականգ-
նելով և նորովի կառուցելով իր գործառնական կապերը հասարա-
կական-պետական այլ ինստիտուտների հետ: Ամրապնդվում են
նաև կապերը եկեղեցու և բանակի միջև: Հոգևորականներն անմիջա-
կանորեն և ակտիվորեն մասնակցում են զինծառայողների կրթա-
դաստիարակչական, լուսավորչական աշխատանքներին, եկեղեցին

³⁰ Նույն տեղում, էջ 197:

կազմակերպում է համապատասխան միջոցառումներ զորքերում և այլն: Բանակի ու եկեղեցու միջև ավանդական կապերի վերականգնման և նոր հարաբերությունների կառուցման արդի գործընթացները գերծ չեն նաև մի շարք հիմնախնդիրներից ու վտանգներից: Դրանցից մեկը բանակի հոգևորականացումն է: Հայաստանում այդ միտման դրսևորումներից է այն, որ զինվորները, զանգվածաբար «վերևից» եկող կարգադրություններին համապատասխան, մասնակից են դարձվում կազմակերպվող տարբեր կրոնական միջոցառումներին: Նման դեպքերում բանակի և եկեղեցու սերտացումը ձևական, արհեստականացված բնույթ է կրում:

Բանակի և զինծառայողների արհեստական հոգևորականացման գործընթացներին զուգահեռ՝ ծավալվում է կրոնական համոզմունքների պատրվակով զինծառայությունից խուսափելու գործընթացը: Այս դեպքում արդեն խոսքը գնում է ոչ թե հավատացյալ մարդու այլընտրանքային ծառայության իրավունքի և հնարավորությունների, այլ բանակի և եկեղեցու շահերի հակադրման մասին: Այդպիսի հակադրումից խուսափելու համար անհրաժեշտ է մանրամասնորեն մշակել այն բոլոր նախապայմանները, որոնք կսահմանեն այլընտրանքային ծառայության իրավունքն ու դրանից օգտվող անձանց կարգավիճակը:

Այլընտրանքային ծառայության հնարավորությունն առաջին հերթին կապակցվում է երկու նախադրյալների՝ զինակոչիկի կրոնական խոր համոզմունքների, ինչպես նաև նրա համապատասխան կենսակերպի առկայության հետ և մյուս կողմից՝ նրա պացիֆիստական (ռազմատյաց, պատերազմը ժխտող) աշխարհայացքի, կողմնորոշումների առկայության հետ: Տվյալ չափանիշներն իրենց հերթին մի շարք բացառություններ են պարունակում, ինչն էապես դժվարացնում է այլընտրանքային ծառայության և ծառայողների խմբի հստակ սահմանումը:

Ժամանակակից պայմաններում, երբ հասարակության գաղափարական աշխարհը տրոհված է և անկայուն, իսկ բնակչության կրոնական հավատքի համար միմյանց հետ են պայքարում բազմաթիվ

կրոններ, աղանդներ և եկեղեցիներ, շատ դժվար է որոշել, թե այդ կրոններից որոնք են իսկապես արգելում իրենց հետևորդների զինծառայությունը: Այս դեպքում արդեն գործ կունենանք զինծառայողի և հավատացյալի կերպարների փոխբացառման հետ, երբ հավատացյալ լինելը բացառում է զինվորական լինելը և հակառակը:

Այլընտրանքային ծառայության իրավունքի առկայությունը տվյալ պետության և հասարակության քաղաքակիրթ լինելու ժամանակակից բնորոշ գծերից է: Արդի բոլոր ժողովրդավարական և քաղաքակիրթ պետություններում այլընտրանքային ծառայության մասին հայեցակետը երկու տասնամյակի պատմություն ունի: 1988թ. ՄԱԿ-ի Սարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի Հռչակագրով ճանաչվել է քաղաքացիական ծառայություն անցնելու իրավունքը՝ հիմնվելով խղճի ազատության իրավունքի վրա: Սակայն ժողովրդավարության ուղին բռնած պետություններում դժվարություն է ստեղծում ոչ միայն բանակում բարեփոխումների գործընթացները ճիշտ կազմակերպելու խնդիրը, այլ նաև այն, թե ինչպիսի չափանիշներով պետք է ընտրել այն քաղաքացիներին, որոնք կարող են օգտվել այլընտրանքային ծառայության իրավունքից: Այլընտրանքային ծառայության հնարավորությունները նախապատրաստելու համար առաջարկվում են մի շարք անհրաժեշտ պայմաններ.

ա) այլընտրանքային ծառայության իրավունքը հայցող անձի կրոնական համոզմունքների և համապատասխան կենսակերպի, վարքի և բնութագրի առկայությունը՝ հաստատված համապատասխան հոգևոր կազմակերպության, ինչպես նաև տվյալ անձին երկար ճանաչող և համապատասխանաբար բնութագրող անձանց կարծիքներով և ապացույցներով,

բ) հաստատված տվյալներ այն մասին, որ տվյալ կրոնական կազմակերպությունը, որին հարում է զինակոչիկը, գաղափարապես և գործնականորեն միանշանակ արգելում է զինվորական ծառայությունը և ակտիվորեն պայքարում է պատերազմների դեմ,

գ) այլընտրանքային ծառայությունը չպետք է իր դժվարությամբ զիջի զինծառայությանը: Այսպես՝ այլընտրանքային ծառայության տևողությունը չպետք է լինի պակաս, քան 36 ամիս կամ 3 տարի: Այն պետք է կազմակերպվի բանակի, առողջապահության և սոցիալական ապահովման այն ծառայություններում, որտեղ չկա զենք կրելու անհրաժեշտություն, իսկ աշխատանքի բնույթն այն անհրապույր է դարձնում: Դրանցից է, օրինակ, շուրջօրյա աշխատանքը բանակի շինջոկատներում, բուժծառայություններում և հոսպիտալներում, ստացիոնար դիսպանսերներում, հրշեջ ծառայություններում և այլն: Նման ծառայությունը չպետք է վարձատրվի՝ բացառությամբ նյութական ապահովման սահմանված չափի, ծառայության ժամկետը պետք է հաշվառվի որպես աշխատանքային ստաժ: Այլընտրանքային ծառայությունից խուսափելը դիտվելու է որպես օրենքով պատժելի արարք³⁰:

Դրականորեն գնահատելով բանակի և եկեղեցու սերտացման հնարավորությունը՝ այդ ինստիտուտների փոխհարաբերությունները պետք է կառուցել փոխշահավետ, կառուցողական հիմքի վրա՝ այդ երկու սոցիալական ինստիտուտների միջև իրական գործառնական կապեր հաստատելով:

3.7 Նախկին զինծառայողների հարմարումը քաղաքացիական կյանքին

Նախկին զինծառայողների հարմարման հետ կապված հիմնախնդիրներն ու դժվարություններն առաջ են գալիս հիմնականում բանակի, հասարակության և սոցիալական այլ ինստիտուտների միջև գործառնական կապերի անկայունության կամ որոշ դեպքե-

³⁰ Пчелинцев А., Армия и религия: от конфронтации к диалогу, В сб: Качанов, В. Е. (ред.), Армия и общество, М., Прогресс, 1990г., сс. 202-203.

րում՝ նաև բացակայության հետևանքում, երբ անձի անցումը մեկ սոցիալական կառույցից մյուսին հանդիպում է կարգավիճակային, դերային, ֆինանսական, հոգեբանական և այլ խոչընդոտների: Կարելի է առանձնացնել հարմարման գործընթացների մի քանի հիմնական ուղղություններ.

- աշխատանքի փնտրումը, ռազմական ոլորտում ստացած մասնագիտության հարմարեցումը քաղաքացիական գործունեությանը, վերամասնագիտացումը,
- պատշաճ կենսապայմանների ստեղծումը, կենցաղային հարմարումը,
- նոր սոցիալական կարգավիճակի, դերի յուրացումը, նոր սոցիալական խմբին հարմարումը, ներխմբային հարմարումը,
- հոգեբանական փոփոխությունները, նոր սոցիալ-հոգեբանական միջավայրում ինքնընկալման և փոխադարձ ընկալման խնդիրները, հոգեֆիզիկական առողջության և կայունության ապահովման անհրաժեշտությունը, հոգեբանական հարմարումը:

Աշխատանքի փնտրման հետ կապված դժվարությունները: Նախկին զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների աշխատունակ անդամների առջև ծագում են այնպիսի կենսական խնդիրներ, ինչպիսիք են նոր աշխատանքի և աշխատատեղի փնտրումը, նոր աշխատավայրի և անսովոր աշխատանքային հարաբերությունների յուրացումը, ընտանեկան բյուջեի վերաբաշխումը, անհրաժեշտ դեպքում՝ նաև վերամասնագիտացումը: Վերջինս դժվար և նույնիսկ անհնար է դառնում որոշակի տարիքում:

Հայտնի է, որ ժամանակակից պայմաններում աշխատատեղերի պակասությունը քաղաքացիների մեծ մասի, այդ թվում բարձրագույն կրթություն և համապատասխան մասնագիտություն ունեցողների համար զանգվածային գործազրկության կամ էլ անհամապատասխան աշխատանքով զբաղվելու պատճառ է դառնում: Նախկին զինծառայողները, որոնցից համարյա բոլորն ունեն ռազմական

մասնագիտություններ և կեսից ավելին (մոտ 60%) քաղաքացիական⁴⁰, գործազուրկ դառնալու տեսակետից ոչ պակաս խոցելի խումբ են: Ավելին, եթե քաղաքացիական ոլորտի մասնագետներն ունեն որոշակի ժամանակ, հնարավորություններ և ձևավորված կապեր՝ քաղաքացիական կյանքի տարբեր ոլորտներում աշխատանք գտնելու համար, ապա այն զինծառայողների համար, որոնք պահեստ են ուղարկվել անսպասելիորեն, օրինակ՝ զինուժերի ընդհանուր կրճատման հետևանքով, նման հնարավորությունները համարյա թե բացակայում են: Այդ անձինք հանկարծակիորեն հայտնվում են գործազուրկ դառնալու իրական վտանգի առջև, երբ չկան աշխատանք փնտրելու համար ոչ բավարար ժամանակ, ոչ էլ՝ համապատասխան լծակներ: Նախկին զինծառայողների համար շատ ավելի հավանական է դառնում նաև սեփական մասնագիտությամբ չհամապատասխանող աշխատանքով զբաղվելը:

Այս առումով հետաքրքիր է տեսնել, թե զորացրվող և բանակից հեռացվող զինծառայողներն ինչպիսի ոլորտներում են տեսնում իրենց ապագա քաղաքացիական գործունեությունը, աշխատանքը: Ուսաստանում կատարված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների համաձայն՝ հարցված զինծառայողների 27%-ը պատրաստվում է զբաղվել առևտրով, պետական ոլորտում մտադիր է աշխատել 16%-ը, տրանսպորտի և կապի ոլորտում՝ 8%-ը, ուժային կառույցներում, մաքսային և հարկային ծառայություններում՝ 5%-ը, գյուղատնտեսական գործունեությամբ մտադիր է զբաղվել 4%-ը, կրթության համակարգում՝ 4%-ը, կենցաղային սպասարկման ոլորտում՝ 3%-ը, շինարարության մեջ՝ 2%-ը, հասարակական սննդի ոլորտում՝ 2%-ը, ևս 5% նշել է այլ մասնագիտություններ⁴¹:

Սակայն, այլ հետազոտությունների արդյունքում, որոնք վերաբերում էին քաղաքացիական ոլորտում արդեն աշխատող նախկին զինծառայողներին, պարզվել է, որ հարցված նախկին զինծառայող-

⁴⁰ Павлов, Ю. А., Михайлов, Ю. Я. "Проблемы адаптации бывших военнослужащих в Тверском регионе". СОЦИС 10, 2001г., с. 86.

⁴¹ Образцов, И. В., Соловьев, С. С. "Социальные проблемы бывших кадровых военнослужащих". СОЦИС 4, 1998г., сс. 77.

ներից միայն 26%–է տեսնում համապատասխանություն սեփական ռազմական մասնագիտության և ձեռք բերված քաղաքացիական աշխատանքի միջև: Յուրաքանչյուր երկրորդի մոտ քաղաքացիական ոլորտում ձեռք բերված աշխատանքը ոչ մի կերպ չի առնչվում ռազմական ոլորտում ստացված մասնագիտության հետ: Հարցվածներից 13%–ի մոտ ձեռք բերված նոր աշխատանքը համահունչ է ունեցած մասնագիտությանը, բայց չի համապատասխանում որակավորմանը⁴²:

Նախկին զինծառայողների կողմից քաղաքացիական մասնագիտությունների և համապատասխան աշխատանքի ձեռք բերման հնարավորությունն անմիջականորեն կապված է նրանց տարիքի հետ: Ինչպես երևում է որոշ հետազոտություններից, բավականին հեշտ են աշխատանքի տեղավորվում 38–45 տարեկան տղամարդիկ, որոնց մեծ մասն աշխատում է մասնագիտությամբ: Մինչև 30 տարեկան անձինք, որպես կանոն, փնտրում են բարձր վարձատրվող աշխատանք՝ շատ դեպքերում անկախ ունեցած և առաջարկվող մասնագիտությունից⁴³: Միջինից բարձր տարիքի անձինք հիմնականում օգտվում են տարբեր արտոնություններից և ծառայության ընթացքում ձեռք բերված գործնական կապերից, որոնք օգնում են հարմարվել քաղաքացիական կյանքին:

Տարիքային սահմանափակություններն իրենց զգացնել են տալիս նաև այն դեպքերում, երբ քաղաքացիական ոլորտում աշխատանքի ձեռք բերման համար անհրաժեշտ է դառնում վերամասնագիտացումը: Վերամասնագիտացման հնարավորությունը կամ ցանկությունը հաճախ բացակայում են հենց տարիքային անհամապատասխանության պատճառով:

Այսպիսով՝ աշխատանքի տեղավորման խնդիրը նախկին զինծառայողների քաղաքացիական հարմարման հիմնական խնդիրներից է: Այն անմիջապես պայմանավորում է նախկին զինծառայողների և

⁴² Նույն տեղում, էջ 78:

⁴³ Гавелов Ю. А., Михайлов, Ю. Я. (2001), Проблемы адаптации бывших военнослужащих в Тверском регионе, СОЦИС 10, с. 85-87.

նրանց ընտանիքների անդամների կենցաղային, ֆինանսական, ընտանեկան կենսամակարդակը, բնակարանային պայմանները և այլ խնդիրների լուծման հնարավորությունը:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է քննարկել նաև այն հարցը, թե ինչպիսին են զինծառայողների ներկա սպասելիքները՝ կապված քաղաքացիական կյանքին հարմարվելու և սեփական կենսամակարդակը բարելավելու հնարավորության հետ:

Բանն այն է, որ հետխորհրդային զինուժերում զինծառայողների կենսամակարդակը, ինչպես նաև սոցիալական կարգավիճակը, խորհրդային բանակի համեմատությամբ, զգալիորեն նվազել են: Եթե նախկինում խորհրդային բանակի կադրային զինծառայողի կենսամակարդակն ու սոցիալական կարգավիճակը շատ դեպքերում էապես գերազանցել են շարքային քաղաքացիների համապատասխան արտոնությունները, ապա հետխորհրդային շրջանում դրանք գրեթե հավասարեցվել են: Ավելին. քիչ չեն այն դեպքերը, երբ այսօր կադրային զինծառայողն աշխատելու, սեփական ընտանիքի նյութական և սոցիալական պատշաճ կենսամակարդակն ապահովելու ավելի մեծ հնարավորություններ է տեսնում ոչ թե բանակում, այլ հենց քաղաքացիական ոլորտում:

Սյուս կողմից՝ ժամանակակից պայմաններում նվազել են նաև զինծառայողների և նրանց հարազատների կենսական հավակնությունները: Ինչպես նշում են հեղինակները, հավակնությունները անձի համեմատաբար կայուն բնութագրիչներ լինելով հանդերձ էապես կապված են կոնկրետ կենսապայմանների հետ, որոնք այսօր նպաստում են զինծառայողների հավակնությունների նվազմանը⁴⁴:

Տվյալ հանգամանքները նկատի առնելով՝ հիմնավորված է դառնում հետևյալ եզրակացությունը. «Անցումը քաղաքացիական կյանքին սպաների և նրանց տիկնանց կողմից այլևս չի ընկալվում որպես սոցիալական կարգավիճակի իջեցում: Ընդհակառակը. շատ ընտանիքներ, զրկվելով պետության աջակցությունից, հուսով են, որ զո-

⁴⁴ Денисовский Т. М., Смирнов А. И., Новые тенденции в адаптации семей бывших офицеров к гражданской жизни, СОЦИС 8, 1999г., с. 47.

րացրումը կօզնի իրենց նյութական վիճակը բարելավելու և հասնելու ավելի բարձր կենսամակարդակի»⁴⁶:

Սոցիալական հարմարումը: Նախկին զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական հարմարումը ոչ պակաս բարդ և ցավոտ գործընթաց է: Սոցիալական պայմանների կտրուկ փոփոխությունը բանակից քաղաքացիական կյանքին անցնելու հիմնական գործոններից է, որը հաճախ բերում է նախկին զինծառայողների սոցիալական պաշտպանվածության մակարդակի կտրուկ անկմանն ու նրանց սոցիալական կարգավիճակի անբարենպաստ փոփոխմանը: Այդ փոփոխությունները կարող են բերել որոշակի, ստույգ, կայուն սոցիալական կարգավիճակի փոխարինմանը անորոշ, անկայուն մի կարգավիճակով, որը դժվարացնելու է նախկին զինծառայողների ընդհանուր սոցիալականացումն ու հարմարումը քաղաքացիական կյանքին:

Նախկին զինծառայողների սոցիալական պաշտպանվածությունն առաջարկվում է դիտարկել երկու տեսանկյունից: Նախ և առաջ՝ նախկին զինծառայողներն ու նրանց հարազատներն իրավունք ունեն ստանալու այն բոլոր սոցիալական երաշխիքներն ու օգտվելու այն բոլոր իրավունքներից, որոնք օրենքով հավասարապես սահմանվում են պետության բոլոր քաղաքացիների համար: Մյուս կողմից՝ որպես առանձնահատուկ խումբ՝ զինծառայողները, բացի համընդհանուր իրավունքներից, սոցիալական քաղաքականության տեսակետից պետք է նաև հատուկ ուշադրության արժանանան: Բանն այն է, որ զինծառայողի մասնագիտությունն անմիջականորեն առնչվում է բարձր ռիսկի, սեփական կյանքը մշտապես վտանգելու անհրաժեշտության հետ: Այս ամենը ենթադրում է տվյալ խմբի համար հատուկ սոցիալական պայմանների, առավելությունների ստեղծման անհրաժեշտությունը: Սակայն, ինչպես նկատվել է, հենց այդ հատուկ իրավունքներն են, որ զինծառայողի զորացրումից հետո տարբեր սոցիալ-պետական մարմինների կողմից ունեցվող:

⁴⁶ Նույն տեղում, էջ 47:

ների և տարբեր սահմանափակումների առարկա են դառնում: Այդ իրավունքներից շատերը պարզապես հայտարարվում են և չեն իրագործվում⁴⁶:

Այսպես՝ Ռուսաստանում հարցված նախկին զինծառայողների կեսը գտնում է, որ իրենց շահերն իշխանության տեղական մարմինների կողմից հաշվի չեն առնվում, նրանցից 1/3-ը նշում է, որ իրենց շահերն իշխանությունների կողմից արհամարհվում են, և հարցվածների միայն 2%-է գտնում, որ իրենց շահերն իշխանության տարբեր մարմինների կողմից հաշվի են առնվում: Նկատվել է նաև, որ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակը, սկսած 1980-ական թվականներից, անընդմեջ անկում է ապրել: Այսպես՝ արդեն 1989թ. հարցված կադրային սպաների 45%-ը խոսել է սեփական սոցիալական և իրավական անպաշտպանվածության մասին, իսկ 1995թ. այդ մարդկանց թիվն արդեն կազմել է 68%⁴⁷:

Նախկին զինծառայողների սոցիալական հարմարումն ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել «սոցիալական անհարմարավետություն» («դիսկոմֆորտ») հասկացությամբ: Նման անհարմարավետության հիմնական պատճառներից մեկը զինծառայողների կողմից իրենց սոցիալական միջավայրի փոփոխումն է:

Խնդիրն այն է, որ զինուժերի համակարգում սոցիալական կապերն էապես տարբերվում են քաղաքացիական կյանքի սոցիալական կապերից. դրանք կարելի է բնութագրել, մի կողմից որպես ֆորմալ-տոտալիտար, մյուս կողմից՝ որպես ոչ-ֆորմալ-կորպորատիվ: Առաջինը նշանակում է, որ զինուժերի կառուցվածքա-գործառնական առանձնահատկությունները պահանջում են միանշանակորեն սահմանված վարչահրամայական կառուցվածքի և իրագործման համապատասխան մեխանիզմի առկայություն զինվորական և սպայական անձնակազմի հստակ և միակողմանի ստորա-

⁴⁶ Образцов И. В., Соловьев С. С., Социальные проблемы бывших кадровых военнослужащих, СОЦИС 4, 1998г., сс. 79.

⁴⁷ Նույն տեղում, էջ 80:

դասվածություն և ենթարկման միաուղղված սանդղակ: Այս կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված տվյալ համակարգի յուրաքանչյուր անդամն ունի խիստ սահմանված ֆորմալ գործառույթներ, իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նախապես որոշված ֆորմալ ներխմբային կապեր: Մյուս կողմից զինծառայողների ոչ ֆորմալ կապերը զինուժերում կարելի է բնութագրել որպես կորպորատիվիստական: Դա, մասնավորապես, նշանակում է զինծառայողների ենթադրվող փոխաջակցությունն այն պայմաններում, երբ զինվորականությանն իբրև ընդհանուր սոցիալական խմբի, որևէ վտանգ է սպառնում: Նման կորպորատիվիզմը հատուկ է ընդհանրապես «բանակի մարդու» կերպարին և օգնում է զինծառայողներին մի կողմից դիմակայելու իշխանության տեղական մարմինների ինքնակամությունները զինծառայողների հանդեպ և մյուս կողմից՝ հնարավորություն է ստեղծում օգտվելու ռազմական ղեկավարման տարբեր մարմինների ծառայություններից ռազմական արդարադատության և դատախազության, ՋԼՄ-ների տարբեր լծակների միջոցով պաշտպանելու զինծառայողի շահերը⁴⁶:

Մինչդեռ փոխելով իր սոցիալական միջավայրը նախկին զինծառայողը նոր սոցիալական կապերի և հարաբերությունների մեջ այլևս չի գտնում ոչ բանակին հատուկ տոտալիտար բաղադրատարրեր, երբ հասարակության բոլոր ինստիտուտներն ու ներկայացուցիչները կատարելու էին խիստ սահմանված և ակնհայտ գործառույթներ և ոչ էլ գտնում է այն կորպորատիվիզմը, որը զինուժում վստահություն էր ներշնչում: Տվյալ վիճակում նախկին զինծառայողը փորձում է քաղաքացիական կյանքում գտնել սոցիալական այնպիսի կապեր, որոնք ինչ-որ տեղ համապատասխան կլինեին բանակին հատուկ միջխմբային կապերին: Մինչ այդպիսի համազոր կապերի գտնելը, նախկին զինծառայողն իրեն միայնակ և սոցիալապես անպաշտպան է զգում:

Ռուսաստանի Դաշնությունում կատարված մի շարք սոցիոլոգիա-

⁴⁶ Նույն տեղում, էջ 79:

կան հարցումների արդյունքների համաձայն՝ պահեստային դարձած զինծառայողների 2/3–ը նշում է իրենց միջավայրում սոցիալական անհարմարավետության (դիսկոմֆորտի) բարձր աստիճանը, որի պատճառներից հարցվածների 53%–ն առանձնացնում են ընտանիքին նյութապես ապահովելու անհնարինությունը, 43%–ը պետական իշխանության պաշտոնյաների կողմից իրենց հիմնախնդիրների նկատմամբ ցուցաբերվող անտարբերությունը, 36%–ի համար այդ դիսկոմֆորտի պատճառն այն զգացումն է, որ ոչ ոքի պետք չեն, 25%–ը դա բացատրում են աշխատանք գտնելու անհնարինությամբ: Հարցվածների 25%–ն իրենց սոցիալապես անհարմարավետ են զգում, քանի որ չի կարողացել լուծել բնակարանային խնդիրը: Եվս 11%–ը բողոքում են, որ չեն կարողանում սեփական գործ սկսել⁴⁹:

Նկատվել է նաև, որ առավել բարձր սոցիալական անհարմարավետություն են զգում պահեստային դարձած կադրային սպաները 30–40 տարեկան հասակում: Մի կողմից այդ մարդիկ լի են էներգիայով, գիտակցում են սեփական ֆիզիկական և հոգևոր հնարավորությունները, ունեն բազմաթիվ պլաններ: Մյուս կողմից սովորաբար աշխատանքի ընդունելիս գերադասում են մինչև 30 տարեկան անձանց: Տվյալ հանգամանքը սահմանափակում է 30–40 տարեկան պահեստային զինծառայողների հնարավորությունները բարձր վարձատրվող և «հեղինակավոր» աշխատանքի ծեռք բերման գործում⁵⁰: Այդ տարիքի անձանց անհանգստացնում է նաև ընտանիքին նյութապես ապահովելու խնդիրը, որը զինծառայողի կողմից սոցիալական միջավայրի փոփոխման հետ համընկնելով իրեն առավել սուր է զգացնել տալիս:

Պոզեքանական հարմարումը: Նախկին զինծառայողների հոգեբանական հարմարման անհրաժեշտությունը բացատրվում է մի շարք հանգամանքներով: Նախ և առաջ, ընդհանուր սոցիալական մթնոլորտի կտրուկ փոփոխությունը, որը տեղի է ունենում զինծառայողի կողմից ռազմական համակարգից քաղաքացիական կյան-

⁴⁹ Նույն տեղում, էջ 73:

⁵⁰ Նույն տեղում, էջ 72-73:

քին և գործունեությանն անցման ընթացքում, կարող է հոգեբանական տեսակետից բավականին ծանր և երկարատև գործընթաց լինել, երբ նախկին զինծառայողը ստիպված է լինում հոգեբանորեն նախապատրաստվելու և ապա՝ հարմարվելու նոր սոցիալական խմբին, ներխմբային կապերին և սեփական նոր կարգավիճակին: Այդ բոլոր արտաքին փոփոխությունները պահանջում են «նոր սոցիալական կերպարի» յուրացումը, ինչը համապատասխան հոգեբանական փոփոխություններ է ենթադրում: Եթե անձի սոցիալական հարմարումը կարելի է բնութագրել որպես արտաքին, ֆորմալ փոփոխությունների շղթա, ապա հոգեբանական հարմարումն արտացոլում է սոցիալական հարմարման ներքին, ներանձնական գործընթացը:

Նախկին զինծառայողների հոգեբանական հարմարման հիմքում մի շարք գիտնականներ տեսնում են անձի խմբային նույնականացման⁹¹ խնդիրը: Խնդրի էությունն այն է, որ անձի մասնակցությունը զինվորական ծառայությանը կամ ռազմական գործողություններին համապատասխան հարմարողական գործընթացներ է պահանջում: Սակայն հարմարումը բանակի համակարգին և ռազմական պայմաններին էապես տարբերվում է հակադարձ հարմարմանը քաղաքացիական կյանքին: Այդ տարբերության պատճառները հայտնաբերելու համար առաջին հերթին պետք է դիտարկել անձի սոցիալականացման առանձնահատկությունները բանակի համակարգին և ռազմական գործողություններին:

Բանակի համակարգում և ռազմական պայմաններում անձի սոցիալականացումը հեղինակները բնութագրում են հետևյալ հիմնական հատկանիշներով.

- ա) սոցիալականացման հարկադրական բնույթը, երբ անձը ստիպված է յուրացնել առկա սոցիալական հարաբերություններն այնպես, ինչպես որ կան,

⁹¹ Անձի խմբային նույնականացման (իդենտիֆիկացիայի) տակ ընդհանուր առմամբ պետք է հասկանալ անձի ինքնընկալումն իրև որոշակի սոցիալական խմբի անդամի և նրա կողմից համապատասխան, համահունչ վարքի դրսևորումը:

- բ) այդ սոցիալականացման տոտալիտար բնույթը, երբ համակարգն իր արժեքներն է պարտադրում անձին, դրա ճնշող ազդեցությունը մարդու արժեքային համակարգի վրա և ապասոցիալականացումը (նախկին սոցիալական կարգավիճակի, սոցիալական շրջապատի կորուստն ու նախորդ սոցիալական փորձի օգտագործման անհնարինությունը),
- գ) հիմնական արժեքների փոփոխումը, պատերազմի ժամանակ նաև հակառակ արժեքների յուրացումը (օրինակ՝ մարդասիրական արժեքների փոխարեն յուրացվում է թշնամուն, «ուրիշին» ոչնչացնելու արժեքը),
- դ) սոցիալական փոխհարաբերությունների ակտիվացումը, անձի լիակատար միաձուլվածությունը խմբի հետ, որը պայմանավորված է բանակային և պատերազմական կյանքի առանձնահատկություններով, երբ գոյատևելու համար անհրաժեշտ է գործել միասնաբար: Անձի նման վիճակն ամերիկյան գիտնական Է. Էրիկսոնը բնութագրում է որպես մարդ՝ «ինչպես մյուս բոլորը»⁸²:

Ինչպես երևում է, ռազմական պայմաններում անձի սոցիալականացումը արմատապես վերափոխում է անձի նախորդ սոցիալականացման հիմնական արդյունքները՝ նրան դարձնելով համակարգի միատեսակ, մյուսներին համանման անդամ, ընդհանուր մեխանիզմի կայուն կերպով գործող օղակ՝ հիմնականում կանխատեսելի և այդ պատճառով հեշտ կառավարվող:

Այդ գործընթացներին, որոնք էական հետք են թողնում անձի հոգեբանական ներաշխարհի վրա, պատերազմական պայմաններում պետք է գումարել նաև սթրեսի գործոնը: Պատերազմական գործողությունները, մահը, սպանությունները և կյանքի մշտական վտանգվածությունն անձի հոգեկան համակարգը խիստ փխրուն են դարձնում: Դրա հետևանքով ոչ միայն էլ ավելի է ուժեղանում մարդու ծգտումը դեպի խումբ և խմբային վարք, այլ նաև ընդհանուր խմբային

⁸² Пожидаев, Е. Е., От боевых действий — к гражданской жизни, В: СОЦИС 2, 1999г., с. 70.

ատրիբուտների արագ և հաճախ չհիմնավորված, անգիտակցական յուրացումը: Խմբային վարքը, որը պատերազմի պայմաններում հաճախ շեղվող վարքի բնույթ է ստանում, մասնակից է դարձնում նաև խմբի այն անդամներին, որոնք ուղղակի վախենում են կորցնել իրենց միասնականությունն ու միաձուլվածությունը խմբի հետ և որոնք մեխանիկորեն են վերարտադրում խմբի շեղվող վարքը:

Այդ սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ շեղվող վարքի մասին են վկայում, մասնավորապես, մի շարք հետազոտություններ, որոնք ուսումնասիրել են Չեչնիայում պատերազմի մասնակիցների կարծիքը համապատասխան գործողությունների կատարման վերաբերյալ: Ինչպես նշվում է, Չեչենական պատերազմի հարցված մասնակիցների 90%-ը մարտական գործողությունների շրջանում հանդիպել են մի շարք հանցագործությունների (կամ անձամբ են մասնակցել, կամ վկա են եղել), ընդ որում նշվում են զինծառայողների կողմից կատարված այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են ոչ կանոնակարգային հարաբերությունները (նշել է հարցված զինծառայողների 25%-ը), տեղական բնակչության թալանը (նշել է հարցվածների 60%-ը), հարցվածների 23%-ը նշում է տեղական բնակչության սպանությունները, 12%-ը բանակային գույքի թալանը: Չեչենական պատերազմի մասնակիցների մոտ տարածված է եղել նաև թմրամոլությունը, որը, հեղինակների որակմամբ, այնտեղ խմբային պատկանելության յուրահատուկ չափանիշ է եղել⁶³:

Այս օրինակն ակնհայտորեն ցուցադրում է բանակի համակարգում սոցիալական կապերի ինտենսիվության ու համընդհանուր կորպորատիվ ոգու ուժը, որոնք բանակի կոլեկտիվը հարաբերականորեն միատարր են դարձնում: Ամերիկյան սոցիոլոգներն այդ երևույթն անվանում են «խմբային համախոհություն» և, ինչպես գրում է Մ. Լերները, «խմբային ոգին է, որ գտնվում է «ռազմական ոգու» հիմքում»⁶⁴:

⁶³ Նույն տեղում, էջ 71-72:

⁶⁴ Пожидаев Е. Е., От боевых действий — к гражданской жизни, В: СОЦИС 2, 1999г., с. 71.

Տվյալ ենթատեքստում կարելի է պատկերացնել, թե ինչպիսի բարդ և ճգնաժամային գործընթաց է դառնում անձի անջատումը ռազմական կոլեկտիվից այն խմբից, որից դուրս այդ անձն իրեն արդեն չի պատկերացնում: Կորցնելով կապն իր ռազմական խմբի հետ անձը կորցնում է ինքնագիտակցման զգացումը, այլևս չի պատկերացնում իր անձնական լիարժեք գոյությունը: Այդ բարդ հոգեբանական երևույթը, որը հիմնականում պայմանավորված է սոցիալական խնդիրներով, սոցիալական կայուն դերի և համապատասխան սոցիալական միջավայրի կտրուկ փոփոխությամբ, է. Էրիկսոնը բնութագրում է որպես «նույնականության ճգնաժամ»⁵⁵:

Որպես հետևանք՝ նախկին զինծառայողները սոցիալական նոր պայմաններին հոգեբանորեն հարմարվելու ընթացքում ապրում են վախ, անորոշության զգացում, անհանգստություն, ճնշվածություն, հետաքրքրության բացակայություն, կարող են թերաբեքության բարդույթ ծեռք բերել, կորցնել ժամանակի և տարածության իրական զգացումը, տանել տարբեր տեսակի սինդրոմներ: Մասնավորապես, հետպատերազմյան սինդրոմից առավել խոցելի են նախկին այն զինծառայողները, որոնք վերադարձել են մարտի դաշտից, մասնակցել են ինտենսիվ մարտական գործողություններին, հավատացել են իրենց կողմից տարվող պատերազմի արդարացիությանը, անկեղծորեն ատել են թշնամուն: Այդ մարդիկ, անմիջապես պատերազմական գործողություններից վերադառնալով խաղաղ կյանքին, դեռ երկար ժամանակ շարունակում են վերապրել մարտական գործողությունները: Հետպատերազմյան սինդրոմի առկայության մասին կարող է վկայել այն, որ պատերազմից վերադարձածները երազում գտնվում են մարտի դաշտում, սպանում են թշնամուն, զգում են ցավը, փորձում են փրկել ընկերոջը: Իրական կյանքում նրանք յուրաքանչյուր պահին սպասում են, որ պատերազմական գործողությունները կվերսկսվեն և աշխատում են միշտ պատրաստ լինել դրանց:

Այսպիսով նախկին զինծառայողների հոգեբանական հարմարումը սոցիալական նոր պայմաններին սովորաբար ուղեկցվում է սթրե-

⁵⁵ Նույն տեղում, էջ 71:

սով: Նկատվել է, որ հարմարման շրջանի դժվարությունները կարող են ընտանեկան կոնֆլիկտների սրման ու ընտանիքի քայքայման, ներոտիկ և հոգեստնատիկ երևույթների զարգացման պատճառ դառնալ, բերել նաև ինքնասպանության: Մշտապես աճում է պահեստային այն սպաների թիվը, որոնք համապատասխան մասնագիտական օգնության կարիք են զգում: Ռազմական սոցիոլոգների տվյալներով պահեստային դարձած նախկին կադրային սպաների 82%-ը սոցիալական հատուկ օգնության կարիքն ունի (իրավաբաններ, զբաղվածության ծառայություններ, հոգեբաններ): Հարցվածների մոտ 15–20%-ը կարծում են, որ ընդհանրապես ի վիճակի չեն հարմարվել նոր կյանքին և այդ պատճառով հոգեբանական օգնության կարիք ունեն: Ֆիզիկական հիվանդություններն այդ պայմաններում շատ ավելի հաճախակի են դառնում⁹⁶:

Արդյունքում նախկին զինծառայողներից ոմանք փորձում են նոր պայմաններում գտնել որևէ խումբ կամ սոցիալական կառույց, որտեղ բանակի սոցիալ–հոգեբանական մթնոլորտին համանման պայմաններ լինեն: Նման սոցիալական խմբի փնտրումն ու դրանում նախկին զինծառայողի ընդգրկման գործընթացները կարող են երկու ուղղություն ստանալ՝ դրական–կառուցողական և բացասական–քայքայիչ:

Առաջինի դեպքում նախկին զինծառայողը բանակի, պատերազմի պայմանները որոշակիորեն վերարտադրող այնպիսի խմբեր է փնտրում և ընդգրկվում, ինչպիսիք են ոստիկանությունը, անվտանգության ծառայությունները, պահակախմբերը, պետանվտանգության մարմինները, որտեղ նախկին զինծառայողի մասնագիտական գիտելիքները, փորձը և հմտությունները դրական, կառուցողական ընթացք և կիրառություն են ստանում: Քիչ չեն նաև պահեստ ուղարկված զինծառայողների՝ պայմանագրային կարգով բանակ վերադառնալու դեպքերը: Այսպես՝ Չեչնիայում պատերազմին մասնակցած և պահեստ ուղարկված զինծառայողների 75%-ը ցանկություն է

⁹⁶ Образцов И. В., Соловьев, С. С., Социальные проблемы бывших кадровых военнослужащих, СОЦИС 4, 1998г., с. 71.

հայտնել նորից վերադառնալու Չեչնիա կամ մեկնել հակամարտության այլ գոտիներ՝ պատերազմին մասնակցելու նպատակով⁸⁷:

Երկրորդ դեպքում նախկին զինծառայողները կարող են բանակային կոլեկտիվի և ռազմական գործողությունների մթնոլորտին համարժեք պայմաններ գտնել և ընդգրկվել այնպիսի խմբերում, որտեղ իրենց ռազմական հմտությունները, փորձն ու եռանդը բացասական կիրառում կստանան: Ցավոք, քիչ չեն դեպքեր, երբ նախկին փորձառու զինծառայողները դառնում են վարձու մարդասպաններ (քիլերներ), ահաբեկչական ջոկատների մարտիկներ, մաֆիոզ կառույցների անդամներ կամ լիդերներ: Նման երևույթները չի կարելի բացատրել միայն գումար վաստակելու ցանկությամբ: Նախկին զինծառայողների նման վարքի հիմքում պետք է փնտրել այդ մարդկանց կողմից բանակային կոլեկտիվին և ռազմական պայմաններին համազոր մթնոլորտի, խմբի փնտրման և ընդգրկման ցանկությունը, ինչն իր հերթին պայմանավորված է սոցիալականացման, նույնականացման և հարմարման կենսական անհրաժեշտությամբ:

Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ նախկին զինծառայողների հարմարման գործընթացները, անչափ բարդ և ցավոտ երևույթներ լինելով, մասնագիտական ուշադիր, հոգատար վերաբերմունք և աջակցություն են ակնկալում: Այդ ենթատեքստում հատկապես պետք է կարևորել պետական և հասարակական ադապտացիոն և ռեաբիլիտացիոն (վերականգնողական) համապատասխան կենտրոնների, կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտությունը: Մինչդեռ հետազոտությունները ցույց են տալիս, որ հարմարման և վերականգնման բարդ շրջան ապրող նախկին զինծառայողներից միայն 9%-ն է համապատասխան օգնություն ստացել հասարակական բնույթ ունեցող կենտրոններում: Հարցվածներից 35%-ին այդ գործում օգնել են ընկերները և հարազատները, 25%-ն այդ ճգնաժամային իրավիճակը կարողացել են հաղթահարել՝ զբաղվելով հետաքրքիր աշխատանքով: Եվ համարյա թե ոչ որ

⁸⁷ Пожидаев Е.Е., От боевых действий — к гражданской жизни, В: СОЦИС 2, 1999г., с. 72.

անհրաժեշտ օգնություն և աջակցություն չի ստացել պետական մարմինների կողմից⁵⁸:

Ակներև է, որ նախկին զինծառայողները, պատերազմի մասնակիցները և նրանց ընտանիքների անդամները քաղաքացիական կյանքին հարմարվելու, ֆիզիկապես և հոգեպես վերականգնվելու գործում պետության կողմից համարժեք ուշադրության չեն արժանանում: Մինչդեռ ԱՊՀ մի շարք պետություններում, այդ թվում նաև Հայաստանում, որտեղ ազգային բանակներ են ստեղծվում և որոնց զինծառայողներն անմիջապես մասնակցել են թեժ ռազմական գործողություններին, նախկին զինծառայողների հարմարումն ու վերականգնումը պետության հատուկ ուշադրության և հոգատարության առարկան պետք է լինի: Այդ է պահանջում սեփական զինվորի, հայրենիքի պաշտպանի նկատմամբ համարժեք վերաբերմունքի դրսևորման անհրաժեշտությունը, պետության և հասարակության ռազմական մշակույթը:

3.8 Բանակի և զինծառայության հեղինակության դինամիկան

Բանակի և զինծառայության գործառնական արդյունավետությունը, այդ համակարգի առջև դրված կարևոր խնդիրների լուծման կատարելությունը մեծապես կախված են բանակի, զինծառայության և զինծառայողների նկատմամբ հասարակության վերաբերմունքից: Անհնար է նվաճել մի ժողովրդի, որն ատելությամբ է լցված զավթիչների նկատմամբ, և շատ դյուրին կլինի, եթե ժողովուրդն ընդունի օտար զորքերին, առավել ևս, եթե բանակը հարգանք և վստահություն չի վայելում սեփական ժողովրդի մոտ: Այդ իսկ պատճառով ունենալ բանակ, նշանակում է տիրապետել հեղինակավոր, վստահելի մի ուժի և միջոցի՝ ծառայող ամբողջ հասարակության շահերի պաշտպանությանը:

⁵⁸ Образцов И. В., Соловьев, С. С., Социальные проблемы бывших кадровых военнослужащих, СОЦИС 4, 1998г., с. 71-72.

Այնպիսի նախապայմաններ, ինչպիսիք են զինված ուժերի հեղինակությունը, զինծառայության վարկը, դրանց նկատմամբ ժողովրդի վստահությունը և աջակցությունը, անհրաժեշտ են պետության ռազմական ոլորտի հաջողության համար: Լինելով փոխկապակցված՝ տվյալ հատկանիշները միասնաբար կազմում են զինված ուժերի արդյունավետության կարևորագույն բանաձևը:

Զինծառայության վարկը (հեղինակությունն ու գրավչությունը) հասկացվում է որպես բարդ և բազմակողմանի սոցիալական երևույթ, որպես հասարակության և դրա առանձին անդամների կողմից զինված ուժերի ինստիտուտի սոցիալական անհրաժեշտության և արժեքի, գործունեության, հասարակության մեջ զինծառայողների կարգավիճակի և իրական դրության գնահատումը⁵⁹: Անհրաժեշտ է միմյանցից տարբերել մի կողմից՝ հասարակական վստահությունը զինված ուժերի, բանակի ու զինծառայողի հանդեպ և մյուս կողմից՝ հասարակության վստահությունը զինծառայության նկատմամբ: Զինված ուժերի, բանակի, ինչպես նաև զինծառայողի նկատմամբ վերաբերմունքը պետք է դիտարկել այն հասարակական արժեքների և կողմնորոշումների համակարգում, որոնք վերաբերում են հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքին, այդ կառուցվածքային միավորումների համեմատությանն ու գնահատմանը: Մյուս կողմից՝ զինծառայությունը պատկանում է այն արժեքներին, որոնք գործառնական բնույթ ունեն և գնահատվում են որպես հասարակության տարբեր ինստիտուտների համապատասխան գործառույթներ: Այլ կերպ ասած՝ բանակի հեղինակության աստիճանը պետք է համեմատել հասարակական-պետական այլ ինստիտուտների նկատմամբ հասարակական վերաբերմունքի հետ, իսկ զինծառայությունը՝ սոցիալական այն դերերի համատեքստում, որոնց միջև կարող է ընտրել քաղաքացին:

Արժևորելով զինված ուժերի ինստիտուտի հասարակական դերն ու նշանակությունը՝ այն համեմատության մեջ է դրվում հասարակության այլ ինստիտուտների հետ: Դիտարկելով զինծառայությունը որ-

⁵⁹ Бурда С.М., Престиж военной службы, В: СОЦИС N 2, 1999г., с. 63.

պես գործառույթ այն պատկերացվում է որպես դինամիկ, փոփոխական մեծություն: Այս հանգամանքը նույնպես հիմք է դառնում՝ զինված ուժերի և զինծառայության նկատմամբ հասարակության վերաբերմունքն ու արժևորումը տարբերակելու համար:

Սոցիոլոգիական մի շարք հետազոտությունների համաձայն՝ բանակի նկատմամբ վստահությունն ավելի կայուն մեծություն է, քան վերաբերմունքը զինծառայության նկատմամբ: Սովորաբար ստացվում է, որ զինված ուժերի անհրաժեշտությունը կարևորում է հասարակության մեծ մասը, գնահատականները փոքր-ինչ նվազում են՝ կապված զինծառայողների նկատմամբ դրսևորվող վստահության հետ, և կտրուկ նվազում են, երբ խոսքը գնում է կոնկրետ քաղաքացու վերաբերմունքի մասին՝ բանակում իր ծառայության նկատմամբ: Այսպես՝ 1997–1998թթ. Ռուսաստանում կատարված սոցիոլոգիական հետազոտությունների համաձայն՝ բանակի ինստիտուտի հեղինակությունը բնակչության մոտ հարաբերականորեն կայուն և բարձր տեղ է գրավում՝ զիջելով միայն երկու ինստիտուտի՝ Ռուս ուղղափառ եկեղեցու և ՋԼՄ–ների հեղինակությանը՝ միաժամանակ էապես գերազանցելով հասարակական–պետական այլ, այդ թվում՝ քաղաքական ինստիտուտների հեղինակությանը:

Ձիմվորական ծառայության նկատմամբ հասարակության վերաբերմունքի ցուցանիշը փոքր-ինչ ավելի ցածր է: Հարցված քաղաքացիների 40,5%–ը գտնում է, որ յուրաքանչյուր իսկական տղամարդ երբևիցե պետք է զինծառայություն անցնի, ևս 27,5%–ը կարծում է, որ ծառայությունը բանակում այն պարտքն է, որը պետք է տալ պետությանը, նույնիսկ եթե դա չի հապատասխանում անձի շահերին⁸⁰:

Սակայն, եթե համեմատենք այս տվյալները զորակոչվող երիտասարդների վերաբերմունքի հետ իրենց զինծառայության նկատմամբ, ապա տարբերությունն ակնառու է: Զորակոչմամբ ծառայությունը ընտրում է հարցված երիտասարդների միայն 19%–ը, 40%–ը

⁸⁰ Նույն տեղում, էջ 63–64:

համաձայն է ծառայել պայմանագրային կարգով, 20% ընտրում է այլ ընտրանքային ծառայությունը:⁶¹ Այս տվյալները վկայում են այն մասին, որ բանակի ինստիտուտի ավանդական հեղինակությամբ սպառնացող գլխավոր վտանգներից է զինծառայության ցածր և շարունակաբար նվազող հասարակական վարկանիշը:

Բանակի և զինծառայության հասարակական վարկանիշն ու հեղինակությունը, որպես սոցիալ-հոգեբանական երևույթներ և սոցիոլոգիական հետազոտության օբյեկտներ, պետք է դիտարկել հետևյալ մակարդակներում.

- ա) հասարակության վերաբերմունքն առհասարակ բանակի որպես սոցիալական ինստիտուտի նկատմամբ,
- բ) հասարակության վերաբերմունքը սեփական բանակի նկատմամբ, որը կարող է չհամընկնել բանակի որպես սոցիալական ինստիտուտի մասին հասարակության պատկերացման հետ,
- գ) քաղաքացիների, այդ թվում զինակոչիկների և զինծառայողների ծնողների, հարազատների վերաբերմունքը զինվորական ծառայության նկատմամբ,
- դ) զինծառայողների՝ զինվորների, սպաների և բարձրաստիճան սպաների վերաբերմունքը սեփական ծառայության նկատմամբ:

Որպես կանոն՝ հասարակության վերաբերմունքն առհասարակ բանակի՝ որպես ինստիտուտի, դրա սոցիալական, պետական, պատմական, ռազմավարական, մշակութային դերի և գործառույթների նկատմամբ կայուն է և դրական: Նման դրական վերաբերմունքը բացատրվում է բանակի՝ իբրև հասարակության անվտանգության, պետության հզորության անհրաժեշտ երաշխիքի ավանդական ըմբռնմամբ: Պետք է ասել, որ հասարակության վերաբերմունքը սեփական բանակի նկատմամբ հիմնվում է այդպիսի՝ ավանդապես ձևավորված սոցիալ-մշակութային պատկերացումների վրա: Հետագայում, կախված սեփական բանակի կոնկրետ դերից՝ վերահաս-

⁶¹ Նույն տեղում, էջ 64:

տատվում է կամ հերքվում: Սեփական բանակի մասին հասարակության պատկերացումներն ու վերաբերմունքը գոյանում են բանակի այն իրական դերից և պատմականորեն կերտված նշանակությունից, որը բանակն ունեցել է իր ժողովրդի կյանքում:

Որպես կանոն՝ սեփական բանակի դերը փորձում են չնվազեցնել նույնիսկ այն ժամանակ, երբ բանակը երկարատև անհաջողություններ է ունենում մարտի դաշտում կամ ներքին ճգնաժամ է ապրում: Հիասթափությունը սեփական բանակի նկատմամբ այն հզոր գործոններից է, որն անհնար է դարձնում այդ ինստիտուտի արդյունավետությունը: Ժողովրդի հավատը և վստահությունը սեփական բանակի նկատմամբ այդ բանակի հզորության և հաղթանակության կարևորագույն և կայուն նախապայմաններից է:

Ինչ վերաբերում է քաղաքացիների բանակում ծառայելու ցանկությանը, ապա, ինչպես նշվեց, այսօր բանակում ծառայելու երիտասարդների պատրաստականությունը էապես ավելի ցածր է նախորդ տարիների համեմատ: Նման վերաբերմունքը զինծառայության նկատմամբ հատուկ է նաև զինծառայողների ծնողների և հարազատների մեծ մասի համար: Օրինակ՝ Ռուսաստանում կատարված սոցիոլոգիական հարցումները ցույց են տվել, որ հարցված ծնողների միայն 7%-ն է ցանկանում, որպեսզի իրենց երեխաներն ընտրեն զինծառայողի մասնագիտությունը⁸²:

Դրական ազդեցություն չի գործում նաև այն հանգամանքը, որ բարեփոխումների իրականացումը կարող է ստեղծել բանակային ծառայության տարբերակներ, ընտրության հնարավորություն ընձեռել զորակոչային, պայմանագրային և այլընտրանքային ծառայության միջև: Նկատվել է, որ երիտասարդությունը հիմնականում պասիվ է վերաբերվում այս տարբերակների առկայությանը: Այսպես՝ 1992թ. ՌԴ-ում կատարված սոցիոլոգիական հարցման ընթացքում հարցված երիտասարդների մոտ կեսը (42%) ընտրել է պատասխանը. «Անտարբեր եմ, թե ինչպես կծառայեմ» և «Դեռ չեմ որոշել»: 1993թ. այդպիսի պատասխանների թիվը հասել է 60%: Պայմանագ-

⁸² Նույն տեղում, էջ 64:

րային կարգով ծառայությունը նույնպես անհրապույր է, չնայած նկատվել է, որ այդպիսի ծառայություն են ընտրում հիմնականում նախաձեռնություն ցուցաբերող երիտասարդները⁸³:

Նշենք, որ Հայաստանի պայմաններում պայմանագրային ծառայությունը շատերի համար հնարավորություն է ունենալու կայուն աշխատանք և աշխատավարձ, խուսափելու զործագրությունից, կիրառելու ձեռք բերված մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները:

Այստեղ անհրաժեշտ է դիտարկել նաև ռազմական մասնագիտությունների հեղինակության հարցը: Ինչպես ցույց են տալիս համապատասխան հարցումների արդյունքները, ռազմական մասնագիտությունների գերադասելիության տեսակետից առաջին տեղում են վարորդի, մեխանիկի, ապա՝ հատուկ նշանակության ջոկատներում ծառայողի (դեսանտ, հետախուզություն) մասնագիտությունները: Դրանից հետո գալիս են սերժանտական անձնակազմում ծառայողի, ապա՝ քիկուների մասնագիտությունները (խոհարար, հացթուխ, հաշվապահ): Վերջում գալիս են զինվորներ, շարքայիներ, կապի մասնագետներ: Պայմանագրային կարգով ծառայողների համար ամենանհրապույրիչն են դեսանտային ուժերը⁸⁴:

Խոսելով զինծառայողների վերաբերմունքի մասին սեփական ծառայության նկատմամբ՝ հարկ է առանձնացնել զինվորների և կադրային սպաների համապատասխան գնահատականները: Այստեղ հիմնական տարբերությունն այն է, որ զորակոչված զինվորներն իրենց ծառայությունը բանակում համարում են ժամանակավոր, դա նրանցից մեծ մասի համար սեփական ընտրությունը չէ: Ձորակոչվելով բանակ՝ երիտասարդների մեծ մասն այդ ծառայության հետ չի կապում իր ապագան: Ի տարբերություն նրանց՝ կադրային սպաների համար զինծառայությունը գիտակցված, հիմնավորված ընտրություն է և կյանքի ուղի: Համալրելով սպայական անձնակազ-

⁸³ Чупров В. И., Отношение призывников к службе в армии по контракту: социальный аспект, СОЦИС ИЗ, 1994г., сс. 46, 48.

⁸⁴ Նույն տեղում, էջ. 48-49:

մի շարքերը՝ այդ անձինք նախապես պատրաստվում են սպայական զինծառայության հետ կապված դժվարություններին, բայց և ակնկալում են սեփական բարեհաջող առաջխաղացումը «կոչումների սանդուղքով», որը նույնպես սպայական ծառայության անբաժանելի ատրիբուտն է:

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել սպայական ծառայությունն անցնող անձանց վերաբերմունքին սեփական ծառայության նկատմամբ: Սպայական ծառայությունը բանակի ամբողջ պատմության ընթացքում դժվարին և պատվավոր առաքելություն է համարվել: Սպայի կերպարն ունի սոցիալ-մշակութային, դաստիարակչական, քաղաքական, գաղափարախոսական խոշոր և ավանդական նշանակություն: Այն արտացոլում է ժողովրդի, պետության մարտական ուղին և հերոսական անցյալը, վկայում է տվյալ ժողովրդի ռազմական ավանդույթների, սպայական դպրոցի առկայության մասին: Սպաները բանակում նույնացվել են քաղաքացիական մտավորականության հետ: Սպայական անձնակազմն այն հիմքն է, որի վրա է հենվում ոչ միայն բանակի մարտունակությունը, այլ նաև զինծառայողների բարոյահոգեբանական, հայրենասիրական, մարտական ոգին:

Սպա լինելը ոչ միայն պատիվ է, այլ նաև մեծ պատասխանատվություն՝ պատասխանատվություն յուրաքանչյուր զինծառայողի կյանքի, առողջության, բանակի հեղինակության համար: Հայտնի է, որ նախկինում սպայական կոչումն իրավունք ունեին կրել միայն ազնվական տոհմերի ներկայացուցիչները, ինչպես նաև՝ այն հատուկենտ զինվորները, որոնք պատերազմում հերոսաբար էին հանդես եկել և առանձնացել էին սեփական սխրանքների շնորհիվ:

Այդ իսկ պատճառով խիստ պահանջներ են առաջադրվել նաև սպայի անձնական կյանքի նկատմամբ: Այսպես, օինակ՝ ցարական Ռուսաստանում համապատասխան նորմերով սահմանվում էին հուսարների՝ ընտանիք կազմելու իրավունքները, որտեղ հատուկ ուշադրություն էր դարձվում հուսարի և նրա ապագա կնոջ բարոյական գնահատականին, ինչն ուղղակիորեն կապակցվում էր բանակի

վարկանիշի, զինծառայության արդյունավետության հետ: Օրենքով սահմանվում էր սպայի համար ամուսնանալու թույլատրելի տարիքը, նրան ցուցաբերվող ֆինանսական աջակցության չափը, այն, թե ինչպիսի ընտանիքից պետք է լինի նրա ապագա կինը, որպեսզի նրանց ամուսնությունը բացասաբար չանդրադառնա սպայի կերպարի և պատվի վրա և այլն⁸⁵:

Ժամանակակից բանակում սպայի առաքելությունն էապես չի փոխվել, սակայն փոխվել են ծառայության այն պայմանները, որոնք հաճախ բացասաբար են անդրադառնում այսօրվա սպայի բարոյահոգեբանական պատկերի վրա: Իրենք սպաներն այդպիսի գործոնների շարքում առանձնացնում են ծառայության սոցիալ-հոգեբանական և կենցաղային այն խնդիրները, որոնք չեն նպաստում իրենց ծառայության արդյունավետությանը: Այսպես՝ ՌԴ բանակի հարցված սպաներից 50%-ը նշել է, որ հասարակության մեջ զինծառայությունն առհասարակ հեղինակություն չի վայելում, իսկ 37%-ը՝ որ այդ հեղինակությունը միջինից ցածր է: 1997թ. կատարված հարցման արդյունքների համաձայն՝ սպաների տիկնայք, որոնք աջակցում են իրենց ամուսիններին և համամիտ են նրանց սպայական կյանքի ընտրության հետ, կազմել են 50%, 1998թ. այդ ցուցանիշը նվազել է և կազմել 43%: Նման փոփոխությունների հիմքում, հարցված կանանց վկայությամբ, ընկած են սպայական ընտանիքների նյութական, կենցաղային, սոցիալական ոչ բարվոք պայմանները, սպայական ծառայության դժվարությունը, աշխատանքային օրվա չնորմավորված լինելը, ինչը սպային թույլ չի տալիս բավական ժամանակ հատկացնել իր ընտանիքին⁸⁶:

Բացի այդ, ինչպես նկատում են հեղինակները, նախկինում սպայական ծառայությունն ապահովում էր սպայի և նրա ընտանիքի ոչ միայն բարձր կենսամակարդակը, այլ նաև՝ բարձր սոցիալական կարգավիճակը: Սպայական ծառայությունն այս դեպքում համե-

⁸⁵ Почему гусар не мог жениться, В: Военно-исторический журнал, N 2, 2000 г., сс. 26-35.

⁸⁶ Бурда С.М., Престиж военной службы, В: СОЦИС N 2, 1999г., с. 64.

մատվել է «սոցիալական վերելակի» հետ, որը թույլ է տվել հասնել նյութական, սոցիալական, բարոյական բավարարվածության բարձր մակարդակի, մինչդեռ հետխորհրդային պայմաններում, Ռուսաստանում հարցված սպաների միայն 10%-ն է գտնում, որ իրենց ծառայությունն ապագայում խոստանում է բարձր սոցիալական կարգավիճակ և իշխանության համակարգում պատշաճ տեղ: Այնուամենայնիվ, հարցված կադրային սպաների 40%-ը գտնում է, որ բանակում կարելի է ձեռք բերել մարդկանց ղեկավարելու մեծ և օգտակար փորձ, որն ապագայում կարելի է կիրառել քաղաքացիական պաշտոններում: Սակայն, ընդհանուր առմամբ, այսօր սպաների համար նյութական ապահովվածությունն ավելի կարևոր է դառնում, քան առաջխաղացումը ռազմական պաշտոններով⁸⁷:

Բանակի և զինծառայության հեղինակության վրա բացասաբար է անդրադառնում նաև այն հանգամանքը, որ, սպաների կարծիքով, պետությունն այսօր ավելի մեծ ուշադրություն է դարձնում և աջակցում այլ ուժային կառույցներին, և բանակին երկրորդական նշանակություն է տրվում⁸⁸:

Այսօր արժեքային մերժողականության պայմաններում, հասարակական կյանքում առաջ են եկել մի շարք երևույթներ, որոնք միանշանակորեն նպաստում են բանակի վարկանիշի և զինծառայության հեղինակության անկմանը: Դրանցից հատկապես ակնառու են փորձերն օգտագործել բանակը ժողովրդի դեմ բռնության գործադրումը խաղաղ ցույցերին մասնակցողների նկատմամբ, այն դեպքում, երբ բանակն իր առաքելությամբ կոչված է պաշտպանելու ժողովրդին:

Բացի այդ, այսօր հաճախակի են բանակում կոռուպցիայի, կաշառակերության, օրենքի կոպիտ խախտման դեպքերը, որոնք բանակի նկատմամբ հասարակության բացասական վերաբերմունք են զարգացնում: Բանակի և զինծառայողի դրական կերպարի ձևավորմանը չի նպաստում զինվորների կողմից ծառայության վայրի ինքնակամ

⁸⁷ Նույն տեղում, էջ. 65:

⁸⁸ Նույն տեղում, էջ. 65:

լքումը, ռազմական հանցագործությունները, զինվորների կողմից հոգեկան անհավասարակշռության վիճակում կատարվող սպանությունները և ինքնասպանությունները:

Ժամանակակից պայմաններում զինված ուժերի ցանկացած բարեփոխություն պետք է ուղղված լինի առաջին հերթին բանակի մարտունակության բարձրացմանն ու զինծառայողների կենսապայմանների էական բարելավմանը: Մյուս կողմից՝ հասարակության հսկողությունը՝ բանակում կարգուկանոնի պահպանման նկատմամբ, կարող է էապես նպաստել բանակի և զինծառայողի հեղինակության բարձրացմանը:

3.9 Հայոց բանակում սոցիալականացման գաղափարական և աշխարհայացքային հիմքերը

Հայրենիք և հայրենապաշտություն: Ռազմական գործունեությունը մարդկային գործունեության յուրահատուկ բնագավառներից է, որը, ունենալով իր առանձնահատկությունները, այնուհանդերձ, սերտորեն կապված է մարդկային գործունեության մյուս ձևերի հետ և իր վրա է կրում դրանց անմիջական կամ միջնորդավորված ազդեցությունը: Ինչպես ամեն մի գործունեության ձև, ռազմական գործունեությունն էլ ունի իր աշխարհայացքային և փիլիսոփայական հիմքերը:

Յուրաքանչյուր ժողովուրդ կամ մարդ աշխարհի ու կյանքի նկատմամբ ունենում է իր վերաբերմունքը, այսինքն՝ իր աշխարհայացքն ու փիլիսոփայությունը, ըստ որոնց էլ ապրում և գործում է: Ձինվորականը նախ և առաջ մարդ է և, որպես այդպիսին, պետք է ունենա իր աշխարհայացքը և «կյանքի փիլիսոփայությունը»՝ աշխարհի, պատմության, հասարակության, ազգի ու պետության, կյանքի իմաստի և նպատակի մասին իր ընդհանուր պատկերացումները: Գաղափարագուրկ, անգրագետ զինվորականը ոչ միայն ոչ լիարժեք մարդ է, այլև պատերազմի ժամանակ՝ «թնդանոթի միս»: Պատերազ-

մուն հաղթում են ոչ միայն և ոչ այնքան ուժով, որքան խելքով, իմաստությամբ ու գիտությամբ: Հայտնի ճշմարտություն է, որ գաղափարապես և բարոյապես հզոր բանակը գրեթե անպարտելի է: Այս տեսակետից խիստ կարևոր և արդիական է հայոց բանակում աշխարհայացքային, գաղափարական ու բարոյահոգեբանական սոցիալականացմանն առնչվող հարցերի քննարկումները:

Զինվորականը պետք է իմանա, թե ինչի համար է կռվում, ինչ արժեքներ ու գաղափարներ է պաշտպանում, ինչի համար է զոհաբերելու իր կյանքը: Այլ կերպ ասած՝ նա պետք է ունենա իր «կյանքի փիլիսոփայությունը», որով կկարողանա իմաստավորել ու գնահատել իր և ուրիշների գործունեությունը:

Լինելով աշխարհի հնագույն ազգերից մեկը՝ հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է հարուստ մշակույթ, այդ թվում՝ ռազմական, որի բաղկացուցիչներից են ռազմական արվեստը, ռազմական գիտությունը, տեխնիկան, ռազմական դաստիարակությունն ու բարոյականությունը և այլն:

Տարածված է այն կարծիքը, որ հայերը ռազմաշունչ, ռազմատենչ ազգ չեն, սակայն իրենց մարտունակությամբ, քաջությամբ, պատերազմելու արվեստով, ռազմական տաղանդով ոչ միայն չեն զիջել, այլև հաճախ գերազանցել են շատերին:

Հայերը գրեթե նվաճողական պատերազմներ չեն վարել, այլ հիմնականում պաշտպանվել են: Սակայն հայկական զինական ուժը տարբեր ազգերի բանակների կազմում մասնակցել է թե՛ նվաճողական արշավանքների, թե՛ ազատագրական պատերազմների և արժանացել է ամենաբարձր գնահատականների: Հայերը եղել են ոչ միայն լավ զինվորներ, այլ նաև հմուտ, տաղանդավոր զորավարներ և հրամանատարներ: Ժամանակին գոյություն ունեցած հայկական պետություններն ունեցել են իրենց մշտական, կանոնավոր և մարտունակ բանակները, որոնց պատերազմների ժամանակ օգնության է հասել աշխարհագրորդ: Այսպիսով՝ ձևավորվել են ռազմական ավանդույթներ և սովորույթներ: Հայերի ռազմական մշակույթը մեծ հետաքրքրություն է ներկայացնում առաջին հերթին իր աշխարհա-

յացքային բովանդակության, գաղափարական և բարոյական ուղղվածության տեսակետից:

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը բյուրեղացրել է իր պատկերացումները հայրենիքի և ազգի, պատերազմի և խաղաղության, ազգասիրության և դավաճանության, քաջության և վախկոտության, հերոսության և թուլամորթության, կյանքի իմաստի ու նպատակի և այլ կենսական հարցերի վերաբերյալ: Հայոց առասպելներում, էպոսում, պատմիչների ու ռազմական գործիչների աշխատություններում արժարժվել են զինվորական ծառայության, պատերազմելու, բանակի մարտունակության բարձրացման, զինվորականության բարոյահոգեբանական և աշխարհայացքային սոցիալականացման հարցերը: Այդ մտածողների ու գործիչների շարքում առանձնանում է նշանավոր ռազմական գործիչ և մտածող Գարեգին Նժդեհը (1886–1955): Նա, շարունակելով զարգացնել հայոց ռազմական մշակույթի ավանդույթները, մշակել է մի ամբողջական տեսություն, որի գաղափարներն առ այսօր չեն կորցրել իրենց արժեքն ու նշանակությունը: Ստորև ներկայացվող նյութերի հիմքում ընկած են Նժդեհի ռազմափիլիսոփայական գաղափարները:

Յուրաքանչյուր երկրի զինված ուժերի գերագույն խնդիրը սեփական պետության, հայրենիքի և ժողովրդի անվտանգության ապահովումն է: Իսկ այդ զինված ուժերի գաղափարախոսության հիմնական բովանդակությունը պետք է ուղղված լինի մեկ խնդրի լուծմանը՝ պաշտպանել հայրենիքի ամբողջականությունը և ազգային–պետական շահերը: Աշխարհում չկա մի բանակ, որի գաղափարախոսության հիմքում ընկած չլինի հայրենասիրության գաղափարը: Ջինվորականը պետք է հպարտանա իր ազգով և հայրենիքով, պատրաստ լինի ամեն պահ իր կյանքի գնով պաշտպանելու իր պետության ու ժողովրդի շահերը: Բանակն առանց հայրենապաշտական գաղափարախոսության նույնն է, ինչ մարմինը առանց հոգու:

Հայրենիքը սոսկ աշխարհագրական տարածք չէ: Վերջինս Հայրենիք է դառնում իր ժողովրդով, մշակույթով ու պատմությամբ: Հայրենիքը խորհրդանշում է ազգային–մշակութային այն արժեքներն ու

սրբությունները, որոնք ստեղծվել են ժողովրդի կողմից: Լինել հայրենասեր, նշանակում է պահպանել և զարգացնել այն արժեքներն ու ավանդույթները, որոնք ստեղծվել են անցյալում և ստեղծվում են ներկայում:

«Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը: Այն ձեռք է բերվում ամեն մի սերունդի և նրա առանձին անդամի կողմից. ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել, բայց՝ հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց և այնպես՝ հոգեհաղորդ չլինել նրան: Կարելի է, վերջապես, իրավապես հայրենատեր լինել, իսկ հոգեպես՝ անհայրենիք: Արժանի չես հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրև գերագույն նպատակ, իսկ անձը՝ իբրև միջոց»:

Գ. Նժդեհ

Հայոց բանակում գաղափարական և բարոյահոգեբանական սոցիալականացման հիմքում նույնպես պետք է ընկած լինի հայրենապաշտության գաղափարը:

Նժդեհը գրում է. «Հայրենասիրությունը ոչ միայն որպես գեղեցիկ խոսք, այլ զգացում և գիտակցություն, ոչ որպես շրթունքի սեր կամ իդեազուրկ, խուժանավարի բարոյական մերկությունը ծածկող պատմության, այլ պաշտամունք, կրոն: Միայն այսպես, միայն այսպիսով մեր ժողովուրդը կարող կլինի հեզմել ժամանակն ու իր վտանգները»:

Հայրենիքներն ապրում, ծաղկում ու հզորանում են հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասի պատճառով: Անհայրենասեր ժողովուրդը եթե ոչ այսօր, ապա վաղն անհայրենիք կդառնա: «Հերիք է, որ մի ժողովուրդ դառնա անհայրենասեր, որպեսզի համարվի պատրաստի որս, և նրա երկիրը բաժանվի հարևանների միջև»: «Անհայրենասեր ժողովուրդ, ասել է՝ անիդեալ և աննպատակ ժողո-

վուրդ, որ իրենից կներկայացնի մի տրցակ, բայց ոչ մի մարմին, «անհատների փոշի», բայց ոչ գրանիտե ժայռ, որպիսին պիտ լինեն ժողովուրդները՝ միջազգային արնոտ փոթորիկներից պաշտպանվելու համար»: Հայրենասիրությամբ օժտված ժողովուրդը չի կարող լինել կրավորական, չի կարող դառնալ հանգամանքների խաղալիք, այլ ընդհակառակը՝ դրանց հրամայող:

Հայրենապաշտական սոցիալականացումը պետք է «ազգային հզոր զգացումով և արթուն գիտակցությամբ զինել հայությունը, որ արիացներ և դառնար մայրը բարձր ժողովրդասիրության և գաղափարապաշտության, մղել ընդհանուրի շահը միշտ էլ գերադասել անձնականից, թելադրել անհատին ընդհանուրի երջանկության մեջ փնտրել իր անձնական երջանկությունը, մտատրամադրել բոլորին, բոլորին ավելի պարտականությանց տեր զգալ իրենց, քան իրավունքների, որ մղել հայ մարդուն մեռնել ապրելու և ապրեցնելու և ոչ թե ապրել մեռնելու համար...»:

Հայրենասիրական դաստիարակությամբ պետք է վերափոխենք մեր ժողովրդի բարոյահոգեբանական նկարագրի այն զծերը, որոնք խոչընդոտում, արգելակում են մեր կենսական ուժերի դրսևորումը: Նախ և առաջ՝ հայությունը պետք է ազատվի այն մտայնությունից, թե ինքն իր ուժերով անկարող է կազմակերպել իր ինքնապաշտպանությունը, թե առանց ուրիշների օգնության ինքը չի կարող ոտքի կանգնել և ստեղծել ու պահպանել իր անկախ պետությունը: Մինչև որ հայ մարդը չկարողանա ինքն իրեն հաղթահարել, Նժդեհի խոսքերով՝ «սպանել սարսափի անասունն իր մեջ, ներշնչվել նոր մտայնությամբ, հոգեփոխվել, կարճ ասած՝ մինչև որ չդառնա արի և արիանուն ժողովուրդ, անհնար է, որ նա կարողանա ոչ միայն քաղաքականապես ազատվել, այլև՝ ազգովին ոչնչանալու վտանգից խուսափել»:

Հայությունը գտնվում է այնպիսի կացության մեջ, որ նրա նոր սերունդը պետք է քավի իր հայրերի մեղքերը՝ առաջնորդվելով «Ապրիլի չմեռնելու, մեռի՜ր ապրելու համար» նշանաբանով:

Նոր սերնդի հայրենապաշտական դաստիարակության գործում

Նժդեհը կարևոր դեր է հատկացնում հայ կնոջը, հայոց մայրերին: Առհասարակ, նա չափազանց բարձր է գնահատում կնոջ դերը հասարակության մեջ: Նժդեհի կարծիքով, դաստիարակչական բոլոր ազդակներից (ընտանիք, հասարակություն, ավանդույթներ, դպրոց) «մայրն է ամենավճռական դերը խաղացողը»: Հայրենասեր մայրերն են դաստիարակում մարտնչող ու պայքարունակ սերունդ: Մայրն ունի գերագույն առաքելություն՝ իր երեխայի դաստիարակության միջոցով կառուցել իր ազգի ապագան: Քանի որ երեխան մոր պատկերն է, ուստի երեխայի ազգաշունչ սոցիալականացման համար առաջին հերթին մայրն է պատասխանատու: Մայրն է ազգային արժեքների, ավանդույթների և սովորույթների պահապանողը: Եթե մայրերը չեն կատարում իրենց սրբազան առաքելությունը, ապա վտանգի տակ է դրվում տվյալ ազգի գոյությունը:

Հայրենապաշտ սերնդի սոցիալականացման գործում մեծ է նաև մտավորականության՝ ժողովրդին առաջնորդող ընտրախավի դերը: Ժողովուրդների հաղթանակների և պարտությունների գլխավոր պատասխանատուն մտավորականությունն է, որովհետև խաղաղության և պատերազմի ժամանակ, վերջին հաշվով, հաղթում և պարտվում է մտավորականությունը:

Մտավորականությունն այն հոգևոր ուժն է, «առանց որի ժողովուրդը անվան տակ ամբոխներ կապրեն, առանց որի ազգություն չի ստեղծվի»: Մտավորականության գլխավոր խնդիրներից է վերադաստիարակության միջոցով հոգեբանորեն բարձրացնել հայությունը, ժողովրդի ոգու անպարտելիությունը, ապահովել նրա անպարտելիությունը, նրա ֆիզիկական և բարոյական գոյությունը:

Գ. Նժդեհ

Հայի հոգևոր նկարագիրը եսակենտրոն կառուցվածք ունի, ինչը վկայում է նրա քաղաքակրթված և զարգացած լինելու մասին: Սակայն հայը, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, ոչ միշտ է կա-

րողանում խելամտորեն զուգակցել անհատականը և ազգայինը, սեփականը և պետականը, իրավունքը և պարտականությունը: Դրա հետևանքով հայությունը ոչ միշտ է կարողացել իր կեցության բախտորոշ պահերին լինել միասնական: Նա երկատվել է, քաղաքական տարբեր կողմնորոշումների պատճառով բաժանվել հատվածների, դրանով նպաստել պետականության, քաղաքական անկախության և ինքնուրույնության կորստին: Հայության հոգեբանական պառակտվածությունը դրսևորվել է նաև ազատագրական շարժումների ժամանակ. ազգի մի մասն իրեն զոհաբերել է հայրենիքի ազատագրության համար, մյուս մասը հաճախ «որպես թե ազգը խարույկից փրկելու միամտությամբ ասպարեզ էր իջնում հրշեջի դերում՝ հայ հեղափոխության կրակը մարելու»: Իսկ մեծամասնությունը նախընտրել է «չմասնակցելու», սեփական կաշին փրկելու կրավորական քաղաքականությունը:

Հայությունն անհատներից կազմված ազգ է, ինչը մեծագույն հարստություն է և առավելություն: Խնդիրն այդ անհատներին միավորելու ճիշտ մեխանիզմների ու գաղափարների (սոցիալական, քաղաքական, ազգային, մշակութային բնույթի) զարգացման և կիրառման մեջ է: Այդպիսի միավորման առանցքներից մեկը, որը հայոց պատմության մեջ հաճախ է դրսևորվել, ազգասիրությունն ու հայրենասիրությունն է:

Ինքնապաշտպանությունը և վճռական միայնակի կեցվածքը: Մենք հաճախ ստիպված ենք եղել դիմելու ինքնապաշտպանության, որովհետև «խաղաղ» ժամանակ ինչպես հարկն է չենք մտածել մեր պաշտպանության մասին, կորցրել ենք այն, ինչը կարող էինք պատերազմի ընթացքում ձեռք բերել:

Պատմության հուլովություն մենք ավելի շատ կորուստներ ենք ունեցել, քան ձեռքբերումներ: Բավական է փաստել, որ մենք ապրում ենք մեր պատմական հայրենիքի 1/10 հատվածում, որը, Նժդեհի արտահայտությամբ, ընդամենը հայրենի անկյուն է: Նժդեհը նշում է, որ մեր կորուստների և դժբախտությունների պատճառները նախ և

առաջ պետք է փնտրենք մեր մեջ: Պետք է մեր բարոյահոգեբանական նկարագրի թերություններով բացատրենք մեր նահանջները: Համեմատելով ամերիկացու և հայի բարոյական ըմբռնումները՝ Նժդեհը նկատում է հետևյալը. ամերիկացին ունի մարզիկի հոգեբանություն. նա գիտի, որ մարդը կռվում է հաղթելու համար և ամեն պայքար համարում է կենսաբանորեն անհրաժեշտ, ուստի և բնագոյրեն համակրում է հաղթողին: Հայն ունի տառապանքը պաշտող հոգեբանություն, նա «ամեն երևույթի մեջ բարոյական տարրն է փնտրում, ատում է անիրավ ուժը, խոցվում է, երբ անարդարությունն է հաղթանակում և արցունքների հետ իր սրտի արյունն է քամում, երբ արդարությունն է պարտվում»: Հայն իր էությանը ռազմամուլ, պատերազմասեր չէ, այլ՝ խաղաղասեր. իր ուրախության, տխրության պահին, առօրյա կյանքում նա աշխարհին ցանկանում է խաղաղություն: Դա հետևանք է ոչ միայն այն բանի, որ դարերի ընթացքում հայն իր մաշկի վրա զգացել է պատերազմի ահավորությունը, անհեթեթությունը, այլ նաև՝ որ ի սկզբանե ունի ստեղծելու, կառուցելու, բարիք արարելու էություն: Սակայն այդ էությունը դրսևորելու համար նա, կյանքի տրամաբանության թելադրանքով, պետք է այնքան ուժեղ լինի, որ կարողանա պաշտպանել իրեն և առաջ տանել իր համամարդկային առաքելությունը:

Պարտությունների և կորուստների երկրորդ պատճառը, ըստ Նժդեհի, եղել է այն, որ ոչ միշտ ենք հավատարիմ եղել ինքներս մեզ, չենք հավատացել, չենք ունեցել ինքնապաշտպանության ծրագիր, գործել ենք պատեհապաշտորեն, անվստահ ենք եղել սեփական ուժերի նկատմամբ, այդ պատճառով էլ հույսներս դրել ենք ուրիշների վրա: Դրա հետևանքով հայությունը պառակտվել է, կորցրել իր պետականությունը, անկախությունը և քաղաքական ազատությունը:

Հաճախ մենք ապրել ենք «անդեկ ու անգաղափար», անհոգ ու անտարբեր այն դեպքում, երբ մեր թշնամին միշտ ունեցել է մեզ բնաջնջելու վճիռ: Ինքնապաշտպանական ծրագրի բացակայությամբ է Նժդեհը բացատրել այն փաստը, որ հաճախ եղել ենք քաղաքական անցուղարժի կրավորական հանդիսատեսը, չենք կարողա-

ցել օգտվել քաղաքական կյանքում կատարված փոփոխություններից, որովհետև «ներքուստ մենք պատրաստ չէինք դեպքերի իմաստը հասկանալու, զանոնք մեր քաղաքական ծգտումներին համընթաց դարձնելու»:

Նժդեհի կարծիքով, ինքնապաշտպանությունը տվյալ ժողովրդի գոյության ներքին ճիգն է, որը մինչև հիմա մեզանում արտահայտվել է որպես աղոթք, աղերսանք, մուրացկանություն: Դրա հետևանքը եղել է կրավորական նահատակությունը և տարածքների կորուստը: Ինքնապաշտպանությունը բնավ էլ ազգային եսականության դրսևորում չէ, ընդհակառակը, դա ոչ թե յուրաքանչյուր ժողովրդի բնական իրավունքն է, այլ՝ «պարտականություն դեպի մարդկությունը»:

«Զո՞ւրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանության ընդունակությունից — նշանակում է՝ նա զուրկ է ամեն առաքինությունից, զուրկ գոյության բարոյական իրավունքից»:

Գ. Նժդեհ

Այս բարոյական առաքինության կամ ինքնուրույն ապրելու կամքի բացակայության հետևանքները հետևյալներն են՝ հոգեբանական ու բարոյական դաշտում անվստահությունը սեփական ուժերի հանդեպ, սարսափի և երկյուղի հոգեբանություն, ստրկամտություն, հոռետեսություն, պարտվողականություն, քաղաքական դաշտում՝ օտարամոլություն, լավկանություն ու քաղաքական մուրացկանություն, սեփական մեղքերն ուրիշների կամ արտաքին հանգամանքների վրա բարդելու սովորույթ և այլն: Այստեղից էլ անգիտության երկու տեսակ. նախ՝ մենք չենք ուզում տեսնել, խոստովանել և ընդունել այն ճշմարտությունը, որ «մեր դժբախտությունների համար մեղավոր են ոչ թե բոլորը, այլ նախ և առաջ մենք»: Երկրորդ՝ մեզ քվում է, թե ուրիշները պետք է զբաղվեն մեր փրկության և պաշտպանության հարցերով «Մեր սեփական տրամադրությունները դրել էինք եվրոպացու հոգու մեջ և ամենախոր կերպով հավատացել, թե

բոլոր քրիստոնյա ժողովուրդները նույն զգացումներն ունեն մեր հանդեպ, թե բոլոր պատերազմները մղվում են համուն մեր փրկության»։ Այդ պատճառով մենք հոգեբանորեն կախվածության մեջ էինք հայտնվում ուրիշներից երբ նրանք շոայլ խոստումներ էին տալիս, մենք հավատում և խանդավառվում էինք, իսկ երբ նրանք դժուար էին իրենց խոստումները, հիասթափվում ու հուսալքվում էինք։

Եթե չենք դրսևորում պայքարելու ինքնավստահություն, վճռական միայնակի հոգեբանություն, ուստի պիտի ընտրենք կողմնորոշումներ, ասել է թե պետք է ընտրենք, թե որ օտարի լուծն է նախընտրելի, թե ունից պետք է օգնություն աղերսել։ Քաղաքականությունն ընդհանրապես խուսափում է միայնակությունից, իսկ կողմնորոշումների քաղաքականությունն այլ բան չէ, եթե ոչ միայնակության սարսափը։

Վճռական միայնակի հոգեբանության բացակայությունը ահա, ըստ Նժդեհի, մեր ազգային ողբերգությունների գլխավոր պատճառներից մեկը։ Օրինակ 1920թ. հոկտեմբերին Կարսում մենք պարտվեցինք, թեև ունեինք բնական և արհեստական դիրքերի գերազանցություն, թվական առավելություն, ավելի լավ պարենավորում, բայց «չունեինք վճռական միայնակի հոգեբանություն, ինքնուրույն կերպով որևէ բան անելու հավատ»։ «Պարտվեցինք, որովհետև մեր ցեղի ոգու բովանդակ ուժերն օգտագործելու փոխարեն հովանավորներ փնտրեցինք»։ Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլև բովանդակ հայությունը, հայ ժողովրդի իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի ու տկար հոգին։ Մեր պարտությունը հոգեբանական էր. պարտվեցինք ոչ թե այն բանի համար, որ թվապես ու տեխնիկապես թույլ էինք, այլ որովհետև այդպիսին էինք հոգեպես։ Իսկ Ջանգեզուրում հաղթեցինք վճռական միայնակի հոգեբանության շնորհիվ։

Ապրել վճռական միայնակի հոգեբանությամբ՝ նախ և առաջ նշանակում է ինքն իրեն հաղթահարել, իր մեջ սպանել «սարսափի անասունին», երկրորդ՝ ոչ թե մերժել ուրիշին, ոչ թե ուրիշից աղերսել, այլ՝ օգտագործել ուրիշին սեփական շահերի համար։ Անկախ ապրելու

հավակնություն ունեցող ժողովուրդը պետք է կարողանա իր ինքնապաշտպանությունը կազմակերպել սեփական ուժերով: Ինքնուրույնությունից զուրկ ժողովուրդները չեն կարող ստեղծել և պահպանել իրենց պետությունը:

«Պետությունը նախատեսում է ինքնուրույն քաղաքական միտք, պայքարելու ինքնավստահություն, կառավարելու նախաձեռնություն, իսկ հաղթանակն այլ բան չէ, թե ոչ՝ ինքնավստահ նախաձեռնության պտուղը»:

Գ. Նժդեհ

Պատմական դառը փորձից պետք է դասեր քաղենք, գիտակցենք, որ պատերազմում հաղթելու, փորձություններից դիմակայելու համար անհրաժեշտ է թե՛ հոգեբանորեն, թե՛ գաղափարապես և թե՛ բարոյապես նախապատրաստվել այսօրվանից: Յույսներս երբեք չպետք է դնենք ուրիշների, այդ թվում՝ հզոր դաշնակիցների վրա, քանի որ պատմությունը ցույց է տալիս, որ դաշնակիցները, իրենց շահերից ելնելով, ճակատագրական պահին մեզ թողնում են բախտի քմահաճույքին: Ինչպես գրում է Նժդեհը, պետությունները հաշվի են առնում միջազգային իրավունքը և հարգում իրենց ստորագրած պայմանագրերը, քանի դեռ շահում են գոյություն ունեցող դրությունից, սակայն հենց որ մի այլ դրություն, հենց որ մի ուրիշի թղթե բարեկամություն իրենց ավելի շահավետ է թվում, նրանք թքում են պայմանագրերի վրա, լքում իրենց նախկին զինակիցներին և սպառնում աշխարհի խաղաղությանը:

Ինքն իրեն հարգող ժողովուրդը, ըստ Նժդեհի, իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ իր բազկի, իր զենքի վրա: Իր ուժերից զատ ամեն ինչի ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու: Անկախության բարիքներից լիովին օգտվելու իրավունքը ձեռք բերելու համար ժողովուրդները նախ հրամայողաբար ձեռք են բերում ինքնապաշտպանության բարդ արվեստը, որը պահանջում է լինել ուժեղ, էլի ուժեղ և միշտ ու-

ծեղ: Պետք է լինել այնքան ուժեղ, որ թշնամիդ չհանդգնի հարձակվելու: «Ձգացնել տուր թշնամուդ, – խորհուրդ է տալիս Նժդեհը, – որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կիրաժարվի գեների ուժով քեզ անհանգստացնելու մտքից»:

«Ապրել ենք ուզում՝ լինենք ուժեղ ազգովի: Լինենք ուժեղ, ուժեղ ազգովի. ահա՛ հրամայականը: Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիությանն առ ոչինչ դարձնի մեզ ծանոթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժվարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանության գործը»:

Գ. Նժդեհ

Առաջնորդվելով վճռական միայնակի հոգեբանությամբ՝ բնավ էլ չի նշանակում մերժել ուրիշների աջակցությունը կամ չկնքել ռազմական դաշինքներ, չփնտրել դաշնակիցներ: Հեռատես ժողովրդի քաղաքականությունն, ըստ Նժդեհի, իր գործունեության համար ընդգրկում է մի առաջնորդող նպատակ և դրա համաձայն որոշում իր հավանական թշնամուն և զինակցին. նպատակ, որի ուղղությամբ ընթանում է համառ ու վճռական քայլերով և, օգտվելով սեփական ու դաշնակից ուժերից, չեզոքացնում է իր ճանապարհին հայտնվող խոչընդոտները: Նա նախապատրաստում է բարեհաջող պայմաններ իր ռազմագիտության համար: Դաշինքների միջոցով նա ապահովում է այս կամ այն պետության զինակցությունը կամ չեզոքությունը, օգտագործում հասարակական կարծիքն իր դատի համար, երբ պետք է պատերազմել:

«Քաղաքականության մեջ պարտվում, ձախողվում են այն ժողովուրդները, որոնք չունեն հստակ նպատակներ կամ եթե ունեն էլ, ապա դրանք չեն համապատասխանում ազգային շահերին»:

Գ. Նժդեհ

Քաջության օրենքը: Նժդեհը, որի հայրենասիրությունը, ազգապաշտությունը թվում է՝ սահման չի ճանաչում, այնուհանդերձ, հայրենիքի շահի համար անընդունելի է համարում «Նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքի գործածությունը: Նրա խորին համոզմամբ՝ միջոցների անխտրակամությամբ շահած ամեն հաջողություն պղծում, ապականում է մարդկային բարոյական աշխարհը:

«Ես մերժում եմ այն բարոյագուրկ հասկացողությունը, թե հայրենիքի շահը սրբագործում է ամեն միջոց: Ստորությունը չի դադարում ստորություն լինելուց և այն դեպքում, երբ այն կատարվում է անգամ հայրենիքի համար: ...Ստորությամբ չեն պաշտպանում հայրենիքը: Նրան՝ հայրենիքին, վայել է բարձրորեն մարդկայինը, ասպետականը, կորովին»:

Գ. Նժդեհ

Նույնիսկ ամենամիտրական շահերի համար կատարած ստորությունը նախ և առաջ բարոյագրկում ու տկարացնում է դրանից օգտվողին: Նժդեհը, որը հայտնի է մարտի դաշտում թշնամու հանդեպ իր անգիջողությամբ և անողոքությամբ, այնուհանդերձ, չէր հրաժարվում իր որդեգրած բարոյական վեհ սկզբունքից.

«Մի սպանիր թշնամուդ, անգամ եթե կարելիություն կա սպանելու նրա մարտունակությունը — կռիվը շարունակելու նրա ցանկությունը: Այլ կերպ վարվողը մարդասպան է հասարակ և ոչ մարտիկ: . . . խնայիր տկարներին, եթե թշնամիդ իսկ լինի: Հարգիր քաջության օրենքը — մնա մարդ, մարդ մնա բոլոր դեպքերում: Եվ զարկ միայն նրանց, ովքեր կառող են պատասխանել զարկիդ»:

Գ. Նժդեհ

Նժդեհը, որի համար անտանելի է մարդու բարոյական անկումը,

որն անողոք է իրեն չբարձրացնող մարդու հանդեպ, միևնույն ժամանակ, մեր ազգային էպոսի հերոսի նման գթասիրտ, մեծահոգի էր տկարացած թշնամու հանդեպ. «Կռիվներում եղել եմ մարդ, ավելի քան մարդ՝ անգամ թուրք ու թաթարների դեմ», – գրում է նա իր ինքնակենսագրականում: Առհասարակ, մեծահոգությունը հայ զինվորականին բնորոշ գիծ է: Հայ–պարսկական կռիվներից մեկում սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը, հետապնդելով փախչող պարսից զորքին, հասնում է Աղվանից թագավորին, որը ճակատամարտից առաջ հոխորտացել էր իր ուժերով ոչնչացնել հայոց զորքը: Մուշեղը, մոտենալով նրան, «իր նիզակի կոթով երկար ծեծում է նրա գագաթը՝ ասելով. «Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում. ես թագավոր մարդու չեմ սպանի, մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»: Մի այլ դեպք. բալկանյան պատերազմի ժամանակ հայկական վաշտն Անդրանիկի գլխավորությամբ գերի է վերցնում թուրք փաշային, որը, իր առջև տեսնելով Անդրանիկին, ասում է. «Եթե նախապես իմանայի, որ իմ դեմ դու ես կռվում, մինչև վերջ կկռվեի ու երբեք անձնատուր չէի լինի»: Անդրանիկը, մեծահոգի գտնվելով, նրան է վերադարձնում թուրք:

«Մարդ պետք է ինքն իրեն գերազանցի» սկզբունքը: Չնայած այն հանգամանքին, որ Նժդեհը դավանում է անհատի զոհաբերության գաղափարը՝ այնուհանդերձ, նա, միաժամանակ, անհատապաշտության, ուժեղ անհատի՝ գերմարդու յուրօրինակ քարոզիչ է: Յուրաքանչյուր մարդու մեջ նա ուզում է տեսնել անհատին՝ հոգով ուժեղ, հոգեպես անկախ, արի, գաղափարապաշտ, առաքինի, ինքնատիպ մտածելակերպ ունեցող, ստեղծագործող, կատարելության ձգտող, ինքնուրույն վճիռ կայացնող, ճշմարիտին, գեղեցիկին ու բարուն, բարձրագույն իդեալին նվիրված մարդուն: Առհասարակ, Նժդեհը մարդու նկատմամբ տրամադրված է լավատեսորեն: Նա հավատացած էր, որ մարդն ավելին է, քան իրականում ներկայանում է: Ուստի, նա կոչ է անում մարդուն՝ լինել ավելին, քան է.

«Դու ավելի ուժեղ ես, քան կարող ես երևակայել և զգալ քեզ: Դու օժտված ես անսպառ հոգեկան ուժով, որի մեծագույն մասն անինքնաճանաչություն պատճառով շարունակում է մնալ քնած վիճակի մեջ և անօգտագործելի»:

Գ. Նժդեհ

Մարդը մի ամբողջ տիեզերք է, ներքին հնարավորությունների անսպառ ծով, «չօգտագործված ուժերի հսկայական պահեստ», գանձերի շտեմարան, որը հարկավոր է պեղել և լույս աշխարհի հանել: Իսկ դրա համար անհրաժեշտ է սկսել ինքնաճանաչողությունից: «Ճանաչիր քեզ» չինացող իմաստուն գործողությունից: Այս նշանաբանով պետք է մարդիկ առաջնորդվեն ու դաստիարակվեն, որովհետև ինքնաճանաչությամբ է մարդը ծեռք բերում ինքնավստահություն և ինքնիշխանություն: Միայն ինքնաճանաչությամբ կարելի է մտնել սեփական հոգու անտեսանելի անձավները: Յուրաքանչյուր մարդու մեջ կա մի աստվածություն, մոգական ու հանճարեղ մի ուժ, որը ձգտում է ինքնաբացահայտման, սպասում է հանդես գալու օրվան:

«Ո՞վ չի ունեցել երբեմն հանճարեղ ներշնչումներ, հայտնություն, պարզատեսություն: Ո՞ւմ հաճախ չի թվացել, որ ինքը որոշ արտասովոր վայրկյաններում ընդունակ է զարգացնելու իր մեջ շատ ավելի մեծ ուժ, քան այն, որ զգում է իր մեջ սովորական վիճակում»:

Գ. Նժդեհ

Նժդեհը ուժապաշտության և տիտանիզմի ջատագովն է: Եթե մարդն ունի կատարելագործվելու անսահման հնարավորություն, ներքին ուժերի անսպառ պաշար, ուրեմն պարտավոր է դրանք լույս աշխարհի բերել և իրականացնել: «Բնական մարդը» պետք է հաղթահարվի՝ ծնունդ տալով «հոգևոր մարդուն», այսինքն այն մարդուն, որն ինքն է ստեղծում իրեն, տեր է կանգնում իր կեցությանն ու ճակատագրին:

*«Մարդը մի էակ է, որը գոյություն ունի այնքանով, որ-
քանով ինքն իրեն ստեղծում է: Կամքը, բանականությունը,
ոգին և բարոյականն են պայմանավորում և որոշում մարդու
էությունը»:*

Գ. Նժդեհ

Նժդեհը չի ընդունում այն փիլիսոփայական միտքը, թե արտաքին (բնական, հասարակական, քաղաքական) պայմաններն են գերա-
զանցապես մարդուն դարձնում մարդ, թե օբյեկտիվ հանգամանք-
ներն են որոշում ժողովուրդների բախտը: Այսպիսի մոտեցումը նա
բնորոշում է որպես ճակատագրապաշտական: Կրավորական, ինք-
նություն չունեցող մարդիկ, և ժողովուրդներն են ենթարկվում հան-
գամանքներին, իսկ, ընդհակառակը, ոգեկիր, ինքնավստահ, մշտա-
պես վերափոխվելու ընդունակ մարդիկ և ժողովուրդներն իրենց են
ենթարկում հանգամանքները, վերջիններս օգտագործում որպես մի-
ջոցներ՝ իրենց կենսունակության բարձրացման համար: Ապավինել
արտաքին գործոններին նշանակում է ազատվել սեփական գործո-
ղությունների կամ անգործության պատասխանատվությունից, սե-
փական մեղքերը բարդել ուրիշների վրա, ուրիշների մեջ փնտրել սե-
փական ողբերգությունների և ծախսորդությունների պատճառները:
Իր ճակատագրի համար պատասխանատվություն չստանձնող ժո-
ղովուրդը դառնում է դիպվածների զոհ, կորցնում բարոյական ար-
ժանապատվությունը և քաղաքական կշիռը: Միայն հոգեբանական
տեսանկյունից թույլ, անարի, կամազուրկ ժողովուրդն է իր պարտու-
թյուններն արդարացնում իրենից դուրս գտնվող արտաքին գործոն-
ներով:

Արդյոք ճիշտ կլինի, եթե մեր դժբախտությունների պատճառը
համարենք մեր աշխարհագրական դիրքը, որի ռազմավարական
նշանակությունը հրաշալի են գիտակցել բազում նվաճողներ, բացի
մեզանից:

Թույլը միշտ էլ փնտրում է արդարացումներ: Թույլը մեղավոր է,

որ ինքը թույլ է: Թուլությունն անբարոյականություն է: Ժողովուրդների թուլությունների արդյունքը պարտությունն է և անփառունակ գոյությունը:

Մարդու արժեքն ու արժանապատվությունը,– գրում է Նժդեհը,– ստեղծագործելու և արարելու մեջ է: «Բնական մարդը» բնության մյուս գոյացությունների նման մահկանացու է, սակայն ստեղծագործող, «հոգևոր մարդը» կարողանում է անցավորը կապել հավերժականի հետ. նա հավերժության ճամփորդն է:

Ոչ միայն և ոչ այնքան մարդկային կյանքի փիլիսոփայական ըմբռնումից, որքան պատմաքաղաքական իրողությունների, հայ ժողովրդի օրհասական վիճակի, միջազգային իրադրության վերլուծությունից ելնելով Նժդեհը մշակում է տիտանիզմի, հերոսապաշտության մասին իր ուսմունքը, որի առանցքային գաղափարներն էին մարդը պետք է կարողանա ինքն իրեն հաղթահարել, ինքն իրեն տիրապետել, ինքն իրեն ստեղծել, սպանել իր մեջ նստած ստրուկին, թուլամորթին, եսապաշտին, պատրաստ լինի ինքնագոհաբերության հանուն հայրենիքի, ունենա բարոյական ոգի, անսասան կամք և նպատակ, օժտված լինի մարդկային ամենավսեմ առաքինություններով, պետք է իր բարոյականությունը համահունչ դարձնի ազգային ու համամարդկային բարոյական բարձրագույն արժեքներին, պետք է նրա հոգին կարողանա «քաղել այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ ու հերոսական Հայոց պատմության մեջ»:

Ոգին և ոգու մարդը: «Ոգու մարդը – ահա սխրագործելու, մեծագործելու կարող ղեկավարը»: Նժդեհը գտնում է, որ.

«Գլխավոր դերը ժողովուրդների պատմության մեջ խաղում են ո՛չ արտաքին պայմանները, ո՛չ քաղաքական կողմորոշումը, ո՛չ էլ՝ դիպվածները, այլ՝ իրենց հոգեբանական նկարագիրը: Մի ժողովրդի գոյության արտաքին պայմանները հարազատորեն կապված են նրա ներքին՝ հոգեկան դրությամբ հետ: Ասել է՝ ամեն ժողովուրդ այնտեղ է, ուր նա հասել է իր բարոյական ուժերի մղումով»:

Գ. Նժդեհ

Ուազմարվեստի մասին իրենց դատողություններում հայ մտածողները և ռազմական գործիչները պատերազմում հաղթելու գլխավոր գործոն են համարել գորքի բարոյական ոգին: Ռազմի դաշտում հաղթում է ոգին և ոչ թե գորքի թվաքանակը: Այս կապակցությամբ Նժդեհը նշում է. «խոտան պիտի հռչակել այն բոլոր տեսությունները, որոնք հաղթանակը միշտ էլ նվիրում են այն կողմին, որը մի հատիկ զինվոր, մի թնդանոթ, ամրաշինական մի կառուցվածք ավելի ունի: Ոչ, ոչ, հարյուր զինվորի ուժը միշտ էլ հավասար չէ հարյուրի ուժին: Այդ ուժն ունի իր հավելումն ու նվազումը՝ նայած թե ով և հոգեբանական ինչպիսի մթնոլորտում ու ինչպես է ղեկավարում այդ հարյուրակը: Կռվում գործ ունենք կենդանի, հարափոփոխ, դինամիկ և ոչ մեքենական մեռյալ ուժերի հետ, որոնք չեն մնում քարացած միևնույն կետի վրա: Թիվն ու տեխնիկական վճռական դեր են կատարում միայն այն դեպքում, երբ նրանցից օգտվում ենք իբրև ահավարության միջոցներից»:

Նժդեհը պատմությունը դիտում է որպես ոգու զարգացման առաջընթաց և, միաժամանակ՝ ոգու գործունեության արդյունք: Անշուշտ, դա վերացական, բացարձակ ոգին չէ, այլ՝ առանձին ազգի ոգին, որը գրեթե ամբողջապես անցյալ սերունդների ապրումների, ոգորումների, ողբերգությունների, հաղթանակների, դիզած բարոյական հարստության, ուժի, պաշտամունքի և զոհողությունների արդյունքն է: «Ազգային ոգի. ահա՛ գերագույն հերոսը, միակը՝ մեր պատմության անիվը դարձնող, մեր հավաքական ճակատագիրը վարող: Էապես միայն դա է գործում պատմության մեջ և պատմության համար: Անհատ հերոսներն ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ միայն անձնավորողներն այդ ոգու»: Ժողովրդի ճակատագրի աստղը պետք է փնտրել ոչ թե երկնքում, այլ՝ նրանց ոգու նկարագրի մեջ: Ոգին է ժողովրդի ուժերի մեծագույն բազմապատկիչը. նա ստեղծում է արժեքներ, սրբություններ, իդեալներ, լեզու, մշակույթ, իմաստասիրություն, պետություն և այլն: Ոգին է ստեղծագործում, մահվամբ մահին հաղթում, մարդկանց մղում նահատակության ու հերոսության, առաքինացնում և նվաճում անմահություն: Ոգին ազգի նկարագիրն է, ինքնությունը.

նա է պայմանավորում ազգի ճակատագիրը, իմաստ ու սրբազնություն հաղորդում ազգի գոյությանը: Այս իմաստով էական չէ, թե որտեղ և ինչպիսի սոցիալ-տնտեսական, ռազմա-քաղաքական ու մշակութային պայմաններում է ապրում ժողովուրդը, այլ էական է այն, թե ունի արդյոք նա կենսունակ, գործունյա, ինքնահաղթահարող ոգի:

Անպարտելի է այն ժողովուրդը, որը ղեկավարվում է ոգով: Պատմության հուլովություն չի պարտվում այն ժողովուրդը, նշում է Նժդեհը, որը չի ուզում պարտվել, ասել է թե ոգի ունեցող ժողովուրդն ինքն է իր կեցության տնօրինողը և իր ճակատագրի դարբինը: «Այնտեղ, ուր կա ոգու, ասել է՝ բարոյական ուժերի ապացույցը, այնտեղ թվական գերազանցությունը, քարը, մետաղը գրեթե կորցնում են իրենց նշանակությունը: Ոգու հետ զինակցողը բարոյական ուժերի հետ է զինակցում, որի միջոցներն ածում են անհավատալիության աստիճան, դառնում անսպառելի»:

Ժողովրդի և անհատի նկարագրի մեջ հոգեբարոյական, ոգեկան, կամային ուժի դերի շեշտումը, ինչ-որ իմաստով նաև բացարձակացումը, պայմանավորված է մարդկային կյանքի մոդեռնիստ այն մեկնաբանությամբ, որ այս կյանքը պատերազմ է, գոյության պայքար, ուստի յուրաքանչյուր ժողովուրդ ձգտում է ինքնահաստատման, իր սեփական կեցության և քաղաքակիրթ ինքնության պահպանմանն ու զարգացմանը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ունենա գործունեության իր ծրագիրը, իդեալները և նպատակները: Դա առավելապես վերաբերում է փոքրաթիվ ազգերին, որոնք, իրենց քանակով, նյութական ու ռազմական ռեսուրսներով անկարող լինելով մրցակցել մեծ ազգերի հետ, պետք է լինեն ոգով ուժեղ, հզոր, ավելի կազմակերպված, իմաստուն և հայրենասեր:

«Ժողովուրդ, պետություն, անհատ. սրանց իրավունք է տրվում ապրելու և ապրում են, երբ պատրաստ են ամեն վայրկյան ապացուցելու, թե գիտեն մահվամբ պաշտպանել իրենց գոյություն իրավունքը: Այլապես սրանք, որպես ավե-

լորդ տեղ գրավող իրեր, հարկադրվում են ազատելու իրենց տեղն արևի տակ»:

Գ. ՆՊԵՆԸ

Կյանքի անհավասար պայքարում փոքրաթիվ ժողովուրդների միակ հուսալի զենքը պետք է դառնա իրենց ոգին, հոգևոր առաքինությունները, բարոյական ուժը, հոգեբանական անկախությունը և ինքնավստահությունը:

«Ապրե՛լ ենք ուզում. լինենք ուժեղ ազգովի: ...Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիությունն առ ոչինչ դարձնի մեզ ծանոթ այն բոլոր դժբախտ պայմաններին, որոնք դժվարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանություն գործը: ...Ընդհանրապես նյութական տեսակետից մեր ժողովուրդը, հասկանալի պատճառներով, երբեք չի կարող ուժեղ լինել իր հարևաններից: Սակայն ուժը միայն նյութական ազդակները չեն, այլ՝ մի ժողովրդի առաքինությունները: Կա հոգեբանական գերադասությունը, կա բարոյական ուժը՝ աշխարհի պես հին, բայց միշտ էլ թարմ և հրաշագործ, որին տիրապետող ազգը քիչ անգամ է գլուխ ծռել իրենից նյութապես տասնապատիկ ուժեղ թշնամու առաջ: Բարոյական ուժն է գոտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանականներին անհավասար կռիվում, նա՛ է դեպի հաջողություն ու հաղթանակ առաջնորդում թվապես թույլերին՝ մեծամեծ հակառակորդների դեմ: Նա՛ եղել է և է՛ այսօր միակ ապավինը մեզ նման փոքր ժողովուրդների»:

Գ. ՆՊԵՆԸ

Դրանք առավել ևս անհրաժեշտ են պատերազմի ժամանակ.

«Թող կռվի չմեկնեն թվապաշտները՝ նրանք, որոնք ընդունում են, թե ուժը, զորությունը թվի մեջ է միայն: Ոգի՛ն

է կռվի մղում գինվորին: Ով որ համրում է, նա չի խիզախում»:

Գ. Նժդեհ

Պատմության մեջ Ոգին է առաջնորդել հային: Թվապես միշտ քիչ լինելով իր թշնամիներից՝ հայն ապավինել է իր սակավաթիվ, բայց ոգեկիր, բարոյաշունչ զորքին: 450թ. Խաղխաղ քաղաքի մոտ, պատմում է Եղիշեն, թշնամին «սփռվեց իր ամբողջ զորքով, բանակ դրեց և դաշտի ամբողջ մեծությունը բռնեց. զինված ու լիովին սպառազեն դուրս եկան կռվելու Հայոց զորքի դեմ: Իսկ քաջ Վարդանը և նրա հետ գտնված ամբողջ զորքը, երբ տեսան հեթանոսների գնդի մեծ պատրաստությունը, նայեցին նաև իրենց սակավությանը. թեև թվով նրանցից շատ ավելի քիչ էին, բայց ամենևին չվախեցան նրանց մեծ բազմությունից, այլ բոլորը միասին իրենց ծեռքերը դեպի երկինք բարձրացրին. աղաղակում էին և ասում.

«Դատի՛ր, Տե՛ր, նրանց, ովքեր դատում են մեզ: Կռվի ելիր նրանց դեմ, ովքեր ահա մարտնչում են մեր դեմ: Քո զենքով ու ասպարով օգնի՛ր մեզ: Թափահարիր և զողացրո՛ւ այս անօրենների գունդագունդ բազմությունը, ցրի՛ր և ոչնչացրո՛ւ քո թշնամիների չար միաբանությունն այս քո փրկական մեծ նշանի առջև և մեր՝ սակավաթիվներիս ձեռքով քաջություն ու հաղթություն պարգևիր այս անհամար բազմությունից դեմ»: Այս ասելով՝ խումբ կազմեցին ու հարձակվեցին և աջ թևը ճեղքելով՝ ձախ կողմը գցեցին, բոլորին սրի ճարակ արին ամբողջ դաշտի վրա և փախցրին...»:

Հայոց բանակի մշտահաղթ զենքը եղել է բարոյականը, ոգին: Այդ ոգու նշանաբանն է.

«Մահ ոչ իմացյալ՝ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»:

Գ. Նժդեհ

Ի՞նչը հայերիս հաղթական դարձրեց Սարդարապատում և Ղարաքիլիսայում «չգոյ թի՞վը, սպառազինությո՞ւնը, կռվի հանճարեղ հատակագիծը: Վճռապես ոչ. ոչ մեկը և ոչ էլ մյուսը, այլ՝ մեր ուխտը, մեր կամքը՝ մեռնել, բայց թուրքին չտեսնել էջմիածնում, Երևանում»: Թեև արդիական զենքերը մաթեմատիկական զենքեր են, գրում է Նժդեհը, բայց և այնպես բանակների ճակատագիրը որոշողն այսօր էլ, վաղն էլ և հավիտենապես կմնա մարդկային ոգին: Պատերազմում նախ հաղթանակում կամ պարտվում է ոգին, ապա՝ նյութական զենքը: «Մահվան դեմ հաղթանակելով է նվաճվում կյանքը, ապրեցվում հայրենիքը: Այսպիսին էին իրենց կյանքն ու մահը հայրենիքին ծառայեցնող Մամիկոնյանները՝ իմացյալ մահվան կեսարները. նրանք, որոնց համար ռազմարվեստը մահարվեստ էր, այսինքն՝ մահվան դեմ հաղթական կանգնելու, մահից էլ զորավոր հանդիսանալու արվեստ...»:

Ըստ արժանվույն գնահատելով բարոյական ոգու դերը բանակի մարտունակության ապահովման գործում Նժդեհը դրա հետ մեկտեղ նշում է, որ «վաղվա ճակատամարտերի բախտը պիտի վճռի մարդկային հնարագետ միտքը և ոչ միայն կենդանի ուժը»: Հոգեբանականից ու տեխնիկականից զատ՝ բոլոր տեսակի գերակշռությունները թվական, քաղաքական, աշխարհագրական և այլն, պիտի դադարեն վաղը վճռական և բախտորոշ դեր կատարելուց: Ռազմական գիտության արագ զարգացումը, պատերազմների ժամանակ նորագույն տեխնիկայի օգտագործումը նոր պահանջներ է դնում պետության և բանակի առջև: Պետությունը պետք է հոգա, որպեսզի ունենանք ժամանակակից զենքով վերագինված բանակ ու տեխնիկապես գրագետ զինվորականություն:

Եսասիրություն, մարդասիրություն և ազգասիրություն: Հայրենասիրական սոցիալականացման գլխավոր նպատակը հայրենիքին նվիրված, հայրենիքի և պետության շահն ամեն ինչից վեր դասող քաղաքացիների դաստիարակությունն է:

Յուրաքանչյուր մարդ իր բնությամբ ինքնասեր է, այսինքն՝ նախ և առաջ մտածում է իր մասին: Ինքնասիրությունն ինքնապաշտպանա-

կան բնագոյ է, բայց կարող է վերածվել եսասիրության կամ եսապաշտության, եթե անձնական շահերի բավարարումը դիտվի որպէս գլխավոր նպատակ, բարձրագոյն բարիք և անտեսվի ընդհանուրի կամ մյուս մարդկանց շահերը: Սեփական շահերի, հետաքրքրությունների, արժանապատվության պաշտպանության ծգտումը բնական և բարոյական է մինչև այն պահը, քանի դեռ այն չի հակասում կամ չի վնասում ընդհանուրի շահին: Մարդն ապրում է ուրիշ մարդկանց հետ, որոնք նույնպէս ունեն իրենց շահերը, ուստի պետք է կարողանալ անձնական շահը զուգակցել ընդհանուրի շահի հետ, հատկապէս եթե դա վերաբերում է համազգային կամ համամարդկային կենսական խնդիրներին: Նժդեհը քննադատում է եսապաշտական փիլիսոփայությունը /հեղոնիզմ, էվդոնիզմ, էպիկուրականություն, նյութապաշտություն/, որովհետև չի ընդունում անձնապաշտ բարոյականությունը: Եսասերներից կազմված ազգը դատապարտված է կործանման: Եթե անհատն իր երջանկությունը չի փնտրում ազգային ես—ի մեջ, իր շահերը չի ենթարկում ազգային շահերին, իր կյանքը չի զոհաբերում հանուն ազգի, ապա այդպիսի անհատը Նժդեհի աչքում դադարում է մարդ լինելուց, որովհետև մարդը չի կարող ապրել միայն ինքն իր համար:

Հայոց նկարագրի կարևորագոյն գծերից է նաև ազգասիրությունը: Հին հռոմեացին կյանքը տրամադրում էր իր պետությանը, աստվածացնում այն և նրանով հպարտանում, իսկ դասական հույնի համար գերագոյնն աշխարհում իր քաղաք—պետությունն էր: Պետականության կորստի պատճառով հայի համար պետության դերը պետք է կատարեր ազգությունը: Հայոց պատմության առանցքն ազգային գոյության խնդիրն է: «Այդ իսկ պատճառով հայ մարդու համար բարձրագոյն արժեքը, սրբությունը, հեղինակությունը պիտի դառնար հայկականությունը՝ իբրև գիտակցված էութենական միասնություն»: Այս իմաստով Նժդեհը կարծում է, որ աններելի սխալ է կրոնական կրքով կամ ֆանատիզմով բացատրել հայի հավատարմությունը քրիստոնեության հանդեպ: Տիրապետողը հայի հոգու մեջ ոչ թե կրոնականն է, այլ՝ ազգայինը, հայկականությունը:

Այդ առումով մարդասիրությունը և ազգասիրությունը համատեղելի իրողություններ են, կարծում է Նժդեհը. դրանք իրար ոչ թե հակասում, բացառում են, այլ ընդհակառակը՝ փոխալայմանավորում : «Միայն ազգասերը կարող է սիրել և մարդկությունը»: Ուրեմն, իսկական մարդասերն ազգասերն է, որովհետև ծառայելով ազգին, պաշտպանելով ազգային արժեքներն ու ավանդույթները՝ նա ծառայում է նաև մարդկությանը:

Մերժելով անձնապաշտական և աշխարհաքաղաքացիական փիլիսոփայությունը՝ Նժդեհը ես-ը և ազգը չի հակադրում մարդկությանը, այլ դրանց միջև տեսնում է միասնություն: Նա եսապաշտական փիլիսոփայությանը հակադրում է ազգապաշտականը կարծելով, որ վերջինս անհարիր չէ «բարոյականության և առաջադիմության բարձր սկզբունքներին», որովհետև դա ոչ այլ ինչ է, եթե ոչ «ազգ-անհատի արդար եւ արգասավոր ծգտումը՝ հավատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը եւ պաշտպանել իր հավաքական անձի ազատությունը»:

Լինել ազգասեր, արդեն իսկ նշանակում է լինել մարդասեր: «Չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց լավ Յայ լինել: ...Այո՛, չի կարելի անկատար մարդ, բայց կատարյալ Յայ լինել: Միայն մարդ կոչվելու արժանին կարող է արժանաբար Յայ կոչվել: Դա այբուբենական մի ճշմարտություն է, որ երկար իմաստասիրություն չի վերցնում»:

Այդպես էր ասում Նժդեհը. «Կրելով կնիքը Հայաստանի բնության ու պատմության՝ Հայ եմ ես: Մտածումով և ապրումներով, սակայն, ես մարդ եմ, Համամարդ: Ես ընկերն եմ անիրավածի, եղբայրը Հալածվողի և զինակիցը բևեռ-բևեռ ավելի արդար աշխարհի Համար մարտնչողների: Դավանանքս է – մարդկայնություն, ավելի մարդկայնություն»:

Գ. Նժդեհ

Ազգային իդեալը և անհատի զոհաբերությունը: Նժդեհն անհատի

իսկական արժեքը տեսնում է ազգային իդեալին զոհաբերվելու կարողության մեջ: Դա առավելապես վերաբերում է զինվորին, որն իր կարգավիճակով կոչված է լինելու Հայրենիքի պաշտպանը, անհրաժեշտության դեպքում՝ նահատակը: Իր զինակիցներին ուղղված պատվիրաններում Նժդեհը գրում է. «Քեզ վրա նայիր որպես դատապարտվածի, որը հանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանության պիտ միշտ պատրաստ լինի ընդունելու մահը»: Նրա կարծիքով զոհաբերության այդ գործողությունը ոչ թե նվաստացնում, դիմազրկում է մարդկային անհատականությունը, այլ, ընդհակառակը, մեծապես ուժեղացնում, հարստացնում է նրա հոգևոր կյանքը:

Ազգի փրկությունն առանց զոհաբերության անհնարին է, և առավելապես այն ազգերի, որոնք լուծում են իրենց գոյատևման ու ինքնության պահպանության խնդիրները: Հարցն այս համատեքստում դիտարկելով՝ Նժդեհը մի կողմ է դնում անհատի սոցիալական, կենսաբանական, տնտեսական պահանջմունքները. անհատի մարդկայնացման գործը նա պայմանավորում է այն բանով, թե նրանում որքանով է մարմնավորվել ազգայինը: Եթե գեղեցիկն այն է, որ ամբողջությամբ համապատասխանում է իր սեռի-տեսակի գաղափարին, այսինքն՝ իր տեսակի մեջ գերազանցն է, ապա լիարժեք, ճշմարիտ հայն այն է, ով «հանդիսանալով ներկայացուցիչն ու կրողը հայկականության՝ վերջինն արտահայտում է առավելագույն չափով»:

Նժդեհը բարոյական իդեալիստ էր: Նա ելնում էր այն մտքից, որ մարդու կյանքը պետք է լինի իմաստավորված: Ապրել պարզապես գոյություն ունենալու համար, դա արդեն, խիստ ասած, մարդկային կյանք չէ: Ինքն իր համար ապրողը դեռ լիարժեք մարդ չէ: Մարդու կյանքն իմաստավորված կարող է լինել միայն այն ժամանակ, եթե մարդն իր հոգու մեջ զգում է որևէ բարձր բարոյական իդեալի և նպատակի ներկայությունը: Իդեալապաշտությունը կարող է միայն գեղեցկացնել մարդկային կյանքը. «Անիմաստ ու դատապարտելի է մարդկային կյանքը, եթե դա ծառայությունը չէ իդեալի, կատարումը բարոյական պարտականությանը»: Կյանքի իմաստի այսպիսի ըմբռնումը վեհացնում է մարդուն, որովհետև նա պատրաստ է իր կյանքը

զոհաբերել հանուն բարձրագույն արժեքների: «Միայն կամավոր նահատակն է բացարձակ ազատություն վայելում: Նրան է տրված՝ զգալ իրեն բարձր մարդկային օրենքներից և դուրս մարդկայինի սահմաններից: Նրան անծանոթ է երկյուղը մահվան: Նրան չէ կարելի վախեցնել. նրանից վախենում են, թեև անզեն ու անչար է նա»:

Չոհաբերության նման ըմբռնումն ավանդաբար բնորոշ է եղել հայերին: Այդպիսի վեհացնող զոհաբերության փիլիսոփայությամբ էր հայոց զորքը կանգնել Ավարայրի դաշտում: «Եվ զորքի ամբողջ բազմությունը մեծ զվարճությամբ և սաստիկ ուրախությամբ աղաղակեց ..., – գրում է Եղիշեն, – թող մեր մահը արդարների մահվան հետ հավասարվի և մեր արյունը թափվելը՝ սուրբ մարտիրոսների արյան հետ. թող Աստծուն հաճելի լինի մեր կամավոր զոհաբերությունը և իր եկեղեցին թող հեթանոսների ձեռքը չմատնի»:

Այսօր անհատի զոհաբերության գաղափարը չի կարող այնքան էլ հրապուրիչ լինել: Այնուհանդերձ, առանց զոհաբերության հնարավոր չէ պատկերացնել հայրենիքի պաշտպանությունը:

«Բլբլբլ՝ ազգերի պատմությունը, և երես առ երես պիտ հանդիպես հետևյալ ճշմարտության. ժողովուրդները նախ և առաջ իրենց ամենաընտիր ուղիների արյունով կը սրբեն իրենց երկիրը և ապա այդ սրբացած հողի վրա կը բարձրացնեն շենքն իրենց անկախության: Այո՛, նախ հերոսների և նահատակների գերեզմանատուն, ապա՝ ազատ և երջանիկ Հայրենիք»:

Գ. Նժդեհ

ԳԼՈՒԽ IV

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

4.1 Պատերազմը որպես սոցիալական երևույթ

Խաղաղության առավելություններն այնքան ակնհայտ են, որ դարերի պատմությունն ունեցող սոցիալական միտքը բավականին փոքր ժառանգություն է թողել պատերազմի նման բարդ սոցիալական երևույթի մասին: Մինչդեռ, մարդկությունը շարունակ բախվում է պատերազմների առաջացման իրական փաստի և սպառնալիքի հետ: Ավելին՝ գնալով կատարելագործվում են պատերազմի վարման միջոցները, պատերազմների սոցիալական հետևանքները ավելի ավերիչ և լայնածավալ են դառնում, պատերազմի ավանդական դարձած տեսակները համալրվում են որակապես նոր դրսևորումներով: Ժամանակակից հասարակությունը, որը պատմության ընթացքում ստեղծել է մարդկային համագործակցության հսկայական ներուժ իր կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում, միևնույն ժամանակ առաջացնում է պարբերաբար ծագող պատերազմների վտանգ, որը մասսայական ոչնչացման զենքի առկայության պայմաններում սպառնում է համընդհանուր ոչնչացմամբ: Օրինաչափ է, որ այս իրավիճակում ձևավորվում է պատերազմի ուսումնասիրման նոր պահանջ, դրվում նոր խնդիրներ, որոնք կոչված են հիմնավորելու պատերազմի՝ որպես սոցիալական երևույթի ուսումնասիրման տեսական և կիրառական անհրաժեշտությունը:

Պատերազմի ուսումնասիրման գործում մեծ դեր ունի սոցիոլոգիան, որը բացահայտում և մեկնաբանում է պատերազմի սոցիալական բովանդակությունը, դիտարկելով այն որպես սոցիալական իրականության մաս՝ իրեն հատուկ բնութագրիչներով և օրինաչափություններով: Պատերազմը սոցիոլոգիական տեսանկյունից այս կամ այն սոցիալական խմբերի միջև ընթացող պայքարի ձև է, որը,

լինելով բոլոր ժամանակաշրջանների մարդկային հասարակություններին հատուկ երևույթ, վերջին հաշվով, ծագում և նախապատրաստվում է հասարակությունների ներսում և իր հերթին հետադարձ ազդեցություն և սոցիալական փոփոխություններ է առաջացնում հասարակության մեջ: Սոցիոլոգիայի ներդրումը պատերազմների ուսումնասիրման գործում կայանում է նրանում, որ այն օգնում է հասկանալ, թե ինչն է ստիպում մարդկությանը՝ այս կամ այն սոցիալական հանրություններին, միմյանց միջև ծագած հակասությունների լուծումը փնտրել պատերազմի մեջ, ինչպես է պատերազմական գործողությունների դիմելու որոշումը հասունանում հասարակության ներսում և, վերջապես, ինչպիսին է հասարակությունների, սոցիալական խմբերի վարքը պատերազմի պարագայում: Սոցիոլոգիայի համակարգում պատերազմը ընկալվում է որպես սոցիալական սուբյեկտների միջև ծավալվող հարաբերությունների ձև՝ վերջինիս հատուկ օրինաչափություններով և առանձնահատկություններով: Ուշադրության են արժանի նաև պատերազմի հիմնախնդիրների սոցիալական էության և նշանակության պարզաբանումը, պատերազմի սոցիալական հետևանքների, ինչպես նաև սոցիալական սանկցավորման սկզբունքների և գործառույթների ուսումնասիրությունը:

Պատերազմը որպես սոցիալական հարաբերությունների ձև: Պատերազմի սոցիոլոգիական վերլուծությունը սկսվում է նրանից, որ այն սահմանվում է որպես սոցիալական սուբյեկտների միջև ծավալվող հարաբերությունների ձև: Սահմանելով պատերազմի մասնակիցներին որպես սոցիալական սուբյեկտներ՝ սոցիոլոգիան շեշտում է սոցիալական սուբյեկտի և նրա սոցիալական միջավայրի միջև գոյություն ունեցող կապը՝ ասելով, որ պատերազմի սուբյեկտների վարքը մեծապես պայմանավորվում է տվյալ սոցիալական համակարգի կառուցվածքի առանձնահատկություններով և զարգացման օրինաչափություններով: Առաջին պլան է մղվում անհատների կամ խմբերի հանդեպ համակարգի սոցիալական և արժեքային վերահսկողության գործոնը: Պատերազմի սուբյեկտ է համարվում սոցիալա-

կան այն միավորումը, որն ընդունակ է գործելու և սեփական գործողություններով շրջապատող սոցիալական միջավայրում փոփոխություններ առաջացնելու: Հետևաբար, այս կամ այն սոցիալական հանրությունը կարող է դիտարկվել որպես սոցիալական սուբյեկտ և պատերազմի մասնակից կողմ այն դեպքում, եթե այն որոշակի ազդեցություն է թողնում սոցիալական համակարգի վրա, ճանաչվում և հաշվի է առնվում այլ սուբյեկտների կողմից՝ սեփական որոշումների մշակման և իրականացման ժամանակ:

Այս տեսանկյունից, պատերազմը ընկալվում է որպես պետությունների, ազգերի, էթնիկ և սոցիալական խմբերի, դասակարգերի և կազմակերպությունների միջև առաջացող քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, ազգային, տարածքային և այլ տիպի հակադիր շահերի լուծման սոցիալապես սանկցավորված միջոց, որի իրականացման ձևը ռազմական հակամարտությունն է: Պատերազմն առանձնանում է այլ տիպի զինված կոնֆլիկտների շարքում նրանով, որ պատերազմի մասնակիցների դերում հանդես են գալիս սոցիալական այն բոլոր միավորումները, որոնք կարող են ռազմական միավորումներ ստեղծել և հակաությունների լուծման նպատակով դիմում են զինված պայքարի: Դրանց շարքին են դասվում, պետությունները, պետությունների կոալիցիաները, տարածաշրջանային, միջազգային, վերազգային կազմակերպությունները և սոցիալական խմբերը: Հետևաբար, շեղվելով պատերազմների սահմանման ավանդական քաղաքագիտական մոտեցումներից, որոնց շրջանակներում պատերազմների գլխավոր և հաճախ միակ դերակատարներ են հռչակվում ազգային պետությունները՝ իրենց կանոնավոր բանակներով, ռազմական սոցիոլոգիան, հաշվի առնելով արդի ժամանակաշրջանում պատերազմների օրինաչափությունները, սահմանում է այն որպես երկու և ավելի սոցիալական սուբյեկտների զինված ուժերի միջև ընթացող հակամարտություն: Սակայն պատերազմի պայմաններում սուբյեկտների հարաբերությունների ողջ բազմազանությունը հասկանալու համար սոցիոլոգիան անդրադառնում նաև պատերազմում սուբյեկտների կողմից կիրառվող ոչ ռազ-

մական միջոցների դիտարկմանը: Այս ճշգրտումն առավել արդիական է ժամանակակից պատերազմների վերլուծության համատեքստում, քանզի գնալով ակնհայտ է դառնում, որ պատերազմող սուբյեկտների վարքում սկսում են գերակշռել պատերազմի վարման հենց այս տիպի միջոցները, որոնց շարքին ավանդաբար դասվում են՝

- ա) հոգեբանական, տեղեկատվական ներագդման միջոցները, որոնք ուղղված են հակառակորդ կողմի հոգեբանական կայունության քայքայմանը, արժեքային կողմնորոշումների փոփոխմանը, ինչպես նաև ազգային գիտակցության խարխլմանը,
- բ) տնտեսական միջոցները, որոնք ուղղված են հակառակորդ կողմի տնտեսական ներուժի տիրապետմանը, առանց զինված գործողությունների կիրառման,
- գ) գեոֆիզիկական միջոցները, որոնք կարող են օգտագործվել հակառակորդ կողմի տարածքում այնպիսի բնական աղետների առաջացման և խթանման նպատակով, ինչպիսիք են, օրինակ, անտառային հրդեհները, արհեստական երկրաշարժերը, երաշտները և այլն,
- դ) գեներտիկական միջոցները, որոնց կիրառումը ուղղված է հակառակորդ խմբի թվաքանակի փոքրացմանը՝ ծնելիության նվազմանն ուղղված միջոցների կիրառման միջոցով:

Պարզ է դառնում, որ ժամանակակից պատերազմների սուբյեկտների փոխազդեցությունը ներառում է հարաբերությունների լայն շրջանակ, որը չի սահմանափակվում զուտ ռազմական գործողությունների իրականացմամբ:

Քննվող խնդրի առանձնահատկությունները հասկանալու համար հետաքրքրական է նաև պատերազմի սուբյեկտների հարաբերությունների ուղղվածության վերլուծությունը: Ըստ այս չափանիշի սոցիոլոգիայում ընդունված է տարբերել պատերազմի սուբյեկտների միջև ծավալվող հարաբերությունների հետևյալ տիպերը՝ սիմետրիկ հարաբերություններ, որոնց դեպքում կողմերն օժտված են պատե-

րազմի վարման հավասար հնարավորություններով և ներուժով, ներառյալ՝ ռազմական տեխնիկա և զինամթերք, մարդկային, տնտեսական, քաղաքական, գիտական ռեսուրսներ, ժողովրդագրական համարժեք ցուցանիշներ, կառավարման համակարգ, միջազգային աջակցություն և այլն, և ասիմետրիկ հարաբերություններ, որոնց դեպքում կողմերի հնարավորություններն անհավասար են: Պատերազմի սուբյեկտների հարաբերությունների այս ձևերի առանձնացումը ռազմասոցիոլոգիական հետազոտություններում կարևոր կիրառական նշանակություն ունի, քանզի այն հնարավորություն է տալիս պատկերացնել և գիտական կանխատեսումներ անել պատերազմի սրության, երկարատևության, վերջնական ելքերի և այլ առանձնահատկությունների մասին: Խոսելով պատերազմի կողմերի հարաբերությունների մասին՝ պետք է նշել նաև, որ վերջիններս կարող են հանդիսանալ պատերազմում սուբյեկտների դերերի տարբերակման և դասակարգման ցուցանիշներ: Այսպես, օրինակ, պատերազմի անմիջական սուբյեկտներից զատ կարող են առանձնացվել հետևյալ սուբյեկտների տիպեր, որոնց հարաբերությունները կողմերի հետ միջնորդավորված բնույթ են կրում՝

- ա) պատերազմը խթանող սուբյեկտ, որը կիրառելով քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և այլ միջոցներ՝ կարող է նպաստել պատերազմի առաջացմանը սեփական շահերի բավարարման նպատակով՝ փաստացիորեն զերծ մնալով պատերազմում անմիջական մասնակցություն ունենալուց,
- բ) պատերազմի զոհ, որը պատերազմի սուբյեկտների հետ առնչություն ունեցող այն կողմն է, որը մեծապես ներազդվում է պատերազմական գործողություններից: Այս տիպի սուբյեկտների ներգրավումը պատերազմում կարող է լինել ինչպես կանխամտածված, այնպես էլ պատահական,
- գ) դաշնակից կողմ, որը այս կամ այն միջոցներով աջակցում է պատերազմում ներգրավված կողմերից մեկին կամ երկու կողմերին միաժամանակ: Այդ աջակցությունը կարող է ու-

նենալ տարբեր դրսևորումներ՝ քաղաքական, տնտեսական աջակցություն, ռազմական օգնության, ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկատվության տրամադրում և այլն,

դ) միջնորդ կողմ, որի նպատակն է աջակցել բռնի գործողությունների կանխմանը և նպաստել կոնֆլիկտի լուծմանը: Միջնորդ հանդիսացող սուբյեկտի դերը կարևորվում է, մասնավորապես պատերազմի կողմերի միջև զինադադարի անհրաժեշտության հիմնավորման և կնքման գործում: Միջնորդը կարող է հանդես գալ նաև որպես երրորդ կողմ բանակցությունների վարման և հետագայում նաև խաղաղության հաստատման գործում:

Այսպիսով՝ սուբյեկտների դերերի տարրանջատումը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել պատերազմում ինչպես ուղղակի այնպես էլ անուղղակի մասնակցություն ունեցող բոլոր դերակատարների մասին: Բացի դա, այս սուբյեկտների դերերի տարբերակումը կարևորվում է նաև պատերազմի կարգավորման գործընթացի համատեքստում, քանզի այն հնարավորություն է տալիս բացահայտել բոլոր սուբյեկտների շահերը և ներուժը, օգտագործել այդ տեղեկատվությունը հակամարտության կարգավորման գործընթացներում:

Պատերազմի հիմնախնդիրները: Պատերազմի սոցիալական էությունը նաև վերջինիս հիմքում դրված խորքային դիդապատճառների մեջ է: Չէ՞ որ, պատերազմի սուբյեկտները՝ պետությունները, ազգերը, սոցիալական խմբերը, դասակարգերը, դիմում են հակասությունների լուծման ռազմական ճանապարհին՝ վերջին հաշվով նպատակ ունենալով տիրապետել այն սակավաթիվ՝ ռեսուրսներին, որոնց օգնությամբ հնարավոր կլինի ձեռք բերել և/կամ պահպանել սոցիալական գործընթացների վերահսկման հնարավորությունները: Ըստ այդմ, պատերազմի հիմնախնդիրները կարող են սահմանվել որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող կամ որպես այդպիսին

ընկալվող հակասություններ, որոնք կարող են տարբեր կերպով սահմանվել և մեկնաբանվել պատերազմի սուբյեկտների կողմից: Իրենց բովանդակությամբ պատերազմի հիմնախնդիրները կարող են լինել տնտեսական, քաղաքական, կրոնական, գաղափարախոսական, էթնիկ կամ այլ բնույթի, սակայն բոլոր դեպքերում դրանք առնչվում են սուբյեկտների պահանջմունքների, շահերի և արժեքների հետ: Այլ խոսքերով, պատերազմի սուբյեկտները, որոնք ընտրում են միմյանց միջև ծագած հակասությունների լուծման ռազմական ճանապարհը, վերջին հաշվով ձգտում են այն սակավաթիվ ռեսուրսների միաժամանակյա տիրապետմանը, վերաբաշխմանը կամ պահպանմանը, որոնք նրանց համար կենսական նշանակություն և արժեք ունեն: Պատերազմում մարդիկ կարող են համախմբվել այնպիսի կոլեկտիվ շահերի շուրջ, ինչպիսիք են, օրինակ, պայքարն իշխանության, ազդեցության, տնտեսական ներուժի, խմբի սոցիալական դիրքի պահպանման կամ տիրապետման համար և այլն: Հատկանշական է, որ պատերազմի հնարավոր ելքերը, այս դեպքում, կարող են կախված լինել նրանից, թե ինչ տիպի ռեսուրսների տիրապետման են ուղղված պատերազմի սուբյեկտների գործողությունները: Ընդունված է առանձնացնել ռեսուրսների հետևյալ տիպերը՝

- ռեսուրսներ, որոնք չեն կարող բաժանվել մասերի, և վերջիններիս միաժամանակյա տիրապետումն անհնար է: Տվյալ դեպքում, խոսքը կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական ռեսուրսների մասին,
- ռեսուրսներ, որոնք կարող են բաժանելի լինել տարբեր համասնություններով,
- ռեսուրսներ, որոնք կարող են տիրապետելի լինել երկու կողմի համար միաժամանակ: Այս դեպքում բարձր է ինտեգրատիվ համաձայնության որպես պատերազմի ելքի հավանականությունը⁸⁹:

Պատերազմող կողմերի շահերի հիմքում են ընկած պահանջմունքներ, որոնք և պատերազմի հիմնախնդիրների ամենախոր

⁸⁹ Вишневская А.В., Конфликтология, Москва, 2003.

շերտն են կազմում: Այսպես, օրինակ, խումբը կարող է ներգրավվել պատերազմում, եթե առկա են խմբի ֆիզիկական և հոգևոր անվտանգության սպառնալիքներ, գիտակցվում է սեփական խմբի ինքնության մշակույթի, կրոնի, լեզվի, պետականության կորստի վտանգը և այլն: Նշենք նաև, որ պատերազմի սուբյեկտների պահանջումները, ի տարբերություն, օրինակ, նրանց շահերի, անշահարկելի են և չեն կարող դառնալ զիջման առարկա: Ավելին ցանկացած պատերազմի հիմքում ընկած սուբյեկտների պահանջումների բավարարումը պարտադիր բնույթ է կրում և անվիճելի է: Դրանով է հաճախ պայմանավորվում պատերազմներում փոխզիջման հասնելու հետ կապված դժվարությունները:

Պատերազմի սուբյեկտների շահերի և պահանջումների բախումը մեծապես կախված է նաև նրանց արժեքային համակարգերի տարբերություններից: Ընդ որում, պատերազմի սուբյեկտների արժեքային տարբերությունները կարող են նպաստել սուբյեկտների միջև հակասությունների սրմանը, ինչպես նաև հանդիսանալ պատերազմի առաջացման անմիջական պատճառ: Այս դեպքում խոսքը գաղափարախոսական պատերազմների մասին է, որոնք կարող են առաջանալ կողմերի արժեքային և գաղափարախոսական հակասությունների արդյունքում: Այս տիպի պատերազմի օրինակ է հանդիսանում Սառը պատերազմը, որի հիմքում էին դրված խորհրդային Միության և ԱՄՆ-ի գաղափարախոսական տարբերությունները, որոնք ի վերջո ստացան կապիտալիզմի և սոցիալիզմի գաղափարախոսությունների անհաշտ պայքարի տեսք:

Այսպիսով՝ պատերազմի հիմքում ընկած հիմնախնդիրները սոցիալական են իրենց էությանը, քանզի անմիջականորեն կապված են կողմերի շահերի, պահանջումների և արժեքների հետ, որոնց ախտորոշումը, սակայն, իրական պատերազմների ուսումնասիրման պայմաններում դժվար հետազոտական խնդիր է, որովհետև հաճախ սուբյեկտների իրական դրդապատճառները քողարկվում են պատերազմական քարոզչությամբ:

Պատերազմի սոցիալական հետևանքները: Անկախ նրանից, թե պատերազմի սուբյեկտներից որն է հայտնվել հաղթողի կամ պարտվողի դերում, թե պատերազմի արդյունքները համապատասխանում են մասնակիցների սպասումներին թե ոչ, պատերազմն իր բացասական ազդեցությունն է թողնում բոլոր կողմերի վրա: Ըստ սոցիոլոգների՝ պատերազմի օրինաչափությունն այն է, որ պատերազմի «սոցիալական զինը» հաճախ ավելին է, քան պատերազմի «սոցիալական ձեռքբերումները»: Այդ, ըստ էության, արտահայտվում է պատերազմի սոցիալական հետևանքների ձևով, որոնք չնայած տարբեր են իրենց խորությամբ և ուղղվածությամբ, վերջին հաշվով ենթադրում են մարդկային զոհեր, նյութական արժեքների կորուստ, ինքնության նենգափոխում, քաղաքական, տնտեսական, սոցիալական պաշտպանվածության կորուստ, հոգեբանական խնդիրների սրում, պատերազմական սինդրոմի ձևավորում և այլն: Որպես կանոն, հետպատերազմյան փուլում հասարակությունները բախվում են նոր սոցիալական խնդիրների առաջացման հետ, քանի որ սոցիալական կառուցվածքում առաջացող փոփոխությունները առաջ են բերում այնպիսի նոր սոցիալական, մարդասիրական, քաղաքական խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, տեղահանված բնակչության ավելացումը, արտագաղթի հոսքերի ակտիվացումը, հասարակության սոցիալ-հոգեբանական լարվածության առաջացումը և այլն: Այսպիսով՝ պատերազմի հետևանքները սոցիալական են իրենց էությամբ և անդրադառնում են ինչպես պատերազմում անմիջական մասնակցություն ունեցած խմբերի կամ անձանց, այնպես էլ ողջ հասարակության վրա: Պատերազմի արդյունքում առաջացող փոփոխությունները կամ հետևանքներն, ըստ էության, տեսանելի են հասարակության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ ներառելով.

ա) Առողջապահական հետևանքները.

Պատերազմները և, առհասարակ, զինված կոնֆլիկտները առաջին հերթին իրենց բացասական ազդեցությունն են թողնում հասարակական առողջության վրա: Հայտնի է, որ հետպատերազմյան

փուլում կարող է նկատվել բնակչության ընդհանուր առողջական ցուցանիշների կտրուկ վատթարացում, ինչն ուղղակի հետևանք է պատերազմի արդյունքում ծագող այնպիսի խնդիրների, ինչպիսիք են, օրինակ, խմելու ջրի ցածր մատչելիությունը և աղտոտվածությունը, հասարակության սանիտարահիգիենիկ անբարենպաստ պայմանները, սննդի ցածր որակի և սննդապահովման համակարգի հիմնախնդիրները և այլն: Այս և այլ գործոնների՝ ազդեցության արդյունքում կարող են աճել բնակչության շրջանում քրոնիկ հիվանդությունների և վարակների տարածվածության դեպքերը, ավելանալ մահացության և մասնավորապես մանկամահացության ցուցանիշները, տարածվել հոգեկան հիվանդությունները և այլն: Դա նշանակում է, որ պատերազմի ավարտին մարդկային զոհերի թիվը շարունակում է աճել, այս դեպքում արդեն ոչ թե ռազմի դաշտում, այլ պատերազմի անմիջական արդյունք հանդիսացող առողջական հիմնախնդիրներից:

բ) Ժողովրդագրական հետևանքները.

Պատերազմի բացասական հետևանքների շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի սոցիալ-ժողովրդագրական հետևանքների դիտարկումը: Հայտնի է, որ պատերազմում սուբյեկտները հանդես են գալիս ի դեմս իրենց կանոնավոր բանակների կամ տարբեր զինված միավորումների, որոնք, որոշ բացառություններով, համալրվում են երիտասարդ տարիքի, արական սեռի, ֆիզիկապես և հոգեպես առողջ քաղաքացիներից: Հետևաբար, պատերազմական իրավիճակներում հասարակության սոցիալապես ակտիվ այս խումբը դառնում է հակառակորդի զինված գործողությունների անմիջական թիրախ: Բնական է, որ ի տարբերություն հասարակության այլ խմբերի մահացության, հաշմանդամության, հոգեկան և ֆիզիկական հիվանդությունների հավանականությունը բարձր է հենց այս խմբի շրջանում: Այս իրողությունը բերում է նրան, որ պատերազմի արդյունքում երկրի ժողովրդագրական պատկերը փոփոխվում է, մասնավորապես ա) խախտվում է հասարակության գենդերային և տարիքային հավասարակշռությունը և բ) աճում են

մահացության և նվազում ծնելիության ցուցանիշները: Այսպիսով պատերազմի հետևանքով փոխվում է հասարակության ժողովրդագրական պատկերը, ինչի արդյունքում կարող են խախտվել բնակչության վերարտադրության օրինաչափությունները և հասարակությունները կարող են բախվել «ծերացման» հիմնախնդրի հետ:

գ) Տնտեսական հետևանքները.

Պատերազմների ուսումնասիրմամբ զբաղվող գիտնականները նշում են, որ հնարավոր չէ հասկանալ պատերազմը առանց դրա տնտեսական տեսանկյան վերլուծության: Այս կապը պայմանավորված է նրանով, որ տնտեսական գործոնները հանդիսանում են պատերազմի նախաձեռնման, ընթացքի, ելքի և անգամ հետևանքների առանձնահատկությունը պայմանավորող կարևորագույն բաղադրիչներ: Մասնավորապես՝ խոսելով պատերազմի տնտեսական հետևանքների մասին, պետք է հաշվի առնել, որ դրանց չափը կարող է ուղղակիորեն կախված լինել պատերազմի ծախսերի և ձեռքբերումների հարաբերակցությունից: Այսպես, օրինակ, եթե դիտարկենք այս կապը ղարաբաղյան պատերազմի օրինակով, ապա պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության անկախացման առաջին տարիներին երկրում տիրող տնտեսական ճգնաժամը հիմնականում արդյունք էր ղարաբաղյան պատերազմի: Դա պայմանավորված էր նրանով, որ նորանկախ հանրապետության գրեթե ողջ տնտեսական ներուժը ուղղվում էր ռազմական նպատակների իրականացմանը, ինչի հետևանքով հասարակության այլ ոլորտները չէին կարող ստանալ անհրաժեշտ ֆինանսավորում: Արդյունքում հասարակությունը կանգնեց երկարատև սոցիալ-տնտեսական ճգնաժամի առաջ, որի հետևանքները շարունակում են հաղթահարվել մինչև այսօր: Դարաբաղյան հակամարտության օրինակով կարելի է տեսնել նաև պատերազմի անուղղակի տնտեսական հետևանքները: Խոսքն այն մասին է, որ պատերազմի արդյունքում երկրում և առհասարակ տարածաշրջանում ստեղծվել է անկայուն քաղաքական և տնտեսական իրավիճակ, ինչի հետևանքով զգալիորեն նվազել է արտաքին ներդրումների դաշտը, զգալիորեն կրճատվել է զբոսաշրջության մա-

կարդակը: Ակնհայտ է, որ այդ գործոնները մինչ այսօր շարունակում են իրենց բացասական ազդեցությունը թողնել երկրի տնտեսական զարգացման ցուցանիշների վրա:

դ) Բնապահպանական հետևանքները.

Ցանկացած պատերազմ իր հետքն է թողնում շրջապատող միջավայրի վրա: Դրանով իսկ պատերազմի բնապահպանական հետևանքների դիտարկումը առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում պատերազմի սոցիոլոգիական վերլուծության շրջանակներում: Այս գործոնի ուսումնասիրությունը հատկապես արդիական է ժամանակակից պատերազմների հետևանքների քննարկման ենթատեքստում, քանի որ ռազմական զենքի կատարելագործման պայմաններում պատերազմի սուբյեկտները կարող են այլևս անդառնալի հետևանքներ առաջացնել շրջակա միջավայրի վրա: Բերենք օրինակ. 1994թ–ին իրաքյան զինված ուժերի կողմից նախաձեռնվեց հինգ միլիոն բարրել նավթի արտանետում Պարսից ծոց, որի արդյունքում վնասվեցին Քուվեյթի խմելու ջրի պաշարները, աղտոտվեցին լողափները, արգելվեց ձկնորսությունը և այլն: Դրանով իսկ պատերազմն իր բացասական հետևանքներն ունեցավ տվյալ էկոհամակարգի վրա:

ե) Քաղաքական հետևանքները.

Ցանկացած պատերազմի հիմքում դրված խնդիրները, պատերազմի վարման միջոցները, իսկ արդյունքում և հետևանքները քաղաքական բնույթ ունեն: Այս իրողությունը պայմանավորված է նրանով, որ որպես պատերազմի սուբյեկտներ հաճախ հանդես են գալիս այն սոցիալական միավորումները, որոնք միևնույն ժամանակ նաև քաղաքականության սուբյեկտներ են: Դա է պատճառը, որ պատերազմի արդյունքում տեղ գտնող քաղաքական հետևանքներն անխուսափելի են: Ժամանակակից պատերազմներում, երբ պատերազմի սուբյեկտների փոխկապվածությունը գնալով աճում է, պատերազմի արդյունքում տեղ գտնող քաղաքական հետևանքներն ավելի նկատելի են դառնում: Խոսելով պատերազմի քաղաքական հետևանքների մասին՝ կարելի է վերջիններս դիտարկել եր-

կու հիմնական հարթություններում՝ ներքին քաղաքականության և արտաքին քաղաքականության: Պատերազմի արդյունքում առաջացող ներքին քաղաքական հետևանքները կարող են դրսևորվել կառավարող վերնախավի, պետության կառավարման համակարգի, քաղաքական ռեժիմի, քաղաքական մշակույթի փոփոխության միջոցով: Պատերազմի արդյունքում կարող է փոփոխվել նաև սուբյեկտների արտաքին քաղաքական կապերի բնույթը, միջպետական կոալիցիաներում և կազմակերպություններում սուբյեկտների դերակատարումները: Այսպիսով՝ կախված պատերազմի սուբյեկտների և պատերազմի հիմքում դրված հիմնախնդիրների արանձնահատկություններից, պատերազմը կարող է ունենալ ինչպես տեղային, այնպես էլ տարածաշրջանային կամ գլոբալ քաղաքական հետևանքներ:

զ) Հոգեբանական հետևանքները.

Պատերազմը, հոգեբանական տեսակետից, իրենից ներկայացնում է բազմաբնույթ տրավմատիկ սթրես, որն ազդում է հասարակության, այս կամ այն սոցիալական միավորումների հոգեբանության և հոգեկան առողջության վրա: Պատերազմն իր հոգեբանական հետևանքներն է թողնում ինչպես պատերազմում անմիջական մասնակցություն ունեցող անձանց, այնպես էլ ողջ հասարակության վրա: Առաջին դեպքում՝ պատերազմի ազդեցությունը զինվորների հոգեբանության վրա պայմանավորվում է այնպիսի զործոններով, ինչպիսիք են, օրինակ, ընկերների, բարեկամների և ազգի մի մասի կորուստը, մահվան կամ վնասվածքներ ստանալու անմիջական վտանգը (կյանքի և մահվան միջև «սահմանային իրավիճակ»), սպանելու անհրաժեշտությունից ծնված հոգեկան ցնցումները, ֆիզիկական և հոգեկան վնասվածքները և այլն: Ինչ վերաբերում է պատերազմի ընդհանուր հոգեբանական հետևանքներին, ապա դրանք կարող են դրսևորվել, կոլեկտիվ հոգեբանական տրավմաների առաջացմամբ, հասարակության մեջ ազդեցիվ վարքի և բռնությունների առաջացմանը նպաստող հոգեբանական մթնոլորտի ձևավորմամբ և այլն: Պատերազմի հոգեբանական հետևանքների դիտարկումը

կարևոր նշանակություն ունի նաև հետպատերազմյան փուլում սուբյեկտների փոխհարաբերությունները հասկանալու տեսանկյունից: Դա պայմանավորված է նրանով, որ պատերազմի ընթացքում սուբյեկտների մոտ ձևավորված բացասական դիրքորոշումների, կարծրատիպերի հաղթահարումը, համարվում է խաղաղության հաստատման հիմնական նախապայման:

Պատերազմի սոցիալական սանկցավորումը: Հայտնի է, որ պատերազմական գործողությունների ծավալման որոշումը, առաջին հերթին, ձևավորվում և հասունանում է հասարակության ներսում: Դա նշանակում է, որ ցանկացած պատերազմ սկսվում է քարոզչությունից, որի օգնությամբ հնարավոր է դառնում պետություններին, տարբեր սոցիալական խմբերին, ինչպես նաև միջազգային համրությանը հիմնավորել պատերազմի անհրաժեշտության և անխուսափելիության գաղափարը: Դրանով է մեծապես պայմանավորված սոցիոլոգիայի շրջանակներում պատերազմի որպես սոցիալապես սանկցավորված երևույթի ընկալման կարևորությունը, որը օգնում է հասկանալ, թե ինչու պատերազմը, լինելով մարդկային և սոցիալական աղետ, միևնույն ժամանակ ուղեկցել է մարդկությանը իր զարգացման բոլոր փուլերում:

Հասարակական կարծիքի ձևավորման տարբեր մեխանիզմների կիրառումը պատերազմի սուբյեկտների կողմից վերջին հաշվով ուղղված է պատերազմի սոցիալական աջակցության ձեռքբերմանը, հասարակության կոնսոլիդացմանը, ռազմական ոգու բարձրացմանը, ինչպես նաև հասարակության սոցիալ-քաղաքական կայունության ապահովմանը: Մասնավորապես հասարակության կողմից պատերազմի դրական սանկցավորման դեպքում, այն սկսում է ընկալվել որպես հակասությունների լուծման օրինական և միակ հնարավոր միջոց: Այսպիսով պատերազմի սանկցավորումը կարևոր սոցիալական գործառույթ է իրականացնում նպաստելով հասարակության տարբեր խմբերի կողմից դիմադրողական վարքի դրսևորումների (բողոքի ակցիաներ, փախուստ պարտադիր ծառայությունից և

այլն) կրճատմանը: Հետևաբար՝ պատերազմական իրավիճակներում, երբ հասարակության համախմբվածությունը և ներքին կոնֆլիկտների բացակայությունը դառնում են հաջողության հասնելու գրավական, սոցիալական աջակցության ապահովումը կարող է որոշիչ նշանակություն ունենալ: Պատերազմի սոցիալական սանկցավորման միջոցների օգտագործումը նաև կարևոր արտաքին գործառույթ ունի, քանզի այն ուղղված է նաև հակառակորդ խմբի ռազմական և սոցիալական ներուժի թուլացմանը: Դա հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ անընդմեջ շեշտվում են սեփական խմբի ռազմական ձեռքբերումները և հաջողությունները, բացասական տեղեկություններ են տարածվում թշնամու ռազմական ներուժի, կորուստների և անհաջողությունների վերաբերյալ, հակառակորդի գործողությունները որակվում են որպես «ամնարդկային», առանձնակի բռնությամբ և դաժանություններով լի, երբ սեփական խմբի գործողությունները ներկայացվում են որպես ռազմական անհրաժեշտությունից դրդված ճարահատյալ քայլեր և այլն: Պատերազմական իրավիճակում այս միջոցների կիրառումը ի վերջո ուղղված է սեփական դրական կերպարի ձևավորմանը և հակառակորդ կողմի մասին «թշնամու կերպարի» ձևավորմանը: Ըստ էության, սոցիալական սանկցավորման մեխանիզմների կիրառումը պատերազմում նպաստում է նաև պատերազմում սուբյեկտների վարքը կարգավորող բարոյական և իրավական նորմերի ձևավորմանը:

4.2 Պատերազմական նորմերը և պատերազմական հանցագործությունները

Պատերազմի նորմերը գալիս են հնագույն ժամանակներից և զարգացել են երկու հիմնական ուղղություններով: Առաջինը հետևել է ասպետության մասին միջնադարյան հասկացությանը, որն այսօր դրսևորվում է հաճախակի խախտվող այն կանոնների մեջ, որոնք արգելում են պատերազմ սկսել՝ առանց հրապարակայնորեն պատե-

րազմ հայտարարելու, օգտագործել հակառակորդի համազգեստը և տարբերանշանները և այլն:

Երկրորդ և ավելի կարևոր ուղղությունը վերաբերում է պատերազմի ավերածություններին և անտեղի դաժանությունների սահմանափակմանը: Հնագույն գրական ու պատմական աղբյուրները լի են ասպատակումների ու ջարդերի նշովումներով: Ավելի ուշ ժամանակներում, ինչպես կրոնական հումանիզմը, այնպես էլ առևտրական դասի ընդդիմությունն առևտրական կապերի անտեղի քայքայմանը, ուղի հարթեցին պատերազմի նորմերի զարգացման և հաստատման համար: 17-րդ դարում այս գաղափարներն իրենց արտահայտությունը գտան ժամանակի գրավոր աղբյուրներում, հատկապես հոլանդացի իրավաբան-փիլիսոփա Յ. Գրոտիուսի գործերում: Ավելի ուշ 18-րդ դարում, ռազմական համակարգի զարգացումը հանգեցրեց զինվորական դատարանների ստեղծմանը, որոնք կոչված էին քննել զինվորների ու սպաների կողմից թույլ տրված պատերազմի նորմերի խախտումները և այլ իրավախախտումներ: 1863թ. ԱՄՆ-ի այն ժամանակվա նախագահ Աբրահամ Լինքոլնը հաստատեց «ԱՄՆ-ի զինված ուժերի կառավարման դաշտային իրահանգներ» ("Instructions for the Government of Armies of the United States in the Field") փաստաթուղթը⁷⁰: Այն ներառում էր 159 հոդված, որոնք շրջանառության մեջ էին մտցնում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք էին ռազմական անհրաժեշտություն, հակառակորդ երկրի բնակիչների հանդեպ հանցագործությունների պատժում, պատերազմի գերիներ, լրտեսներ և այլ⁷¹:

⁷⁰ Հիշյալ ժողովածուի հեղինակը նապոլեոնյան պատերազմների վետերան գերմանացի Ֆ. Լիբերն էր, որը փոխադրվել էր ԱՄՆ և դարձել Կոլումբիայի համալսարանի իրավունքի և քաղաքական գիտությունների պրոֆեսոր:

⁷¹ Արևմտյան գրականության մեջ օգտագործվում են նշվող հասկացությունների հետևյալ անգլերեն համարժեքները. "military necessity" (ռազմական անհրաժեշտություն), "punishment of crimes against the inhabitants of hostile countries" (հակառակորդ երկրների բնակիչների հանդեպ հանցագործությունների պատժում), "prisoners of war" (պատերազմի գերիներ), "spies" (լրտեսներ):

Հաագայի և Ժնևի համաձայնագրերը: Ղրիմի և 1870թ. ֆրանս-պրուսական պատերազմների ընթացքում Եվրոպայում հասունացավ պատերազմի նորմերին ավարտում տեսք տալու ծագումը: Միաժամանակ, անհրաժեշտ էր միջազգային համաձայնագրերով ամրապնդել դրանց իրավական ուժը: Այս շարժման մեծագույն արդյունքը եղավ համաձայնագրերի այն շարքը, որն այսօր հայտնի է Հաագայի և Ժնևի համաձայնագրեր անուններով: Այս համաձայնագրերի մեջ ամենակարևորները 1907թ. Հաագայի չորրորդ համաձայնագիրը և պատերազմի գերիների, Կարմիր խաչի և քաղաքացիական ազգաբնակչության պաշտպանության մասին Ժնևի 1929 և 1949թթ. համաձայնագրերն են:

Հաագայի չորրորդ համաձայնագրի 22-րդ հոդվածում նշվում է, որ պատերազմող կողմերի՝ թշնամուն ոչնչացնելու իրավունքն անսահմանափակ չէ: Այնուհետև, գալիս են հոդվածներ, որոնք դնում են մի շարք սահմանափակումներ, օրինակ՝ «գերի հանձնված զինվորները չպետք է ոչնչացվեն», «մրանք պետք է գերի վերցվեն», «գրավված քաղաքները և գյուղերը չպետք է ավերվեն», «չպաշտպանված տեղանքները չպետք է ոմբակոծվեն», «արգելվում են թունավոր զենքերի և այլ միջոցների օգտագործումը, որոնք կարող են ավելորդ տառապանքներ պատճառել»: Հիշատակվում են այլ սկզբունքներ ևս, որոնք սահմանում են, որ պատերազմական գործողություններ վարելը թույլատրելի չէ պատերազմի մեջ գտնվող երկրների ազգաբնակչության հանդեպ:

Միայն զինված ուժերն են, որ կարող են պաշտպանվել պատերազմական նորմերով, և եթե զինված ուժերը չներկայացնող, քաղաքացիական ազգաբնակչության ներկայացուցիչը իրականացրել է թշնամական գործողություն ընդդեմ հակառակորդի, նա ճանաչվում է մեղավոր: Երբ բանակը շրջափակում է թշնամու տարածքը, նա պետք է հաստատի հասարակական կարգ ու կանոն և հարգի «ընտանիքի պատիվն ու իրավունքները, քաղաքացիների կյանքը, մասնավոր սեփականությունը, ինչպես նաև՝ կրոնական հավատն ու արարողությունները»:

Գերիների հանդեպ պահանջները և վիրավորների ու հիվանդների պաշտպանությունն ամրագրված են ժնկի համաձայնագրում: Չնայած գոյություն չունի ռազմա-ծովային ուժերին վերաբերող համաձայնագիր՝ սակայն Հաագայի իններորդ համաձայնագիրն արգելում է ռազմական առումով չպաշտպանված նավահանգիստների ռմբակոծումները, իսկ Լոնդոնի 1930թ. համաձայնագիրը դատապարտում է առևտրական նավերի խորտակումը սուզանավերի կողմից այնքան ժամանակ, քանի դեռ չի ապահովվել ուղևորների և անձնակազմի անվտանգությունը: Այս բոլոր համաձայնագրերում պատերազմի նորմերը հռչակվում են որպես վարքի ընդհանուր սկզբունքներ, և չեն նշվում պատիժներ դրանց խախտման համար: Այնուամենայնիվ, այս սկզբունքները ներառվել են շատ երկրների զինվորական նորմերի ցանկի մեջ և հաճախ շարադրվում են ընդհանուր կարգադրությունների, հրահանգների ձեռնարկների և այլ պաշտոնական փաստաթղթերում: Օրինակ՝ Միացյալ Նահանգներում Ֆ. Լիբերի 1863թ. հիշատակված կանոնները փոխարինվել են 1914թ. ռազմա-դաշտային ձեռնարկով, որը մասնակիորեն դեռևս ուժի մեջ է՝ «Ցամաքային պատերազմական գործողությունների օրենք» անվանումով⁷²: Նմանատիպ ժողովածուներ են հրատարակվել նաև Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և եվրոպական այլ երկրների զինվորական գերատեսչությունների կողմից: Այս փաստաթղթերը և այն համաձայնագրերը, որոնց վրա դրանք հիմնվում են, ձևավորում են միջազգային կիրառում ունեցող այն կառույցը, որը հայտնի է «պատերազմի օրենքներ» անվանումով:

Պատերազմի օրենքների կիրառումն Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի պարտությունից հետո դաշնակիցները պահանջեցին, որ պատերազմական հանցագործությունների մեջ մեղադր-

⁷² Stb Department of the Army Field Manual FM 27-10, *The Law of Land Warfare*, 1956 (երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սույն օրենքի 1940թ. հրատարակությունը դեռևս ուժի մեջ էր):

վող ավելի քան 900 գերմանացի դատի տրվեն՝ պատերազմական հանցագործությունների մեղադրանքով: Գերմանացիներն ընդդիմացան այս պահանջին՝ հիմնավորելով, որ պատերազմական հանցագործություն կատարած զինվորականները պետք է դատվեն սեփական երկրում: Վերջիվերջո, նրանց թույլատրվեց դատել գերմանացի պատերազմական հանցագործներին և 1921–1922թթ. նրանց դատավարություններն իրականացվեցին Լայպցիգում գտնվող Գերմանիայի գերագույն դատարանի կողմից: Դաշնակիցների և արտաքին աշխարհի տեսանկյունից դրանք տապալված դատավարություններ էին, քանի որ պատերազմական հանցագործների մի փոքրիկ խումբ դատի տրվեց, և համարյա բոլորը խուսափեցին ծանր դատավճիռներից: Այդքանով հանդերձ գերմանական դատարանը հաստատեց, որ պատերազմի նորմերի խախտումները պատժելի են:

Պատերազմի նորմերի կիրառումը Երկրորդ համաշխարհային պատերազմում: Քսան տարի անց՝ 1939թ. ավարտին, Վատիկանի ռադիոն տեղեկացրեց, որ հարյուրավոր լեհ հոգևորականներ մահապատժի են ենթարկվել Զ. Զիմլերի էսէս միավորումների կողմից: 1940թ. սկզբին Բեռլինում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը տեղեկացրեց Գերմանիայի հրեաների Լեհաստան արտաքսման մասին: 1940թ. Արևմտյան Եվրոպայի երկրների և 1941թ. Զարավսլավիայի և Գոմաստանի բռնազավթումների ընթացքում տեղի ունեցավ հազարավոր կանանց ու տղամարդկանց տեղահանում՝ գերմանական զործարաններում ու հանքերում որպես աշխատուժ օգտագործելու համար: Խորհրդային Միության վրա հարձակումից հետո հայտնի դարձան գերմանական հրամանատարության հրամանները, որոնցում տեղացի ազգաբնակչությանը և գերիներին սննդի մատակարարումը համարվում էր անտեղի մարդասիրություն: 1941թ. հոկտեմբերի 25–ին, ի պատասխան այս իրադարձությունների, Ֆ. Ռուզվելտը և Ու. Չերչիլը դատապարտեցին գերիների մահապատիժները բռնազավթված երկրներում, իսկ 1942թ. հունվարի

13-ին ընդունվեց «Սենթ Ջեյմսի հռչակագիրը»⁷³: Հռչակագիրը ստորագրողները, դատապարտելով Գերմանիայի կողմից հաստատված տեռորի ռեժիմը, միաժամանակ մերժում էին, այս դաժանությունների օգտագործումը գերմանացիների հանդեպ: Շեշտվում էր, որ քաղաքակիրթ աշխարհին հատուկ արդարության զգացումը պահանջում է, որ հռչակագիրը ստորագրող պետություններն իրենց պատերազմական նպատակների մեջ ունենան պատժի իրականացումը «արդարադատության համակարգված (ինստիտուցիոնալացված) կառույցների միջոցով»:

1943 թվականին, Մեծ Բրիտանիայի և 15 այլ դաշնակից պետությունների աջակցությամբ Լոնդոնում հիմնադրվեց պատերազմական հանցագործությունների գծով Միավորված ազգերի հանձնաժողովը: Հանձնաժողովի հիմնական խնդիրը պատերազմական հանցագործությունների փաստերի հավաքագրումը, մեղավոր անձանց ցուցակների կազմումը և նրանց պատասխանատվության ենթարկելու ծրագրերի քննարկումն էր: Գերմանիայի պարտության անխուսափելիության գիտակցումով սկիզբ դրվեց Նյուրնբերգյան դատավարության ձևավորմանը:

Նյուրնբերգում և Տոկիոյում ընթացան շատ հայտնի գերմանացի և ճապոնացի պատերազմական հանցագործների դատավարությունները: Դատարանները ստեղծվել էին միջազգային մարմինների կողմից: Պատերազմական հանցագործությունների բազմաթիվ այլ կատարողներ դատվեցին ստեղծված ռազմական դատարաններում:

1948թ. տվյալների համաձայն՝ պատերազմական հանցագործությունների համար դատվել էին շուրջ 3500 հոգի Եվրոպայում և 2800 հոգի Հեռավոր Արևելքում⁷⁴: 1945-ից 1950թթ. պատերազմի նորմերի խախտումների և պատերազմի գերիների և բռնազավթված երկր-

⁷³ 1942թ. հունվարի 13-ին Սենթ Ջեյմսում տեղի ունեցավ պատերազմական հանցագործությունների պատժի խնդիրներին նվիրված համաժողով, որին մասնակցեցին գրավված երկրներից փախուստի դիմած կառավարությունների ներկայացուցիչները: Նրանք ընդունեցին հայտարարություն, որը հայտնի դարձավ «Սենթ Ջեյմսի հռչակագիր» ("Declaration of St. James") անունով:

⁷⁴ Այս թվերը չեն ընդգրկում խորհրդային Միությունում և Չինաստանում դատվածներին:

ների ազգաբնակչության իրավունքների ոտնահարման մեղադրանքներ են ներկայացվել 10000 անձանց: Մինչև այժմ էլ նման մեղադրանքներ ներկայացվում են: Այս դատավարություններն առնչվում են:

Մենք անդրադարձանք պատերազմի նորմերի ձևավորման ավելի քան հարյուր տարվա պատմությանը, որի ընթացքում դրանք ընկալվում էին որպես վարքի չգրված կանոններ: Հետագայում դրանք ավելի հստակորեն ձևակերպվեցին միջազգային համաձայնագրերում և զինվորական դատարանների որոշումներում, որոնք ընդունված էին այդ նորմերի պաշտպանության համար: Սակայն այսօր էլ պատերազմի նորմերը շատ առումներով մնում են անորոշ ու վերջնականապես չսահմանված:

Պատերազմի նորմերի կիրառման դժվարությունները: Պատերազմի նորմերի կիրառումը միշտ էլ եղել է դժվար, ցավագին և ոչ սահուն: Պատճառը ոչ միայն այն է, որ նոր զինատեսակներ են առաջանում, այլ նաև, որ նորմերի ու կանոնների ընդունված ձևակերպում և դրանց խախտման համար հստակորեն ամրագրված պատիժ այսօր չկա, ինչը թելադրված է հենց պատերազմի էությանը: Պատերազմի օրենքները խախտողները անհատները պատերազմական հանցագործություններ են կատարում՝ սեփական կյանքը փրկելու համար, կառավարությունները, նույն կերպով, միակողմանիորեն դուրս են գալիս միջազգային համաձայնագրերից և ազատվելով միջազգային պարտադրվող նորմերին ենթարկվելու անհրաժեշտությունից, եթե դա օգնում է սեփական գոյությունն ու շահերը ապահովելուն: Բացի այդ, լինելով ծայրահեղություններով ու բռնարարքներով բնութագրվող գործողություն՝ պատերազմը չի սահմանափակվում միայն այն միջոցներով, որոնք թույլատրելի են: Ավելացնենք նաև, որ նոր զինատեսակների արագ զարգացման փաստը, որոնց կիրառումը և որոնցից պաշտպանվելու ձևերը հաճախ անհամատեղելի են նախկինում հարգված նորմերի հետ:

«Ռազմական անհրաժեշտություն»: Նորմերի կիրառման համար կարևոր նախապայման է «ռազմական անհրաժեշտության» ձևակերպումը: «Ռազմական անհրաժեշտություն» հասկացության անդրանիկ ձևակերպումը տվել է Ֆ. Լիբերը 1863թ: Ըստ այդ բնորոշման, «ռազմական անհրաժեշտություն» հասկացությամբ ամբողջացվել են այն միջոցները և դրանց կիրառման ձևերը, որոնք անհրաժեշտ են պատերազմի նպատակին հասնելու համար: Ամերիկայի Միացյալ Նահանգների զինված ուժերի դաշտային ձեռնարկները մանրամասնում են այդ բնորոշումը: Մասնավորապես, 1917թ. ձեռնարկի տարբերակը բնութագրում է հետևյալ սկզբունքները. 1) պատերազմող կողմերը կարող են կիրառել ցանկացած միջոց, որն անհրաժեշտ է պատերազմական կարիքների համար, 2) բռնությունների բոլոր այն տեսակներն ու աստիճանները, որոնք անհրաժեշտ չեն պատերազմի նպատակների համար, չեն կարող կիրառվել մասնակիցների կողմից, 3) ասպետության սկզբունքը, որը պահանջում է ազնվություն և հավակառակորդների փոխադարձ հարգանք:⁷⁵ Նշված սկզբունքների համակցությունը սահմանում է՝ եթե ուժի գործադրումն անհրաժեշտ է, ապա այն օրինական է, եթե անհրաժեշտ չէ, ապա անօրինական է:

1940թ. ձեռնարկը էական տարբերություններ չունի 1917թ. ձեռնարկից և դրա 1956թ. վերահրատարակված ձեռնարկում նշվում է, որ պատերազմող կողմերը չպետք է կիրառեն բռնության այնպիսի ձևեր, որոնք ռազմական կարիքների համար իրականում անհրաժեշտ չեն: Այլ կեղծ պատճառներով պատերազմի նորմերը չեն բնութագրում «ռազմական անհրաժեշտություն» հասկացությունը, այլ խոսում են այն սկզբունքի մասին, որն արդարացնում է այն միջոցների կիրառումը պատերազմում, որոնք չեն արգելվում միջազգային օրենքներով⁷⁶:

⁷⁵ Rules of Land Warfare, War Department Doctrine No. 467, Office of the Chief of Staff, approved April 25, 1914 (U.S. Government Printing Office, 1917), par 9:

⁷⁶ Department of the Army Field Manual FM 27-10, *The Law of Land Warfare*, 1956, par. 3:

Լրտեսությունը և պատերազմական նորմերի խախտումները: Հետաքրքիր են լրտեսության վերաբերող պատերազմական նորմերը, որոնց համաձայն լրտեսությունը ոչ բոլոր դեպքերում է դասվում պատերազմական հանցագործությունների շարքին: Հաագայի 1907թ. համաձայնագրի 31-րդ հոդվածում նշվում է, որ լրտեսը «այն բանակի մասն է, որին ինքը պատկանում է» և հակառակորդի կողմից գերվելու դեպքում նա պատասխանատվություն չի կրում նախկինում կատարած լրտեսության համար»:

4.3 Ինքնագոհողությունը սանկցավորող մշակութային մոդելը Հայաստանում

Մահապարտության արձատներն անցյալում են և կապվում են էթնիկ խմբերի կենաց–մահու պայքարի հետ: XX դարի վերջին ինքնագոհողությունը լայն գործածության մեջ է խորայելա–պաղեստինյան հակամարտության գոտում, Քաշմիրում ու Շրի–Լանկայում: Բոլորովին վերջերս՝ 2001թ. սեպտեմբերի 11-ին, այն նշանավորեց իր մուտքն Արևմուտք, որի մշակույթի տեսանկյունից, մահապարտությունն անհամատեղելի է համարվում քաղաքակիրթ վարքի հետ: Այն հաճախ որակվում է որպես կույր ֆանատիզմի դրսևորում, բարբարոսություն, ակաբեկչություն:

Սուտ 10 տարի դրանից առաջ 1992-ին, անսպասելիորեն Հայաստան էր վերադարձել հեռավոր պատմությունը ինքնագոհողության և մահապարտության անհրաժեշտության գիտակցումով: Մեր գոյապայքարի օրհասական պահին 1992թ. օգոստոսի 15-ին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը ելույթ ունեցավ ՀՀ հեռուստատեսությամբ և նկարագրելով ղարաբաղյան ճակատում տիրող կացությունը ասաց հետևյալը. «...վաղը չէ մյուս օրը, ընդամենը վաղը չէ մյուս օրը թող Հայաստանի յուրաքանչյուր շրջանից, յուրաքանչյուր քաղաքից ընդամենը 10–15 տղա գա, և մենք կունենանք 500 հոգա-

նոց մահապարտների զորագունդ: Խնդրում եմ ինձ ճիշտ հասկանալ. զորագունդը պիտի կռվի ամենավտանգավոր տեղում, ուր ապրել-մեռնելու հավանականությունը 50 տոկոս է՝ 50 տոկոսի նկատմամբ»:

Նշված ժամանակում շուրջ 500 հոգի հավաքվեցին պաշտպանության նախարարությունում: Ընտրվեցին 217 հոգի, որոնցից կազմավորվեց մահապարտների «Արծիվ» զորագունդը: Այն ներկայացնում էր ազգաբնակչության բոլոր շերտերը՝ բժիշկներ, գյուղատնտեսության բնագավառի աշխատողներ, գիտնականներ, բանվորներ, դասախոսներ, ինժեներներ, ուսուցիչներ: Ջորագունդը ոչ միայն կատարեց իր մարտական առաջադրանքը, այլև վերադարձրեց հայ մշակույթի մեջ հայտնի ինքնագոհողության գաղափարը և, օրինակ դարձած բարոյականության դրսևորմամբ, վճռական դեր խաղաց Ղարաբաղի շուրջ հակամարտության ընթացքի և ելքի որոշման մեջ: Տարիներ անց՝ 2002թ-ին, զորագնդի անդամներից մեկը, որը փորձում էր իմաստավորել իր անցած ուղին ու մահապարտության երևույթը, գրել է հետևյալը. «Տեղեկատուների ու գեղարվեստական երկերի մեջ մահապարտների մասին տեղեկությունները շատ աղքատիկ, իսկ ավելի հաճախ՝ միակողմանի են: Ինքնագոհողության կամ ինքնասպան գրոհների միակ պատճառը անվանվում է ֆանատիզմը: Բայց այդ շատ հասարակ և պրիմիտիվ բացատրությունը չի համապատասխանում իրականությանը և ճշտորեն չի բացահայտում ինքնագոհողության երևույթի էությունը պատմական, սոցիալական, քաղաքական և հոգեբանական տեսանկյուններից»:

Մահապարտության երևույթը հասկանալու համար բերենք որոշ փաստեր: Հին Աշխարհի շատ երկրներում ինքնագոհողությունը նախօրոք ծրագրավորվել է և համարվել առանձնահատուկ զինվորական մարտավարություն: 1944–45թթ. խաղաղօվկիանոսյան պատերազմական թատերաբեմում արևմտյան գիտության վրա հիմնվող ռազմական մորամուծություններին ճապոնիան հակադրեց իր ազգամշակութային գերիշխող երևույթը՝ կամավոր մահը,


որ շարունակությունն էր ինքնագոհողության երկարատև ավանդույթի⁷⁷:

Ինքնագոհողության դիմողները ոգեշնչվում էին, արձագանքում անցյալի ու կարծրատիպային վարքի կանչին ու կատարում իրենց պարտքը՝ վերարտադրելով ինքնաանտեսման, ճակատագրին հնազանդվելու, ինքնաանհայտացման այն վարքականոնն ու արժեքները, որոնք բնութագրում են ավանդույթը:

Այսօր էլ, առավելապես Հեռավոր Արևելքի հասարակություններում ու զինվորական ուժի մեջ է, որ ինքնագոհողությունը կամ «կամավոր մահը», համակարգվում է, դառնում հասարակության արժեքների կուտակման, նրա սոցիալական ու մշակութային միասնականացման միջոց և պատերազմի վարման հատուկ մարտավարություն: Մեզ համար կարևոր է հասկանալ հայ մահապարտների «ինքնագոհողության մղումը», ինքնագոհողության պատմա-մշակութային, արժեքային ու նորմատիվային պայմանավորվածությունը, որը մերօրյա մահապարտության երևույթի համար հիմք է դարձել: Հասկանալու համար անդրադառնանք հայ մահապարտների կենսագրություններին, որոնք հետազոտվել են մեր՝ վերջերս անցկացված ռազմասոցիոլոգիական հետազոտության ընթացքում:

Ինքնագոհողության դրդապատճառները: Ռազմասոցիոլոգիական հետազոտության արդյունքները պատկերացում են տալիս հայ մահապարտների ինքնագոհողության դրդապատճառների մասին (տես աղյուսակը):

⁷⁷ Նշված հարցի կապակցությամբ ավելի մանրամասն տես «Կամավոր մահ: Միջնադարյան և արդի ճապոնիայի զինվորական ավանդույթի էթնոմշակութային վերլուծություն» հոդվածը:



Ինչպես տեսնում ենք, օրինակները վկայում են ազգի գոյության վտանգվածության դրդապատճառների գերակայության մասին, ինչը բնական է, քանզի մահապարտությունը միշտ էլ ենթադրել է ինքնաանտեսում ու ես-ի մերժում հանուն մշակութային, կրոնական կամ ազգային ինքնության խմբի ապահովության: Ազգային հակամարտություններում ինքնության խմբի գործոնի կարևորությունը շեշտում է ամերիկացի բախումնաբան Դենիս Սանդոլը: Համաձայն նրա՝ ավերիչ ազգային հակամարտությունների մեջ ընդգրկված հիմնական մարդկային պահանջմունքներն այն գոյաբանական գործոններն են, որոնք անդրադառնում են մշակույթի և անձի վրա: Նրանք պարտադիր են նույնականացման խմբի, ես-ի և տեսակի գոյատևման համար: Հետևաբար այստեղ կա կարևոր կենսաբանական տարր⁷⁸: Այնուհետև նա շարունակում է. «Անկախ արգելքներից՝ մարդիկ ձգտում են իրենց պահանջմունքների բավարարմանը, նույնիսկ այն աստիճան, որ մյուսների կողմից բնութագրվում են որպես շեղ-

⁷⁸ Sandole, Dennis J.D. Capturing the Complexity of Conflict: Dealing with Violent Ethnic Conflicts of the Post-Cold War Era. Pinter, London, 1999, p. 138.

վող վարքի տեր, հանցագործ կամ ահաբեկիչ»⁷⁹։ Այս առումով Ջ. Վոլքերը նշում է, որ շատերի համար «...ինքնության կոնֆլիկտա-ծին զգացումն անհաշտվողական է... Շատ դժվար է համաձայնու-թյան գալ ինքնության կոնֆլիկտածին զգացման հետ»։

Սույն մոտեցումը որոշակիորեն հստակեցնում է հայ ազգային տարրի մոտ նույնականացման, «ինքնության խմբի վերացման վախի» ու նրա ապահովության պահանջի սրված դրսևորումները։ Առա-վել ևս. նյութին առնչվող օտարալեզու գրականության մեջ հիշա-տակվում է նաև հայ ազգային տարրը։

Համաձայն 1987թ. աշխարհի 25 երկրներում իրականացված էթ-նիկական և կրոնական հակամարտությունների Դոն Պոդեստրայի վերլուծության «...այս աճող հակամարտություններն արտացոլում են խմբի նույնականացման հաստատման պահանջը և հանդես գա-լիս մեկ յուրահատուկ զգացողության՝ «խմբի վերացման վախի» մեջ»⁸⁰։ «Խմբի վերացման վախը, — գրում է Դենիս Սանդոլը, — հիմ-քեր ունի իրականության մեջ։ Միլիոնավոր հայերից, հրեաներից, Ամերիկայի բնիկներից ու մյուսներից բացի, որոնք ենթարկվել են ցե-ղասպանության 1945թ.-ից առաջ, աշխարհում եղել են ցեղասպա-նության 44 դեպքեր 1945թ.-ից ի վեր՝ 7-ից 16 միլիոն զնահատվող զոհերի թվով»։ «Ակնհայտ է, որ ցեղասպանությունները սեփական «ինքնության խմբի» անվտանգության ապահովման դաժան փորձեր են ի հաշիվ այլ խմբերի»⁸¹։

Այս առումով, հայ մահապարտների ինքնագոհողության դր-դապատճառների մեջ «մեր գոյության վտանգվածություն» հանգա-մանքի ընդգծումն ունի կենտրոնական դեր և իրենից ներկայացնում է հիշատակված «խմբի վերացման վախի» դրսևորումը հայ իրակա-նության մեջ։

⁷⁹ Նույն տեղում, էջ 139։

⁸⁰ Մեջբերումն ըստ Sandole, Dennis J.D., *Capturing the Complexity of Conflict: Dealing with Violent Ethnic Conflicts of the Post-Cold War Era*. Pinter, London, 1999, p. 139.

⁸¹ Sandole, Dennis J.D., *The Biological Basis of Needs in World Society: the Ultimate Micro-Macro Nexus*. In: *Conflict: Human Needs Theory*, John W. Burton (ed.). New York: St Martin's Press, 1990, p. 63.

Պատմական հայրենիքի կորուստը, և ազգային գիտակցության մեջ ողբերգության ու վերքի ընդգծումը: Քրիստոնյա Արևելքում առանձնահատուկ է կապվածությունը հայրենի տան ու նախնիների հետ: Առանձնահատուկ է և բաժանումը հայրենի հողից ու հարազատ տնից: Տունն Արևելքում ժամանակակից ուրբանիզացիոն կենտրոնների բնակարանը չէ, որն ունի զուտ գործառնական իմաստ, և որը կարելի է հաճախակի փոխել կամ վաճառել: Այն անցյալից մնացած պաշտամունքային արժեք է, հոգևոր կենտրոն՝ կապված այս կամ այն անհատի՝ նախահոր անվան հետ: Հայաստանում նախնիներից մնացած տունն ունի միավորող արժեքի նշանակություն՝ ընդհանուր նախահայր ունեցող ազգային կամ բարեկամական խմբի համար և, հետևաբար՝ յուրահատուկ է ապրվում նաև բաժանումը հայրենի տնից ու հողից:

Հատկապես վերջին դարերում հայերը կորցրել են իրենց աշխարհագրական ու պատմամշակութային տունը: Ներկայումս այն ամբողջ պատմական ու մշակութային աշխարհի մեծ մասը՝ Հայաստանի հնագույն մայրաքաղաքներ Անին ու Դվինը, Վանա լիճը, Աղթամար կղզին, քրիստոնեության ընդունման հետ կապված Արածանին (նրա ջրերով հայերը քրիստոնյա են մկրտվել), Հայաստանի հնագույն խորհրդանիշ աստվածաշնչյան Արարատ լեռը, որոնց միջոցով ձևավորվում է մեր ազգային ինքնության զգացումն ու նույնականությունը, այժմ Հայաստանի սահմաններից դուրս են: Հոգևոր կենտրոնների ու խորհրդանիշների այս կորուստը բերել է ազգամշակութային գիտակցության կոլմնորոշում դեպի անցյալը ու նրա մեջ ողբերգության ու կորստի ընդգծում: Երևանում գտնվող ցեղասպանության զոհերի հուշարձանը դարձել է Հայաստանի խորհրդանիշն ու ազգային գիտակցության անբաժանելի մասը: Կորուստն ու ազգային գիտակցության մեջ ողբերգության ընդգծումը հայ ինքնագոհողությունը սնող կարևոր նախապայմաններից են:

Պատմությունից հայտնի նահատակի ու ինքնագոհաբերվողի նույնացումը: Ստազբադությունն անցյալով և կորստի ու ողբերգականության այս զգացումը պայմանավորում են ինքնագոհողությունն ու մահապարտությունը հանուն ազգային-պատմական արժեքների: Այս տեսանկյունից տիպական է դարաբաղյան պատերազմին մասնակցած հայ մահապարտների զորագնդի անդամ, մասնագիտությամբ դերասան Լ.Մ-ի զոհվելու պատկերը:

1992թ. մայիսի մի պայծառ առավոտ հայոց անցյալի խորհրդանիշ Ամարասի վանքի հարևանությամբ, երբ առավոտյան օդի հստակությունն ու պարզությունն առանձնահատուկ ոգի էին հաղորդել պատմական տեսարանին ու արթնացրել հայոց պատմության շունչը, զորագնդի հիշյալ մարտիկը, արտահայտելով ընդհանուր տրամադրությունը, ասաց. «Այստեղ հայոց անցյալի հարևանությամբ, մեռնելու լավագույն վայրն է, այստեղ իսկապես արժե մեռնել»: Նա զոհվեց նույն օրը՝ ընդամենը ժամեր անց:

Ջորջ դը Վոսը՝ ասիական հասարակությունների հայտնի ուսումնասիրողը, իր «Էսսեներ ճապոնացիների մշակութային հոգեբանության մասին» աշխատության մեջ շեշտում է իր սոցիալական դերի ու պարտքի զգացման հետ ճապոնացի անհատի նույնականացման մասին⁸² (սույն մոդելի պատկերավոր ներկայացման առումով տիպական է ճապոնական միջնադարյան հայտնի մաքսիմը. «Պարտքն ավելի ծանր է, քան սարը, մահը՝ ավելի թեթև, քան փետուրը»): Ինքնագոհողության նրանց հակվածությունը, որն Արևմուտքում դիտվում է որպես հիվանդագին մի երևույթ, այնտեղ միայն հիացմունք է առաջ բերում և նշանակում սոցիալական դերի ու պարտքի լիարժեք կատարում:

Սեր հետազոտության արդյունքները վկայում են, որ հայ մշակույթի մեջ գործում է ինքնագոհության պատճառաբանվածության հետ կապված նույնականացման մի այլ մոդել, որը պայմանավորված է պատմական հայրենիքի կորստով ու տևական ազգամիջյան

⁸² Նշվածի կապակցությամբ տես George De Vos. Socialization for Achievement: Essays on the Cultural Psychology of the Japanese. Berkeley and Los Angeles, 1973.

կոնֆլիկտով: Հայ մշակույթը պատճառաբանում է ինքնագոհողություներ, մահապարտությունը և մահատակությունը, հանուն ազգային գոյապայքարի ու արժեքների պայքարելու անհրաժեշտությունը: Գործում է պատմությունից հայտնի Նահատակի ու Ինքնագոհաբերվողի դերի հետ նույնականացման մոդելը: Նույնականացումն առկա է նաև հատուցում պահանջող հայ վրիժառուի կերպարում:

«Սենթ Ջեյմսի հռչակագիրը» կամ «պատիժ արդարադատության ինստիտուցիոնալ կառույցների միջոցով»: 1942թ. հունվարի 13–ին Սենթ Ջեյմսում, բռնազավթված երկրներից փախուստի դիմած կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղի ունեցավ համաժողով, որը ընդունեց «Սենթ Ջեյմսի հռչակագիրը» (“Declaration of St. James”) պատերազմական հանցագործությունների պատժման մասին:

«Սենթ Ջեյմսի հռչակագիրը» նացիստների կողմից տեռորի ռեժիմի նկարագրումից հետո մերժում է բռնազավթված պետությունների ազգաբնակչության կողմից՝ որպես վրեժի դրսևորում, նույնատիպ դաժանությունների կիրառումը գերմանացիների հանդեպ: Շեշտվում է պատժի կարևորությունը «արդարադատության համակարգված կառույցների միջոցով»: Այս հանգամանքը, ըստ սոցիոլոգիական տվյալների, շարունակում է նաև սներ հայ մահապարտության երևույթը, քանզի արդեն շուրջ հարյուր տարի է, ինչ չեն արդարանում ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի սպասումները, թե միջազգային օրենքը կպատժի բռնացողին, չի իրականացել Սենթ Ջեյմսի «պատիժ արդարադատության ինստիտուցիոնալ կառույցների միջոցով» դրույթը:

«Մշակութային համաձայնություն» կամ հայ վրիժառություն: Այսպիսով հայ մահապարտության ու ինքնագոհողության ազգային հոգեբանական կարևոր հիմքերից մեկը 1915թ. հայերի ցեղասպանության առնչությամբ հայ մշակույթի մեջ կուտակված «լո-

կալ-մշակութային համաձայնությունն»⁸³ է: Եվ քանի որ համընդհանուր ճանաչման առարկա է այն, որ պաշտոնական կառույցները չեն պատժել բռնացողին, ուստի վերարտադրվում է լոկալ-մշակութային համաձայնությունը՝ պատժելու անհրաժեշտության շուրջ և նաև՝ կոնֆլիկտածին գիտակցությունը: «Հատուցում ստանալու մղում կա, կա 1915թ. հիշողությունը, կան գաղթի պատմությունները: Մերոնցից չես լսի ազերի բառը, միայն թուրք ես լսում ազերիների մասին, — ասում են մահապարտները, — ցեղասպանության, Սումգաիթի զոհերի ու փախստականների դեմքերն իրար հետ միանում են»: Նույն «տեղային-մշակութային համաձայնությունն» ու կոնֆլիկտածին գիտակցությունն էին պատճառաբանում 70–80–ական թթ. հայկական վրիժառությունն ընդդեմ Թուրքիայի (ահաբեկչությունը՝ համաձայն ոչ հայկական աղբյուրների): Նույն գործոնը սնել է 1992թ.–ից սկսած՝ դարաբաղյան պատերազմի մեջ հանդես եկած հայկական մահապարտությունն ու ինքնագոհողությունը, որոնց վերլուծությունը կարևոր է՝ քաղաքակիրթ անվանվող վարքի նորմերին, կանոններին չենթարկվող ազգամշակութային վարքականոնի ըմբռնման համար:

Նահատակության ոգին: Հայոց ինքնագոհողության համար, իր պատմամշակութային բովանդակության տեսանկյունից, լրացնող իմաստ ունի «նահատակություն» հասկացությունը, որն ավելի համապարփակ է դարձնում «ինքնագոհողություն» երևույթի հայկական բովանդակությունը: «Նահատակություն» հասկացությունն է, որ մերօրյա նահատակներին կապում է 5–րդ դարի Եղիշե քահանայի

⁸³ «Լոկալ-մշակութային համաձայնություն» հասկացությունը պատկանում է Ֆ. Ջակոբին: Համաձայն նրա՝ հենց «լոկալ-մշակութային համաձայնությունն» է այն բանի պատճառը, որ երիտասարդ սիցիլուիին, ինչպես թելադրում է տեղական հնագույն սովորույթը, ամուսնանում է իրեն բռնաբարողի հետ այն դեպքում, երբ օրենքը մատնանշում է այլ ուղի: Այսպիսով, Ֆ. Ջակոբին ընդգծում է ոչ ֆորմալ կազմավորման, «լոկալ-մշակութային համաձայնության» որոշիչ դերը վարքի պատճառաբանության մեջ: Սույն տեսակետները կարող են հետագա քննության և ուսումնասիրման, ընդ որում լայն պատմա-մշակութային նյութի ընդգրկմամբ:

«Մահ իմացեալ անմահութիւն, մահ ոչ իմացեալ մահ» կարգախոսի և Վարդանանց պատերազմի նահատակների հետ:

Ֆրանց Վերֆելն իր նշանավոր վեպում գրում է ամբողջ կյանքը Ֆրանսիայում ապրած կոսմոպոլիտ Գաբրիել Բագրատյանի ու նրա կես-հայ, կես-ֆրանսիացի տղայի Ստեփանի նահատակության մասին: Ցեղասպանության ողբերգությունն արթնացնում է արյան կանչը, գենետիկ հիշողությունը, և հեռավոր ու կոսմոպոլիտ Փարիզից եկած Ստեփանը նահատակվում է իր նոր հայտնագործած իր ժողովրդի հետ: Սակայն սրա մեջ, ի տարբերություն արևելյան կամավոր մահվան մոդելի՝ չկա ոչ մի ոճավորում (ստիլիզացիա), չկա ազգային ու բարոյական ժեստ: Հայ ինքնագոհողության դրսևորման՝ «նահատակության» մեջ, շեշտվում է գոյության պայքարը և քաղաքակրթությունների գոյության կռվում հայտնված ազգային խմբի ողբերգությունը, որը նահատակվում է իր գոյությունը շարունակելու համար:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ նկարիչ Վարդգես Սուրենյանցն իր «Սրբապղծված սրբավայր» կտավում պատկերում է ավանդույթի ու մշակույթի պահպան վանականի նահատակությունը (տես՝ Վ. Սուրենյանցի նկարը և հաջորդող շարադրանքը):

Հայերի մշակութային գիտակցության մեջ «ինքնագոհողություն-նահատակությունը» և ազգային ճակատագրի ողբերգական ընկալումը միահյուսված են: Դարերի ընթացքում հայ մշակույթի պահապանը եկեղեցին էր: Նվաճողները գիտեին դա և իրենց հարվածներն ուղղում էին ընդդեմ եկեղեցու: Այդպիսի մի պատկեր է ներկայացված՝ «Սրբապղծված



Վարդգես Սուրենյանց:
«Սրբապղծված սրբավայր», 1895թ.:
Հայաստանի պետական պատկերասրահ,
Երևան:

սրբավայր» կտավում: Առաջին պլանում սրբապղծված ձեռագրերն ու ծխական առարկաներն են և միայն խորքում տարածվում է նահատակված վանականի մարմինը: Ազգային-մշակութային գոյապայքարն ու նահատակությունը միահյուսված են:

Պատերազմի էթիկան և մահապարտները: Մեր ժամանակների հայ մահապարտներն իրենց համարում են պատերազմական էթիկայի ու բարոյականության պահապաններ: Ղարաբաղյան հակամարտության ընթացքում նրանք բարոյականության դրսևորում էին համարում հակառակորդի սպանված զինվորներին թաղելը: Գերիներից կազմվեցին խմբեր, որոնք, համաձայն իրենց սովորույթի, թաղում էին հակառակորդի զինվորների դիակները. տներից գորգեր, սպիտակեղեն էին հանում, դիակները փաթաթում և թաղում: Մահապարտները նշում են, որ երբեմն արգելել են լրագրողների կողմից գերի ընկած հակառակորդին լուսանկարել, եթե նա չի ցանկացել լավ իմանալով, որ հակառակորդին մատուցված հարգանքը հարգանք է սեփական անձի հանդեպ:

Ազգային հակամարտությունները խախտում են պատերազմական էթիկայի սկզբունքները, տանում հակառակորդ ազգային խմբերի կողմից միմյանց դաժան ոչնչացմանը: Սրանք պատմության խորքից եկող հակամարտություններ են, որոնց պատերազմական էթիկան անպատրաստ է դիմագրավել: Այդ առումով տիպական է մահապարտների հետևյալ բնորոշումը. «Ժնկի հռչակագիրը մեկնաբանող շվեյցարացին և մենք իրար չենք հասկանում: Օրենքներ ենք ընդունում, միջազգային համաձայնագրեր ստորագրում, բայց դարերի ընթացքում, կենաց-մահու պայքարի մեջ ձևավորվել են ազգամիջյան լարվածություն, վարքային մոդելներ ու կարծրատիպեր, որոնք մոտ ապագայում չեն կարող փոփոխվել»:

Մահապարտները որպես փակ հասարակությանը բնորոշ հատկությունների կրողներ: Մահապարտները ենթակա են եղել ինքնագոհողության ոգուն, սեփական մահվանը նայել են վերացականո-

րեն: Ինքնազոհողության այս ոգին այլևս ոչինչ չէր ցանկանում ինքն իր համար և սովորական կյանքում իր բարոյական գնահատականների մեջ, կարող է լինել ծայրահեղ: Նրանց կարծիքով պատվի, պատասխանատվության, հավատարմության, նվիրվածության զգացմունքները, մահապարտներին բնորոշ էթիկան, բարոյականությունն ու ինքնազոհողությունը, հանուն ընդհանուր գաղափարների իրենց ինքնազոհողությունը պետք է վերցվեն որպես պաշտոնական չափանիշներ: Պետք է օրինակ վերցնել այս բարոյականությունից ու սովորել պատասխանատու լինել պետության հանդեպ: Ըստ նրանց՝ սրա մեջ չկա կյանքը գաղափարայնացնելու կամ արմատականության որևէ միտում: Հայոց մահապարտությունը, նրանց կարծիքով, պարզապես սեփական ինքնության խմբի գոյապայքարի խնդիր է լուծել: Ղարաբաղյան պատերազմի մեջ կար մի ընդգծված հատկանիշ՝ ինքնազոհողությունը հանուն ընդհանուրի, որը բյուրեղացավ ի դեմս մահապարտների զորագնդի: Ղարաբաղյան պատերազմին մասնակցած և ողջ մնացած մահապարտների մտան բանակ՝ բանակին մասնակիորեն տալով այն ցուցանիշային էթիկան, որի կարիքը զգացվում էր: Կամավոր մահվան դիմող ճապոնական օդային հատուկ գնդերի հիմնադիր գեներալ Օնիսին ասում էր, թե կամավոր մահվան այդ գործողությունները, նույնիսկ ոչ անհրաժեշտ զինվորական-մարտական տեսանկյունից, սակայն կարևոր են ճապոնական ոգու ամրապնդման համար⁶⁴: Այսօր նրանցից շատերը ինչ-որ կերպ պահպանում են իրենց գոյությունը: Նրանց ներքին որակները պահպանվում են, նրանց մոտ պատասխանատվությունն արժեք է, սակայն հետպատերազմյան իրականությունն ավելի շատ արժեքավորում է անձնական, անհատական հաջողությունը, քան պատասխանատվությունը համայնքի ու երկրի հանդեպ:

Մահապարտները կրել են 1988–94թթ. գերիշխող հայրենասիրության զգացումն ու ենթակա եղել ինքնազոհողության ոգուն:

⁶⁴ Նշված հարցի կապակցությամբ տես, օրինակ Maurice Pinguet, "Voluntary Death in Japan". Cambridge: Polity Press, 1993.

Տարիներ են անցել, գերիշխող սոցիալական տրամադրությունը փոխվել է, և հիմա նրանք իրենց տեղն են որոնում սոցիալապես անհավասար ու մրցակցային հասարակության մեջ՝ հանդիպելով դժվարությունների ու ձախողումների: Սակայն որքա՞ն համոզիչ օրինակ կարող է այս պահին լինել անցյալի շրջափակված ու մաքառող Հայաստանի ողբերգական հերոսականությունը: Ու նրանք, որ ենթակա են եղել ինքնագոհողության ոգուն, անշուշտ, դժվարությամբ պետք է հաղթահարեն հակակրանքը նոր Հայաստանում գոյություն ունեցող սոցիալական անդունդի ու իշխող տրամադրության հանդեպ: Հավանաբար նրանք կարոտաբաղձ ցավ պետք է զգան այն զոհվածների հետ կապված, որոնք հեռացել են լսելով անցյալի ու գոյապայքարի կանչը, գնացել այդքան երիտասարդ հանուն երկրի և ազգի:

ԳԼՈՒԽ V

ԲԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ՄՈՅԻՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ

5.1 Զինվորական կոլեկտիվ. խմբային դինամիկայի առանձնահատկությունները

Ռազմական սոցիոլոգիայում թերևս ամենահաճախ օգտագործվող հասկացություններից մեկը *զինվորական կամ ռազմական կոլեկտիվ* հասկացությունն է: Զինվորական կոլեկտիվը սոցիալական խմբի տարատեսակ է, որը որպես այդպիսին ունի որոշակի առանձնահատկություններ: Սակայն մինչ այդ առանձնահատկություններին անդրադառնալը, քննարկենք *սոցիալական խմբի* հասկացությունը: Ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Մերտոնը սոցիալական խումբը սահմանում է որպես մարդկանց համախմբություն, որոնք որոշակի ձևով փոխգործակցում են միմյանց հետ և գիտակցում են իրենց պատկանելությունը տվյալ խմբին: Ըստ Մերտոնի, խմբի անդամները նաև մյուսների կողմից են ընկալվում որպես այդպիսին, այսինքն՝ խումբն ունի իր նույնականությունը կողմնակի մարդկանց աչքում: Իրականում խմբային նույնականացումը շատ կայուն է: Խմբի անդամ-անհատի համար խմբային պատկանելության գիտակցման հիմնական գործոնը, այսպես կոչված, «մենք»-ի ընկալման ձևավորումն է՝ տվյալ սոցիալական խմբի անդամների հետ հոգեբանական ընդհանրության զգացումը՝ ի հակադրություն «նրանք»-ի: «Մենք»-ի զգացումն արտահայտում է մեկ հանրությունը մյուսից անջատելու անհրաժեշտությունը և խմբի սահմանների որոշման հիմնական չափանիշ է:

Սոցիալական խմբերում անդամների միջև հարաբերություններն օրինաչափորեն փոփոխվում են՝ կոլեկտիվային հարաբերությունների ձևավորմանը զուգընթաց: Սկզբում խմբի անդամներն անտարբեր են միմյանց նկատմամբ, քանի որ կամ չեն ճանաչում, կամ վատ են ճանաչում միմյանց: Հետագայում հարաբերությունները կարող են դառնալ կոնֆլիկտային, իսկ բարենպաստ պայմանների դեպքում

կոլեկտիվիստական: Խումբը վերափոխվում է կոլեկտիվի բավականին կարճ ժամանակահատվածում, որի ընթացքում խմբի անդամները չեն փոխվում, պահպանում են իրենց անհատականությունը՝ բնավորության լավ կամ վատ գծերը: Այն, թե անհատը կներկայանա խմբին առավելապես իր դրական թե բացասական հատկություններով, կախված է խմբի մյուս անդամներից, սոցիալական միջավայրից, տվյալ խմբի առանձնահատկություններից:

Ձինվորական կոլեկտիվի առանձնահատկություններից մեկն այն է, որ խմբի անդամները փոխգործում են և ունեն ներխմբային շփման առանձնահատուկ ձևեր. և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ հիերարխիայում միջանձնային հարաբերությունները կարգավորվում են հստակ սահմանված, զինվորական գործունեության յուրահատկությամբ պայմանավորված նորմերով: Ռազմական կոլեկտիվի արտաքին՝ պաշտոնական կազմակերպությունը պայմանավորում է նրա ֆորմալ կառուցվածքը՝ վաշտի հրամանատար, դասակի հրամանատար, դասակի փոխհրամանատարներ և այլն: Ֆորմալ հարաբերությունները խմբի ներսում որոշված են զինծառայողների պաշտոնական դիրքով, կանոնադրություններով, զինվորական երդմամբ, հրահանգներով ու հրամաններով: Ֆորմալ առումով զինվորական կոլեկտիվը երկրորդային խումբ է, որն իր մեջ ներառում է բազմաթիվ առաջնային խմբեր: Վերջիններս ներքին՝ ոչ պաշտոնական կազմակերպության հիմքն են և ապահովում են խմբի ոչ ֆորմալ սոցիալ-հոգեբանական կառուցվածքը⁸⁵:

⁸⁵ Սոցիոլոգիայում ընդունված է առանձնացնել առաջնային և երկրորդային խմբերը: Առաջին անգամ այս բաժանումը կիրառել է Չարլզ Կոլլին (1909թ.): Առաջնային խմբերը կազմված են փոքրաթիվ մարդկանցից, որոնք միմյանց հետ փոխազդում են անմիջականորեն և իրենց անհատական առանձնահատկությունների հիման վրա, ինչն էլ հանգեցնում է մտերիմ և հուզական կապերի առաջացմանը (օրինակ՝ ընտանիքը, ընկերների խումբը): Երկրորդային խմբերը ներառում են մեծ թվով մարդկանց, որոնց դերերը հստակորեն առանձնացված են և որոնց միջև գրեթե բացակայում են հուզական կապերը: Այդպիսի խմբերում կարևորվում է ընդհանուր նպատակին հասնելուն միտված գործառույթների իրականացումը: Համախառն երկրորդային խմբերում անդամները միմյանց մասին քիչ տեղեկություններ ունեն, տեղեկատվություն էլ կրում է ավելի շատ ձևական բնույթ: Չնայած ժամանակակից հասարակության մեջ երկրորդային խմբերի գերակայությանը՝ առաջնային խումբը շարունակում է մնալ անհատի և կյանքի ֆորմալ կազմակերպչական կողմը կապող կարևորագույն օղակը:

Տարբերում են նաև *մեծ* և *փոքր* խմբեր: Փոքր են համարվում մինչև 50 հոգուց բաղկացած խմբերը, մեծ՝ 50-ից ավելիները: Այս իմաստով զինվորական կոլեկտիվը մեծ և փոքր խմբերի մի ամբողջություն է:

Մեծ և փոքր խմբերում իշխանության բաշխումը սերտորեն կապված է ներխմբային հաղորդակցման ձևերի և զարգացման գործընթացների հետ: Մեծ խմբերում հաճախ հաղորդակցությունների կենտրոնում է գտնվում խմբի լիդերը և առավել վառ են արտահայտվում ներխմբային գործընթացները, որոնք էլ կազմում են *խմբային դինամիկայի* բովանդակությունը: Այսպիսով՝ խմբային դինամիկան սոցիալական խմբի անդամների միջև տեղի ունեցող փոխազդեցությունների ամբողջությունն է, որը ներառում է մի շարք գործընթացներ, այդ թվում

- խմբային վերահսկման երևույթը կամ կոնֆորմիզմը (համակերպվողականությունը),
- լիդերությունը,
- ներխմբային համախմբվածությունը,
- խմբային որոշումների ընդունումը,
- խմբից վտարումը:

Կոնֆորմիզմը ենթադրում է անհատի կարծիքի կամ վարքի փոփոխություն խմբի կողմից դրսևորվող վերահսկման և իրական կամ երևակայական ճնշման արդյունքում: Այլ կերպ ասած՝ մարդը վարվում է այնպես, ինչպես չէր վարվի, եթե գտնվեր խմբից դուրս: Առանձնացվում է կոնֆորմիզմի 3 տեսակ.

- ✗ արտաքին,
- ✗ ներքին,
- ✗ նեգատիվիստական (ժխտողական):

Արտաքինը կարելի է անվանել նաև զիջողական, որի էությունը խրախուսանքի արժանանալը և պատժից խուսափելն է: Այստեղ անձն արտաքնապես զիջում է իր դիրքը, հրաժարվում է որոշակի արժեքներից և համաձայնվում այլ տեսակետի հետ, սակայն ներքնապես շարունակում է պաշտպանել իր կարծիքը:

Ներքին կոնֆորմիզմի դեպքում անհատը և՛ արտաքինապես, և՛ ներքինապես համաձայնվում է խմբի կարծիքի հետ և դրա հիման վրա հրաժարվում է իր տեսակետից:

Ժխտողական կոնֆորմիզմն այն դեպքն է, երբ անհատն ամեն գնով ընդդիմանում է խմբային ճնշմանը՝ մերժելով խմբի բոլոր սկզբունքները: Սա կոնֆորմիզմի առանձնահատուկ դեպք է, քանի որ մարդը, հակադրվելով խմբին, կախվածության մեջ է մնում նրանից: Այդ առումով հակախմբային վարքը ևս կախված է խմբային կարծիքից:

Կոնֆորմիզմի երեք տեսակներն էլ կարող են հանդես գալ ռազմական կոլեկտիվի և ֆորմալ, և ոչ ֆորմալ կառուցվածքներում, սակայն դրանք սովորաբար խմբերի ոչ ֆորմալ կառուցվածքներին բնորոշ գործընթացներ են:

Յուրաքանչյուր սոցիալական խմբում կան այնպիսի դերեր, որոնք այլ դերերի համեմատ ավելի նշանակալի են: Այդպիսին է, օրինակ, լիդերի դերը: Լիդերության բովանդակությունը հաճախ պայմանավորում է ներխմբային մյուս գործընթացների էությունը:

Լիդերությունն անհատի ունակությունների, անձնական որակների արտահայտումն է խմբային հարաբերությունների նախաձեռնության, համակարգման և կազմակերպման ընթացքում: Սակայն խմբում լիդերի կարգավիճակ ունենալու համար անհատի անձնական որակները և ունակությունները բավարար չեն. անհրաժեշտ է, որ խմբի մյուս անդամներն ընդունեն նրա հեղինակությունը և ճանաչեն որպես լիդեր: Իսկ դրա համար կարևոր է տվյալ անհատի կողմից խմբային խնդիրների լուծման մեջ արդյունավետ դերակատարումը: Այլ կերպ ասած՝ լիդերը որպես այդպիսին ի հայտ է գալիս միայն այն ժամանակ, երբ խմբի անդամները գիտակցում են, որ նրա ներդրումը խմբային հիմնախնդիրների լուծման մեջ առավել նշանակալի և արժեքավոր է եղել:

Սոցիոլոգիայում առանձնացնում են լիդերության 3 հիմնական ոճ.

- դեմոկրատական (ժողովրդավարական),
- ավտորիտար (ինքնակալական),
- չեզոք:

Դեմոկրատական ոճը բնութագրվում է լիդերի և խմբի մյուս անդամների միջև համագործակցային հարաբերություններով: Այստեղ որոշումների ընդունման գործընթացում յուրաքանչյուր անդամ ունի սեփական կարծիքի իրավունք, իսկ լիդերը ընդհանրացնում է այդ առաջարկությունները և ձևակերպում վերջնական որոշումը: Ավտորիտար ոճի դեպքում լիդերը խմբի «միապետն» է: Նա է կայացնում որոշումները, որոնք պարտադիր են խմբի անդամների համար: Լիդերության չեզոք ոճը խոսում է լիդերության ձևական բնույթի մասին. այս դեպքում խմբի յուրաքանչյուր անդամ անում է այն, ինչ հարմար է գտնում, իսկ գործերը խմբում ընթանում են իրենց հունով:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ բանակում մարդկանց միջև փոխհարաբերությունների ամենահաճախ հանդիպող ձևերից մեկը ղեկավարման ավտորիտար ոճն է ու դրա ծայրահեղ դրսևորումները բռնությունն ու հարկադրումը: Բանակը որպես սոցիալական հատուկ խումբ, ի սկզբանե ենթադրում է լիդերության ավտորիտար ոճը, որի դեպքում ենթակաները չունեն վերադասի հրամանը նույնիսկ կասկածի տակ առնելու իրավունք. հրամանատարների հրամաններ և կարգադրություններ տալու, դրանց կատարումը վերահսկելու բարոյական և վարչական իրավունքը, ինչպես նաև դրանք անշեղորեն կատարելու ենթակաների պարտականություններն անգամ ամրագրված են իրավաբանական մի շարք փաստաթղթերում (զինվորական երդում, կանոնադրություններ, հրահանգներ): «Ուղղահայաց» փոխհարաբերությունները բխում են ռազմական կազմակերպության էությունից, որտեղ հատկապես անհրաժեշտ է, որ շատերի գործողություններն ենթարկվեն ղեկավարի կամքին: Վերջինս զինվորների գործողությունները միավորում է միանձնյա ղեկավարության սկզբունքով, ինչը հրամանատարին իրավունք է տալիս հրամաններ և կարգադրություններ տալ ենթակային:

Զինվորական կոլեկտիվի անդամների միջև փոխհարաբերությունները ներառում են ոչ միայն «ուղղահայաց» ենթակարգային,

այլև «հորիզոնական» փոխհարաբերություններ. դրանք ծավալվում են կոլեկտիվի հավասար պաշտոնական դիրքեր զբաղեցնող անդամների միևնույն աստիճան ունեցող ծառայողների միջև և բնութագրվում են համագործակցության (կոորդինացիա) հարաբերություններով: Զինվորական կոլեկտիվը միավորում է տվյալ ստորաբաժանման զինվորներին, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական հայացքները, հետաքրքրությունները, ընդունակությունները, խառնվածքը և բնավորությունը: Այստեղ առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում շարքային (մաս սերժանտական) անձնակազմի ներսում գոյություն ունեցող հորիզոնական փոխհարաբերությունները: Դրանց յուրահատկությունն այն է, որ հորիզոնական կապերը կրողները բնութագրվում են ոչ միայն մույնանման՝ սոցիալական, այլ նաև հոգեֆիզիոլոգիական հատկանիշներով: Նրանց միջև փոխհարաբերություններն առավելապես զարգանում են միմյանց հանդեպ համակրանքի կամ հակակրանքի, վստահության կամ անվստահության, հարգանքի կամ դրա բացակայության հիման վրա: Որոշ նշանակություն ունի նաև տարիքային ընդհանրությունը: Տասնութ-տասնինը տարեկան զինվորների մոտ միջանձնային փոխհարաբերություններում, գերակայում են հուզական-զգացմունքային բաղադրատարրերը, որոնք նրանց անչափ դյուրընկալ են դարձնում: Երիտասարդը լավ ընկերության, մտերիմ մարդու խիստ կարիք է զգում. նա անկեղծ է և դյուրահավատ: Երբեմն նրա մոտ ծայրահեղական գծեր են դրսևորվում. նա շրջապատի հանդեպ չափից ավելի բարձր պահանջներ է ունենում, հակված է ընկնել ծայրահեղությունների մեջ («կամ-կամ»), հաճախ գերազնահատում կամ, ընդհակառակը, թերազնահատում է իր սեփական կարողությունները և վարքը:

Ուզանական կոլեկտիվի ֆորմալ կառուցվածքում ուղղահայաց հարաբերությունների փոխարինումը հորիզոնական հարաբերություններով խախտում է կանոնադրական փոխհարաբերությունները և հանգեցնում է հրամանատարի հեղինակազրկմանը: Ենթակալները չպետք է զգան, որ պաշտոնական ղեկավարը՝ լիդերը, անձ-

նական հետաքրքրվածություն ունի խմբի անդամներից որևէ մեկի նկատմամբ (լինի դա բացասական թե՛ դրական) կամ փորձում է ենթականերից ոմանց արտոնյալ դրության մեջ դնել, պահանջկոտ չլինել նրանց նկատմամբ: Դա մնացած զինվորների մոտ բողոքի զգացողություն է առաջացնում և զինվորական կոլեկտիվում կարող է ֆավորիտիզմի, շողոքորթության և երեսպաշտության առիթ դառնալ: Դրանից բացի, ուղղահայաց հարաբերությունները պահանջում են հրամանատարի և ենթակաների միջև որոշակի հեռավորություն: Ֆորմալ լիդերի ոչ պաշտոնական հարաբերությունները ենթակաների հետ խմբի սոցիալ-հոգեբանական անառողջ մթնոլորտի ստեղծման պատճառ կարող են դառնալ՝ նպաստելով բանակի թուլացմանն ու մարտական ոգու անկմանը, առավել ևս պատերազմական պայմաններում, խարխլելով կոլեկտիվի համախմբվածությունը:

Լիդերության ոճի նախընտրության բանավեճում իշխանության «ուժային մոդելը» հիմնվում է այն կարծիքի վրա, որ բանակային փոխհարաբերությունների համակարգը և ընդհանրապես ամբողջ բանակը կփլուզվի, եթե այդտեղ ղեկավարեն ժողովրդավարական սկզբունքները: Այդ իսկ պատճառով ժողովրդավարական ոճը հրամանատարական կազմի կողմից հաճախ դիտվում է որպես ամենաթողության և անկարգապահության համարժեք: Սակայն ղեկավարման ժողովրդավարական ոճը կարելի է համակցել խիստ կարգապահության հետ, մինչդեռ ղեկավարման ավտորիտար ոճը կարող է բերել բանակի քայքայմանը՝ հրամանատարների և ենթակաների միջև մշտական կոնֆլիկտների պատճառով: Մյուս կողմից, սակայն, ասվածը չի վերաբերում պատերազմական դրությանը, երբ, ինչպես յուրաքանչյուր ծայրահեղ իրավիճակի դեպքում, բանակը միասնական կամքի շուրջ համախմբելու համար անհրաժեշտ է ղեկավարման ավտորիտար ոճը:

Լիդերության ժողովրդավարական ձևը բանակում կարելի է հանդիպել զինվորականների ոչ ֆորմալ խմբերում: Նման լիդերի հեղինակությունը պայմանավորված է նրա անհատականության առանձ-

նահատկություններով, հնարավորություններով, տեսական գիտելիքներով, գործնական փորձով, խմբի տարբեր անդամների մոտ առաջ եկած խնդիրների և բարդությունների ավելի խորը ընկալմամբ, դժվարության պահին յուրաքանչյուրին օգնելու վճռականությամբ, կարողությամբ և նախաձեռնողականությամբ, շփվողականությամբ, ընկերների հաջողություններով ուրախանալու ունակությամբ: Լիդերը հիմնականում ունի ներխմբային խնդիրների լուծման վերաբերյալ ամենաշատ տեղեկատվությունը: Նա կարգավորում է ներխմբային հարաբերությունները, թուլացնում առաջ եկած լարվածությունը, որոշում է ենթակաների մարտավարությունները տարբեր իրավիճակներում:

Ե՛վ մաքուր ավտորիտար, և՛ մաքուր դեմոկրատական ոճերն ունեն իրենց թերությունները: Ավտորիտար լիդերությունն, օրինակ, եթե ուղեկցվում է բռնությամբ, խմբային հարաբերություններում սոցիալ-հոգեբանական լարվածություն է ստեղծում: Այդպիսի ծայրահեղ լարվածությունը հանգեցնում է բանակի կամազրկության, ինչպես նաև անձնակազմի ընկճվածության ու բարոյական ոգու անկման պատճառ դառնում: Սյուս կողմից ժողովրդավարական ոճը կարող է բանակում ամենաթողության պատճառ դառնալ, որը նույնպես կրեթի բարոյական ոգու անկման: Հետևաբար՝ զինվորական կոլեկտիվում լիդերը՝ հրամանատարը, պետք է ունակ լինի կիրառելու դեկավարման և՛ ժողովրդավարական, և՛ ինքնակալական ոճերը: Ոչ թե մշտապես ընդունված ոճին, այլ իրավիճակին համապատասխան որոշման կայացումը աղեկվատ է համարվում խմբի կողմից: Այս դեպքում նույնիսկ դաժան պատիժը մեղսագործի կողմից ընկալվում է որպես արդարացի. պատժվողը գիտակցում է պատժի դաստիարակչական նպատակը և չի զգում վիրավորանք կամ հարված սեփական ինքնասիրությանը:

Հին Հունաստանում, երբ Պլատոնի աշակերտներից մեկը վիրավորական դիտողություն է արել ուսուցչին, Պլատոնն ասել է. «Եթե ես բարկացած չլինեի, քեզ ծեծ կտայի»: Այլ կերպ ասած՝ եթե պատիժն ուղեկցվում է պատժողի ջղայնությամբ, այն չունի դաստիարակչա-

կան նշանակություն, քանի որ պատիժն ուղղված չէ արարքի ուղղմանը, այլ պարզապես մեղսագործի անձի վրա բարկությունը թափելու միջոց է:

Դաստիարակչական նպատակ ունի ոչ միայն պատիժը, այլև խրախուսումն ու ներումը: Ֆրանսիական ռազմական պատմության մեջ հայտնի է մի դեպք, երբ Նապոլեոնը, նկատելով մարտական դիրքերում քնած զինվորին, ինքն է հերթապահել այնտեղ, և նրա այդ արարքից բանակը շատ է ոգևորվել: Կարևոր է, որ և՛ պատիժը, և՛ խրախուսումը հավասարապես կիրառվեն բոլորի նկատմամբ: Ենթակայի նկատմամբ համակրանքի կամ որևէ նյութական շահի հետևանքով շնորհված ներումը ստեղծում է անարդարության խեղդող մթնոլորտ և քայքայում բանակը ներսից: Մյուս կողմից՝ մինչ պատժի կամ ներման մասին որոշում ընդունելն անհրաժեշտ է հաշվի առնել արարքը կատարած մարդու անհատական առանձնահատկությունները: Նույն արարքը մեկի համար կարող է պատահականության հետևանք լինել, մյուսի համար՝ վարքի պլանավորված նմուշ. մեկը կարող է ստել վախից, մյուսը՝ անազնիվ և արկածային էությունից:

Այսպիսով՝ հրամանատարի կողմից իրավիճակին ու հանգամանքներին համապատասխան գործելը և անձնական ջղայնության զսպումը մարտունակ, հոգեպես առողջ բանակի գործառնության երաշխիք են: Ուրեմն զինվորական կոլեկտիվում առողջ հոգեբանական մթնոլորտի ստեղծման գործում որոշիչ դերը պատկանում է հրամանատարներին: Կոլեկտիվը և նրանում սոցիալ-հոգեբանական գործընթացները ճիշտ հասկանալու միջոցով հրամանատարը կարող է իրական հնարավորություն ունենալ՝ ազդելու ենթակաների վրա, ճիշտ կառավարելու նրանց վարքը: Հրամանատարի ազդեցությունը զինվորական կոլեկտիվի վրա ավելի մեծ կլինի, եթե նա հնարավորություն ունենա հայտնաբերել այն ամբողջ դրականը, ինչը կարող է ամրապնդել կոլեկտիվի համախմբվածությունը, ինչպես, օրինակ՝ փոխադարձ հարգանքը, պարտականությունների հանդեպ գիտակցական վերաբերմունքը, լավ մասնագետ դառնալու նպա-

տակաուղղվածությունը և այլն: Ջինվորական կոլեկտիվի վրա որոշիչ ազդեցություն ունենալու մյուս պայմանը մտահոգումներում և գործերում հրամանատարի նախաձեռնող դերն է: Ազդեցություն ունենալու այլ միջոց կարող են լինել զինվորի կամ զինվորների խմբերի հետ զրույցները, որոնց արդյունքում հրամանատարը համարժեքորեն է ըմբռնում կոլեկտիվի անդամներին:

Ռազմական խմբի գործառնումը մեծապես կախված է ոչ միայն հրամանատար-ենթակա փոխհարաբերություններից, այլ նաև հրամանատարների կողմից արձակվող հրամանների և կարգադրությունների որակից: Պրանք պետք է լինեն իրավաբանորեն ճիշտ ձևակերպված, հիմնավորված, տեղին, իրազեկ, արդար և համաձայնեցված լինեն այլ կարգադրությունների հետ: Քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ բավարար գիտելիքների և փորձի պակասի պատճառով առանձին սպաներ ոչ միշտ են նրբազգաց, քաղաքավարի և համբերատար լինում գտնելով, որ կոպտությունը հրամանատարական պահանջկոտության հատկանիշ է: Առկա է նաև այն կարծիքը, որ ենթակաները պետք է կատարեն բացառապես զինվորական կանոնագրքից և հրամանից բխող պահանջները: Իրականում հրամանը պետք է մղի ստեղծագործական ակտիվության և ինքնուրույնության հնարավորություն տա:

Ստորադասների նկատմամբ հրամանատարի պահանջների արդարացիությունը բխում է ոչ միայն նրանից, որ պետք է տրվի իրավաբանորեն ճիշտ ձևակերպված հրաման, այլ նաև նրանից, որ պետք է ապահովվեն դրա կատարման համար անհրաժեշտ պայմանները: Հակառակ դեպքում՝ ենթակաները, չունենալով հրամանը կատարելու իրական հնարավորություն, կհայտնվեն դժվարին կացության մեջ: Մի կողմից նրանք իրավունք չեն ունենա շրջանցել այդ հրամանը (հրամանատարի հրամանն օրենք է ենթակայի համար), իսկ մյուս կողմից՝ դրա փաստացի կատարումն անհնարին կլինի: Իրական հնարավորությունները հաշվի չառնող հրամանը կարող է ենթակայի մոտ հրամանատարի հեղինակության նվազման պատճառ դառնալ, իսկ ենթակային կարող է դրդել հրամանը կատարել՝ դիմելով անթույլատրելի միջոցների:

Իշխանությունների նկատմամբ վստահության և իրական հեղինակության առկայության դեպքում ենթական հրամանը կատարում է ոչ թե հարկադրաբար՝ ելնելով պատժելու վախից, այլ սեփական համոզմունքին համապատասխան: Վերլուծության դժվարությունն այստեղ այն է, որ հրամանը տալու և կատարելու ժամանակ, միևնույն հանգամանքների դեպքում, գործողությունների դրդապատճառները և, հետևաբար դրանց սոցիալական բնութագրիչը կարող են բոլորովին տարբեր լինել: Հրամանը կարող է տրվել՝

- ելնելով նրանից, որ հրամանատարը հստակ պատկերացնում է տվյալ հրամանի անհրաժեշտությունը բանակի կարիքների համար,
- ելնելով հրամանատարի կողմից իր իշխանությունը ցուցադրելու գիտակցված կամ ենթագիտակցական ցանկությունից,
- ենթակային հրամանի միջոցով վիրավորելու և ստորացնելու ցանկությունից,
- դաստիարակչական նպատակներով, որոնցում չկան ենթակայի նկատմամբ անձնական սուբյեկտիվիզմի տարրեր:

Իր հերթին հրամանը կարող է կատարվել՝

- հրամանատարի նկատմամբ ենթակայի վստահությունից,
- պատժված լինելու վախից,
- հրամանի անհրաժեշտության գիտակցման հիման վրա,
- հրամանին կանոններ ենթարկվելու հիման վրա, երբ հասկացվում է բանակային պահանջների կարևորությունը,
- բարեհաճություն շահելու և «կարիերայի սանդղակով» բարձրանալու ցանկությունից ելնելով,
- հայրենասիրական զգացմունքից ելնելով,
- ավելորդ պրոբլեմներից խուսափելու համար,
- հրամանատարի բարյացակամ վերաբերմունքից դրդված և այլն:

Հրամանին չենթարկվելու հիմքում նույնպես ընկած են բազմապիսի դրդապատճառներ՝

- ցուցամուլ վարքի (դեմոնստրատիվության) անհատական–հոգեբանական հակումը,
- ընդունված նորմերը խախտելու միտումը (նոնկոմֆորմիզմ),
- հրամանատարի նկատմամբ անբայրացական վերաբերմունքը,
- այն կարծիքը, թե տվյալ հրամանը հրամանատարի ամենաթողության և կամակորության հետևանք է,
- այն համոզմունքը, թե հրամանին ենթարկվելը կվնասի սեփական արժանապատվությանը:

Իրականում արդյունավետ լիդերության համար ենթակարգային հարաբերությունները պետք է կառուցվեն միմյանց նկատմամբ հարգանքի, բոլորի նկատմամբ խստապահանջության, վստահության և կատարողականության, նրբազգացության և սկզբունքայնության, անկեղծության և մատչելիության հիման վրա: Լավ հրամանատարն ենթականերին չպետք է դիտարկի միայն որպես ազդեցության առարկա: Նա միշտ պետք է հենվի հասարակական կարծիքի, բարոյական նորմերի, լավ ավանդույթների վրա՝ ձգտելով ենթակաների կողմից իր հրամանների ոչ թե ստիպողական կամ մեխանիկական, այլ՝ գիտակցական կատարմանը:

Միայն այդ պայմանների կատարումը կարող է զինվորական կուլեկտիվի ամրապնդման, նրանում առողջ սոցիալ–հոգեբանական մթնոլորտի ստեղծման, ցանկացած իրադրության մեջ առաջադրված մարտական պահանջների կատարման նախադրյալներ ստեղծել:

Զինվորական կուլեկտիվ մի շարք հատուկ հատկանիշներով ու նպատակներով առանձնանում է այլ սոցիալական խմբերից, որոնցից կարևորը մարտական խնդիրների իրականացումն է, ինչը կապված է բազում դժվարությունների հաղթահարման հետ, և կուլեկտիվի յուրաքանչյուր անդամից պահանջում է քաջություն, նպատակասլացություն, տոկունություն և արհեստավարժություն: Այս բոլոր դժվարությունների առկայությունն էլ ավելի է կարևորում ռազմական կու-

լեկտիվների անդամների միջև տեղի ունեցող փոխազդեցությունների ուսումնասիրումը: Խմբային դինամիկայի օրինաչափությունների բացահայտման և դրանց մասին ռազմական գործիչների տեղեկացվածության մակարդակի բարձրացման շնորհիվ կարելի կլինի ակնկալել ինչպես ռազմական սոցիոլոգիայի զարգացումը, այնպես էլ ռազմական ոլորտի բարելավումը ընդհանուր առմամբ:

Ինչպիսի՞ն պետք է լինի առաջնորդը, հրամանատարը, այսինքն՝ ինչպիսի՞ն հատկություններով պետք է օժտված լինի այն մարդը, որը կոչված է ղեկավարելու զորքին, ում վստահված է հայրենիքի պաշտպանությունը: Առաջնորդն այն մարդն է, որն իր նմանությամբ ու կերպարով ստեղծում է իր ժողովրդին: Հետևաբար ժողովուրդը հոգեբանորեն այն է միայն, ինչ որ նրա հավաքական հոգու մեջ դրել են նրա առաջնորդները: Ինչպիսին առաջնորդն է, այնպիսին էլ ժողովուրդն է: Դժբախտ ու խեղճ է այն ժողովուրդը, երբ «նրա առաջնորդն ավելի փառասեր է, քան հանճարեղ, երբ նրա առաջնորդին պակասում է մշակույթը՝ սրտի և մտքի, երբ բռնված նախանձի չար դևով նա տառապում է բարոյական դեղնությամբ, երբ նա դավանում է անձնական երջանկություն խոստացող այս կամ այն գահավիժող վարդապետությունը, երբ տկարություն ունի մեծ թվալու փանաքի գործերի մեծ և փոքրիկ հանդիսանալու մեծ գործերում», – ասում է Գ. Նժդեհը: Չկա ավելի զարհուրելի թույն ժողովրդի համար, քան վատ օրինակը առաջնորդի: Առաջնորդը պետք է օժտված լինի բարոյական և մտավոր բարձր առաքինություններով: Մորթապաշտ, եսասեր, ընչասեր, անարդար, ժողովրդի հաշվին հարստացած, հղփացած, իրեն օրենքից դուրս համարող առաջնորդին հայր չի ընդունում: «Հայը սիրում է կռվի ժամանակ իր ղեկավարներին տեսնել կրակի առաջին գծի վրա՝ դեմ առ դեմ մահվան հետ: Նա սիրում է հավասարությունը մահվան մեջ: Եվ արդար է նրա պահանջը: ...Հայը միշտ էլ հերոսագործում է, – գրում է Նժդեհը, – երբ նրա առաջնորդներին հաջողվում է կռվի ընթացքում հավաքական սիրտ ստեղծել: Նման սրտի գործ էր Ավարայրի, իսկ մեր ժամանակներում՝ Ղարաբաղիսայի ճակատամարտը»: Ուրեմն, հայը ոչ թե առաջնոր-

դապաշտ չէ, այլ ընդունում է միայն ճշմարիտ, իսկական, առաքինի, Հայրենիքին և ժողովրդին անկեղծորեն նվիրված Առաջնորդին: «Երբ առկա է կարող առաջնորդը, հայը կռվում հեզնում է մահը, զոհաբերում քաղցրորեն: Եվ, ընդհակառակը, նմանի պակասի դեպքում նա կորցնում է իր թափը, կորուվաթափվում: Արդ, ինչու առաջնորդության խնդիրը հայու համար գերազանցորեն բարոյա-հայրենասիրական է: Անհայրենասիրություն և անբարոյականություն է, երբ անարժանը, տկարը, անանձնվերը թեկնածում է առաջնորդության: Զորավար լինելու համար նախապայման է՝ զորավոր լինել: Իսկ այդպիսին լինելու համար պիտի կարողանաս արհամարհել և հարստություն, և վայելք, և մահ: Չէ, բավական չէ աստիճանով զորավար լինել, պետք է և զորավոր լինել – ահա՛ հայի պահանջն իր առաջնորդներից»: Մեր օրերում, գրում է Նժդեհը, հայությանը պետք են Ոգու հզոր առաջնորդներ, հոգևոր Սամսոններ, մտքի, սրտի և կամքի իսկաներ: Պետք են առաջնորդներ, որոնց անձնավորությունը լույս, ջերմություն և հավատք ճառագայթեր, որոնք տե՛ր լինեին իմացական կեցվածքի, կարողանային ոգևորել, կախարհել, գործել, կազմակերպել, որոնց խոսքը թափանցված լիներ երկաթե տրամաբանությամբ և զրնգար որպես դամասկոսյան սուր:

5.2 Զինծառայողների սոցիալական հարմարման խնդիրները

Հարմարման հիմնախնդիրն ուսումնասիրում են տարբեր գիտությունների սոցիոլոգիան, մարդաբանությունը, փիլիսոփայությունը, ֆիզիոլոգիան, հոգեբանությունը, որոնք այդ երևույթի վերաբերյալ բավականին հարուստ գիտելիքներ են կուտակել: Մասնավորապես, միկրոսոցիոլոգիայի շրջանակներում սոցիալական հարմարումն ընդհանուր առմամբ սահմանվում է որպես մի գործընթաց, որն ուղղված է անձի և վերջինիս սոցիալական միջավայրի միջև հավասարակշռություն ձևավորելուն՝ տարբեր սոցիալական միջոցների՝ մարդու հոգեկան կարողությունների ակտիվացման, նրա վարքային կարծրատիպերի

հարստացման օգնությամբ: Հետևաբար բանակային ծառայության պայմանները, նոր սոցիալական պայմանները նորակոչիկից պահանջում են վարքի մոդելների վերանայում: Նոր պայմանների նկատմամբ հարմարվել նշանակում է ձեռք բերել այնպիսի վարքային մոդելներ, որոնք առավելագույնս կհամապատասխանեն այդ պայմաններին: Ձորակոչիկը, հայտնվելով իր համար որակապես նոր սոցիալական միջավայրում, խնդիր ունի նոր դերերի ընդունման, վերջիններից բխող դերային սպասումներին համապատասխան գործելու համար անհրաժեշտ վարքի նորմերի յուրացման, ինչը բանակային ծառայությանը հարմարվելու անհրաժեշտ նախապայման է: Ձորակոչիկների շրջանում սոցիալական հարմարման այս գործընթացը կարող է ունենալ երկու հիմնական ավարտ՝ դրական կամ բացասական: Առաջին դեպքում առկա է նոր սոցիալական միջավայրում գոյություն ունեցող դերային սպասումների ընդունում և վերջիններիս համդեպ դրական վերաբերմունքի ձևավորում, արձագանքի ճկունություն և հարմարվողականություն, ինչպես նաև նոր, սոցիալական միջավայրին հատուկ, ֆորմալ և ոչ ֆորմալ պահանջների ընկալում որպես օգտավետ սեփական նպատակների տեսանկյունից⁸⁸: Այսինքն՝ նորակոչիկը յուրացնում է սոցիալական ակտիվության նոր ձևերը, ընդունում տվյալ խմբում պահանջվող համապատասխան կանոնադրական պահանջները, ծանոթանում սոցիալական խմբի ներսում գործող ոչ ֆորմալ, միջանձնային հարաբերությունները կարգավորող նորմերին և արժեքներին:

Այս տեսանկյան դիտարկումը հատկապես կարևորվում է զինվորական կոլեկտիվների վերլուծության համատեքստում, քանի որ նման տիպի սոցիալական խմբերում ոչ ֆորմալ հարաբերությունները՝ թե ուղղահայաց-աստիճանական և թե հորիզոնական հարաբերությունները կարգավորող կարևոր գործոններից մեկն են:

Ավելացնենք նաև, որ հարմարման գործընթացի հաջողությունը, ըստ այս սոցիոլոգիական տեսության ներկայացուցիչների, պայմա-

⁸⁸ Տվյալ մոտեցումն առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարմարման սոցիոլոգիական վերլուծության տեսանկյունից, քանի որ տվյալ դեպքում անձն ընկալվում է որպես տվյալ սոցիալական հարաբերությունների ակտիվ սուբյեկտ:

նավորված է ինչպես ներքին հոգեֆիզիկական, այնպես էլ արտաքին՝ սոցիալական պայմաններով:

Հարմարման գործընթացի երկրորդ՝ բացասական ավարտը կարող է արտահայտվել շեղվող վարքի դրսևորումներում, խուբժն փոխելու ձգտումներում և այլն: Սոցիոլոգիայում այս երևույթն ընդունված է անվանել նաև դեվիանտ հարմարում⁸⁷:

Ձիմվորական կոլեկտիվում անձի հարմարումը կարող է լինել ակտիվ, որի դեպքում անձը արձագանքում է խմբի ակնկալիքներին և ձգտում է ոչ միայն ընդունել խմբի գերիշխող նորմերը, վարքի մոդելները և կարծրատիպերը, այլ նաև որոշակի փոփոխություն մտցնել այն սոցիալական միջավայրում, որում նա հայտնվել է: Հարմարումը պասիվ է, եթե այն ենթադրում է պարզապես անձի կողմից վերջիններիս յուրացում: Հաշվի առնելով, որ զիմվորական խմբում վարքային մոդելները և ընթացակարգերը մեծամասամբ համընդհանուր և պարտադիր բնույթ են կրում, ապա սահմանափակվում է անձի ակտիվ սոցիալական հարմարման հնարավորությունը և նպատակահարմարությունը:

Սոցիալական իրականությանն ուր և անսովոր պայմանները միշտ չէ, որ արտակարգ երևույթի կարգավիճակ են ստանում: Բանակում զիմվորների սոցիալական հարմարման գործընթացի ուսումնասիրման ժամանակ պետք է հաշվի առնել, որ անկախ նրանից, որ նորակոչիկը սկզբնական փուլում իրազեկ չէ բանակային ծառայության պահանջներին, նա իր կյանքի ընթացքում ձևավորել է ծառայության նկատմամբ որոշակի վերաբերմունք: Ճիշտ է, նա ձեռք չի բերել բանակային ծառայության նկատմամբ անհրաժեշտ հարմարվողական վարքի մեխանիզմներ, բայց մինչ ծառայելն արդեն որոշ գիտելիքներ է կուտակել ծառայության մասին և ձևավորել է որոշակի անձնական դիրքորոշումներ բանակային կյանքի նկատմամբ՝ հաղորդակից լինելով վերջինիս միջնորդավորված ձևով: Այդ իմաստով մարդու կյանքում չկան լիովին նոր սոցիալական պայմաններ, որոնց վերաբերյալ նա չունենար որոշակի, թեկուզև երևակայական հարմարվողական մակարդակ: Յուրաքանչյուր անձի՝ նախկինում ձևավորված փորձում արդեն կան

⁸⁷ L. Philips, Human adaptation and his failures. Academic Press, N-Y&London, 1968.

ապագա՝ նոր և անսովոր պայմանների նկատմամբ դեռ չբացահայտված հարմարվողական վարքի տարրեր: Եվ որքան շատ են այդ տարրերը, այնքան հեշտ է անցնում նրա հարմարումը նոր պայմաններին: Օրինակ՝ զինծառայողի ընտանիքից ծառայության մեկնող նորակոչիկը հարմարման գործընթացի փուլերն ավելի հեշտ է անցնում: Նրա նախորդ փորձում կուտակված են լինում հարմարվողական վարքի տեսական և երևակայական տարրերը: Այն զինվորները, որոնք մինչ ծառայության անցնելն արդեն ձևավորել են իրենց համար բանակային կյանքի մասին անհամապատասխան, բացասական պատկերացումներ, ավելի շատ են բախվում հարմարման հետ կապված հիմնախնդիրներին: Սակայն պետք է նշել նաև, որ նախապես ձևավորված սուբյեկտիվ պատկերացումները կարող են ձևավորել որոշակի նախապաշարմունքներ և հենց առաջին օրերից մեծ ազդեցություն գործել զինվորի վարքի վրա: Նորակոչիկը, ունենալով բանակային ծառայության նկատմամբ ոչ բարենպաստ պատկերացումներ, ազդեսիվություն է վերագրում ուրիշներին՝ լինի նա զինվոր թե սպա: Նա դառնում է չափազանց զգայուն յուրաքանչյուր դիտողության նկատմամբ, քանի որ նույնիսկ անմեղ կատակի մեջ թաքնված ազդեսիա է տեսնում:

Բանակում վարքը կարգավորող նոր նորմերի յուրացման հետ մեկտեղ սկսում է մեծանալ անձի սոցիալական տարածությունը, այսինքն՝ նվազում է այն իրադրությունների քանակը, որոնք նրա մոտ ներանձնային և միջանձնային կոնֆլիկտներ էին առաջացնում, մեծանում է շրջապատող մարդկանց թիվը, որոնց հետ նշանակալից հարաբերություններ են հաստատվում: Պարտադրվող հարաբերություններից անձն անցնում է հաղորդակցման ընդունելի սոցիալական դաշտ: Նոր սոցիալական իրականությունը դառնում է շատ թե քիչ կանխատեսելի և ընդունելի: Հարմարման հաջորդ փուլում, երբ անձի մոտ սկսում են ձևավորվել հարմարվողական վարքի մոդելներ, արդեն կարելի է ասել, որ նա գտնվում է իր վարքի կարծրատիպացման փուլում:

Բանակային ծառայության պայմաններում նորակոչիկի սոցիալական հարմարման գործընթացը ենթադրում է անցում նոր սոցիալական միջավայրին, որում կարևոր է նոր միջանձնային կապերի

ձևավորումը և հաստատումը, սեփական սոցիալական դիրքի ձեռք բերումը, անսովոր սոցիալական պայմաններին հարմարվելու խնդրի լուծումը: Բանակային պայմաններին հարմարվելու գործընթացը ենթադրում է նաև հոգեբանական հարմարման տարրեր: Մասնավորապես, ծառայության ընթացքում զինվորը բախվում է ինքնահաստատման հնարավորությունների փոփոխման և սեփական ինքնագնահատականի տատանման փաստին: Մինչ այդ՝ պատանին, անկախ ընտանիքի և միջավայրի սոցիալական պայմաններից, այսպես թե այնպես, իրեն հոգեբանորեն պաշտպանված էր զգում, և իր ինքնահաստատման ձգտումները չէին հանդիպում անկանխատեսելի արգելքների: Զինծառայության առաջին ամիսներին նորակոչիկը հանդիպում է ինքնահաստատման այնպիսի արգելքների և անջրպետների, որոնց նկատմամբ դեռ չի ձևավորել վարքի արդյունավետ մոդելներ:

Պատանիների համար, բանակային ծառայությունն անսովոր է համարվում, և բնական է, որ հարմարվողական վարք դրսևորելու համար նրանց որոշակի ժամանակ է պետք⁸: Այդ ժամանակի տևողու-

⁸ Հարմարման գործընթացը սովորաբար ընդգրկում է երեք փուլ.

1. Սկզբնական փուլ, որը տևում է 30 օր, երբ նորակոչիկը գտնվում է իր համար ամենաբարենպաստ սոցիալական միջավայրում՝ այլ նորակոչիկների հետ միասին:

2. Հիմնական փուլ, որն ամենաբարդն է զինվորի համար: Այն սկսվում է անմիջապես ստորաբանման մեջ ծառայության անցնելիս. նորակոչիկը հայտնվում է վաղուց ծառայության մեջ գտնվող զինվորների միջավայրում: Այդ զինվորները հաճախ նորակոչիկների նկատմամբ անառողջ վերաբերմունք, ագրեսիվ վարք են ցուցաբերում: Նման վարքի դրդապատճառներն ունեն նաև հոգեբանական հիմքեր: Այս փուլը տևում է մոտ 4-6 ամիս:

3. Հարմարման երրորդ փուլը պայմանականորեն անվանվում է վերջին փուլ և ընդգրկում է ծառայության 7-12 ամիսները: Զինծառայողների հիմնական զանգվածի համար (90-93%) հարմարման բոլոր փուլերն անցնում են համեմատաբար հարթ ու սահուն: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ ծառայողների 5-8%-ի համար հարմարման գործընթացն անցնում է բարդ ձևով՝ հոգեբանորեն և սոցիալապես ծանր մթնոլորտի պայմաններում: Որպես կանոն՝ նման զինվորները ծառայության պայմանների նկատմամբ բազմաթիվ բողոքներ են ներկայացնում և սեփական առողջական վիճակը բացասաբար են գնահատում: Նրանք բողոքում են գլխացավերից, գլխապտույտներից, մկանային ցավերից և այլն: Նման զինվորների մեծամասնությունը սովորաբար աչքի է ընկնում նյարդահոգեկան անկայունությամբ: Հոգեբանական տեսակետից, անսովոր սոցիալական պայմաններում առաջացած հիվանդություններն ունեն պաշտպանական բնույթ: Մարդը կարծես թե պատսպարվում է հիվանդության հետևում, փախչում է իր համար հոգեբանական և ֆիզիկական անտանելի իրադրություններից՝ հիվանդությունը զերադասելով դժվարություններից: Հայտնվելով «հիվանդության զրկում»՝ նման մարդն ազատվում է իր համար ավելի ծանր թվացող պարտականությունների կատարումից:

թյունը յուրաքանչյուր զինվորի համար տարբեր է և կախված է նրա վարքի ճկունության աստիճանից: Բանակային ծառայությանը հարմարվելու գործընթացը զինվորից պահանջում է դրսևորել նոր իրականությանն առավելագույնս համապատասխանող վարքի տեսակներ: Բանակային ծառայության ընթացքում զինվորը հաճախ ստիպված է լինում հրաժարվել իր վարքի այն տեսակներից, որոնք մինչ ծառայությանն անցնելը արժանանում էին բարձր սոցիալական գնահատականների: Բանակում զինվորը հաճախ ստիպված է հրաժարվել վարքի այդ ձևերից և ձևավորել վարքի այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են նոր սոցիալական պայմաններին և պահանջներին:

Ֆիզիկական հարմարման գործընթացի էությունն այն է, որ բանակային ծառայությունը մեծացնում է զինվորի ֆիզիկական ծանրաբեռնվածության ծավալը: Անհրաժեշտություն է առաջանում տիրապետել վարքային նոր ձևերի, որոնք պահանջում են ֆիզիկական ուժի պատշաճ մակարդակ: Նույնիսկ զինծառայողի համազգեստը հոգեբանորեն և ֆիզիկապես ավելացնում է զինվորի հարմարվողական ծանրաբեռնվածության ծավալը:

Բանակային ծառայության սկզբնական փուլում (1–6 ամիսներ) նորակոչիկները քաղցի սուր զգացողություն են ունենում, որն առաջ է գալիս անսովոր ֆիզիկական ռեժիմի և էներգիայի գերծախսի հետևանքով: Ֆիզիկական գործունի ազդեցության շնորհիվ զինվորների մոտ կարող են առաջանալ մկանային ցավեր, սրվել նախկինում մինչ ծառայությունը, եղած հիվանդությունները: Նման իրավիճակները նկատելիս զինվորների ծնողներից շատերը սկսում են խիստ անհանգստանալ և բողոքել բանակային ծառայության պայմանների դեմ: Մինչդեռ այդ իրավիճակը լիովին օրինաչափ է, քանզի երիտասարդի օրգանիզմը սկսում է գործել անսովոր և նոր ռեժիմի պայմաններում:

5.3 Հարմարման բժշկահոգեբանական տեսանկյուն. դեպքերի վերլուծություն

Ինչպես արդեն նշեցինք, երիտասարդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները բաժանում են ընտանիքից, ընկերներից, սովորական դարձած կենսապայմաններից, բախումը նոր պահանջներին, որոնք առաջ են գալիս բանակային կանոնակարգով, խիստ կարգուկանոնը, ռեժիմը, ավագ անձնակազմին ենթարկվելու անհրաժեշտությունը, հասակակիցների հետ նոր փոխհարաբերությունները, համարվում են սթրեսային իրադրություն, որը նորակոչիկը պետք է հաղթահարի շատ կարճ ժամանակում: Ինչպես վկայում են ստորև քննարկված դեպքերի ուսումնասիրությունները, սթրեսային իրադրության հաղթահարումը ենթադրում է նոր սոցիալական դերի ընդունում (զինծառայող), միջխմբային հարաբերությունների և հրամանատարական կազմի նկատմամբ դիրքորոշումների ձևավորում, խմբում սեփական կարգավիճակի ձևավորում (լիդեր, խմբի շարքային անդամ և այլն), նոր պատասխանատվությունների ընդունում, բանակում ծառայելու անհրաժեշտության հետ կապված համոզմունքների ձևավորում: Հաճախ այս գործընթացները զուգակցվում են հոգեբանական մի շարք խնդիրների հետ, որոնց թվում է ինքնագնահատականի իջեցումը, խմբում իրեն ոչ լիարժեք անդամ զգալը, անհարմարությունը (դիսկոմֆորտը), կարոտը, տխրությունն ու ներփակվածությունը, անհանգստության, տազնապի զգացումը, ագրեսիվության ուժեղացումը, արտաքին սահմանափակումների նկատմամբ ներքին դիմադրությունը և այլն: Բերենք բժշկա-հոգեբանական հարմարման դեպքերի հետազոտման որոշ օրինակներ:

Դեպք 1. Շարքային Գ., առաջին տարվա ծառայություն, 19 տարեկան, ընդունվեց ստացիոնար բուժման ինքնասպանության փորձից հետո: Բարձրահասակ, մի քիչ կուզիկ, թուլակազմ, խառնվածքը մեղմ, խոնավ, տազնապային-կասկածամիտ բնավորություն, նիհար, հակազդումները դանդաղեցված, տրամադրությունն ընկած. մշտապես վերլուծության է ենթարկում իրեն և իր փոխհարաբերություն-

ներն այլ մարդկանց հետ, սեփական ապրումների գերի է: Ավելացնենք, որ դժվարությամբ է կատարում բանակային պարտականությունները (հրամանատարն առանձնանում էր բարձր պահանջկոտությամբ), ստեղծված իրադրությունից ելք չի տեսնում, իրեն շատ դժբախտ է համարում: Ախտորոշումը՝ ջղային դեպրեսիա: Ջորակոչից հետո բանակային կոլեկտիվի անդամների հետ ունեցել է մի քանի լուրջ ընդհարում, որոնցից նա եզրակացրել է, որ իրեն ոչ ոք չի հասկանում, որ ինքը չի կարող իր հարաբերությունները կարգավորել ոչ հրամանատարի, ոչ էլ խմբի հետ: Ամփոփվել է ինքն իր մեջ՝ մտածելով, թե ինքն ինչու է անհաջողակ, թույլ և անվստահ մարդ: Ախորժակը և քունը խանգարվեցին, գիշերներով լաց էր լինում, բայց այնպես, որ ոչ ոք չնկատի («նույնիսկ լաց լինելու իրավունք չունեի»): Փորձեց ծնողներին բացատրել, որ չի կարող ծառայել, որ իրեն դրա համար ինչ-որ բան չի հերիքում, ասաց, որ կփախչի, բայց մոր խորհրդով չդիմեց այդ քայլին: Եկավ մի պահ, երբ նա փորձեց հաղթահարել ինքն իրեն, իրեն խմբում այլ կերպ դրսևորել, սակայն, հանգամանքների բերումով, ներքաշվեց կռվի մեջ և ծեծվեց՝ չնայած որ ինքը մեղավոր չէր: Կատարվածի մեջ նա մեղադրում էր ինքն իրեն («լավ տղա լինեի, չէի ծեծվի», — ասում է հիվանդը): Հենց այդ ժամանակ էլ նա իմացավ, որ իր սիրած աղջիկը մեկնել է արտասահման՝ մշտական բնակության: Այն միտքը, որ ինքն այլևս նրան չի տեսնելու, երիտասարդի համար անտանելի դարձավ: Դա տրամադրության և ինքնազնահատականի վերջնական անկման պատճառ դարձավ: Նա համոզվեց, որ ինքն է ամեն ինչում մեղավոր և իր նման մարդը չպետք է ապրի:

Ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել հարմարման գործընթացի խափանում. երիտասարդը չի կարողացել ընդունել և յուրացնել նոր սոցիալական դերը՝ փոխարենը վերցնելով և մտնելով «տառապալի» և «մեղավորի» դերերի մեջ, չկարողանալով կարգավորել միջանձնային հարաբերությունները կոլեկտիվում և խճճվելով սեփական ապրումների մեջ:

Բուժումից հետո նրան տեղափոխեցին այլ զորամաս, որտեղ նա

հաջողությամբ ավարտեց ծառայությունը, իսկ իր նախկին մտքերն ու վարքը համարում էր ճակատագրական սխալ:

Դեպք 2. Շաքբային Կ., դիմեց մասնագիտական օգնության ջղային իրավիճակի և ինպուլսիվ բնավորության բողոքով: Բանակ է գնացել ինստիտուտի երրորդ կուրսից, որպեսզի, իր ասելով, արագ պարտքը կատարի և բանակը «չծանրանա» իր վրա: Այն հարցին, թե արդյոք նա այլ իմաստ էր տեսնում ծառայության մեջ, պատասխանեց ժխտական: «Հայրենասիրությունը և նմանատիպ այլ բաները,— նշում էր երիտասարդը,— զուտ դատարկ հասկացություններ են» և ավելացնում էր. «Այդ ամենը սուտ է»: Այսպիսի դիրքորոշումով նա եկավ բանակ ծառայելու:

Երիտասարդը վառ արտահայտված խղերիկ է, պոռթկուն բնավորությամբ, անկայուն, անհամբեր, սակայն մինչբանակային կյանքում լուրջ ընդհարումներ չի ունեցել շրջապատի հետ, կարողացել է հարթել կոնֆլիկտները: Բանակում նա դարձավ բռնկուն, խմբի անդամների կողմից ասված կամ արված յուրաքանչյուր մանրուք, որն իր սրտով չէր, մեծ կռիվների առիթ էր դառնում: Միշտ փնտրում է և գտնում զանազան «անարդարություններ», ագրեսիվորեն ապացուցում է իր ճշմարտացիությունը, բոլորին հայիոյում էր և վիրավորում (վերբալ ագրեսիա), իր ասելով՝ ամեն մի չնչին բանից «ափերից դուրս էի գալիս»: Ընդհարումից հետո ափսոսում է, որ այդպես հիվանդագին հակազդեց իրադրությանը, հասկանում է, որ մեծ մասամբ ինքն է իր համար պրոբլեմներ ստեղծում:

Թերապիայի ընթացքում պարզվեց, որ երիտասարդը մշտապես ապրում է ոչ առարկայական վախի զգացողություն (ընդհանրացված տագնապային խանգարում), բայց արտաքինապես իրեն դրսևորում է որպես շատ կոնֆլիկտածին մարդ: Երբ նա մտնում է կռվի մեջ, ինչ—որ ժամանակով ազատվում է այդ տագնապից, բայց շուտով կրկին կռվի առիթ է փնտրում: Ակնհայտ է, որ այստեղ տեղի է ունենում հոգեկան ուժերի կտրուկ անհավասարակշռություն (դիսբալանս), և մեկ հոգեբանական բևեռացվածությունը (թուլությունը, անվստահությունը, տագնապալիությունը, ենթարկվողությունը) փո-

խարհնվում է մեկ այլ բևեռացվածությամբ (ուժեղ, տիրական, ագրեսիվ): Բանակում ծառայելու անիմաստության համոզվածությունը, այդ խնդրից արագ «ազատվելու» ձգտումը, խմբում հեղինակություն ունենալու ցանկությունն ու այն կորցնելու վախը նրան անտանելի դարձրեցին շրջապատի համար, և հրամանատարությունը խորհուրդ տվեց նրան դիմել մասնագետի:

Դեպք 3. Եթե վերը նշված դեպքերում մենք գործ ունեինք անորոշ վախի և ոչ առարկայական տագնապի հետ, ապա այս պարագայում վախը կրում էր կոնկրետ, ընդգծված բնույթ:

Երկրորդ տարվա ծառայության ընթացքում երիտասարդը դիմեց մեզ ինքնահսկողության կորստի վախով: Մինչ բանակային կյանքում նա ուներ հավասարակշռված, հանգիստ և անկոնֆլիկտ բնավորություն: Խառնվածքով ֆլեգմատիկ է, մարմնի կազմվածքով մի քիչ գեր է, հասակը՝ ցածր (պիկնիկ կոնստիտուցիա): Նրա պատմելով՝ ծառայության առաջին իսկ օրվանից նրան ճնշում էին խմբի ոչ ֆորմալ լիդերները, և այդ ճնշումը հաճախ վերածվում էր ծաղրանքների, ծեծի և անարգանքի: Երիտասարդին տալիս էին վիրավորական մականուններ՝ «խոզ», «քաչալ», «տոլմա», «լոբի» և այլն: Նա փորձում էր վերաբերվել դրան հումորով, սակայն հասկացավ, որ կորցրել է հումորի զգացումը: Եկավ մի պահ, երբ նա գիտակցեց, որ ասում է իր հրամանատարին, քանի որ դիմել էր նրան օգնության համար, և նա իրեն ոչնչով չէր օգնել: Երիտասարդը սկսեց ատել նաև իր հետ ծառայողներին, բացառությամբ մեկի՝ երկուսի, որոնք նրան մարդկայնորեն էին վերաբերվում: Նա փորձում էր հաղթահարել ատելության զգացումը, իրեն դնել նրանց տեղը, ներել նրանց, և երբ մեծ դժվարությամբ դա նրան հաջողվում էր, սկսվում էին նոր անարգանքներն ու ծեծուջարդը: Մթնոլորտն այնքան անտանելի էր և անելանելի, որ մի անգամ, ուժեղ վիրավորանքից հետո, նա ուզեց վերցնել զենքը և ուղղել այն որոշ ագրեսիվ ծառայողների վրա: Տվյալ պահից այդ հմարավորությունը դարձավ նրա հիմնական պրոբլեմը և, միաժամանակ՝ կաշուն միտքը: Այժմ նա ոչ այնքան վիրավորված էր իրեն զգում, որքան նրան անհանգստացնում էր այն

միտքը, որ նա կկորցնի ինքնահսկողությունը և ճակատագրական սխալներ կգործի:

Հոգեթերապիայի մի քանի սեանսները (շարքայինը կարճատև արձակուրդում էր) և որոշակի մտականային վարժությունները, որոնք նա պետք է կատարեր ազատ ժամանակ, վերականգնեցին խաղաղությունը երիտասարդի հոգում: Նրա մոտ նաև փոխվեց վերաբերմունքը դեպի խումբը. այն արդեն չէր թվում այդքան բացասական, իսկ խմբի վերաբերմունքն իր նկատմամբ՝ այդքան անմարդկային:

Այսպիսով բանակին չհարմարվելը կամ դժվարությամբ հարմարվելը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց շարքում առանձնանում են

- խումբը, եթե այն հանդես է գալիս որպես բացասաբար տրամադրված բանակային կոլեկտիվ, ուր տիրում է ճնշման, գերակշռության և հարմարվողականության անառողջ մթնոլորտ,
- անձը, եթե դրսևորում է չհարմարվողի անհատական–հոգեբանական հատկություններ՝ հիվանդագին խառնվածք, շեշտված բնավորություն, անկայուն հուզականային հոգեկան կառուցվածք, բացասական անձնային գծեր (ներփակվածություն, տագնապալիություն, իշխանասիրություն, սուտասանություն, ցուցանդություն և այլն): Հատկանշական է, որ հարմարման գործընթացին էապես խանգարում է անձի անինքնուրույնությունը, անհասունությունը և մանկամտայնությունը (ինֆանտիլիզմը): Այս հոգեբանական գծերն ապացույցն են այն փաստի, որ երիտասարդը չի կարող ինքնուրույն լուծել խնդրում առաջ եկող միջանձնային պրոբլեմները և անընդհատ բողոքում է բարձրադիր անձանց: Հոգեբանության մեջ այս երևույթն անվանում են «հոգաբարձուի բարդույթ»,
- անձը, եթե դրսևորում է մասնագիտական անընդունակություն, որի մասնագիտաժառայողական գործառույթների

կատարումը դժվարանում է ֆիզիկական և հոգեկան հյուծվածության, անկայուն ուշադրության, տրամադրության արագ փոփոխման պատճառով: Երիտասարդը չի կարող կենտրոնացնել իր ուժերն ուսումնառազմական խնդիրները լուծելու համար, չունի արագ և ճշգրիտ ռեակցիաներ, ուշադրության մեծ ծավալ, հիշողությունը թույլ է, ծայրահեղ պահերին ունակ չէ իր շարժումները և գործողություններն արագ կոորդինացնելու և այլն: Բոլոր այս որակները կազմում են ծառայողի «գործառնական հուսալիություն» (կամ անհուսալիություն) հասկացության միջուկը,

- անմիջական շրջապատը (ընտանիքը, ընկերները և այլն), եթե սխալ է կողմնորոշել երիտասարդին բանակում ծառայելու դիրքորոշումների գործում ներշնչել է վախ դեպի բանակը, մտացածին համոզմունքներ և այլն,
- հրամանատարությունը, եթե առկա է բարձիթողի վերաբերմունք, անմիջական ենթակաների նկատմամբ, ինչպես նաև ծառայության վատ իմացություն, պահանջկոտության բացակայություն կամ շատ բարձր պահանջկոտություն, որը հաշվի չի առնում շարքայինի հոգեկան և ֆիզիկական հնարավորությունները, նաև դաժանության և կոպտության, ծառայողական լիազորությունների չարաշահում:

Նշված գործոնները կարող են ազդել բանակին հարմարվելու գործընթացի վրա ինչպես առանձին, այնպես էլ համատեղ այլ գործոնների հետ միասին:

Դրականորեն տրամադրված բանակային կոլեկտիվներում գոյություն ունի փոխօգնության և համագործակցության մթնոլորտ: Խումբն իր անդամի համար ստեղծում է պաշտպանական մի «թաղանթ» այնպես, որ խմբի անդամն իրեն պաշտպանված զգա, հոգեբանական հիմնախնդիրները չսրվեն և չվերածվեն հոգեախտաբանական հիմնախնդիրների: Այսպիսի կոլեկտիվում գերակշռում են դրական միջանձնային հարաբերություններ և զգացմունքներ, որոնք նպաստում են խմբի համախմբմանը:

Ընդհանուր արժեքային կողմնորոշումները (արժեքակողմնորոշային միասնություն) և բոլորի համար ընդհանուր նպատակները (նպատակային միասնություն) համախմբում են կոլեկտիվը, ինչը զգալիորեն հեշտացնում է հարմարման գործընթացը, իսկ պատերազմական պայմաններում կարող է որոշել մարտի ելքը:

5.4 Բանակում զինվորականների վարքը պայմանավորող գործոններ

Զինվորական կոլեկտիվում հարմարման գործընթացը, որը բավականին բարդ բնույթ ունի, պայմանավորված է մի շարք սոցիալական և հոգեբանական գործոններով, որոնց դիտարկումը հնարավորություն է տալիս պատկերացնել զինվորականների հարմարման առանձնահատկությունները՝ ռազմական սոցիոլոգիայի միկրոմակարդակի վերլուծության շրջանակներում: Բանակում զինվորների հարմարման գործընթացի վրա առավել զգալի ազդեցություն ունեցող գործոնների շարքում առանձնացվում են հետևյալները:

Անձնական որակներ: Ռազմական հոգեբանության, ինչպես նաև ռազմական միկրոսոցիոլոգիայի շրջանակներում մշակվել են մի շարք մոտեցումներ, որոնք անդրադառնում են բանակի հաջող գործառնության համար անհրաժեշտ բնավորության այնպիսի գծերի զարգացման հիմնախնդիրների վերլուծությանը, ինչպիսիք են, օրինակ, նպատակասլացությունը, կարգավարժությունը, ծայրահեղ իրավիճակներում արդյունավետ գործելու ունակությունը, հարմարվելու ընդունակությունները, ընկերասիրությունը, կամային հատկությունները, հավասարակշռվածությունը և այլն:

Անձի անհատական–հոգեբանական առանձնահատկություններն են խառնվածքը, բնավորությունը և ընդունակությունները, ինչպես նաև այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են հավակնություն-

ների մակարդակը, հետաքրքրությունները, մտածողության ոճը, հուզականային ոլորտի առանձնահատկությունները և այլն:

Անձի հոգեբանական որակները ներառում են կամային հատկություններ (նպատակասլացությունը, հաստատականությունը, տոկունությունը, ռիսկի դիմելու ունակությունը, նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը, կարգավարությունը), մասնագիտական որակները (մասնագիտական գիտելիքները, մարտական հմտությունները և կարողությունները) և համամարդկային որակները, որոնցից են ազնվությունը, բարեխղճությունը, ընկերասիրությունը, մարդասիրությունը և այլն: Ամեն մի բնութագիր որոշակի պայմանների առկայության դեպքում կարող է դառնալ որոշիչ գործոն: Պատերազմների պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ մարտիկի որևէ անձնային որակ մարտի հաջող և անհաջող ավարտի, պարտության և հաղթանակի պատճառ է դառնում: Օրինակ այս կամ այն գլխավոր հրամանատարի սառնասրտությունը և կշռադատվածությունը բազմիցս փրկել էր բանակները և պետությունները կործանումից, բայց մյուս կողմից՝ դանդաղկոտությունը և ուշացած որոշումը ճակատագրական են եղել պատերազմի ելքի համար:

Բնավորությունը, որպես տիպաբանական գծերի համակցություն, նույնպես պետք է հաշվի առնել բանակային կյանքի կազմակերպման ընթացքում: Անհատական–հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը բանակային կյանքի կարևորագույն անհրաժեշտությունն են ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական պայմաններում:

Խոսելով այնպիսի հասկացության մասին, ինչպիսին է, օրինակ զինվորի խառնվածքը՝ հոգեբանները նշում են, որ աշխույժ, շարժուն, տպավորությունների փոփոխմանը և ուրախ տրամադրության ձգտող սանգվինիկը մեծ դժվարություններ կունենա, եթե կատարի միանման, միապաղաղ աշխատանք, որը չի ենթադրում գործողությունների փոփոխում: Անհրաժեշտ է նրանց տալ այնպիսի հանձնարարություններ, որոնք պահանջում են մշտական շարժողական ակտիվություն, ակտիվ շփում, տեղից տեղ փոխադրում: Այդ պատճառ-

ռով սանգվինիկներն ավելի հաջող են յուրացնում, օրինակ, մարտական մեքենայի վարորդի մասնագիտությունը: Դրա հետ մեկտեղ սանգվինիկը ջանասեր չէ և հազվադեպ է սկսած գործը հասցնում ավարտին:

Կրակոտ, իմպուլսիվ, կամային, անարդարությանը հիվանդագին վերաբերվող խոլերիկն ունակ է կատարել ամենադժվար և վտանգավոր հանձնարարությունները: Նա կարող է շատ արդյունավետ գործել ծայրահեղ իրավիճակներում, որոնք պահանջում են արագ և ճիշտ որոշում կայացնել, ինչպես նաև կարող է պատասխանատվությունն իր վրա վերցնել և նպատակին հասնելու համար առավելագույնս ջանք գործադրել: Խոլերիկներն անփոխարինելի են հետախուզության մեջ, երբ, օրինակ, ինքնաթիռի կամ սուզանավի անձնակազմը գտնվում է բեկումնային իրադրության մեջ և այլն: Մյուս կողմից՝ խոլերիկի բռնկուն բնավորությունը միջանձնային փոխհարաբերություններում հիմնախնդիրներ է ստեղծում և կոնֆլիկտային իրավիճակների պատճառ է դառնում:

Այնտեղ, ուր կատարվող աշխատանքի բնույթը պահանջում է համբերատար վերաբերմունք, հանգստություն և կշռադատվածություն և միևնույն ժամանակ՝ լարվածություն (օրինակ՝ մարտական պահակետ, նշանառուի աշխատանք), ամենահաջողը գործում են ֆլեգմատիկ խառնվածք ունեցող անձինք:

Խորը, իրավիճակը վերլուծող, հանգամանալից մտածողությանը հակված մեղանխոլիկն ավելի լավ կկատարի հանձնարարությունը, երբ անհրաժեշտ է հաշվի առնել ընդունվող որոշումների բոլոր հանգամանքները: Միջանձնային փոխհարաբերություններում մեղանխոլիկը նրբազգաց է, տակտով և, առհասարակ, չի վիրավորում կողքինի և կարող է իրեն ուրիշի տեղում պատկերացնել: Մյուս կողմից՝ ինքնամփոփ և մտածկոտ է, ինչը հաճախ խանգարում է այն իրավիճակներում, երբ հարկավոր են անհապաղ և շուտափույթ գործողություններ:

Բնավորության գծերի վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել նաև, որ դրանցից ոչ մեկն ինքնին դրական չէ, այլ պետք է հա-

մակցվի իր հակառակի հետ (բևեռացվածության հոգեբանական օրենքի համաձայն): Օրինակ՝ երկչոտությունը որպես անհատական գիծ հիմնախնդիրների աղբյուր է դառնում ոչ միայն կրողի համար, այլև ամբողջ զինվորական խմբի (այդպիսի մարդը կարող է իր շրջապատում խուճապ սերմանել): Սակայն երկչոտության հակառակը ոչ թե խիզախությունն է, այլ, ինչպես դեռ Արիստոտելն էր նշում, խենթությունը: Խենթ, խելակորույս խիզախությունը նույնքան վտանգավոր է ռազմական կյանքում, որքան երկչոտությունը: Միայն նրանց «ոսկե միջինն» է մոտեցնում մեզ «խիզախություն» հասկացությամբ: Պատերազմական պայմաններում անվտանգության ծգտումը կարող է փրկել զինվորի կյանքը:

Բարձր ագրեսիվությունը խնդիրներ է ստեղծում զինվորական կուլեկտիվում, բայց պատերազմի ժամանակ այն նույնիսկ անհրաժեշտ է: Որոշ հոգեբաններ ժամանակին մշակել են մի շարք միջոցներ «ագրեսիվ ունակությունների» զարգացման համար, որոնք ապահովում են պատերազմական գործողությունների հաջող ընթացքը: Սակայն պետք է նշել, որ անհրաժեշտ ագրեսիվությունն առաջանում է ոչ թե արհեստականորեն, այլ տվյալ պատերազմի արդարության և ճշմարտացիության գիտակցման դեպքում:

Չույզեր և զգացմունքներ: Որպես կայացած հարմարման չափանիշ՝ հոգեբաններից շատերն առանձնացնում են հուզական գործոնը, մասնավորապես՝ անձի վարքի հուզական կայունությունը: Եթե զինծառայողի վարքում նկատվում է հակադրումների հուզական կայունություն, ապա, տվյալ դեպքում, նրա վարքը համապատասխանում է իրադրությանը:

Չարմարման գարծընթացի առաջին փուլում ուժեղանում է նորակոչիկի վարքի հուզական գործոնը: Այդ ուժեղացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր սոցիալական պայմանները, անսովոր լինելով, զնահատվում են նորակոչիկի կողմից որպես տագնապալի: Նորակոչիկի բարձր հուզականությունը չի համապատասխանում նոր սոցիալական իրականության հուզական ֆոնին, այ-

սինքն՝ նոր պայմաններն անհրաժեշտաբար չեն պահանջում հույզերի նման գերգործառնական վիճակ: Սակայն, քանի որ նորակոչիկի վարքի հուզական բաղադրիչը չի համապատասխանում իրականությանը, նրա արարքները ևս համապատասխան չեն նոր պայմաններին: Ձինծառայողի հարմարման առաջին փուլը կարող է բնութագրվել որպես կարծրատիպերի կոնֆլիկտի փուլ, որը բնորոշվում է սովորականից ավելի ակտիվ հուզականությամբ: Նման հուզականությունը հարմարվելու գիտակցված կամ, ավելի հաճախ, չգիտակցված մեխանիզմ է: Այլ կերպ ասած՝ բարձր հուզականությունը, որը գրանցվում է նորակոչիկի վարքում, կարող է դիտվել որպես արտաքին և ներքին կոնֆլիկտի հետևանք:

Հույզը բնագոյային ակտիվության դրսևորում է, որն ի սկզբանե հարմարվողական վիճակի հասնելու նպատակ է հետապնդում: Հուզական վարքի լարվածությունը մեծանում է արտակարգ իրավիճակներում, երբ կյանքին վտանգ է սպառնում, գործի է դրվում ինքնապահպանման բնագոյի գերակտիվությունը: Սակայն մենք պետք է տարբերակենք հարմարումը և հարմարվողականությունը: Հարմարումը ոչ միայն հարմարվողականություն է, այլ նաև սեփական հոգեվիճակի համապատասխանեցումն է իրադրության օբյեկտիվ պայմաններին: Հուզական հարմարվողականության աստիճանը պետք է համապատասխանի արտաքին ազդեցության ուժին և բնույթին, այսինքն՝ արտահայտվող հույզերի մակարդակը պետք է համապատասխանի իրադրության օբյեկտիվ պայմաններին:

Երբ խոսում ենք հուզական անկայունության մասին, առաջին հերթին նկատի ունենք կրկնվող իրադրություններում հույզերի մեծ տատանումները: Նշենք, որ սոցիալական պայմանների անսովոր և արտակարգ կարգավիճակն անձի կողմից զնահատվում է որպես ուժեղ սթրեսային գործոն: Հենց դա է պատճառը, որ բանակային ծառայության պայմաններին հարմարվելու առաջին փուլը գերհուզական բնույթ է ստանում: Վարքի հուզական բաղադրիչը դառնում է առաջնային, քանի որ դեռ ձևավորված չեն հարմարվողական

(աղապատիվ) վարքի ավելի համարժեք մոդելներ: Վարքի հարմարվողական համակարգը համարվում է կայացած, երբ հուզական բաղադրիչի մակարդակը համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը և կայուն է մնում կրկնվող իրադրություններում:

Մարդու կյանքում կան մեծ թվով իրադարձություններ, որոնք նույնիսկ բազմաթիվ անգամ կրկնվելիս չեն դառնում սովորական: Մարտական իրադարձությունները, որքան էլ շատ կրկնվեն զինվորի կյանքում, միշտ առաջացնում են արտակարգ հուզական վարք: Հետախույզները, անցնելով հակառակորդի թիկունքը, ամեն անգամ առաջադրանք կատարելիս վախի զգացում են ապրում: Այդ երևույթը լիովին օրինաչափ է: Զինվորը մարտի ժամանակ միշտ էլ ունի վախի «թույլատրելի» աստիճան, այսպես կոչված «առողջ վախ», քանի որ այն միաժամանակ խելացի զգուշություն է առաջ բերում: Վախի նման աստիճանի գոյությունը ունի հարմարվողական նշանակություն ունի:

Անձի հատկություններից է տազնապալությունը, որը հաճախ դիտվում է որպես հարմարման մեխանիզմ և բաղկացուցիչ սուր սթրեսի պայմաններում: Այն դեպքերում, երբ տազնապալիության մակարդակը չի համապատասխանում իրադրության օբյեկտիվ պատկերին, անձի վարքի կարգավորման մեխանիզմները հայտնվում են գերլարված վիճակում: Սակայն տազնապալիությունն առաջին հերթին անձի հատկություններից մեկն է: Եվ անձի տազնապալիության նորմալ մակարդակը թույլ է տալիս նրան ավելի արդյունավետ գործել տաքեր իրադրություններում: Տազնապալիության բարձր մակարդակը կարող է նպաստել սուիցիդալ վարքի, այսինքն՝ ինքնասպանության մտքերի և մղումների ձևավորմանը: Սուիցիդալ վարքը դասվում է ամենավտանգավորների շարքին: Այն պատահիները, որոնք մինչ ծառայության անցնելն ունեցել են նման վարքի նախահակվածություն, հայտնվելով նոր, բանակային ծառայության անսովոր պայմաններում՝ ավելի հաճախ են նման վարքի տարրեր ցուցաբերում: Նշենք, որ սեփական անձին ֆիզիկական վնաս պատճառելու միտումը կարող է պայմանավորված լինել հարմարման ցածր

մակարդակով: Այստեղ գործում են ինքնասպանության փորձ առաջացնող բոլոր պատճառները, այդ թվում զինվորների ցանկությունը ուղղակի ազատվել բանակային ծառայությունից, կրճատել ծառայության ժամկետը, փախչել խնդիրների լուծման անհրաժեշտությունից և այլն:

Վարքի դրդապատճառներ: Այլ հավասար պայմաններում (տարիքը, սոցիալական, տնտեսական դիրքը, կրթության մակարդակը, ազգությունը, ընտանեկան դրությունը և այլն) զինծառայությանը հարմարվելու գործընթացը կախված է նրանից, թե նորակոչիկն ինչ իմաստ է դնում ծառայության մեջ: Ինչպես գրում է Ֆ. Նիցշեն. «Մարդն ունակ է դիմանալ ամեն մի «ինչպես»-ին, եթե իմանա «ինչի համար», այլ կերպ ասած՝ հասկանալով իր արաքի իմաստը՝ զինվորն ավելի հեշտ է տանում ինչպես հոգեբանական, այնպես էլ ֆիզիկական դժվարություններն ու ծանրաբեռնվածությունը:

Ղարաբաղում պատերազմի սկզբնական ժամանակաշրջանում, երբ պատերազմում մասնակցելը կամավոր էր, կարելի էր առանձնացնել մասնակցության ուղղակի և անուղղակի դրդապատճառներ: Ուղղակի դրդապատճառները կապված էին պատերազմին մասնակցելու ներքին անհրաժեշտության և այնպիսի հայրենասիրական իմաստների և դիրքորոշումների հետ, ինչպիսիք են. «Եթե ոչ ես, ապա ո՞վ», «Այլ կերպ ես ինձ չեմ պատկերացնում», «Ես չեմ կարող հանգիստ նստել, երբ ինչ-որ մեկն իմ փոխարեն այնտեղ արյուն է թափում» և այլն: Անուղղակի դրդապատճառներ ունեցող մարդկանց համար պատերազմին մասնակցելը դարձավ անձնական հիմնախնդիրների լուծման փոխհատուցող մեխանիզմ: Այդ դրդապատճառներից էին՝

- անձնական դիմագծի և ինքնակտուալացման հետ կապված դրդապատճառներ (սեփական ուժերը փորձելը կյանքի և մահվան իրավիճակում, լինել իսկական տղամարդ, զենք կրել և այլն),
- շրջապատի ազդեցության հետևանքով ձևավորված դրդա-

- պատճառներ՝ «մոտիկ ընկերները գնացին կռվելու», «հարգված անձը գնաց և պետք է նրա հետևից գնալ» և այլն,
- կյանքի տարբեր իրավիճակների հետ կապված դրդապատճառներ, այսինքն՝ պատերազմը որպես փախուստ իրավիճակից. վախի զգացում՝ բանակից փախուստի համար պատժվելուց, քրեական հանցագործության պատժի նկատմամբ, ծանծրույթ մտերիմների փոխհարաբերություններից, «սիրած աղջիկն ուրիշի հետ է ամուսանցել» և այլն:

Դրդապատճառների խնդրի հետ սերտորեն կապված է սոցիալական դիրքորոշումների պրոբլեմը: Կախված նրանից, թե մինչ զորակոչվելը մարդու մոտ ինչպիսի դիրքորոշումներ են ձևավորվել զինվորական պարտքի նկատմամբ՝ բանակում նա ցուցաբերում է համապատասխան վարք: Երբեմն սոցիալական միջավայրը՝ ընտանիքը, ընկերները, բարեկամները, նկարագրում են բանակային կյանքը որպես ծանր և դժժան փորձություն, հրամանատարական կազմը՝ որպես բռնակալական, իսկ բանակում անցկացրած տարիները՝ որպես անվերադարձ կորցրած: Այս դեպքում հարմարումը բանակի պայմաններին ընթանում է հիվանդագին կերպով, քանի որ նորակոչիկն բանակի նկատմամբ ունի նախապես ձևավորված բացասական դիրքորոշումներ: Մյուս կողմից՝ իհարկե, երիտասարդին հոգեբանորեն պետք է պատրաստել ծառայությանը. սխալ կլինի, եթե բանակային կյանքը նրան ներկայացվի առանց բարդությունների և դժվարությունների: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի բանակին պատրաստումն իրականացվի ինչպես փորձառու զինվորական անձնակազմի, այնպես էլ հատուկ պատրաստված ռազմական սոցիոլոգների, հոգեբանների, սոցիալական աշխատողների կողմից: Այն դեպքում, երբ նորակոչիկը լիովին տեղեկացված է զինվորական ծառայության նպատակների, խնդիրների և նշանակության, հնարավոր դժվարությունների, բանակային կյանքի դրական և բացասական կողմերի մասին, նրա հարմարումը ծառայությանը ընթանում է ավելի հեշտ: Ուսումնասիրելով յուրաքանչյուր նորակոչիկի հոգեկան կառուցվածքը, նրա խառնված-

քը, միջանձնային փոխհարաբերությունները, սպասումները, բնավորությունը, աշխարհայացքը՝ հնարավոր կլինի կանխատեսել հարմարման հետ կապված դժվարությունների հաղթահարման առանձնահատկությունները, և նախապես նորակոչիկին նախապատրաստել դրանց:

Տարիքային առանձնահատկություններ: Բանակային կոնֆլիկտների մեծ մասի աղբյուրը ենթակաների ճնշված (կամ թվացյալ ճնշված) ինքնասիրությունն է: Առաջին հերթին պետք է նշել, որ բանակային տարիքի անձինք ռիսկի խումբ են՝ կապված հոգեբանական խոցելիության հետ: Երիտասարդը հիվանդագին է վերաբերվում այն ամենին, ինչ կարող է նույնիսկ միջնորդավորված ձևով դիպչել իր ինքնասիրությանը: Այս հանգամանքի հոգեբանական պատճառն այն է, որ նրա անհատականությունը դեռ կայուն չէ, և «Ես»-ի ըմբռնումը լիովին ձևավորված չէ: Այդ պատճառով իր մասին կարծիք կազմելիս նա չափազանց զգայուն է շրջապատի կարծիքների նկատմամբ: Բացի դրանից, բանակային տարիքի երիտասարդին հատուկ է մաքսիմալիզմը, չափազանցումը. նրա համար երևույթը կամ «շատ լավն է», կամ «շատ վատը»: Տարիքային այս առանձնահատկությունը թույլ չի տալիս նրան տեսնել և հասկանալ բացասական և դրական գծերը՝ լավ և վատ մարդու մեջ, ինչպես նաև միջանձնային դիրքորոշումների փոփոխությունները և զարգացումը: Մինչդեռ ուրիշի նկատմամբ դիրքորոշումների ճկունությունը բանակային պայմաններին հարմարվելու անհրաժեշտ պայման է: Ծառայողների տարիքը բնութագրվում է նաև շրջապատից առանձնանալու ցանկությամբ և հաճախ՝ անկարողությամբ: Վերջին դեպքում երիտասարդը դիմում է ցուցադրական վարքի շեղված ձևերին՝ ուրիշներին «ապացուցելու», թե ինքը որքան «ուժեղ» է և «անկախ»: Այսպիսով՝ ծառայողների տարիքային հոգեբանական առանձնահատկությունները կարելի է համարել բանակային կոնֆլիկտների պատճառներից մեկը:

Ազգա-մշակութային առանձնահատկություններ: Ավանդական արևելյան մշակույթի պայմաններում իշխանությանը ենթարկվելն անվիճելի հարց է եղել: Մահմեդական աշխարհի մեծագույն մտածողներից մեկը՝ Ֆասսանը Բասրայից (642–728թթ.), սովորեցնում է. «Բռնապետների կողմից բռնությունը զուտ Աստծո ուղարկած պատիժ է, հարկավոր չէ դրան դիմադրել, այլ պետք է միայն համբերել»: Պարզ է, որ այդօրինակ գաղափարախոսությամբ բանակը կարող է առանց առարկության ենթարկվել իշխանության կրողին և ցեղի ոգուն:

Հայ մարդու հոգեբանական առանձնահատկություններից է կողմնորոշումն անհատական «Ես»-ին. հայը պետք է գիտակցի այն, թե ինչին է ծառայում, հավատա գործի սրբությանը, գիտակցի կատարվող քայլի ճշմարտացիությունը: Հային պետք է նպատակ, որը նրան վեր կբարձրացնի ազգային եասսիրությունից և կմիաձուլի համամարդկային արժեքների հետ: Միայն այս դեպքում հայը կամավոր համաձայնվում է ենթարկվել, համբերությամբ է տանում բանակային և պատերազմական կյանքի դժվարությունները և արիաբար պայքարում թշնամու դեմ:

Հայերը հակված են գերազնահատելու միջանձնային փոխհարաբերությունների նշանակությունը և հուզականորեն են կողմնորոշված: Դա արտացոլվում է նաև բանակային փոխհարաբերություններում, սակայն պատերազմի ժամանակ այս հարցերը հետին պլան են մղվում: Ընդհանուր նպատակը և արժեքային կողմնորոշումների միասնությունը երկրորդական են դարձնում բոլոր այլ տիպի հիմնախնդիրները:

Մասնագիտական կրթություն: Կրթության գործոնը կարևոր դեր է խաղում բանակային կյանքում: Բարձագույն կրթություն ունեցող ծառայողները հեղինակություն են վայելում, բայց մյուս կողմից՝ նրանք ավելի դժվար են հարմարվում բանակային կարգուկանոնին և կանոնադրական փոխհարաբերություններին:

Ինչ վերաբերում է զինվորի մարտական վարպետությանն ու կրթվածությանը, ապա վերջիններս կազմվում են մի շարք բաղադրիչներից: Դրանք են՝

- հմտություններ՝ վարժությունների արդյունքում ձևավորված գործողություններ, որոնք կատարվում են հեշտ, արագ, ավտոմատացված, վարպետորեն, առանց որևէ կենտրոնացվածության և լարվածության: Դրանք օգնում են զինվորին խնայել ուժերը ծայրահեղ իրավիճակներում, հոգեպես չհյուծվել մարտական իրադրության ուժեղ ներգործության ժամանակ (օրինակ՝ բարդ զենքերին տիրապետելու հմտություն, մարտական մեքենայի վարելը և այլն),

- իրազեկություն՝ ռազմական գործունեություններում անհրաժեշտ գիտելիքների ճիշտ օգտագործում:

Բանակում հմտությունների և կարողությունների ձևավորումը բարդ խնդիր է: Վարժությունները պետք է այնպես կազմակերպել, որ կատարման հեղինակության հետ մեկտեղ դրանք չդառնան անգիտակցաբար կատարվող՝ հսկողության և գիտակցության լրիվ անջատմամբ: Անհրաժեշտ է, որ զինվորը գիտակցի յուրաքանչյուր վարժության իմաստը, հակառակ դեպքում՝ անիմաստության զգացումը կդառնա գործի նկատմամբ հետաքրքրության կորստի և հայրենիքի ճակատագրի նկատմամբ անտարբեր վերաբերմունքի պատճառ:

«Անուղեղ զինվորի միջոցով հնարավոր չէ հաղթանակել ոչ մի մարտում»:

Ա.Վ. Սուվորով

5.5 Շեղվող վարքը և սոցիալական վերահսկողությունը բանակում

Սոցիոլոգիայում շեղվող վարքն ընդունված է սահմանել որպես վարքի այնպիսի ձև, որը հակասում է հասարակության, սոցիալական խմբի շրջանակներում ընդունված նորմերին, օրենքներին:

Ցանկացած հասարակություն կամ սոցիալական խումբ, սեփական ինքնապահպանման նպատակով, սահմանում է վարքի որոշակի նորմեր, ինչպես նաև՝ վերջիններիս ամրապնդելու մեխանիզմ: Դրա պատճառն այն է, որ հասարակությունը չի կարող նորմալ գործառնել առանց վարքի որոշակի ընդունված կանոնների գոյության, որոնք սահմանում են անհրաժեշտ վարքի պահանջներն ու սպասումները: Այս դրույթը ճիշտ է ինչպես ողջ հասարակության, այնպես էլ վերջինիս մաս կազմող առաջնային և երկրորդական սոցիալական խմբերի դեպքում, որոնց շրջանակներում ծավալվող միջանձնային հարաբերությունները կարգավորվում են համապատասխան սոցիալական նորմերով և օրենքներով:

Բանակը որպես սոցիալական խումբ առանձնանում է խմբային ակնկալիքներով, նորմերով, նաև շեղվող վարքի և սոցիալական վերահսկողության սեփական առանձնահատկություններով: Բանակում գործող ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգը այդ տիպի սոցիալական խմբերում առկա շեղվող վարքի ծն է: Պատմահամեմատական հետազոտությունները վկայում են, որ ոչ կանոնադրական հարաբերությունները միշտ էլ տարբեր դրսևորումներով գոյություն են ունեցել և այսօր էլ պահպանվում են աշխարհի գրեթե բոլոր բանակներում:

Խոսելով բանակում շեղվող վարքի առանձնահատկությունների մասին՝ պետք է հստակեցնել, որ սոցիալական նորմերի խախտումները կարող են որակվել որպես շեղվող վարքի դրսևորումներ: Ընդունված է համարել, որ բանակում շեղվող է համարվում ցանկացած վարքի դրսևորում, որը հակասում է կանոնադրորեն ամրապնդված օրենք–նորմերին, որոնք սահմանում են զինծառայողների իրավունքները և պարտականությունները՝ ըստ բանակում վերջիններիս զբաղեցրած դիրքի: Այս դեպքում որպես շեղվող վարքի դրսևորում կարող են դիտարկվել վարքի այն տիպերը, որոնք պայմանականորեն սահմանվում են որպես ոչ կանոնադրական հարաբերություններ:

Շեղվող վարքի սահմանումը չի սահմանափակվում օրենք–նոր-

մերի խախտումների դեպքերով, այլ ներառում է նաև նորմ–սպասումների խախտումները: Շատ դեպքերում օրենք–նորմերը և նորմ–սպասումները կարող են նույնանալ, այսինքն՝ հասարակության մեջ պաշտոնականորեն ամրագրված վարքի մոդելները կարող են ընդունված լինել հասարակության կողմից, և վերջիններիս իրականացումը կարող է սոցիալական սպասումների աղբյուր դառնալ: Սակայն խոսելով բանակի՝ որպես հատուկ սոցիալական խմբի առանձնահատկությունների մասին՝ հարկ է նշել, որ կանոնադրական հարաբերություններով սահմանված վարքի նորմերը ոչ միշտ կարող են լինել այդ խմբում գերակշռող սոցիալական սպասումների առարկա:

Սի կողմից՝ բանակում առկա է սոցիալական սանկցավորման ֆորմալ համակարգ, որը նախատեսում է օրենքով սահմանված պատիժներ՝ բանակում կանոնադրական հարաբերությունների նորմերի խախտման դեպքում: Մյուս կողմից՝ բանակում գործում են նաև սանկցավորման ոչ ֆորմալ մի շարք մեխանիզմներ, որոնք ոչ ֆորմալ պատժի մեխանիզմներ են: Վերջիններս կիրառվում են բանակում ոչ ֆորմալ ձևով գերիշխող սոցիալական դիրք զբաղեցրած զինծառայողների նախաձեռնությամբ՝ այլ զինծառայողների կողմից ոչ ֆորմալ ձևով վարքի սահմանված նորմերը խախտելու դեպքում, որոնք, իրենց հերթին, կարող են չհամապատասխանել կանոնադրական հարաբերությունների նորմերին և նույնիսկ հակադրվել դրանց: Այս դեպքում ակնհայտ է դառնում, որ վարքի այն նորմերը, որոնք ընդունելի են բանակային ենթամշակույթի ոչ ֆորմալ նորմ–սպասումների տեսանկյունից, կարող են համարվել շեղվող՝ կանոնադրական հարաբերությունների սկզբունքների տեսանկյունից և հակառակը:

Այսպիսով՝ բանակում շեղվող վարքի հետազոտողը կարող է բախվել այն հակադրության հետ, որ կանոնադրական հարաբերությունների նորմեր պահպանելը կարող է դիտարկվել որպես շեղվող վարքի դրսևորում՝ բանակում գոյություն ունեցող ենթամշակութային արժեքների և սպասումների տեսանկյունից:

Սինչև 1997 թ. բանակում շեղվող վարքի թեման հիմնականում փակ էր հայ հասարակության համար, թեև արդեն մի քանի տարի էր, ինչ դադարել էին մարտական գործողությունները: Սակայն հայկական բանակում գոյություն ունեցող բռնության դեպքերի վերաբերյալ տարածվող լուրերն ու մամուլում երևացող առանձին հրապարակումները մեծ լարում էին առաջացնում հասարակության մեջ: Առաջին անգամ բանակում տիրող իրավիճակը հրապարակային քննարկման առարկա դարձրեց Հայաստանի հեխինկյան կոմիտեն: Հետագայում ծավալված քննարկումների, բողոքի ակցիաների, ասուլիսների ու հայտարարությունների արդյունքում հասարակական կարծիք ձևավորվեց, ըստ որի՝ բանակում առկա շեղվող վարքի այս կամ այն դրսևորումները ոտնահարում են մարդու իրավունքներն ու ազատությունները:

Բանակում գոյություն ունեցող ուղղակի և կառուցվածքային բռնության դրսևորումները, որոնք ուղղված են զինծառայողների շրջանում ֆորմալ և ոչ ֆորմալ հիերարխիայի և խտրականությունների ձևավորմանը, կարելի է բացատրել տարիների ընթացքում ձևավորված մշակութային բռնության երևույթի առկայությամբ, որն ուղղված է ծառայողների միջև ոչ կանոնադրական հարաբերությունների ինստիտուցիոնալացմանը: ՀՀ կանոնավոր բանակը ժառանգել է խորհրդային բանակի կանոնադրական մոդելը՝ վերջինիս բնորոշ շեղվող վարքի այնպիսի բացասական դրսևորումներն արդարացնող և ինչ-որ չափով նաև լեգիտիմացնող արժեքներով, որոնք ապահովում են բանակում հանցագործությունների, «դեդոլվչինայի», «ստարիկ-մոլոդոյ» և այլ ոչ կանոնադրական փոխհարաբերությունների պահպանումը և շարունակականությունը բանակում: Սրանց գումարվեցին նոր ոչ կանոնադրական հարաբերությունների ձևերը, տարածում ստացան «չաստ նայողներ» և այլ վարքի մոդելներ:

Հայաստանի հեխինկյան կոմիտեի ունեցած տվյալներով՝ 1994–1997թթ. գրանցվել է զինծառայողների նկատմամբ գործադրված բռնությունների մոտ 800 դեպք: Ըստ ՀՀ պաշտոնական

աղբյուրների՝ սկսած 1999 թ. 77 զինված ուժերում տարեցտարի նվազում են մահվան ելքով հանցագործությունների դեպքերն ու պատահարները⁸⁰։ Չնայած բանակում շեղվող վարքի ծայրահեղ դրսևորումներից մեկի սպանությունների թիվն ըստ պաշտոնական վիճակագրության շարունակում է նվազել, այնուամենայնիվ, բանակում գոյություն ունեցող ոչ կանոնադրական հարաբերությունների դրսևորումների առկայությունը ինքնին վկայում է այն մասին, որ շեղվող վարքը հայկական բանակում հիմնական խնդիրներից մեկն է, որն իր հետադարձ ազդեցությունն է թողնում նաև հասարակության մեջ բանակի և բանակային ծառայության հանդեպ ձևավորվող կարծիքի և կարծրատիպերի ձևավորման վրա, որոնք կարող են հաղթահարվել ոչ կանոնադրական հարաբերությունների խիստ սանկցավորման և սոցիալական վերահսկողության համապատասխան մեխանիզմների ձևավորման, ինչպես նաև հասարակության մեջ բանակային ծառայության նոր, առողջ մշակույթ սերմանելու և բանակում գոյություն ունեցող բռնության հաղթահարման միջոցով։

Բանակում շեղվող վարքի, մասնավորապես՝ ոչ կանոնադրական հարաբերությունների գործառնման հիմնական մեխանիզմը հետևյալն է. ելնելով համապատասխան առանձնահատկություններից՝ բանակում ձևավորվում են միմյանց հետ հակադրության մեջ մտնող սոցիալական խմբեր, որոնք ձգտում են սեփական խմբի դիրքի բարձրացմանը և իշխող դերի ամրապնդմանը։ Զինվորական կոլեկտիվում այս կամ այն խմբի գերիշխող դիրքի ձևավորումն իր հերթին ենթադրում է այլ խմբերի նկատմամբ արտոնությունների և պարտականությունների ապահովում։ Մի սոցիալական խմբին մյուսներից վեր դասելը, վերջինիս համապատասխան արտոնությունների ձեռքբերման շնորհիվ, ենթադրում է այդ նպատակին հասնելուն ուղղված տարբեր տիպի բռնությունների իրականացում։

Կարելի է առանձնացնել բանակում ոչ կանոնադրական հարաբերությունների դրսևորման հետևյալ ձևերը։ Դրանք են՝

⁸⁰ Դիտորդ, մարդու իրավունքները Հայաստանում. N 5, 2002թ.

1. «Ղեդովչինա», որը ոչ ֆորմալ հստակ աստիճանակարգում է զինվորներին ըստ նրանց անցած ծառայության ժամկետի ցուցանիշի: Դրանով իսկ, արդեն գոյություն ունեցող, իրավաբանորեն ձևակերպված զինվորական հիերարխիայի մեջ ստեղծվում է մի առանձին, ներքին հիերարխիա, որի ստորին մասում գտնվում են նորակոչիկները, իսկ վերին մասում՝ զորացրվողները և որտեղ ամեն մի զինվոր պետք է իմանա իր տեղը: «Ղեդովչինա»-ն հատկապես ակտիվ և ազդեցիկ է լինում խաղաղ ժամանակաշրջանում: Պատերազմի ժամանակ, ինչպես վկայում են աֆղանական, ղարաբաղյան և այլ պատերազմների փորձերը, այդ երևույթը դառնում է աննշան:

«Ղեդովչինա»-ի առաջացումն ու գոյությունն ունի իր թե օբյեկտիվ և թե սուբյեկտիվ պատճառները: Յուրաքանչյուր զինվորական ստորաբաժանում, որպես համակարգ, բաժանվում է տիպային ենթահամակարգերի: Օրինակ՝ գունդը բաժանվում է գումարտակների, գումարտակը՝ վաշտերի, վաշտը՝ դասակների, վերջինս էլ՝ ջոկատների: Սրանցից յուրաքանչյուրը ֆորմալ խմբավորում է: Ղեկավարի իրավասությունները ներառում են համակարգի ամբողջությունն ապահովելը, ենթահամակարգում կանոնադրական պահանջների իրականացումը, բարձր ղեկավար օղակների կողմից տրվող հրամանների կատարումը և այլն է: Ղեկավար օղակը ներկայացնող անձի համար կանոնադրական միջանձնային հարաբերություններն ունեն երկու բաղկացուցիչ. իրենից բարձր գտնվող ղեկավար օղակը, որին նա անվերապահորեն ենթարկվում է և իրենից ցածր գտնվող օղակները, որոնք անվերապահորեն ենթարկվում են իրեն: Կանոնադրական հարաբերությունների այս կարգը պահպանվում է զինվորական պաշտոնակարգի բոլոր աստիճաններում, բացի ստորինից: Շարքային անձնակազմը պարտավոր է, փաստորեն, կատարել իրենից բարձր գտնվող ղեկավարման օղակների հրամանները, սակայն չունի ստորադասներ: 1995թ. Ռուսաստանի բանակից զորացրված զինվորների և սերժանտների շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումից պարզ դարձավ, որ նրանց մեծամասնությունը «ղեդովչինա»-ի պատճառ են համարում զինվորական պաշտոնակարգի այս

առանձնահատկությունը, փաստելով, որ այն պարագայում, երբ բարձր հրամկազմն իրեն հակադրում է ցածր հրամկազմին, իսկ վերջիններս էլ՝ սերժանտներին, ծառայության ավելի մեծ ժամկետ անցած զինծառայողներն իրենց հակադրում են նորակոչիկներին:

«Ղեղդվչինա»-ն միջանձնային հարաբերությունների ձև է, որը իր կայուն տեղն է գտել զինվորական կոլեկտիվում: Երբեմն «ղեղդվչինայի» ներգործությունը կոլեկտիվի անդամների վրա ավելի մեծ է, քան ֆորմալ օրենքներով սահմանված պահանջներինը: Զինվորական կոլեկտիվում ներքին նորմերը գլխավորապես ծառայում են ներքին պաշտոնակարգի «վերնախավին» և ոչ թե ճնշող մեծամասնություն կազմող սովորական զինվորներին:

2. «Երկրացիություն», որը կարող է սահմանվել որպես զինծառայողների ոչ ֆորմալ բաժանում՝ ըստ հայրենակցական սկզբունքի: Սասնավորապես, վերջին ժամանակներս հայկական բանակում լայն տարածում է ստացել ըստ «երկրացիության» սկզբունքի իրականացվող հովանավորչությունը

3. «Հովանավորչություն», որի դեպքում արդեն ծառայողական փորձ ունեցող, հեղինակություն վայելող զինծառայողը հովանավորում է ծառայությունը նոր սկսող նորակոչիկին և ամեն կերպ ապահովում նրա հետագա «հաջողակ» ծառայությունը: Արդյունքում՝ հովանավորությունն ստացած զինվորը, անկախ իր մտավոր և ֆիզիկական կարողություններից կամ արժանիքներից, իշխող որոշակի դիրք է զբաղեցնում զինվորական կոլեկտիվում:

4. «Ուժի պաշտամունք», որը զինծառայողների բաժանումն է՝ ըստ կամային և ֆիզիկական անհատական որակների: Որոշակի անհատական որակներով օժտված զինծառայողները կարող են գրավել ավելի բարձր սոցիալական դիրք սեփական խմբում, որը կարող է չհամապատասխանել պաշտոնակարգում զբաղեցրած նրանց ֆորմալ դիրքին: Բանակում «ուժի պաշտամունքը», որպես ոչ կանոնադրական հարաբերությունների դրսևորման ձև, սերտորեն կապված է սովերաժին գործոնների և հարաբերությունների հետ:

5. «Քրեածին գործոն», որը զինծառայողներին ոչ ֆորմալ ձևով

բաժանում է ենթախմբերի՝ ըստ մինչբանակային քաղաքացիական կյանքում նրանց քրեական այս կամ այն խմբերին պատկանելիության սկզբունքի: Անկախ այն հանգամանքից՝ ունեցել են արդյոք այս կամ այն զինծառայողները դատվածություն նախկինում թե ոչ նրանք կարող են լինել հասարակության մեջ գոյություն ունեցող տարբեր հանցագործ խմբերի հատուկ մշակութային առանձնահատկությունների կրողներ, ինչն իր արտահայտությունն է գտնում նաև բանակային ծառայության տարիներին՝ դառնալով բանակում ոչ կանոնադրական հարաբերությունների դրսևորման ձևերից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Դիտորդ. մարդու իրավունքները Հայաստանում, N 5, 2002:
- Հայկական բանակ, ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես, Երևան, 2001 3(29):
- ՀՀ օրենքը «Զինապարտության մասին»:
- Սանասյան Ա., Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Երևան, Գասպրինո, 2003:
- Սոցիոլոգիական որակական հետազոտություններ, Ուսումնական նյութեր, Երևան, 2001:
- Խաչատրյան Ա., «Ասպետական միությունները և կտրիճների կազմավորումները իսլամական հասարակության մեջ», Բեյրութ, 1998 (արաբերեն):
- Алексиевич С., У войны - не женское лицо. Минск, 1985.
- Анцупов А.Я., Шипилов А.И. Конфликтология. М., 1999.
- Армия и общество (под ред. Чалдымова Н. А., Черкасенко А. И.). М., 1996.
- Блауберг И.В., Юдин Э.Г. Становление и сущность системного подхода. М., 1973.
- Бурда, С.М., "Престиж военной службы". В: Социологические исследования, 1999, N 2, сс. 63—75.
- Ведерников Б.Н., Регентов Г.П., К вопросу о развитии русской военной социологии». В: Социологические исследования, 1985, N 4, сс. 98—101.
- Ведерников В. Н. Военная социология: вопросы теории, методологии, истории и практики. М.: ГАВС, 1994.
- Вишневская А.В., Конфликтология. Москва, 2003.
- Война и армия (под ред. Волкогонова Д. А., Миловидова А. С., Тюшкевича С. А.), М., 1977.

- Воробьев В.А., «Социология военная». В: Социологический словарь. Минск., Университетское, 1991.
- Громова О. Н., Конфликтология. Курс Лекций. М., 2000.
- Давыдов В., "Лицо новобранца". В. Военный вестник, 1927, N2, сс. 56–58
- Денисовский Т. М., Смирнов А. И. "Новые тенденции в адаптации семей бывших офицеров к гражданской жизни" В. Социологические исследования, N 8, 1999, с. 46–52.
- Дмитриев Л.И., Кудрявцев В.Н., Кудрявцев Н.В., Введение в общую теорию конфликтов М., 1993
- Закон РФ "О воинской обязанности".
- Закон РФ "О воинской обязанности и военной службе".
- Здравомыслов А., Социология конфликта, Москва, Аспект Пресс, 1996.
- Золян С., Нагорный Карабах: проблема и конфликт, Ереван, 2000.
- Ильин С., "Некоторые вопросы содержания и организации конкретных социологических исследований в войсках" В: Коммунист вооруженных сил, N12, 1967, стр. 34–40
- Как организовать и провести военно–социологическое исследование (Учебное пособие, Авт колл под рук. Андреева Г. П., Макарова Ф. И.). М., ЦВСППИ ВС РФ, 1994.
- Ковалевский С., Научные основы административного управления М, Экономика, 1979.
- Комментарий Федерального Закона "О воинской обязанности и военной службе" (под ред. Стрекозова В. Г.). М., 1999.
- Коноплев В., "Методологические основы и проблемы военно–социологических исследований". В Военная мысль, 1971, N 2, стр. 38–47.
- Кунц Г., О' Донелл С. Управление: системный и ситуационный анализ управленческих функций. М: Прогресс, 1981.
- Лавриенко В.Н. Социология. М, 2000

- Ладанов И. "Социологические исследования в армии США". В: Военный зарубежник, 1967, N5, сс. 64–69.
- Логика научного исследования (Отв. ред. Копнин П.В., Попович М.В.). М.: Наука, 1965.
- Марков Марко, Теория социального управления. М., Прогресс, 1978.
- Менделевич В., "Клиническая и медицинская психология". М., "Медпресс", 2001.
- Образцов И. В., Соловьев С. С., "Социальные проблемы бывших кадровых военнослужащих". В: Социологические исследования, 1998, N4, сс. 70–81.
- Образцов Н.Н., "Военная социология: Проблемы исторического пути и методологии (часть 1)". В: Социологические исследования, 1994, N1, сс. 90–102.
- Общественное мнение в воинском коллективе (под ред. Возженникова А. В.). М., Воениздат, 1993.
- Основы конфликтологии (Под ред. В.Н.Кудрявцева). М., 1997.
- Павлов Ю. А., Михайлов, Ю. Я., "Проблемы адаптации бывших военнослужащих в Тверском регионе". В: Социологические исследования, 2001, N10, сс. 85–87.
- Пожидаев Е.Е., "От боевых действий – к гражданской жизни". В: Социологические исследования, N2, 1999, сс. 70–75.
- "Почему гусар не мог жениться". В: Военно-исторический журнал, 2000, N2, сс. 26–35.
- Пузик В.М., Предмет и методы конкретных военно-социологических исследований. М., ВПА, 1971.
- Пчелинцев А., "Армия и религия: от конфронтации к диалогу". В сб.: Качанов, В. Е. (ред.), Армия и общество. М., Прогресс, 1990, сс. 194–204.
- Рабочая книга социолога (Отв. ред. Осипов Г.В.). М., Наука, 1977.
- Семенова В.В., Качественные методы: введение в гуманистическую социологию. М., Добросвет, 1998.

- Сенявская Е. С., Психология войны в 20 веке: Исторический опыт России. М., РОССПЭН, 1999.
- Сергеев В. П., Эмпирические социологические исследования в РКК и РКМФ в 20-е годы: состояние, проблемы, опыт. В: "В. И. Ленин и актуальные проблемы военного строительства". М., 1990, сс. 134–154.
- Серебрянников В. В., Социология войны. М., 1996.
- Серебрянников В. В., "Генералы и политики". В: Социологические исследования, 2001, N10, с. 70–77.
- Скок А. С., Технологические основы военно-социологического исследования. М., АПС, 1995.
- Советская военная энциклопедия. М., 1976., тт. 1, 8.
- Современная западная социология. Словарь. М., Политиздат, 1990.
- Соловьев С. С., Основы практической военной социологии. М., Анкил-ВОИН, 1996.
- Сорокин П., Человек, цивилизация, общество, М., 1992.
- Социальные конфликты. М., РАН, 1994.
- Средин Г. В., Волкогонов Д. А., Коробейников М. П., Человек в современной войне. М., Воениздат, 1981.
- Стивенс А., Корни Войны в перспективе архетипической концепции Юнга, Нью-Йорк, 1989.
- Сыма Цянь. Исторические записки, М., Наука, 1987.
- Устав Организации Объединенных Наций, 1945.
- Феденко Н. Ф., Галицкий В. П., Психологические аспекты преодоление конфликтных ситуаций в воинском коллективе. М., ВПА, 1981.
- Хуземан Ф., Об образе жизни и смысле смерти. М., 1997.
- Цыганков П. А. Политическая социология международных отношений. М., 1998.

- Чупров В. И., "Отношение призывников к службе в армии по контракту: социальный аспект". В: Социологические исследования, 1994, №3, сс. 46–48.
- Щепаньский Я., Элементарные понятия социологии. М., 1969.
- Ядов В. Я., Стратегия социологического исследования. М., Добросвет, 1998.
- Ahmed Rashid. "Taliban: Militant Islam, Oil, and Fundamentalism in Central Asia". New Haven: Yale University Press, 2001.
- Avruch, K., Black, P., Scimecca, J., Conflict Resolution, Cross-Cultural Perspectives, Greenwood Press, Westport, Connecticut, 1991.
- Azar, E., Burton, J., (ed.), International Conflict Resolution: Theory and Practice, Wheatsheaf Books, Sussex, 1986.
- Azar, E., The Management of Protracted Social Conflict: Theory and Cases, Dartmouth, Hampshire, England, 1990.
- Burton, J., Conflict: Human Needs Theory, Macmillan Press, London, 1990.
- Burton, John W., Conflict: Resolution and Prevention. London: Macmillan, 1990.
- Carr E. H. The twenty Years of crisis 1919–1939. An Introduction to the Study of International relations N.Y. 2001.
- Connor, W., The National Question in Marxist-Leninist Theory and Strategy, New Jersey, Princeton University Press, 1984.
- Cornell E., S., "Autonomy as a Source of Conflict: Caucasian Conflicts in Theoretical Perspective", World Politics, Vol. 54, No. 2, January 2002.
- Coser, L., The Functions of Social Conflict, Macmillan, London, 1956.
- Department of the Army Field Manual FM 27–10, The Law of Land Warfare, 1956.
- De Vos G., "Socialization for Achievement: Essays on the Cultural Psychology of the Japanese". Berkeley and Los Angeles, 1973.
- Dickinson L., "War: Its Nature, Cause, and Curse". 1923.

- Dougherty J. E. Pfalzgraff R. L. *Contending Theories of International Relations. A Comprehensive Survey.* USA 1997.
- Druckman, D. and Zechmeister K. *Conflict of interest and value dissensus: Propositions in the sociology of conflict.* 1973.
- Fisher, R., *The Social Psychology of Intergroup and International Conflict Resolution,* New York, Springer-Verlag Publishers, 1990.
- Galtung, J., "International Development in Human Perspective", in Burton, J., ed., *Conflict: Human Needs Theory,* George Mason University, Virginia, St. Martin's Press, 1990.
- Galtung, J., "Cultural Violence", *Journal of Peace Research*, Vol., 27, no. 3, 1990.
- Galtung, J., *Violence, Peace and Peace Research,* *Journal of Peace Research.* 1969.
- Goldenberg, S., *Pride of Small Nations, The Caucasus and Post-Soviet Disorder,* New Jersey, Zed Books, 1994.
- Gurr, T. R., Harff, B., *Ethnic Conflict in World Politics,* Westview Press, 1994.
- Gurr, T.R., *Why Men Rebel,* New Jersey, Princeton University Press, 1970.
- Harris, P., Reily, B., (ed), *Democracy and Deep-Rooted Conflict. Options for Negotiators,* IDEA, Ljubljana, 1998.
- Holsty, K. J, *The State, War, And The State Of War.* N.Y 1996.
- Horowitz, D. L. "Ethnic Groups in Conflict". Berkeley. University of California Press 1985.
- Hovannissyan, R., "National Ferment in Armenia", *Freedom at Issue,* Nov./Dec. 1988.
- Hunter, S., *The Transcaucasus in Transition, Nation-Building and Conflict,* Washington, The Centre for Startegic and International Studies, 1994.
- Juergensmeyer, M., "The New Cold War? Religious Nationalism Confronts the Secular State". University of California Press, 1994.
- Kriesberg, L. *Social Conflicts,* Second Edition, Prentice-Hall, 1982.

- Lederach, J.P., *Building Peace – Sustainable Reconciliation In divided Societies*, US Institute Of Peace Press, Washington, 1997.
- Lewis. M. E., *"Sanctioned Violence in Early China"*. New York, State University of New York Press, 1990.
- Merton R. *"Social Theory and Social Structure"*. Glencoe, 1968, p. 39.
- Mooradian, M., *Third Party Mediations and Missed Opportunities in Nagorno–Karabakh: A Design for a Possible Solution*, Unpublished Dissertation for Ph.D., George Mason University, August 1998, Virginia.
- Moses, R., *"Self, Self–Review, and Identity"*, in *The Psychodynamics of International Relationships*, vol. 1, ed. by V. Volkan, Massachusetts, Lexington Books, 1990.
- Rules of Land Warfare*, War Department Doctrine No. 467, Office of the Chief of Staff, approved April 25, 1914 (U.S. Government Printing Office, 1917), par 9.
- Runciman, W., *Relative Deprivation and Social Justice*, Berkeley, University of California Press, 1966.
- Rupesingh, K., *Civil Wars, Civil Peace: An Introduction to Conflict Reesolution*, Pluto Press, London, 1998.
- Sandole, Dennis J.D. *"The Biological Basis of Needs in World Society: the Ultimate Micro–Macro Nexus"*. In: *Conflict: Human Needs Theory*, John W. Burton (ed.). New York: St Martin's Press, 1990.
- Sandole, Dennis J.D. *"Capturing the Complexity of Conflict: Dealing with Violent Ethnic Conflicts of the Post–Cold War Era"*. London, Pinter, 1999.
- Sandole D. *"John Burton's Contributions to Conflict Resolution Theory and Practice: A Personal View."* *International Journal of Peace Studies* (A Special Theme Issue in Honor of John W. Burton), guest edited by Christopher R. Mitchell, vol. 6, no. 1.
- Shaw, M, *Dialectics Of War: An Essay In The Social Theory Of Total War And Peace*. 1988.

- Shwartz, D., Panossian, R., *The Politics of Nation Building in Post-Soviet Armenia, Azerbaijan and Georgia*, Toronto, University of Toronto, 1994.
- Soldiers, Society, and National Security* (Ed. By Sam C. Sarkesian, John A. Williams, Fred B. Bryant), London, Lynne Rienner Publishers, 1995.
- Spencer H. *The principles of ethics*. N.Y., 1904. Vol. I.
- Spencer H. *First principles*. N.Y., 1896.
- Suny, R. *The Revenge of the Past*, California, Stanford University Press, 1993.
- Tajfel, N., *Social Categorization, Social Identity and Social Comparison*, London, 1978.
- Volkan, V., Montville, J., and Demetrios, J., *The Psychodynamics of International Relationships*, vol. 1, Massachusetts, Lexington Books, 1990.
- Volkan, V., *Blood Lines: From Ethnic Pride to Ethnic Terrorism*, Westview Press, Colorado, 1997.
- Walker, Ch., ed., *Armenia and Karabakh*, London, Minority Rights Group, 1991.
- Wallensteen, P., Sollenberg, M., "Armed Conflict, 1989–1998", *Journal Of Peace Research*, vol. 36 (5), 1999.
- Waltz, K. N. *Man, the State, and War: A Theoretical Analysis*. New York, 1959.
- Watson B. A. "When Soldiers Quit. *Studies in Military Disintegration*" Westport, Connecticut, USA, 1997.
- Wright Q. *A Study of War*. N.Y.1951.

Հեղինակային կոլեկտիվ՝

Աթանեսյան Արթուր	Ջաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
Աստվածատուրով Սեդրակ	Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
Բաբայան Ալեքսեյ	Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
Գիշյան Բարսեղ	ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
Զաքարյան Սեյրան	Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ
Թորոսյան Աշոտ	ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի աշխատակից
Սեյժոնյան Նվարդ	Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
Միքայելյան Վլադիմիր	Հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հոգեբանության ամբիոնի դոցենտ
Շահվերդյան Գայանե	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հոգեբանության ամբիոնի վարիչ
Սաղաթեյան Սոնա	ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս

ՌԱԶՄԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հրատարակչության տնօրեն՝ Մ.Վ. Սնաջականյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն.Ն. Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Ա.Գ. Սիբայելյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Զափաղ՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 14.5 տպ. մասուկ: Տպաքանակը՝ 500 օրինակ:



«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ

37505-1, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28.
Ֆաքս՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am

Կազմի 1-ին էջ՝ Գ. Խանջյան, «Վարդանանք»